1492. Ֆերանդանտ ու Իզապէլա կը տիրեն Կրանաստայի — Քրիստոսփոր Գոլումպոս կը գտնէ Սան Սալվատոր, Գաւպա և Սան Տոմինկոյ կղզիները
1500. Գրպանի ժամացոյցի գիւտը Նիւրնպէրկի մէջ Բեթէր Հենլայնի ձեռքով
1512. Յուլիոս Բ. Պապը կը սկսի շինել Վատիկանի Ս. Պետրոս եկեղեցւոյն կաթողիկէն

1512. Վեճեաթիկի մէջ առաջին անգամ կը տպագրուի Պարզասոմար՝ Յակոբ անուն մէկու մը ձեռքով: Այս է Հայոց մէջ առաջին անգամ տպագրուած գիրքը:
1517. Լուծեր կըսկսի քարոզել Բողոքականութիւնը:
1520. Լուծեր Վիւրթեմպերկի հրապարակին վրայ կ'այրէ Լեոն ժ. Պապին բանադրանքի կոնգակը: — Ֆերտինանտ Գորգէզ Սպանիացին կը ախրէ Մեքսիկայի:
1521. Բորթուկայցի Մակելլան նուորգն առաջին անգամ աշխարհի շրջանը կ'ընէ:
1524. Եւրոպայի մէջ առաջին անգամ կը հրատարակուի ձեռագիր լրագիրը:
1529. Սուլթան Սելէյման Գամալեի կը պաշարէ Վիեննան:
1530. Լուծերականները Աւիսպուրկի մէջ կը գծեն իրենց «Հանգամակ հաւատոյսն», որուն խմբագրութիւնը կը կատարէ Մելանքթան: Լուծերականները «Բողոքական» անունը կ'առնեն:
1535. Կաշուին կ'սկսի իր անունով կոչուած բողոքական յարանուանութիւն մը քարոզել:
1549. Գերման Կոպեռնիկոս աստղարաշխը կը ճշդէ արեգակնային գրութիւնը:
1555. Աւիսպուրկի խաղաղութիւնը կը կնքուի:
1561. Բորդուկայի ֆրանսական դեսպան Նիկոլմ Ծրանտա կը ներմուծէ ծխախոտն որ գանուած էր Ամերիկայի Թապուբոյ կղզին:
1565. Արգար դպիր Թոգաթցին Վեճեաթիկի մէջ առաջին անգամ կը տպագրէ Աաղմասը:
1579. Ուարիի միութեամբ կը կաղմուի Հոլանտական հասարակապետութիւնը:
1582. Տամարը կը նորոգուի և Նրիգորեան տամարը կըսկսի (Հոկտեմբեր 15):
1609. Կայիլէոս կը գտնէ «Մանրութեան օրէնք»ը:
1615. Ֆրանքֆորթի մէջ առաջին անգամ տպագիր լրագիր կը հրատարակուի:
1618. Տրիպլի կը հնարէ ջերմաչափը զոր կը կատարելագործէ Լէօ միւր:
1636. Ռիշըւէոյ կը հիմնէ ֆրանսական Ակադեմիան:
1643. Թարիշիլի կը փորձէ օդին ծանրութիւնը և կը հնարէ օդաչափը:
1648. Վեպֆայիտ խաղաղութիւնը:

1663. Եոզեչարժ մեքենան կը հնարուի
1703. Ռուսիոյ Չար Մեծն Պետրոս կը շինէ Ս. Բեդերսպուրկ քաղաքը (Մայիս 29 Ն. Տ.) :
1769. Նարոչէան կը ծնի Այաչիոյի մէջ (Օգոստոս 15) :
1772. Ա. Բաժանուժ Լեհաստանի :
1776. Ֆրանքլին աւ Ատամս աւ Ճերան կը խմբագրեն Ամերիկեան օրէնագրութիւնը :
1780. Գիւս օդապարիկի :
1781. Հերշէլ աստղագէտը կը գտնէ Ուրանոս մոլորակը :
1792. Բ. բաժանուժ Լեհաստանի :
1795. Գ. բաժանուժ Լեհաստանի :
1799. Ռուզֆ Վրաստան կը յարձակին :
1801. Մարմնոյ պատուաստը կը գտնուի :
1802. Պանարարդ ցկեանս հիւպատոս կ'ընարուի (Օգոստոս 2) : — Գիւս վիճակագրութեան :
1803. Եոզեչարժ կը հնարուի :
1804. Նարոչէան Ա. կոյսը կը հռչակուի ('Իեկա. 2) : — Բաղաքական օրինագրքի հրատարակութիւն : — Սղագրութիւնը կըսկսի Ֆրանսոյի մէջ :
1805. Թրաֆալկարի ռուսամարտը (23 Հոկտ.) : — Աւստրիոյի ճակատամարտը Լա ցկիի Գիտը :
1812. Արագատիպ մեքենան կը հնարուի :
1815. Վարդերլոյի ճակատամարտը (Յունիս 18) :
1816. Օդային կողի գիւտը :
1821. Նարոչէան Պանարարդ կը մեռնի Ս. Հեղինէ կղզին (Մայիս 5) :
1828. Թիւրքմէնչոյի գաշնագիր Ռուսիոյ ու Պարսից միջև (Փետրուար 10) :
1829. Սգեֆէնարն կը յղանայ շագեկաւքի գաղափարը :
1832. Ֆրանսոյի մէջ Լյոնէն մինչև Սենթ-Էդիէն երկամասեղ փորձ կը կատարուի :
1836. Պայամենիան կը հրատարակուի :
1839. Լուսանկարը կը գտնուի :
1840. Օսմ. կոյսութեան ելմտական թուականը կը հաստատուի Հիճրէթի 1256 թուին : — Ակոսի գիւղը կը կործանի գեանաշարժ : — Առաջին նամակագրոշմը կը սպաղարուի Մեծն Բրիտանիոյ մէջ (Մայիս 6) : Հեռագիրը կը հնարուի :
1852. Նարոչէան Գ. Ֆրանսոյի կոյսը կ'ընարուի ('Իեկա. 2) :

1854. Ծրանստ և Անգլիա կը մտանակցին Օսմանցւոց Ռուսիոյ դէմ մղած պատերազմին: — Սեւաստոպոլի պաշարումը (Հոկտ. 9): — Ինքերմանի գրաւումը (Նոյ. 5):
1855. Բարիզի առաջին արուեստահանդէսը (Մայիս 15—Նոյ. 15): — Սեւաստոպոլի առումը (Սեպտ. 8): — Գտնելը ճայի դաշնագիր (Մայիս 27):
1859. Այֆերինոյի ճակատամարտ (Յունիս 24): — Վիլաֆրանքոյի հաշտութիւնը կը կնքուի (Յունիս 12): — Նաբոլէոն Լոմպարտիան կը յանձնէ Ռիեմինդի թագաւորին: — Ծրանսացիք ու Անգլիացիք Չինաստան կ'արշաւեն:
1860. Անգլիա-ֆրանսական բանակը կը յաղթէ Չինաստանի (Օգոստ. 28): — Իեքին կը մտնեն Աեպտ.ին: Չինաստանի ու Եւրոպայի միջև դաշնագիրը կը կնքուի (Հոկտ. 25): — Կ. Պոլսոյ Հոյոց Պատրիարքութեան օրինագիրքը կը յորինուի:
1861. Իտալիոյ թագաւորութիւնը կը կնքուի: — Ռուսիոյ Աղեքսանդր Բ. կայսրը Ուքրալով մը կը ջնջէ Ռուս ճորտութիւնը (Փետր. 19):
1864. Բրուսիոյ և Աւստրիոյ և Տանիմարքայի միջև խաղաղութեան դաշնագիր կը կնքուի (Հոկտ. 30):
1855. Աստովայի ճակատամարտին մէջ Բրուսիացիք կը յաղթեն Աւստրիոյ (Յունիս 3): — Աւստրիոյ կայսրը Ծրանսոյի կը թողու Վենետիկը (Յունիս 5): — Հանուր կը կցուի Բրուսիոյ (Օգոստոս 17): — Գերմանական դաշնակցութիւնը կը ջնջուի և կը հիմնուի Հիւսիսային դաշնակցութիւնը (Օգոստ. 23): — Վենետիկ կը կցուի Իտալիոյ (Հոկտ. 14):
1867. Կարիպայտի կ'արշաւէ Պապին երկիրները: — Աւստրիա և Հունգարիա կը կազմեն Երկեակ պետութիւն:
1869. Աուէրի ջրանցքը կը բացուի: — Առաջին թղթատարական տոմար (քանթ. քոսթայ.) կը սպագրուի Աւստրիոյ մէջ (Հոկտ. 1):
1870. Ծրանքեւրոս պատերազմը կը կնքուի (Յունիս 30):
1871. Ծրանքֆորդի դաշնագիր Ծրանսոյի ու Գերմանիոյ միջև (Մայիս 18):
1872. Ծրանս կը վճարէ հինգ միլիոն ֆրանք պատերազմական առգանքը:
- 1873 Պոլիարկ կը մերժեն ճանչնալ Որթոտաքս Պատրիարքին իրաւասութիւնը: — Նաբոլէոն Գ. կը մեռնի Անգլիոյ մէջ (Յունուար 9): — Թիէր նախագահ կը մեռնի Ծրանսոյի մէջ (Մայիս 24):

1879. Ելեքարական լապտերներու գիւտը:
1880. Հեռաձայնի գիւտը:
1881. Չայնաիգլիի գիւտը:
1885. Կատաղութեան սերմի գիւտը:
1889. Բարիլի համաշխարհային արուեստահանդէս:
1893. Չիքակոյի համաշխարհային արուեստահանդէս:
1897. Թուրքեւհելենական պատերազմի — Լահէյի դեպանախորհուրդ (Անպա. 1):
1898. Անթեղ հեռագլիի գիւտը — Սպանեւամերիկեան պատերազմի — Սպանիա Գերմանիոյ կը թողու Ավիանիոյ կղզիները (Ցուհիս 1):
1899. Անգլեւպօէր պատերազմին սկիզբը (Հոկտ. 11):
1900. Եւրոպացիք Չինաստան կ'արշաւեն:
1902. Անգլիեանց Մարդինիք կղզւոյն Բըյէ հրաւեւը կը բորբոքի և կը կործանէ Աեն. Նիէր բաղնիստարգ քաղաքը (Մայիս 8) — Վերջ անգլեւպօէր պատերազմին (Մայիս 31): Թրանսվալու Օրանժ անգլիական գաղթականութիւն կ'ըլլան:
1904. Խուսեւ ճարտն պատերազմը կրտսի (Փետր. 8):
1905. Խուսեւ ճարտն հաշտութիւնը կը կնքուի (Օգոստ. 23—29):
1906. Մեծ երկրաշարժ Քալիֆօռնիոյ (Մ. Նահանգք) Սան-Ֆրանչիսկօ քաղաքին մէջ, որ գրեթէ կը կործանի:
1907. Բ. դեպանախորհուրդ Լահէյի:



ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Մ Ա Ս Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

Անցեալ 1907 տարւոյ Ընդարձակ Օրացոյցին մէջ սկսանք եկեղեցական պաշտամունքներու բացատրութիւնները տալ, գլխաւորապէս այժմեան տիրող կարգադրութիւնները աւանդելով, և երկրորդաբար անոնց ծագման և հին սովորութեանց կէտերը շօշափելով: Գիշերային ժամէն սկսելով, այդ ժամերգութեան առաջին մասը միայն կրցանք բացատրել անցեալ տարի. հետեւաբար սոյն տարւոյն նիւթը պիտի ըլլայ անոր շարունակութիւնը: Մեր բացատրութեանց ոճն ու ընթացքն ալ անցեալ տարւոյն հետ միեւնոյնը պիտի ըլլայ, ուստի աւանց աւելորդ կրկնութեանց, անմիջապէս մեր նիւթին կ'անցնինք:

Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Ժ Ա Մ (Շարունակութիւն)

21. ՀԵՏԵԻԱԿ ՇԱՐԱԿԱՆ. — Հետեւակ բառին իմաստը շատ անգամ կ'առնուի իբր հետեւորդ, սակայն միեւնոյն բառը հետի բառէն ծագելով կը նշանակէ ևս հետիոտք քալող, և թերեւս աւելի գործածական է այդ իմաստը: Եկեղեցական առման մէջ ոմանք կարծեցին թէ հետեւակ շարականը ուրիշ շարականի մը ետեւէն երգուած շարականն է, սակայն Տօնացոյցը այդ պարագաներուն մէջ ի հետեւ ասա բացատրութիւնը կը գործածէ, իսկ հետեւակ շարականը ոչ թէ ետեւէն, այլ Օրհնու-

Թեան շարականէն առաջ կ'երգուի : Եթէ դիտենք այն պարագաները ուր հետեւակը կ'երգուի, կը տեսնեմք որ հետեւակ նշանակուած է երբ, ատեան ելնելու արարողութիւնը տեղի կ'ունենայ, և հետեւակին նպատակն է լեցնել այն միջոցը յորում եկեղեցական պաշտօնէութիւնը դասէն դուրս կ'ելնէ, ատեան երթալու, ուր Օրհնութիւնը պիտի երգէ : Ուրեմն հետեւակը քալելու ատեն երգուելու սահմանուած շարական մըն է, և դործնակահապէս հետի քալելու խմաստէն կը քաղուի, և հետեւակ շարականը կ'ըլլայ ինչ որ այժմեան բառով կրնայինք քայլերգ ըսել, Իսկ դուրս ելնելն ալ պէտք չէ բողոքովին դասէն եկեղեցւոյ ատեանը ելնելուն վրայ ամփոփել, այլ եկեղեցիէն ալ դուրս ելնելու պարագաներուն կրնայ դործածուիլ : Նկատողութեան արժանի է որ երկու ամենամեծ տօները, Մուսնդն ու Զատիկը, հետեւակ չունին, հաւանաբար վասն զի եղանակը նպատաւոր չէ եկեղեցւոյ բակը կամ յարմարաւոր տեղ մը ելնելու : Հետեւակ շարական ունեցող օրերուն գլխաւորներն են. Համբարձուած, Երկրորդ ծաղկազարդ, Հողեզալուստ, Վարդավառ, Վերափոխում և Խաչվերաց. բոլորն ալ գեղեցիկ եղանակի տօներ : Այդ վեցէն զատ ուրիշ երկու անգամ ալ հետեւակ նշանակուած է, Մաղկազարդին և Տեառնորդառաջին : Մաղկազարդին՝ որչափ ալ եղանակի նպատաւոր չերեւի, սակայն Մաղկանոց հին տօնին աւանդութեան հետ կապուած է դուրս ելնելու պարագան : Նոյնը պէտք է ըսել Տեառնորդառաջի համար ալ, որ հին տօներու աւանդութեանոց հետ կապուած տօն մըն է, որչափ ալ այժմ Փետրուարի մէջ աննպաստ եղանակին տօնուի : Մաղկազարդին հետեւակը յատուկ է և չորս տարբեր շարական է և Մաղկանոց հին տօնին յատուկ է : Քրիստոսի յՅրուսաղէմ գալատեան յիշատակին հետ խառնելով, Մնացեալ վեցերը մէկ մէկ պատկեր և ոչ յա-

տուկ շարականներ են . իսկ Վերափոխման օրը հին Տօնացոյցը Այսօր զանհասանելին դրած է , և միայն Կիրակոս վարդապետ իր յօրինած Արեւելք գերարփինը նշանակած է , որ արդէն շատ հին չէ . այն ալ այսօր երեք տունով կը վերջացուի : Հին Տօնացոյցը քանի մը տեղ Հետեւակ ասել ի ձայնեն նշանակած է , որ ըսել է թէ ամէն անգամ որ դուրս կամ ատեան ելնելու առիթը կը հանդիպի , հետեւակ ըսելու հարկը կը ծնի , երթալու ատեն երգուելու համար : Հետեւակները յորդոր կ'երգուին , և պէտք չէ որ երգիչները ատեան ելնելնէն կտքը երգին . այլ դասէն դուրս ելած ատեննին քալելով պիտի երգեն , մինչև որ ատեան հասնին : Թէպէտ սկսուածը աւագերէցի դասին կը պատկանի , այլ երգեցողութիւնը պէտք է միաձայն կատարուի երկու դասերէն միանգամայն : Աւագ ուրբաթ և աւագ շաբաթ օրերու երկրորդ կանոնազուխները , օրհնութենէ առաջ հետեւակի ձև կ'առնին , բայց հետեւակ չեն : Աւագ ուրբաթ օր իր հետեւակն ունի Այսօր ի կասարուսն , որ հետեւորդ սաղմոսներով և երգերով և աւտարաններով ի պատիւ Չարչարանաց յատուկ կարգ մը կը կազմէ , և Իշխանի հաշածեցիկը երկրորդ կանոնազուխ կը լինի . իսկ աւագ շաբաթու Բաճեան նմանութիւն է մահու Բաճեանին և կ'երգուի ատեանի մէջ : Հետեւակի միակ նմանութիւնն այն է , որ Հոգւոցէն և Հայր մերէն կտքը կ'երգուի :

22. ԵՒ ԵԻՍ , ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՍԻԹ : — Եթէ հետեւակ կայ՝ անկէ կտքը , թէ ոչ Հայր մերէն ու մաղթանքէն կտքը , սարկաւազը խունկ օրհնել և բուրվառին դնել կուտայ , ըսելով Եւ եւս . և ժամօրհնողն կամ դասազուխն կամ հանդիսադիրը խունկը օրհնելով և բուրվառին մէջ դնելով կ'ըսէ Օրհնութիւն եւ փառք . և սարկաւազը շուրջանակի խնկարկութիւն կը կատարէ ,

մինչ դպիրք Օրհնութիւն շարականը կը սկսին երգել : Պահոց օրերը եւ եւս ու խնկարկութիւն չկայ :

23. ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ. — Խնկարկութեան կերպը միանգամ ընդ միշտ բացատրած ըլլալու համար, այս մասին քանի մը խօսք ընենք այստեղ : Սարկաւազը բուրվառը աջ ձեռքը, և լուցեալ մումեղէն ձախ ձեռքը, կը խնկարկէ նախ աւագ սեղանը, յետոյ խորհրդարանները, անկէ կ'անցնի աջակողմեան փոքր սեղանը, և կը մտնէ մկրտարանը, այն տեղ ալ կը խնկարկէ սեղանը, աւագանը, և եթէ ուրիշ պատկեր կայ : Անկէ դուրս ելնելով կը խնկարկէ դասին մէջ եղողները աջակողմեան դասին վերջէն մինչև ձախակողմեան դասին վերջը կարգաւ, դասին դուռէն ժողովուրդն ալ խնկարկելով : Վերջէն կը մտնէ ձախակողմեան աւանդատունը և դուրս ելնելուն կը խնկարկէ ձախակողմեան փոքր սեղանը, մինչև գայ նորէն աւագ սեղանը : Եթէ Օրհնութիւնը ատեանին մէջ կ'երգուի, դասին խնկարկութիւնը շատ համառօտիւ կ'անցնի, և երկրորդ անգամ աւագ սեղանը խնկարկելէն ետքը դասէն ատեան կուգայ, և կը սկսի կարգաւ խնկարկել հանդիսադիրը և աջակողմեան դասին անձերը, մինչև որ աւագ սեղանին դառնայ, և նորէն հանդիսադիրը և ձախակողմեան դասին անձերը, վերջէն դարձեալ աւագ սեղանը, և ամենէն վերջ հանդիսադիրը : Թէ իւրաքանչիւր տեղ քանի անգամներ բուրվառ պիտի ըլլայ, թիւ ու կանոն սահմանել դժուար է : Եկեղեցւոյ ընդարձակութիւնը, երգեցողութեան երկարութիւնը, նոյն իսկ ուրիշ պատահական առիթներ կը պարտաւորեն երբեմն երկարել, երբեմն համառօտել : Սովորական կերպն է, բարձրաստիճան հանդիսադիրներու երեք անգամ, ուրիշ եկեղեցականներու մէկ, և դպիրներուն քանի մը հատին մէկ, և ժողովուրդին ընդհանուր կերպով քանի մը անգամներ բուրվառ ընել : Մեծ բարձրաստիճաններուն

վեց կամ ինը, գլխաւոր եկեղեցականներուն երկու կամ երեք անգամ ընողներ կան: Աւագ սեղանին ինը անգամ, և միւս սեղաններուն երեք անգամ սովորական է. բայց ինչպէս ըսինք, տեղն ու ատենը և օրուան հանդիսաւորութեան աստիճանը, պարտ ու պատշաճը կը թելադրեն սարկաւազին: Խնկարկողը պիտի նայի ոչ միայն անգամներուն թիւը, այլ և շարժումներուն արագութիւնը տեղւոյն ընդարձակութեան և երգին երկարութեան յարմարցնել, և երբ հնար է այնպէս բերել, որ իրարու համաչափ և հաւասար գան:

23. ՅԱՏԵԱՆ ԵԼԱՆԵԼ. — Օրհնութիւնը ատեանին մէջ ըսել, հանդիսաւորութեան ծէս մըն է, և կը կատարուի ամեն անգամ որ Տօնացոյցը նշանակած է, կամ թէ նախատօնակ կայ, կամ եթէ կ'ուղուի յատուկ հանդիսութիւն կազմել: Հանդիսադիր եպիսկոպոսը կամ վարդապետը շուրջառով, գաւաղանով և խաչով, վարդապետներ և աւագերէցներ շուրջառով և խաչով, քահանայք շուրջառով և մումով, դպիրք ու տղայք շապիկով, և աւելի հանդիսութեանց առթիւ շապիկով և մումով, կ'ելնեն եկեղեցւոյ մէջտեղը, և կիսաբոլոր կը շարուին, դասին դրան՝ ճակատը, և երկար դէպի դասին դուռը՝ կողմերը: Երբոր դպիրք ու տղայք բաղմամբիւ են, երկերկու կարգ կը շարուին աստի և անտի: Երգեցողութիւնը պէտք է կատարեն իրենց կեցած տեղը. ատեան ելնելուն ձեւն ու նպատակը կ'աւրուի՝ եկեղեցւոյ մէջ գրակալ բերելով և շուրջը բոլորուելով. անոր համար պէտք է որ դպիրք ու տղայք կամ գոց ըսելու վարժ ըլլան և կամ իրենց ձեռքը ձեռագիր կամ տպագիր, ձայնագրեալ կամ ոչ-ձայնագրեալ տետրակներ կամ տօնակարգներ ունենան, և անոնց վրայէն կարդան: Հին ատեն երբ շարականին տուները երկու դասերէն շատ զատ ըսուելով շէր կըրկնուէին, ատեան ելած ու ծանր երգուած ատեն, երկու

դասերն միաբերան և մէկ անգամ կ'ըսէին : Իսկ այժմ որ կրկնելու սովորութիւնը դադրած է , շարականին տուները դաս առ դաս կ'երգուին , որ դիւրութիւն մըն ալ է երգեցողներուն շունչին ու ձայնին : Օրհնութեան շարականին առթիւ խնկարկելու և ատեան ելնելու վրայ այսչափը բաւական սեպելով , գանք Օրհնութեան շարականի ասացուածքին :

25. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԿԱՆ. — Օրհնութիւն անունը կը տրուի , Դաւթի Սաղմոսներէն դուրս , Աստուածաշունչին ուրիշ մասերէն քաղուած սաղմոսի նման մարգարէից երգերը , որոնք կցուած են իւրաքանչիւր կանոն-սաղմոսի ծայրը : Այդ օրհնութիւնները տասը հատ են , որովհետեւ Ա.Կ. Մի' նախասնձիւր , և Գ.Կ. Խոստովան կանոնները երկերկու օրհնութիւն ունին : Այդ տասը օրհնութիւնները հետեւեալներն են .

ԴԿ.	Երգ Մովսէսի.	Օրհնեացուք զՏէր.	24 տուն.	Ելից ժէ.	1—19:
ԱԶ.	»	Նայեցարուք.	30 »	Բ. Օր. 1.Բ.	1—21:
ԱԿ.	»	Զի հուր յորոտեցաւ.	24 տուն.	Բ. Օր. 1.Բ.	22—38:
ԱԿ.	»	Երանեալք.	10 տուն.	Բ. Օր. 1.Բ.	39—43:
ԲԶ.	Երգ Աննայի.	Հաստատեցաւ.	18 »	Ա. Թագ. Բ.	1—10:
ԲԿ.	Երգ Նսայեայ.	Ի գիշերաց.	20 »	Նսայ. ԻԶ.	9—20:
ԳԶ.	Երգ Եզեկեայ.	Ես ասացի.	12 »	Նսայ. 1.Բ.	10—20:
ԳԿ.	Երգ Նսայեայ.	Օրհնեցիք	8 տուն.	Նսայ. ԽԲ.	10—13, ԽԷ. 8:
ԳԿ.	Երգ Յովնամու.	Ի նեղութեան.	8 տուն.	Յովն. Բ.	3—10:
ԴԶ.	Երգ Ամբակումայ.	Տէր զուր ին.	26 »	Ամբկ. Գ.	2—19:

Այդ երգերուն կամ օրհնութիւններուն նկատմամբ անցողակի դիտենք թէ այն թարգմանութիւնը որ կը տեսնուի սաղմոսներու հետ կցուած , բառացի կերպով նոյն չէ Աստուածաշունչին մէջ կարդացուած թարգմանութեան հետ , որոնց տեղերը գլուխով ու համարով նշանակեցինք ի տեղեկութիւն : Այդ տարբերութիւնը կը հաստատէ մեր այն կարծիքը թէ Սուրբ Գիրքին աղօ-

Թական մասերը ժողովրդական կիրառութեան համար արդէն չորրորդ դարուն թարգմանուած և գործածական եղած էին, և այն թարգմանութիւնը պահուեցաւ ժամագիրքի և սաղմոսգիրքի մէջ, մինչ հինգերորդ դարուն Աստուածաշունչի թարգմանիչները նոյն մասերը իրենց կարգին նորէն թարգմանեցին Աստուածաշունչի ամբողջութեան մէջ, բայց այս թարգմանութիւնը աղօթական կիրառութեան չանցաւ, և մնաց Աստուածաշունչի հատորներուն մէջ ամփոփուած: Այս դիտողութիւնը ընդհանրապէս Սաղմոսներու համար ալ տեղի ունի, որովհետեւ ժամագիրքի և սաղմոսգիրքի վրայ կարդացուած սաղմոսները բաւական տարբերութիւններ ունին Աստուածաշունչի մէջ գտնուած թարգմանութենէն: Բայց մենք Օրհնութեան շարականին դառնանք:

Այն ասեմներ որ բոլոր եկեղեցական երգեցողութիւնը սաղմոսներով կ'ամփոփուէր, կանոն-սաղմոսը աւարտելէն և կանոնագլուխն ալ բարձրահնչիւն բարբառով ըսելէն ետքը, իւրաքանչիւր կանոն-սաղմոսին յարակից օրհնութիւնը կ'երգուէր իբր հանդիսաւոր փառաբանութիւն, և ուրիշ շարական չի կար: Օրհնութեան շարականին առաջին ծագումը, ինչպէս ծիսական զննութիւնք կը ցուցնեն, սկսած է օրհնութեան երգին կցելով ուրիշ երգ մը որ պատշաճ ըլլայ օրուան տօնին ու յիշատակին, և կերպով մը նուիրագործէ և յիշեցնէ օրուան պատշաճը: Այս երկրորդ երգը Օրհնութեան շարական անունը առաւ գործին բերմամբ:

Ընդհանրապէս օրհնութեան շարականներ երկու պատկեր ունին, և այդ թիւը մեղի մտածել կուտայ, թէ որովհետեւ այս տեղ երկու կանոն-սաղմոս կը քաղուէր, իւրաքանչիւր կանոնին մէկ մէկ պատկեր շարական կը կցուէր:

Դժուար է մեզի հասած յիշատակներէն ստոյգ տե-

դեկութիւն քաղել . թէ երբ սկսան մեծահանդէս օրերը
 և կիրակիները ոչ թէ լոկ կանոն-սաղմոսին օրհնութիւնը ,
 այլ ութը կանոններուն տասն օրհնութիւնները ի միասին
 երգել : Որչափ ալ ժամանակը ճշդել դժուար , սակայն
 այդ սովորութեան մուտք գտած լինելը ծիսական զննու-
 թիւններ կը ստուգեն : Երբ Եկեղեցւոյ մէջ հին սաղմոս-
 երգութիւնը հետզհետէ սկսաւ տեղի տալ շարականեր-
 գութեան , և նոր շարականներու սովորոյթը ընդունելի
 եղաւ , շատ դիւրացաւ անոնց տարածումը , իբր աւելի
 հաճոյական և աւելի պատշաճական , և հետզհետէ խա-
 փանուեցաւ լոկ սաղմոսերգութեան նախկին սովորոյթը :

Տասը օրհնութիւնները շարականներով փոխանակե-
 լու միտքը կը վերագրուի Ստեփանոսի Սիւնեցւոյ ,
 ի սկիզբն Ը . դարու , որ ճանչցուած է իբր Աւագ օրհ-
 նութիւններու հեղինակը : Տասը օրհնութիւններու տեղ
 տասը պատկեր շարականներ կաղմուած են , իւրաքան-
 չիւր օրհնութեան իմաստներով և բառերով , թայտ Քրիս-
 տոսի փրկագործութեան խորհուրդին յարմարցուելով ,
 և պատկերներուն վերջին տունը Տիրամօր պատշաճեցնե-
 լով : Իւրաքանչիւր օրհնութեան երգին սկզբնաւորու-
 թեան անունն ալ պատկերին քովը համառօտագրու-
 թեամբ նշանակուած է , այսպէս .

ԱԻՀ . ԱՀ .	Օրհնեցումք .	ԳԻՇ .	Ի գիշերաց .
ՆԱՅ .	Նայեցարուք .	ԵՍԱ .	Ես ասացի .
ԶԻՀ .	Զի հուր .	ԱԻՐՀ .	Օրհնեցեք .
ԾԱՆ .	Ծաներուք .	ՆԵՂ .	Ի նեղութեան .
ՀԱՍ .	Հաստեցաւ .	ՏԲԼ .	Տեր գրուր .

Աւագ օրհնութիւնները ութը հաս են բառ ութ ձայ-
 նից , որոնցմէ եօթը Ստեփանոսի Սիւնեցւոյ , իսկ մէկը՝
 որ է՝ ԳԿ . , Ներսէսի Շնորհալւոյ կը վերագրուի : Չեմք
 կարծեր թէ Սիւնեցին պակաս թողած ըլլայ . այլ գուցէ

Շնորհալին այդ տեսակէն ալ շարական մը ունենալ ուզած է, և նոր մը շինած: Սիւնեցւոյն Աւագ օրհնութիւնները հաւանաբար շարժառիթ եղան, բոլորովին օրհնութեան երգերը խափանելով Օրհնութեան շարական երգելու. որոնք այնուհետէ շատցան՝ որչափ որ տօներուն և յիշատակներուն պատշաճները կը պահանջէին: Ընդհանրացած կարծիքը այն է, թէ Հարց շարականները աւելի հին են քան Օրհնութեան շարականները, և թէ այս վերջինները վերջէն պատրաստուածներ են՝ երբ յատուկ են. իսկ քաղուածօրէն պատրաստուած են երբոր հիներէն կազմուած են: Օրհնութեան շարականին հետզհետէ ստացած ճոխացումներուն ժամանակագրական զննութիւնը զանց ընելով գանք այժմեան կիրառութիւնը բացատրելու:

Օրհնութեան շարականը երեք մասէ կը բաղկանայ այժմ. 1. Պատկեր աւուր, 2. Քաղուած, 3. Տերունակակնի: Յատուկ պատկեր աւուր ունեցող օրհնութիւններ 79 հատ են:

44	հատ, ունին	2	պատկեր երեքական տուներով.	
5	"	2	" մէկը երեք և մէկը չորս տունով.	
7	"	2	" չորսա՝ մե տուներով.	
1	"	2	" չորս և հինգ տուներով.	
1	"	2	" հինգական տուներով.	
1	"	2	" հինգ և վեց տուներով.	
5	"	3	" երեքական տուներով.	
1	"	3	" երկուրդ երեք եւ մէկը չորս տունով.	
1	"	6	" երեքական տուներով.	
2	"		առանց պատկերի բաժանման	5 տուն.
2	"		"	10 "
1	"		"	11 "
3	"		"	36 "
5	"		կցորդ, այսինքն տարբեր ձայնով պատկեր կցուած. 2 էն և պատկերներով և ընդ ամէնը 8, 9, 11, 12 և 14 տուներով.	

Այս ցուցակը ցոյց կուտայ թէ հաստատուն ձեւը եղած է երկու պատկեր ունենալ, և այսպէս են 59 հատը մեծաւ մասամբ երեք տունէ պատկերներով. իսկ մնացեալ 20 հատը աւելի կամ նուազ պատկերներ ունեցած են բացառիկ ձեւերով :

Յատուկ Պատկեր աւուր ունեցող տօներէն դուրս են, ընդհանուր օրհնութիւններ, որոնք քաղուածօրէն կազմուած են Հարցերուն յարակից եղող կամ Հարցին սարքէ կազմող մասերէն, և են՝ Պահոց, Մարտիրոսաց և Յարութեան օրհնութիւնները :

Պահոց օրհնութիւններ կազմուած են Պահոց հարցերուն Ողորմեաներով. ԱԶ. ԱԿ. ԳԶ. և ԴԿ. վեցական ողորմեաներ, ԲԿ. և ԴԶ. եօթնական, ԲԶ. միայն չորսով մնացած է և հրատարակչներուն զանցառութեան վերադրելի է երկու տէր յերկնից պակաս թողուլը. մինչ ԴԿ. միայն երկու ողորմեա ունենալուն, ոչ միայն երկու տէր յերկնիցները այլ և մեծ պահոց չորրորդ կիրակէին ողորմեան ու տէր յերկնիցը առնուած են վեց պատկերը լրացնելու համար : ԴԿ. ի մէջ արդէն վեց ողորմեա գրտնուելուն համար ստեղծի հարցին երկու ողորմեաները չեն առնուած :

Մարտիրոսաց օրհնութիւններ կազմուած են մարտիրոսաց հարցերուն Տէր յերկնիցներով, իւրաքանչիւր ձայնէն հինգական հատ. միայն ԲԶ. չորս Տէր յերկնից ունենալուն՝ լրացնելու համար աւելցուած է Ճաշու շարականը :

Յարութեան օրհնութիւնները միայն Չատկի շաբթուն կը գործածուին, իսկ յինանց մնացեալ օրերը Աւագ օրհնութիւն կ'երգուի : Կազմուած են տէր յերկնիցներէ վեց վեց հատ առնելով. որով ԳԶ. և ԴԶ. օրհնութիւններուն մէջ եօթներորդ Տէր յերկնիցներ չեն առնուած. իսկ ԱԶ. և ԴԿ. որոնք Չատկի օրուան

և Նոր կիրակէին կ'իյնան, Լամբրոնացիին յատուկ օրհնութիւններ. Այսօր յարեաւը և Նորոգեալ կղզիք կազմելէն ետքը, իբր օրհնութիւն խափանուեցան, եւ միայն չորս Տէր յերկնից Զատիին եւ երեք Տէր յերկնից Նոր կիրակիին կը դործածուին իբր քաղուած :

Յատուկ պատկեր-աւուր եղող շարականներ տուն տուն կ'երգուին դասէ դաս. հին ժամանակներ տունները երկու դասէն ալ կը կրկնուէին, բայց այժմ այդ կրկնութիւնը դադրած է : Սկսուածը աշակերտի դասին է, և շարականը շսկսած Օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ սկզբնաւորութիւնը մնացած է իբրև աւանդական յիշատակ, թէև Օրհնութեան շարականը, օրհնութեան երգին հետ կամ օրհնութեան երգէն ետք չերգուիր :

26. ՔԱՂՈՒԱՄ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ. — Օրհնութեան շարականը ամենայն հաւանականութեամբ ի հնու միայն Պատկեր Աւուր մասով կը վերջանար, և յետ ժամանակաց սովորութիւն եղաւ դայն ճոխացնել յաւելուածներով, որոնք երկու մասի կրնան բաժնուիլ, Քաղուածք ու Տէրուհականք : Տէրուհականը կարգով վերջինը լինելով ետքը կը թողունք, նախապէս քաղուածի վրայ խօսելով : Պէտք է գիտնալ թէ քաղուածը վերջին դարերու կարգադրութիւն մըն է, Մովսէս Գ. Տաթևացի կաթողիկոսէն մուծուած (1629—1632), որ պարտաւորիչ ալ չըրաւ, որովհետև անոր մահուընէ տասը տարի ետքը 1642ին Նոր Զուղայ տպուած Ատենի ժամագիրքը այսպէս նշանակած է, « Եթէ հաճեսցին կամք եղբայրութեան ձերոյ, Տեառն գոհութիւն, և եթէ ոչ ախորժիյէք, կամք ձեր եղեցին » : Մարգարէական օրհնութիւններուն և աւագ օրհնութեանց պատկերներուն համապատասխանող տասը թիւը, Մովսէս Գ. կաթողիկոսին միտքին մէջ ծագեցուց տասը պատկեր օրհնութեան գաղափարը : « Այլ և վկայ անե-

լով զմեծ փիլիսոփայն և զհաւատարիմ քահանայապետն զսուրբն Ստեփանոս » կ'ըսէ վերոյիշեալ յիշատակարանը, երբ կը գրէ Մովսէսի կարգադրութիւնը, որ ամէն օրհնութեան շարականներ տասնական պատկերի լրացուին : Քաղուածին կամաւոր ծագումը տարածուեցաւ նաև անոր կազմութեան վրայ, այնպէս որ այսօր բացարձակ պարտաւորութիւն չկայ քաղուածի համար այս կամ այն շարականը ըսելու, և դասապետներ կարող են ըստ կամս և ըստ հաճոյս շարականներ որոշել և ըսել, զի Ձեռաց շարականներուն մէջը դրուած քաղուածքներու ցուցակը և Ձայնքաղ շարականներուն կազմած քաղուածք օրհնութիւնները, լով դիւրացնելու նպատակով պատրաստուած են նոյն իսկ Մովսէսի օրէն, և ոչ պարտաւորիչ դարձնելով իրենց դրածը, ինչ որ Ձայնքաղներուն տարբերութիւնով կը հաստատուի : Երկու կէտ միայն կայ իբր հիմնական կանոն, թիւն ու պատշաճը : Թիւին համար պէտք է հաշիւի առնել Աւուր Պատկերներուն և տէրունական պատկերներուն թիւը, և անոնց գումարը տասնի լրացնել քաղուածով : Սովորաբար Աւուր Պատկերները երկու են և տէրունական պատկերները չորս, ինչպէս ստորև պիտի բացատրենք, հետեւաբար սովորական քաղուածք պատկերները պիտի ըլլան չորս : Այլ եթէ Պատկեր Աւուրը աւելի է, կամ թէ տէրունական պատկերներ պակաս են, պէտք է հաշիւը ճշդութեամբ նայիլ, և ըստ այնմ քաղուած պատկերներուն թիւը քիչցնել կամ շատցնել : Պատկերներուն թիւը յատուկ օրհնութեանց ցուցակին մէջ տուինք. 2 կամ 3 պատկեր ունեցողներուն հաշիւը դիւրին է, 6 պատկեր ունեցողը քաղուածի պէտք չի թողուր. առանց պատկերի բաժանման եղողներէն 5 տունն ալ 2 պատկերի տեղ կ'առնուի. 10 և 11 տունները կրնան 3 պատկերի տեղ անցնիլ, թէպէտ ձայնքաղները երբեմն իբր 2 պատկեր առած են. իսկ 36 տուն

ունեցողներ որևէ կերպով 6 պատկերի տեղ կը բռնեն : Այս վերջինները Անձինք կը կոչուին , որովհետև առաջին անգամ կոմիտաս կաթողիկոս այս ձեւով Հռիփսիմեանց Անձինք նուիրեալքը շինած է , և միւսներ անոր նմանած են : Անձինքներ երեք հատ են , Հռիփսիմեանց , Լուսաւորչի և Յովհաննու կարապետի , և 36 տուներ այսուբենի 36 տառերով կը սկսին : Աստուածածնայ Անձինք մըն ալ կայ , որ վերափոխման երկրորդ օրուան կցորդը կը կազմէ և քաղուածի տեղ կ'անցնի : Վարդանանց օրը նորահրաշք իբր կցորդ կը միանայ Անճառեղին , և այնպէս քաղուածի պէտք չի մնար : Երուսաղէմի ձայնքաղը՝ Երանեղի սուրբ առաքեալին 3 պատկեր լինելը չդիտելով 4 պատկեր քաղուած դրած է , որ պարզապէս անմտադրութեան հետեւանք է . նոյնպէս է , երբ Լուսաւորչի Լեռինին 11 տուները 2 պատկեր նկատուած են . մինչ Սարգիսի Անճեսաւորքին 10 տուները իբր 3 պատկեր առնուած են :

Պատշաճի պայմանին դալով կանոնը այն է , որ Աւուր պատկերին ձայնէն կամ կցորդին ձայնէն , տօնին կամ յիշատակին յարմարութեամբ ուրիշ տօնէ կամ յիշատակէ պատկերներ աւելցուին : Տէրուսականներ առհասարակ իրարու մերձաւորութեամբ խումբեր կը կազմեն , ըստ այսմ Ծննդեան և Աստուածածնի տօները Մեծացուած Յէներով կը կազմեն խումբ մը . իսկ Պաշի , Եկեղեցւոյ և Վարդավառի շարականներն ալ ուրիշ խումբ մը : Յարութեան շարականները և Աւագ օրհնութիւններն ալ այս վերջիններուն հետ կը նկատուին , Մեծ պահոց կիրակիներն ու Աւագ շաբթու շարականներն ալ ի միասին : Քաղուածի չեն գործածուիր բուն Հարցերը և Գործատունները : Երբոր իր խումբէն և ձայնէն շարական կը պակսի , պարզ նմանութեան կը դիմուի : Հոգեգալտեան շարականներ բազմաթիւ շինելուն անոնց քաղ-

ուածքն կ'առնուի ուրիշ տնօրինականներէ որոնց մէջ Հոգւոյն Սրբոյ անունը կը յիշուի : Աւագ օրհնութեան պատկերներուն ծայրը եղող Տիրամօր նուիրեալ տուները քովէ քով բերելով Աստուածածնայ պատկերներ կը կազմուին , ինչպէս և միւս տուները միաւորելով Խաչի պատկերներ կը շինուին : Այս ամեն պարագաները կը ցուցնեն թէ որչափ կամաւորականութեան տեղի կայ քաղուած երգելու մէջ :

Պահոց և Յարութեան քաղուած օրհնութիւններ քաղուածի պէտք չեն թողուր , իսկ Մարտիրոսայ օրհնութիւններուն մէջ հինգ Տէր յերկնիցներու վրայ միայն մէկ պատկեր քաղուած կ'աւելցուի , և այն ալ օրուան համեմատ տարբեր , ԲՇ . Հրեշտակաց կամ թէ հրեշտակի յիշատակութիւն ունեցող սրբոց պատկեր մը . ԳՇ . Մարգարէից , Յովհաննէս Կարապետն ալ ի միասին , ԵՇ . Առաքելոց , Աւագ տօներն ալ ի միասին , ՇԲ . Մարտիրոսայ կամ Հայրապետայ և ընդհանրապէս Ամենայն սրբոց :

Քաղուածը կ'երգուի յորդոր , և դասէ դաս պատկեր առ պատկեր . Սկսուածը պարտաւորիչ կանոն չունի , այլ որ կողմը որ Օրհնութեան շարականին վերջին տունը ըսէ , միւսը կրնայ քաղուածը սկսիլ , և հետեւաբար աւելորդ է դասապետներուն քաղուածը աշակերտի դասէն սկսել տալու ճիգը , օրհնութեան տունը ու քաղուածի պատկերը իրարու կցել տալով : Աւուր Պատկերի շարականէն կամ կցուրդէն մէկ տուն միայն կը պահուէր ի հումն Փառքի համար , որովհետեւ Այժմին ալ նոյն տունը պիտի կրկնուէր , բայց այժմեան սովորութեամբ պէտք է Աւուր Պատկերէն կամ կցուրդէն երկու վերջին տուները ետեւ թողուլ . որ քաղուածէն և տէրունիներէն ետքը Փառքին և Այժմին ըսուին : Փառքը հաստատուն կերպով աշակերտի դասուն և Այժմը

աւագերիցու դասուն է : Վերջին դիտողութիւն մը փակելու համար, պատճառ չկայ որ քաղուածին կամաւոր լինելուն նախնական հրահանգը դադարեալ և խափանեալ կարծենք :

27. ՏԷՐՈՒՆԱԿԱՆՔ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ .— Օրհնութեան շարականին վերջին մասը կը կազմեն տէրունական պատկերները՝ որոնք չորս են Հոգեգալստեան, Հանգստեան, Աստուածածնի և Խաչի : Եկեղեցւոյ ամէն աղօթքներուն և մաղթանքներուն մէջ ստէպ կը յեղյեղուին, Աստուածածնայ բարեխօսութեան և Խաչի միջնորդութեան բացատրութիւնները, ննջեցելոց հոգիք կը յիշատակուին, և Հոգւոյն Սրբոյ շնորհքը կը խնդրուի : Այդ ընդհանուր սովորութեան արդիւնքն է, որ Օրհնութեան շարականները տասը պատկերի լրացուած ատեն, իւրաքանչիւրին վերջը մի մի պատկեր շարականով այս չորս ընդհանրացեալ կէտերը յիշուիլ սկսան : Այս շարականներուն ընտրութիւնն ալ կամաւոր է, և թէպէտ Չայնքաղ շարականները հատ մը կը դնեն պատշաճը ընտրելով, բայց ուրիշ պատշաճ մը կամ պատշաճագոյն մը ընտրել և երգել դասապետաց իշխանութեան ներքեւ է, միայն թէ վարժ և հմուտ եղողներ պէտք է : այդ համարձակութիւնը կամ նախաձեռնութիւնը գործածեն :

Չորս տէրունականները սակայն ոչ միշտ նոյնպէս և նոյնչափ կ'երգուին, որովհետեւ չորսէն կը ղեղչուի այն որ Աւուր պատկերին հետ նոյն է : Ըստ այսմ Աստուածածնայ և Մանդեան օրերը կը ղեղչուի Աստուածածնայ պատկերը, որովհետեւ Աւուր պատկերն է, և կը ղեղչուի նաև Խաչի պատկերը իբր Աւուր պատշաճին անյարմար : Խաչի, Եկեղեցւոյ և Վարդաւառի օրերը կը ղեղչուի Խաչի պատկերը : Մեծ պահոց շաբաթ և կիրակի օրերը կը ղեղչուին Հոգեգալստեան և Հանգստեան պատկերները : Հոգեգալստեան օրերը կը ղեղչուին Հոգեգա-

լըստեան և Սաչի պատկերներ՝ թէպէտև Չայնքաղներ շփոթ են : Ըստ այսմ տէրունականք երբեմն երեք և երբեմն երկու պատկեր կը մնան : Հոգեգալստեան և Հանօգրատեան-շարականները յատուկ են , և ամէն ձայնէ ալ կան , Աստուածածնայ շարականի համար կը գործածուին նաև Մննդեան և Վերափոխման , և ուրիշ Աստուածածնայ տօներուն շարականները և բոլոր Մեծացուսցէները : Իսկ Սաչի շարականի տեղ կ'անցնին նաև Եկեղեցւոյ և Վարդավառի շարականները եւս և Յարութեան շարականներէն ընտրանաւ : Երբոր Հոգեգալստեան շարական կայ , Եւ եւս , և Օրհնութիւն ըսելով նոր խնկարկութիւն կը կատարուի . և շարականն ալ տուն տուն կ'երգուի , սկսուածը աշակերտի դասէն : Իսկ միւս երեք տէրունականները յորդոր կ'ըսուին պատկեր առ պատկեր : Թէ Հոգեգալստեան շարականէն առաջ քաղուածի վերջին պատկերը , և թէ Փառքէն առաջ տէրունականին վերջին պատկերը , եթէ աշակերտի դասուն վրայ մնացած է , պատկերին վերջին տունը աւագերիցու դասը կ'առնէ . որպէս զի Հոգեգալստեանը կամ Փառքը աշակերտի դասին իյնայ : Տեղն է հոս յիշել թէ երբեմն՝ և աւելի քաղուածոյ Օրհնութեանց մէջ , Փառքի համար Սաչի պատկերին կամ տէրունականայ վերջին տունը կը գործածուի , և միայն Այժմին համար աւուր պատկերին վերջին տունը կ'առնուի : Քաղուածոյ օրհնութիւններէն Մարտիրոսաց և Յարութեան օրհնութիւնները շորս պատկեր տէրունականները կը դնեն . իսկ Պահոց օրհնութիւնները տէրունականի տեղ միայն երեք տունէ պատկեր մը ունին , երեք տունը տարբեր տեղերէ առնուած և իրարու կցուած , առաջին և երկրորդ տունները Աստուածածնի , և երրորդ տունը Սաչի . որոնց երկրորդն ու երրորդը Փառքն ու Այժմը կը կազմեն , և Պահոց ողորմեաներէն չեն առնուիր վերջաւորութիւնները :

28. ՄԱՂԹԱՆՔ ԿԱՆՈՆԻ .— Ժամագիրքն և Սաղ-
մոագիրքն իւրաքանչիւր կանոնի վերջ մարգարէական
օրհնութենէն ետքը մաղթանք մը նշանակած է, որ
պիտի յաջորդէր մարգարէական երգին, իսկ այժմ կը յա-
ջորդէ օրհնութեան շարականին, որ նոյն երգին տեղը
անցած է: Այդ մաղթանքները առաջ նոյն կերպով ա-
մեն օր կ'ըսուէին ըստ ձայնին և ըստ կանոնին. իսկ
այժմ միայն պահոց օրերուն մնացած են, որովհետեւ
սրբոց յիշատակներուն և տէրունի տօներուն համար յա-
տուկ մաղթանքներ կազմուած են, կանոնի մաղթանքին
վերջին մասը պահելով և առաջին մասը յարմարցնելով
յիշատակին կամ տօնին: Կանոնի բուն մաղթանքները
պարզապէս հայցողական են առաջին մասին մէջ, որ
կը մնայ ինչպէս ըսինք Պահոց օրերուն, իսկ Սրբոց հա-
մար բարեխօսութեան և Տէրունեաց համար փառաբա-
նութեան բացատրութիւններ կը փոխանակուին: Պահոց
մաղթանքները յիշատակել և բացատրել աւելորդ է:
Սրբոց մաղթանքին մէջ, նախ կը յիշուին Սրբոյ Աս-
տուածածնի և Յովհաննու Կարապետի և Ստեփանոսի Նա-
խավկայի և Գրիգորի Լուսաւորչի անունները, և յետոյ
նոյն օր տօնուած սուրբին անունը կամ սուրբերուն ա-
նունները: Սրբոց մաղթանքին երկրորդ մասը նման է
սովորական մաղթանքին երկրորդ մասին, լռելով հար-
կաւ Ս. Աստուածածնի անունը որ անուամ մը յիշուած
էր, և յիշելով միայն Ս. Խաչին անունը: Հաստատուն
կերպով յիշատակուած չորս սրբոց անուններուն վրայ
խօսելով, պէտք է դիտել տանք որ Սուրբ Աստուածա-
ծին և Յովհաննէս Կարապետ և Ստեփանոս Նախավկայ
աւելի հաստատուն կերպով կը յիշուին ամէն մաղթանք-
ներու մէջ, իսկ Գրիգոր Լուսաւորիչ երբեմն միայն:
Առաջին երեքին միշտ յիշուելուն պատճառը մեր նախ-
նական և հրագոյն եկեղեցիներուն կազմակերպութեանց

կը պատասխանէ, որոնց աւագ սեղանը միշտ Աստուածածնայ նուիրեալ է, և երկու կողմնակի մատուռները Յովհաննու Կարապետին և Ստեփանոսի Նախավկային: Այսպէս են էջմիածնայ Մայր տաճարը, Մշոյ Ս. Կարապետի և Ս. Յովհաննու վանքերուն եկեղեցիները, Աւազկերտի Իւչքիլիսէի հոյակապ տաճարը և ուրիշներ: Այնպէս որ այն երեք անուանները կը յիշուին տեսակ մը ներկայութեան իրաւունքով կամ պատուով, իբր թէ որոնք որ յատուկ խորանով կամ մատուռով պատուած են, ամեն օր շարունակ յիշատակելի կամ տօնելի կը համարուին: Այս տեսակէտէն օտարոտի պիտի չլինէր մտածել, թէ երբ եկեղեցին ուրիշ սուրբի նուիրեալ է կամ կողմնակի մատուռներ կամ խորաններ ուրիշ սուրբերու անուան նուիրուած են, հնար է անոնց անուաններն ալ յիշել ամենօրեայ մաղթանքներուն մէջ: Իսկ Գրիգոր Լուսաւորչի յիշատակութիւնը ամենահին ժամանակներէն չէ, և կը տեսնուի Շնորհալուոյ Հաւատովին վերջին տունին, առաւօտու մեծ Գանձին, Քրիստոս Աստուած մեր մաղթանքին, և այս կանոնի մաղթանքին մէջ, որոնք հաւանականաբար իրարու ժամանակակից են և ժ.Ա. դարէ սկսելով դործածութեան մտած են: Իսկ օրուան տօնին սուրբերուն անուանները կը յիշուին համաձայն տօնացոյցի բացատրութեանց: Տեղ տեղ տօնացոյցի մէջ ալ աւելորդ բառեր սպրդած են, երբեմն ալ երկու տօներու միանալու ատեն, հնար է նմանութեան կամ պատուոյ տեսակէտէն տեղափոխութիւններ ընել, սակայն տօնացոյցին բացատրութիւնները պահելը աւելի ապահով է: Իսկ սովորաբար՝ ոչ թէ տօնացոյցին այլ օրացոյցին վրայէն կը կատարուին յիշատակութիւնները, և փոխադրութեանց կամ միացմանց կէտն ալ այս կերպով ապահովութեան ներքեւ մտած կ'ըլլայ:

Տէրունի տօներու մաղթանքն է Փառք հրաշափառ

որուն առաջին մասին մէջ երկու անգամ կը յիշատակուի օրուան տօնը, իսկ երկրորդ մասը լուր օրերու մաղթանքին հետ նոյն է: Տօնին համեմատ փոխուելիք յիշատակութիւնները ժամագիրքին մէջ նշանակուած են, «Մննդեան, Յայտնութեան, Գալստեան, Տնօրէնութեան, Մատնութեան, Խաչելութեան, Թաղման, Յարութեան, Հարձման, Գալստեան Հոգւոյն Սրբոյ, Պայծառակերպութեան, և վերջապէս ի տօնս Խաչի և Եկեղեցւոյ»: Ժամագիրքը այսպէս անորոշ կերպով կը նշանակէ տարբերութիւնները առանց որոշելու օրերը, և հետեւաբար կիրառութեան մէջ տեղէ տեղ տարբերութիւններ կը մտնեն, թայց մինք յարմարագոյն կերպերը կը բաւականանանք յիշել, ի դիւրութիւն և ի տեղեկութիւն, հետեւելով վերոյիշեալ կարգին:

Մննդեան և Յայտնութեան յիշատակութիւնները տարբեր օրերու չեն պատկանիր, որովհետև միակ տօն մըն է մեր եկեղեցւոյ կատարածը, և այն ճշդիւ Աստուածայայտնութեան աւանդական անունին ներքեւ, զոր ի դէպ չենք կարծեր բոլորովին մոռացութեան տալ: Այդ անունին ներքեւ կը յիշատակուին նախապէս Մնունդը յետոյ Յայտնութիւնը որով կ'իմացուին բոլոր Յիսուսը յայտնող տնօրէնութիւնները, և կը յիշատակուի նաև Մկրտութիւնը որ գլխաւոր և յիշողութեան արժանի տնօրէնութիւն մըն է: Ըստ այսմ յարմարագոյն կը կարծենք յիշատակութիւնը ամբողջացնել այսպէս. Փառք հրաշափստ Աստուածայայտնութեան քո Տէր, զօրհնեալ եւ զփառաւորեալ, զհրաշալի եւ զյաղթող զՄնունդ, զՅայտնութիւն եւ զՄկրտութիւն քո օրհնեմք եւ փառաւորեմք:

Գալստեան յիշատակութիւնը տարբեր կերպերու կը փոխուի: Տեառնընդառաջին Գալստեան քո ի սանարև կամ Քառասնօրեայ զալստեան քո ի սանարև. Ետկազարդին՝ Գալստեան քոյ յԵրուսաղէմ. Աւագ շաբթուն

առջի չորս օրերուն, Գաղստեան քո պարզապէս կամ
Գաղստեան քո ի փրկութիւն. Աւագ հինգշաբթիին՝ Գա-
ղստեան քո ի շարշարուս. Վերափոխման՝ Գաղստեան քո
ի փոխուլակ վօր քո եւ կուսի:

Տնօրէնութեան շատ չի գործածուիր, բայց յարմար
է Աւետման տօնին և Ծննդեան ճրագալոյցին:

Մասնութեան և Խաչեղութեան՝ կ'ըսուի Աւագ ուր-
բաթին երկուքը ի միասին կամ նաև աւելցնելով. Մաս-
նութեան եւ Չարշարուսաց եւ Խաչեղութիւն քո:

Թաղման. Աւագ շաբաթ օրը:

Յարութեան՝ Չատկին և Յինանց քառսուն օրերուն,
և բոլոր Յարութեան կիրակիներուն, ևս և Աստուածածնայ
Գիւտ Տփոյ և Գիւտ Գօուոյ տօներուն, և եթէ Աստ-
ուածածնայ Ծննդեան և Ընծայման և Յղութեան տօներ
կիրակիի հանդիպին:

Հանքարձման՝ Համբարձման տօնին և յաջորդ տասն
օրերուն:

Պայծառակերպութեան կամ Այրակերպութեան Վար-
դաւառի երեք օրերուն:

Իսկ Խաչի և Եկեղեցւոյ տօներուն կ'ըսուի Տերու-
թեան քո. նոյնպէս կ'ըսուի Աստուածածնայ Ծննդեան և
Ընծայման և Յղութեան տօներուն եթէ կիրակիէ դուրս
հանդիպին, ինչպէս նաև Մեծ Պահոյ վեց կիրակիներուն
և Ղազարու յարութեան օրը:

Կանոնի մաղթանքը ի դէմս Քրիստոսի կ'ըսուի միշտ,
միայն Հոգեգալուստին տօնին կը փոխուի ի դէմս Հոգ-
ւոյն Արքայ. Փառք հրաշափառ գաղստեան քո Հոգի Աստու-
ծոյ, և այն ատեն երկրորդ մասին մէջ չի կրնար ըսուիլ
Մօր քո, Խաչի քո այլ պիտի ըսուի Մօրն ու Խաչին:

29 ՔԱՐՈՉ ԿԱՆՈՆԻ. — Չորս հատ են այս քա-
րոզները, իւրաքանչիւրը երկու ձայնի համար և իրենց
ակզբնաւորութեամբը կը կոչուին.

ԴԿ . ԲԿ . Վասն ի վերուս

ԱԶ . ԳԶ . Վասն ի գիշերի

ԱԿ . ԳԿ . Վասն ուղղելոյ

ԲԶ . ԴԶ . Վասն գտանելոյ

Քարոզները կազմուած են համառօտ բացատրութիւններով և հրաւերի ձեւով : Սկիզբէն՝ թէպէտ ժամագիրք և Սաղմոսգիրք չեն նշանակած , բայց ընդհանրացեալ սովորութեամբ և ուրիշ քարոզներու նմանութեամբ «Եւ եւս խաղաղութեան գտեր աղաչեացուք» կ'ըսուի իւր սկզբնաւորութիւն : Անոր կը հետեւին հինգ հինգ յատուկ աղօթքի հրաւերներ և ապա չորսերուն ալ հասարակ եղող չորսական տուներ , որոնց մին է Վասն հոգեոցն հանգուցելոյ . և միւսները ամէն քարոզներու հասարակ եղող եւ եւս միաբան , Զանձիկս մեր և Ողորմեա մեզ : Այս քարոզներուն մէջ իւրաքանչիւրին յատուկ հինգական տուները , մասամբ ապաշխարութեան , բայց միշտ մաղթանքի իմաստներ կը պարունակեն : Իխողութեան արժանի են կրօնաւորական կեանքի պատկանող իմաստներ , զոր օրինակ Ի գիշերի եւ ի տըրնջեան եւ յարեանայն ժամու խօսիչ մեզ գրան տառն , կամ Որք ի շերիկս եւ յայրս եւ ի փապարս քնակեալ են սուրբ հարքն մեր , կամ Որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կստարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց , և այլն . որոնք այս կանոնի քարոզներուն և իրենց հետեւող աղօթքներուն կրօնաւորական կեանքէ ծագում առած ըլլալը կը նշանակեն , թէպէտ և մեծ մասամբ ամէն քրիստոնէի պատկանող իմաստներ են ըսուածները . և երբ մէկը մտադրութեամբ հետեւի անոնց , կեանքի անհրաժեշտ հոգեւորական պէտքերուն ցոլացումը կը գտնէ անոնց մէջ : Այդ քարոզներուն հեղինակը նոյն ինքն Ս . Սահակ Մեծ հայրապետն է , Օճնեցւոյն վկայութեամբ և հիւսուածին բարձր իմաստները արդարեւ արժանի են այսպիսի բարձր

սիրտի և բարձր միտքի : Քարոզներուն ասացուածը կը պատկանի սարկաւազին , սովորաբար 'ի թիւ . , մեծ տէրունի և հանդիսաւոր օրեր ձայնիւ : Աւելի հանդիսաւոր օրեր սարկաւազներ խմբովին , կամ սարկաւազը և դըպիրներ ընկերակցութեամբ կ'երգեն այդ քարոզը , և իրաւ ալ հանդիսաւորութեան նշանակ մը կ'աւելցնէ երկու կամ երեք և աւելի անձանց միաբերան երգեցողութիւնը : Ընդհակառակը սովորութեան մէջ երկուքէ մինչև հինգ սարկաւազներուն կամ դպիրներուն ի միասին եղած ատեննին , փոփոխակի իւրաքանչիւրին մէկ մէկ տուն երգելը , երբէք արարողութեան հանդիսաւորութիւն չի տար , այլ պարզապէս զանազան երգեցողներու իրենց ձայնը ցուցնելու առիթ կ'ընձևուէ :

Վերջին ժամանակի սովորութեամբ երբեմն ամենամեծ օրեր , զոր օրինակ Մուշուղին կամ Չատկին , ևլն . քարոզը բոլոր դպրաց կամ երգեցիկ տղայոց միաբերան երգել կուտան , որով վեհ և յուզիչ ձեւ մը կ'աւնէ . այլ արարողութեան հոգին կը խանգարուի , երբ քարոզը ամենքը միաբերան ըսած ատեննին՝ պատասխանը Տէր ողորմեան , միայն տղու մը ըսել կը տրուի : Քարոզը հրաւեր է , զոր սարկաւազը պիտի ըսէ , պատասխանը հրաւերին գործադրութիւնն է , զոր ժողովուրդը պիտի ըսէ : Մէկ անձին տեղ խումբը , ժողովուրդին տեղ մէկ անձ մը , արարողութեան հոգւոյն համաձայն չէ , որչափ ալ մեր դպիրներ և դպրապետներ հաւնած ըլլան իրենց հնարած այդ նոր ձեւը : Նոյնպէս նշանակութենէ զուրկ կը գտնեմք այն մտադրութիւնը զոր կը գործածեն շատեր , Մեծ Պահոց մէջ երգով չըսելու այդ քարոզը , թէպէտև օրը տէրունի և հանդիսաւոր ըլլայ , զոր օրինակ Կիրակի , Ծաղկազարդ , Աւագ Հինգշաբթի՝ Ուրբաթ՝ Շաբաթ , ևայլն . կարծելով թէ քարոզին երգը պիտի խանգարէ Մեծ Պահքին սուգը՝ մինչ ուրիշ շատ երգեր և նոյն իսկ

ստեղծներ կրնան ըսուիլ և կ'ըսուին Մեծ Պահքի լուր
օրերն իսկ :

30. ԱՂՕԹՔ ԿԱՆՈՆԻ. — Աղօթքներն ալ չորս
են քարոզներուն համեմատութեամբ, իւրաքանչիւրը իր
Հանգիստով և միջանկեալ Խաղաղութիւնով : Այսօրուան
գործածուած աղօթքները հետեւեալներն են .

- ԴԿ. ԲԿ. Տեր տուրնչեան . Զսեզ ու յամենայնի .
- ԱԶ. ԳԶ. Ի գիշերի եւ . Հովիւ քաջ .
- ԱԿ. ԳԿ. Տեր երկնի . Քու՛մ ամենագօր .
- ԲԶ. ԴԶ. Գոհանամք գիւն . Կենդանարար .

Բոլոր այս աղօթքներուն իմաստը կը դուրսէ թէ
գիշերային հանդիստէն արթննալով՝ առաջին անգամ
մատուցուած մաղթանքներ են, նոյն օրը և բոլոր կեան-
քերն իս՝ մեղքէ ազատ և օրինապահութեամբ զօրացեալ՝
սրբութեամբ ապրելու համար . մէջը չեն պակսիր կրօնա-
նաւորական կեանքի ակնարկներ, ինչպէս քարոզներուն
մէջ ալ նկատել տուինք . զոր օրինակ, Զօրացուցեա
զնեզ օր ըստ օրե կաշ ի կարգի կրօնաւորութեան մերում,
կամ Շնորհեա մեզ երկիւղիւ ի պաշտօն քո կանխեղ հա-
նապագ, կամ Ուր շնորհեցեք մեզ ի մեջ գիշերի յառնեղ
եւ խոստովան շիւնեղ առ ինչ ևլն : Սակայն, ինչպէս քա-
րոզներու համար ալ ըսինք, մեծագոյն մասը ամէն քրիս-
տոնէի յարմարող մաղթանքներ են : Օձնեցւոյն մեկնու-
թեանց մէջ կանոնի աղօթքներէն ոմանք տարբեր են .
և անոր նշանակածներն են .

- ԴԿ. ԲԿ. Տեր Ած . մշնչեանար . Շնորհասու քարեաց .
- ԱԶ. ԳԶ. Ի գիշերի եւ ի . Հովիւ քաջ .
- ԱԿ. ԳԿ. Անկեալք եմք առաջի . Քու՛մ ամենագօր .
- ԲԶ. ԴԶ. Օրհնեալ ես Տեր . Քեզ յանձն առնեմք .

Իսկ Անձեւացին, մեր սուլորական եղածները յիշելէն
ետքը . ԲԶ. ԴԶ. վերջին կանոնին համար աղօթք-
ներ կը դնէ . Կանխեալքս, Օրհնեալ ես : Այդ աղօթքնե-

րուն կարգէն՝ Օձնեցւոյն մէջ Ա.Ձ. Գ.Ձ.ին աղօթքէն ու հանգիստէն և Ա.Կ. Գ.Կ.ին հանգիստէն զատ, մնացեալ հինգ կտորներն տարբեր են, և Բ.Ձ. Գ.Ձ.ին աղօթքն ու հանգիստն ամբողջ յառաջ բերուած են, մինչ երեքին սկզբնաւորութիւնները միայն նշանակուած են, և կրնան համեմատուիլ. Արեւադալին Աստուած մշնցեմաւոր, Խաղաղականին Շնորհասու բարեաց. և իններորդ Ճաշուին Անկեալ առաջի աղօթքներուն, և ի դէպ է կարծել թէ յետ ժամանակաց տեղափոխած լինին: Իսկ Բ.Ձ. Գ.Ձ.ին աղօթքին և հանգիստին ընդարձակ դրուիլն ալ, կրնայ Օձնեցիին սեփհական շարադրութիւնը լինելուն վերագրուիլ: Իսկ Անձեւացիին յիշած Բ.Ձ. Գ.Ձ.ին կրկնակ աղօթքներէն հանգիստը կրնայ համեմատուիլ Օձնեցիին նոր գրած կամ դրած աղօթքին, և անձանօթ կը մնայ Կանխեալս աղօթքը: Օձնեցիին վկայութեամբ Կանոնի աղօթքներն ալ Ս. Սահակ Մեծ հայրապետին են. սակայն երկրայական կը մնայ որոշել, թէ միայն իր յիշած աղօթքները Ս. Սահակին են, թէ ոչ մեր այժմ գործածածները, կամ թէ երկու տեսակներն ալ հաստատապէս Ս. Սահակին պիտի վերագրուին: Եթէ Օձնեցիին միայն վերջինները ամբողջարար յառաջ բերելէն, իր գործը լինելը հետեւցնելնիս ընդունելի համարուի, նորա ընդհանուր վկայութեան համաձայն չգար. նոյնպէս դժուարաւ կը մեկնուի Անձեւացւոյն նոյն ձայնին համար կրկնակ աղօթքներ նշանակելը: Մենք կը սիրեմք բոլորին մէջն ալ Ս. Սահակին սիրան ու միտքը և վեհ գրիչը տեսնել: Կանոնի աղօթքներուն ասացուածը որուն ժամարարին կը պատկանի, իսկ պատարագ չեղած օրեր օրուն կարգավարին: Խաղաղութիւն տալու համար Անձեւացիին կը յիշէ՝ թէ այդ աղօթքը հանդիսաւոր չէ, և թէ առաջնորդը Խաղաղութիւն չի տար, սակայն արդէն յիշեցինք թէ այժմ Ջֆեն գոհանալիին Խաղաղու-

թիւնը առաջնորդներ չեն տար կամ ներկայ չլինելու
 կամ սակաւին ժողովուրդ չգանուելուն համար. ուստի
 անպատշաճ չլինիր՝ որ երբ հանդիսաւոր օր է և մանա-
 ւանդ երբ Օրհնութիւնը յատեանն է, և առաջնորդը հան-
 դիսադիր է կամ ժամարար է, կանոնի աղօթքին Խաղա-
 դուքիւն տայ փոխանակ Չիւն գոհանաւնիւն: Ատեան
 ելնելը յիշելուս աւթիւ աւելցնենք, որ երբ Օրհնու-
 րեան համար ատեան ելած են, կանոնի մաղթանքն,
 քարոզը ու աղօթքն ալ ըսուած ատեն ատեանը կը շա-
 րունակէ: Աղօթքէն ետքը Աշեղուք ըսուած ատեն ալ
 սովորաբար ատեանը կը շարունակէ. սակայն դիտուած
 է որ Աշեղուքի համար դպիրներ՝ նախընթացաբար կազ-
 մուած ատենը կը փոխեն և մինչ առաջ հանդիսադիրը
 ու վարդապետներ ու քահանայներ կը կազմէին ատեանին
 գլուխը կամ կիսարտորակը, այս անգամ դպիրներն են,
 որ ատեանի գլուխ կը կազմեն և մէջտեղ կը բոլորին:
 Այդ սովորութիւնը, որ ընդհանրացած է, կը ցուցնէ,
 թէ կանոնի աղօթքէն ետքը հանդիսադիրն Նպիսկոպոս
 կամ վարդապետ և ուրիշ վարդապետներ և քահանայներ
 ատեանը պիտի թողուն, և լոկ դպիրներու ատեան պիտի
 կազմուի Աշեղուքի կամ Թագաւոր յաւիտեանի համար:
 Դպիրներ Աշեղուքը ատեանը երգելէն ետքը Փառք եւ
 երկրպագութիւն երգելով դաս կը մանեն, նոյն ձեւը
 Թագաւոր յաւիտեանի վերջն ալ պահելով: Բայց դաս-
 նանք Աշեղուքն ու Թագաւոր յաւիտեանը բացատրել:

31. ԱԼԵԼՈՒՔ. — Ասոնք յատուկ են Տէրունի օ-
 բերուն, և հանդիսաւոր և ծանր կերպով երգուած՝ և
 աւուր խորհուրդին յարմար Սաղմոսի տուններ են: Երկու
 տուն Սաղմոս, սկիզբը երեք Աշեղուխայով. դարձեալ եր-
 կու տուն Սաղմոս սկիզբը երեք Աշեղուխայով, և Փառք
 եւ երկրպագութիւն, վերջը երեք Աշեղուխայով: Այլ ԱԶ:
 է օրը, Փառք եւ երկրպագութիւնին կ'աւելցուի Դաս

հրեշտակաց , և անկէ ետքը կ'ըսուին երեք Աշխուխաները : Սաղմոսի տուները ընտրուած են , օրուան տօնին յարմարաւոր տունի մը հետ մերձաւոր տուն մը կցելով , կամ հեռաւոր տուն մը միացնելով , և երբեմն ալ Սաղմոսի մէկ տունը երկուքի բաշխելով :

Վեց խումբ ըստ ձայնի ալելուքներ կան , 1. Մննդեան , 2. Յարութեան , 3. Համբարձման , 4. Հոգեգալստեան , 4. Խաչի , 6. Եկեղեցւոյ , ասոնք աւուր ձայնի համեմատ կ'ըսուին : Ասոնցմէ ամենէն քիչ գործածուողներն են Համբարձման և Հոգեգալստեան աշխուհները որոնք իրենց տօնին կ'երգուին : Համբարձման 10 օր , որով ԳԿ . և ԱԶ . միայն կը կրկնուին , իսկ Հոգեգալստեան 7 օր , որով ԱԶ . ընտ . իսկ չի գործածուիր : Մննդեան խումբը կը գործածուի ևս Վերափոխման իննօրեակին և Աստուածածնայ 6 տօներուն՝ Աւետման , Մննդեան , Ընծայման , Յղութեան , Գիւտ տխոյ և Գիւտ գօտոյ : Յարութեան խումբը Յիւանց քառասուն օրերուն և բոլոր Յարութեան կիրակիներուն : Խաչի խումբը Խաչի տօներէն զատ նաև Մեծ պահքի կիրակիներուն Սիմէոնեան տօնացոյցի կարգադրութեամբ , իսկ Եկեղեցւոյ խումբը Էջմիածնի , Տապանակի , Շողակաթի , Նաւակատիքի տօներուն և Խաչի շարթուն ԳՇ . ԳՇ . և ՆՇ . օրերը : Թէպէտև ութը ձայներէն իւրաքանչիւրը երկերկու զոյգ տուն սաղմոս կը պարունակեն , բայց բովանդակը ութը զոյգէ աւելի չէ , որովհետև նոյն զոյգ տունը կը կրկնուի , մէկ անգամ իբր երկրորդ և մէկ անգամ իբր առաջին ալելուք , ձայնի մը ընդմիջութեամբ . ըստ այսմ ԱԶ .ին երկրորդը ԲԶ .ին առաջինն է , ԱԿ .ին երկրորդը ԲԿ .ին առաջինն է և այսպէս ԴԶին երկրորդը ԱԶ .ին և ԴԿ .ին երկրորդը ԱԿ .ին առաջին կը լինի : Պզտիկ զարտուղութիւն մը միայն կը նկատուի , Հոգեգալստեան ԲԿ . ու ԳԿ . և ԳԶ . ու ԴԶ . երկրորդներուն ու առաջիններուն մէջ , որ գուցէ ձեռագիր-

ներէ սպրդած խանգարման մը արդիւնք է: Վեց ըստ
ձայնի խօսմբերէն զատ 14 ալ յատուկ Աղեղութներ կան
որոշ օրուան համար առանց ձայնին նայելու, և են. 1. Ճրա-
գալոյց Մենդեան, 2. Տեաւորնդաւաջ, 3. Ղազարու
յարութիւն, 4. Ծաղկազարդ, 5. Աւագ Երկուշաբթի,
6. Աւագ Գշ., 7. Աւագ Դշ., 8. Աւագ Եշ., 9. Աւագ
Ուր., 10. Աւագ Շբ., 11. Վարդաւառ, 12. Բ. օր
Վարդաւառի, 13. Գ. օր Վարդաւառի, 14. Հրեշտակա-
պետաց, որ միանգամայն Թագաւոր յաւիտեան ալ ունի,
ինչպէս պատի յիշենք: Սկսուածքին գալով առաջին Աղե-
ղութը և Փառքը աւագերիցու դասուն է, երկրորդ Աղե-
ղութը՝ աշակերտի դասուն:

32. ՍՐԲՈՑ ԹԱԳԱՒՈՐ ՅԱՒԻՏԵԱՆ. — Իր տե-
սակին մէջ յատուկ երգ մըն է. ոչ շարական է և ոչ
սաղմոս և ոչ չափաւ երգ: Ութը հատ են ըստ ութն
ձայնից և երեք տունէ կը բաղկանան, առաջինը և վեր-
ջինը արձակ և նոր շարադրութիւն է, մաղթողական ո-
ճով և սրբոց բարեխօսութեան հիմամբ կազմուած, երկ-
րորդ տունը երկու տուն սաղմոս է առաջին տունին
վերջաւորութիւնը կցելով: Առաջին տունին սկիզբը միշտ
կոչական ձեւով, և Աստուծոյ ուղղուելով Թագաւոր յա-
ւիտեան բառերը կ'երգուին: Առաջին տունը միշտ աւելի
ծանր, իսկ երկրորդն ու երրորդը աւելի թեթեւ երգեցո-
ղութիւն ունին, և օրուան տօնին սուրբերուն անունները
առաջին տունին մէջ, և երբեմն երկրորդ տունին մէջ ալ
կը յիշատակուին: ԲԿ. ձայնի Թագաւորը չորս տուն է,
և հիմակ չորան ալ կ'ըսուին. ԳՁ. և ԳԿ. ձայներու ա-
ռաջին և երրորդ տունները նոյն են, և միայն երկրորդ
տունի սաղմոսները կը տարբերին: Բոլոր սուրբերուն հա-
մար, որ դասակարգէ ալ լինին, նոյն Թագաւոր յաւիտե-
անը կ'ըսուի, դասակարգին անունը և սուրբին անունը
փոփոխելով: Միայն Առաքելոց և Մարգարէից տօներուն

համար երկրորդ տունի սաղմոսներն կը փոխուին և կը փոխանակուին Ոչ եւ իսոսք. և Ընդ ամենայն, սաղմոսի տուներով : Այդ փոփոխութիւնը հանդիպմամբ ԴԶ.ին մէջ նշանակուած գամուելուն, շատեր Առաքելոց և Մարգարէից տօներուն երկրորդ տունին վերջաւորութիւնն ալ և երրորդ տունն ալ ԴԶ. Թագաւոր յարիսեանը կ'ըսեն :

Այլ ուրիշներ, և ըստ մեզ աւելի ճշդութեամբ, Առաքելոց և Մարգարէից տօներուն միայն երկրորդ տունի սաղմոսները կը փոխեն, և տունին վերջաւորութիւնը և երրորդ տունը օրուան ձայնին համեմատ կը պահեն : Ակառւածին կամոնը աշխրափն նման է. առաջին և երրորդ տունը աւագերիցու դասուն, իսկ երկրորդ տունը աշակերտի դասուն է, իսկ ԲԿ.ին չորրորդ տունը ելբորդին կը կցուի : Բացառիկ է Հրեշտակապետի տօնը. նախ յատուկ աշխրափ մը կ'ըսուի, Փառփն հետ Դասք Հրեշտակապետն ալ կցելով և ապա յատուկ Թագաւոր մը, այսինքն է Պահոց երկուշարթի օրուան երրորդ Թագաւորին երեք տուները : Այն ատեն առաջին աշխրափը և Փառփը ու Թագաւորին երկրորդ տունը աւագերիցու դասէն, և երկրորդ աշխրափը և Թագաւորին առաջին և երրորդ տուները աշակերտի դասէն կ'ըսուին : Բացառիկ է եւս Այսօր դասք կոչուած Թագաւորը որուն վրայ առանձինն պիտի իսոսինք :

32. ՊԱՀՈՑ ԹԱԳԱՒՈՐ ՅԱԻՏԵԱՆ. — Սրբոց Թագաւոր յարիսեանին եռապատիկն է, այսինքն երեք անգամ մի և նոյն ձեւը, առաջին և երրորդ տուները ապաշխարողական մաղթանքներ, և երկրորդը սաղմոսի տուներ, առաջին տունին վերջաւորութիւնը կցելով : Ըստ այսմ ամբողջը ինը տունէ կը բաղկանայ : Ակառւածը աւագերիցու դասէն, և յետոյ դասէ դաս, մինչև որ վերջին իններորդը նորէն աւագերիցու դասուն կ'իյնայ : Պահոց Թագաւորներ հինգ են եօթնեկի օրերուն վրայ :

Բշ. էն Ուր. որովհետև Շք. և Կիր. պահոց կարգ չըլլար
երբէք: Դարձեալ թէ Մեծ պահքին և թէ տարւոյ մէջ
չարաթապահքերու ու չորեքշաբթի և ուրբաթներու թա-
գաւորները նոյն են, միայն ուրբաթ օրուան երրորդ
տունը կը տարբերի: Մեծ պահքին համար լոկ ապաշխա-
րութեան մաղթանք է, իսկ Մեծ պահքէ դուրս ննջեցե-
ւոց համար մաղթանք է, ինչ որ Մեծ պահքի մէջ բա-
ցարձակապէս կը դադրի: Թագաւոր յաւիտեան սկզբնա-
ւորութիւնը միայն առաջին տունին սկիզբը կ'ըսուի, չոր-
րորդ և եօթներորդ տուններուն սկիզբը նորէն չըսուիր,
թէպէտ անոնց քովն ալ թ. նշանակուած է, իբր նոր
Թագաւոր յաւիտեան:

33. ԱՅՍՕՐ ԴԱՍԹ. — Յատուկ և մեծահանդէս
Թագաւոր յաւիտեան մը, ըստ հնագոյն սովորութեան
միայն և միայն Ս. Ստեփանոսի Նախավկայի տօնին յատ-
կացուած, իբրև բացառիկ հանդէս մը դպիրներէն ձօն-
ուած ի պատիւ սրբոյն, որ պաշտպան ճանչցուած է բո-
լոր դպրաց դասերուն: Սակայն Սիմէոնեան տօնացոյցի
կարգադրութեամբ Այսօր դասքը տարածուեցաւ բոլոր չորս
աւագ տօներուն, Առաջին Լուսաւորչաց երկու և Նրկրորդ
Լուսաւորչին երեք տօներուն, բովանդակ տարւոյ մէջ
ինն անգամ: Այդ ընդարձակութիւնն իրաւունք տուաւ,
որ այս ինն տօներէ դուրս ալ երբ սրբոյ տօն մը մեծա-
հանդէս ընել ուզուի Այսօր դասի արարողութիւնը
կատարուի: Այսօր դասի կազմութիւնը շատ ճարտար
գրչի գործ մը չ'երեւիր, այլ աւելի հաւաքածոյ խմբա-
գրութիւն մը, աւելի եղանակին և արտաքին հանդիսու-
թեանց նպատակով կազմուած: Բովանդակը տասը տունի
կրնայ բաժնուիլ, որոց առաջինը յոյժ ծանր և գեղգեղեալ
կերպերով կ'երգուի, և որ ի հետմն ա՛լ աւելի և չափա-
զանց երկար եղած է: Թագաւոր յաւիտեան բառերու
սկզբնաւորութիւնը Այսօր դասին գլուխն ալ կ'ըսուի,

և առաջին տունին մէջ սուրբին կամ սուրբերու անունը կը յիշուի, որուն այժմեանք՝ Որոյ (կամ որոց) այսօր Ե յիշասակ ասացուածքն ալ կը կցեն, թէպէտ ժամագիրքը չունի զայն: Առաջին երկու տուները միայն՝ քառորդ ժամէ աւելի կը գեղգեղուին և կը ծեքծեքուին և անոնց երգեցողութիւնը դպրաց յաջողակութեան մեծ փորձաքարն է՝ և արհեստին մէջ մրցանակի պատիւ մը, որ յատուկ պատուասիրութեան և պայծառագոյն շապիկի զգեստաւորութեան առաւելութիւններն ալ հետը կը բերէ: Մնացած ութը տուները, թէպէտ ծանր, բայց խմբովին կ'երգուին, և դասերու բաշխում չկայ, զի միշտ ատեանի մէջ և միաբերան կ'երգուին: Այսօր դասին երգեցողութեան զոյգ կ'ընթանան ուրիշ հանդիսաւորութիւններ ալ: Սկիզբը օրուան ժամարարը շուրջառով և սաղաւարտով աւետարան ի ձեռին կը կանգնի սեղանին առջեւ, սարկաւազը բուրվառով միւս կողմը, մոմերը բեմին վրայ և քրոցակիրք աստի և անտի: Երբոր Քանգի զոյգ տունը կը սկսի, հանդիսադիրը կամ պատուաւորներէն մին թափօրի կ'ելնէ եկեղեցոյն շուրջը՝ մոմակալներ առջեւէն, և ժողովուրդը կը խնկարկէ. մինչեւ կը դառնայ և կ'ելնէ ի բեմն և երկիցս անոր վրայէն խորաններն ու ժողովուրդը և եկեղեցականները կը խընկարկէ: Փառհերուն ատեն սեղանը կը խնկարկէ, և անկէ ետքը կը կատարուի Աւետարանի վերաբերումը սեղանին ետեւէն և հանդիսադիրին խնկարկութեամբ: Երբ սեղանին առջեւը կը դառնան, հանդիսադիրը բուրվառը կը թողու և Աւետարանը կ'առնէ, և հետզհետէ արեւելք և արեւմուտք, հարաւ և հիւսիս դառնալով՝ և Աւետարանը բարձրացնելով շորս կողմերը կ'օրհնէ և կը խաչակնքէ, և վերջէն Աւետարանը սեղանին վրայ հանգչեցնելով, երբոր խնկարկութիւն մըն ալ կը կատարէ բեմին վրայէն:

Եւ Յորժամէն սկսելով քրոցներ կը հնչեցնեն Աւետարանի վերաբերման և Աւետարանով օրհնութեան մի-

Չոցին, մինչեւ որ երգն ու խնկարկութիւնը ու քչոցները ի միասին կը վերջանան, և հանդիսադիրն սեղանի առջեւ իբրեւ մաղթանք և ի թիւ կը կրկնէ Այսօր դասք և Քանգի գոչի առաջին երկու տուները: Եւ կը փակուի Այսօր դասքի մեծահանդէս արարողութիւնը, որ եկեղեցասէր ժողովուրդին կողմէ փնտուռած հանդէս մըն է՝ աւելի աւագ տօներուն, և հակառակ ձմեռնային եղանակին և կանուխ ժամանակին դժուարութեան, եկեղեցիները միշտ նշանաւոր բազմութեամբ կը լեցուին: Ս. Ստեփանոսի օրը կատարուած հանդիսութիւնը և դպրաց դասերուն յատուկ հոգեսէր ջանքը՝ պահած են մինչև ցայսօր նախկին ժամանակներու բարեպաշտութեանց յիշատակը:

3. Ախլցխա՝ հին Վիճակ մը, որուն եպիսկոպոսները Ե. դարէն սկսեալ կը յիշուին: Հին ասին Տայոց եպիսկոպոսութեան տիտղոս կը կրէր:

Իր նախնական փայլը և կարեւորութիւնը յետոյ կորուսած է, այնպէս որ ԺՅ. դարէն յետոյ այլ ևս յատուկ Վիճակ ըլլալէ դադրած է, և ևնթարկուած է Կարնոյ առաջնորդութեան իրաւասութեանը, յատուկ փոխառաջնորդով մը, որ Կարնոյ Կարմիր վանքը կը նստէր:

1828ին Թիֆլիզի վիճակին ասորադասուեցաւ. և 1836ին անոր մէկ յաջորդութիւնը կազմեց:

4. Գանձակ՝ Աղուանից Կաթողիկոսութեան հոգևոր իրաւասութեան սահմանը կազմող այս գաւառը, անոր ջնջուելէն առաջ ԺԹ. դարուն սկիզբը Թիֆլիզի առաջնորդութեան ևնթարկուած է և ապա առանձին յաջորդութիւն կազմած է: Այժմ Եղիսաբեթուպոլիս ալ կը կոչուի:

5. ՎԱՐԱՊԱՎԻ կամ ԱՐՅԱԽԻ վիճակը Կասպից ծովուն եզերքը կը գրաւէ Ղարապաղի նահանգը ամբողջ, Տաթևու Արքեպիսկոպոսութիւնը միայն դուրս ձգելով: Միայն մէկ յաջորդութիւն ունի, որ է՝ Նուխի կամ Շաֆի:

1. Ղարապաղ թեմագլուխ՝ կեդրոն ունի Շուշի քաղաքը, ուր կը նստի Առաջնորդը: Այս Աթոռը յիշատակութեան արժանի է մասնաւորապէս իբր Կաթողիկոսական Աթոռի մը շարունակութիւն, վասն զի Աղուանից Կաթողիկոսութեան ուղղակի շարունակութիւնն է: Աթոռը հաստատուած կը համարուի աւանդօրէն Եղիշէ Առաքեալէն Ա. դարուն մէջ: Դ. դարուն Կաթողիկոսութեան վերածուած է և այսպէս անընդհատաբար շարունակուած է մինչև 1797, երբ Էջմիածնի Կաթողիկոսները ջնջելու ձեռնարկած են այս Կաթողիկոսութիւնը որ 1815ին վերջնականապէս դադրած է գոյութիւն ունենալէ:

Այդ թուականէն յետոյ Էջմիածնայ Կաթողիկոսներու իրաւասութեան ներքև պարզ առաջնորդութեան վերածուած է:

2. Նուխի՝ Պաշաժեկնիայով յաջորդութիւն կողած է Ղարապաղի Առաջնորդին իրաւասութեան ներքև: Նախապէս Աղուանից Կաթողիկոսութեան ենթակայ թեմ մըն էր:

Ձ. ՇԱՄԱԽԻԻ առաջնորդութիւնը կը տարածուի Շամախիի, Բազուի, Դարբանդի և Ղուբայի շրջակայքը, և ըստ Պաշաժեկնիայի շունի յաջորդութիւն (փոխառաջնորդութիւն): Սակայն այսօր Շամախի քաղաքը գրէթէ աւերեալ և Բազու մեծ կարեւորութիւն ստացած ըլլալով, կը մտածուի առաջնորդութեան կեդրոնը Բազու փոխադրել:

Առ այժմ նկատի առնելով Բազուի կարեւորութիւնը, միայն Գործակալ վարդապետ մը կը պահուի հոն:

Նախապէս այս վիճակը՝ որ ժէ. դարէն սկսեալ կը յիշուի, Աղուանից Կաթողիկոսութեան ենթակայ առաջնորդութիւն մըն էր:

Աղուանից Կաթողիկոսութեան ջնջուելովը Էջմիած-

նայ կաթողիկոսութեան ենթարկուեցաւ և պահեց իր
առանձին առաջնորդ պահելու իրաւունքը :

* * *

Այս վեց առաջնորդութեանց մէջ կը պարփակուին
այսօր Ռուսիոյ հայերը՝ որոնց եկեղեցական վարչութեան
պետն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրեն խորհրդա-
կան ունենալով չորս եպիսկոպոսէ և չորս վարդապետէ
բաղկացեալ Սինոդ մը որ կազմուած է Պաշտօնէսէն
քիչ առաջ :

Նախապէս ընդհանրական Կաթողիկոսները կարեւոր
գործերու անօրէնութիւնը վիճակաւոր եպիսկոպոսներէ
կազմուած ժողովներով կ'ընէին : Հիմա Սինոդէն կախում
ունի Ռուսահայոց վերաբերեալ որոշումները , այնպէս որ
այսօր Ռուսահայոց հոգեւոր գործոց տեսչութեան մէջ
Կաթողիկոս և Սինոդ համահաւասար դեր ունին , մինչ
արտաքոյ Ռուսիոյ գանուող հայոց հոգեւոր վերին գոր-
ծոց մէջ Կաթողիկոսը միայն ձեռնհաս է որոշում տալու
և Սինոդը ու է հեղինակութիւն չունի :

Պաշտօնէսիսով սահմանուած վեց առաջնորդները
Կայսերական Հրովարտակով կը կարգուին Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսին առաջարկութեամբ , որ պէտք է երկու
հոգի ցոյց տայ իւրաքանչիւր պաշտօնի համար , բայց
ընդհանրապէս իր առաջին առաջարկածը կ'ընդունուի :

Իսկ առաջնորդներուն ստորագաս յաջորդները կամ
փոխանորդները ու գործակաշները ուղղակի կ'անուան-
ուին Ս . Էջմիածինէն :

Իւրաքանչիւր առաջնորդ իր կարգին վիճակային հո-
գեւոր գործերը կարգադրելու համար իր քովը ունի իբր
խորհրդական հոգեւոր անձան մը (Կոնսիստորիա) բաղ-
կացեալ չորս եկեղեցականներէ՝ ամենքն ալ քահանայ .
այլ յաճախ նախանդամը վարդապետ մը , ընտրութիւնը

առաջնորդը ինք կ'ընէ և միայն ի գիտութիւն կը ծանուցանէ Էջմիածնայ Սինոդին :

Իսկ Հոգեւոր կառավարութիւն անունը կ'առնեն ատեանները այն տեղերու մէջ՝ ուր յաջորդութիւն մը կայ : Այն ատեն երեք եկեղեցականէ կը բաղկանան և ինչպէս որ Հոգեւոր ասեանները Սինոդին ստորադասուած են, ասոնք ալ վիճակային կենսիստորիային կը ստորադասուին :

1906 ի ընթացքին Հայրապետական կարգադրութեամբ և սկզբամբ որոշուեցաւ Առաջնորդները ու Յաջորդները տեղւոյն վրայ կազմուելիք ընտրողական ժողովներու միջոցաւ ընտրել և Հայրապետական հաստատութեան ենթարկելէ յետոյ մատուցանել Պետական հաստատութեան, այլ դեռ պատշաճ կանոնադրութեամբ չհաստատուեցաւ և օրինաց կարգ չանցաւ :

* * *

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղակի իրաւասութեան ենթակայ չորս ուրիշ առաջնորդներ եւս կան որոնք Խուսիոյ սահմաններէն դուրս կը գտնուին :

Այդ առաջնորդութիւնները կը վարուին իրենց յատուկ կանոններովը և կը բաժնակցին տեղական կառավարութեանց հետ իրենց առաջնորդներու միջոցաւ որոնք Հայրապետէն ուղղակի կ'անուանուէին մինչև հիմա : Վերջերս եղած կարգադրութեան մը համաձայն ընտրութիւնը վիճակին տրուեցաւ և վաւերացումը միայն Կաթողիկոսին վերապահուեցաւ, այլ տակաւին որոշ կանոնադրութեամբ չհաստատուեցաւ :

Այս ուղղութեամբ մատակարարեալ չորս առաջնորդութիւններն են .

Ա. Առապասական

Բ. Պարսկա-Հնդկաստան

Գ. Եւրոպա

Գ. Ամերիկա

Ա. ԱՏՐՊԱՏԱԿԱՆ՝ Կովկասի անմիջական մերձաւոր սահմանը և դրացի շրջանակն է պարսկական պետութեան մէջ: Այս վիճակը հնագոյն առաջնորդութիւններէն մէկն է և ժամանակին ընթացքին մէջ շատ մը կերպարանափոխութիւններ կրած է:

Նախապէս երկու վիճակ կը պարունակէր՝ Հերայ և Չարեանդայ եպիսկոպոսութիւնները, ինչպէս ցոյց կուտան ժ.Բ. դարէն մնացած յիշատակարաններ: Երբեմն կրած է նաև «Սալմաստայ և Իրանն Պարսից» եպիսկոպոսութեան տիտղոսը, և յաճախ Սալմաստի առաջնորդութիւն անուամբ կը յիշուի:

Ժ.Բ. դարուն Գիլանի նահանգը ևս այս առաջնորդութեան մասը կը համարուի, սակայն նոյն դարուն մէջ 1765ին Ատրպատականի շրջանակը Թաւրէզ կեդրոնով նուիրակութեան կը վերածուի և Գիլան անջատ Տէրունի վիճակ կը դառնայ: Ատրպատականի վիճակը՝ երբ էջմիածին Պարսկաց իշխանութեան ներքե էր, շատ աւելի ընդարձակ սահման մը ունէր: Առաջնորդը կը նրստէր Մակուի Ս. Թադէոս Առաքեալ Վանքը: Նախիջեւան և Ագուլիս Ռուսիոյ անցնելով և Աղբակ Օսմանեան Կառավարութեան, առաջինները Ռուսիոյ վիճակներուն կցուեցան և վերջինը՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան թեմերուն: Հիմա այս թեմին կեդրոնն է Թէվրիզ կամ Իաւրէժ ուր կը նստի առաջնորդը, իսկ Սալմաստի և Հաւնասանի մէջ կը պահուին երկու փոխանորդներ՝ ստորադաս առաջնորդին՝ որմէ կ'անուանուին:

Համատան՝ աշխարհագրական սահմանով Ատրպատականէ դուրս կը մնայ, սակայն շատ հին ատենէն ի վեր հոգեւոր հովուութիւն մը եղած է: Երբեմն աւելի հեռու այսինքն Սագսսսան կամ աւելի հիներու՝ Վրկանի

ըստուածը այս շրջանակին մէջ կ'իյնար : Եւ ինչպէս Քերթող Սեբէոս կը վկայէ , Չ. դարուն վերջերը հոն հաստատուած էին Հայ գաղթականներ , որոնց վրայ եպիսկոպոս մը կը ձեռնադրուի Արէլ անուն : Ժամանակին ընթացքին մէջ Պարսիկները Դ. դարէն մինչև Է. դար միշտ Հայերը փոխադրած են Սագաստան , Խուժաստան , Մագանդարան , Խորասան , Մարաց աշխարհ և նոյն իսկ յայտնապէս Համաստան քաղաքը : Այդ կողմերը Հայեր գրտնուած ըլլալը Ժ. դարուն կը հասաատէ կրկին Ասողիկ :

Բ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ-ՀՆԻԿԱՍՏԱՆԻ առաջնորդութիւնը կը տարածուի՝ բաց ի Ատրպատականէ՝ բոլոր Պարսկաստանի , Հնդկաստանի , Աֆղանստանի , Պիրմանիոյ և Ովկիանիոյ Հայոց վրայ , կամ մէկ խօսքով բոլոր Ասիոյ առաջնորդութիւնն է , բաց ի Օսմանեան և Ռուսական տիրապետութեան երկիրներէն :

Վաղընջական ժամանակներէ սկսեալ Հայեր հաստատուած են Պարսկաստանի զանազան կողմերը զանազան առիթներով , սակայն յատուկ առաջնորդութիւն մը կազմուած ըլլալը չէ յիշուած բնաւ :

Շահ Աբասի ձեռքով կատարուած գաղթականութենէն յետոյ , Ժ. դարուն սկիզբը կը հիմնուի Նոր-Ջուղան և իր յատուկ առաջնորդութիւնը , որ մինչև հիմա կը տեսէ : Երբեմն այս առաջնորդութեան մասը կը կազմէր նաև Պաղտատի վիճակը , որմէ կ'անցնէին սովորաբար Հնդկաստան գացող նուիրակները :

Պաղտատ 1765ին Տէրունի վիճակի վերածուեցաւ , սակայն միշտ Նոր-Ջուղայի առաջնորդները բարոյական հեղինակութիւն մը ունէին Պաղտատի Հայոց վրայ , որոնք միշտ յարաբերութեան մէջ էին Սպահանի Հայոց հետ , որոնց մէկ ճիւղն էին : 1828ին Պաղտատի Տէրունի վիճակը կցուեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան , որով անջատուեցաւ Նոր-Ջուղայի վիճակէն :

Նոր-Ջուղայի Հայերէն մաս մը Հնդկաստան, Աֆղանիստան, Պիրմանիա, Ճավա կղզին, Փիլիպեանց մայրաքաղաքը Մանիլա և մինչև Չին գաղթած և կարևոր դիրքերու հասած ըլլալով, Սպահանի առաջնորդները հոգեւորապէս զանոնք հովուելու համար միշտ քահանաներ զրկած են, որով այդ կողմերու Հայերը Նոր-Ջուղայի առաջնորդութեան ենթարկուած են: Սակայն, միւս կողմէն Հնդկաստանի Հայոց հարստութեան համբաւը և էջմիածնայ Աթուլին կարօտութիւնները պատճառ եղած են որ միշտ կաթողիկոսները նուիրակներ զրկեն Հնդկաստան և մերձակայ գաղութներուն՝ անոնց նուէրները ստանալու համար: Եւ իրաւամբ Ժ.Ը. դարէն սկսեալ միշտ նուիրակներ զրկած են Հնդկաստան:

1808ին նոյն իսկ մտածուած է Հնդկաստանի Հայերը Տէրուհի վիճակի վերածել, սակայն վիճակայինները նախամեծար համարած են կապուած մնալ Նոր-Ջուղայի առաջնորդութեան: Նոյնպէս այս վիճակին կապուած էին Աֆղանստանի Հայերը, որոնք այսօր շատ ջնջին թիւ մը կը ներկայացնեն, սակայն միջոց մը բաւական ստուարաթիւ պէտք է եղած ըլլան, վասն զի 1766ին Ղանտահարի, Քեապուլի և Պուխարայի Հայոց Առաջնորդ ու նուիրակ կը կարգուի ուղղակի էջմիածինէ վարդապետ մը, սակայն այս անջատ առաջնորդութիւնը չէ կրցած շարունակել: Ղանտահար և Քեապուլ այսօր Պարսկաստանի առաջնորդութեան և Պուխարա (Թրքաստան) կցուած է Աթաէրխանի առաջնորդութեան, թէև առաջիններուն մէջ Հայ այլ ևս գոյութիւն չունի:

Այսօր այս առաջնորդութիւնը ունի Պարսկաստանի մէջ երկու թեմ,

1. Սպահան, ուր կը նստի Առաջնորդը:

2. Թեհրան, ուր կայ Փոխ-Առաջնորդ մը՝ անուանուած Առաջնորդէն:

Իսկ Հնդկաստանի մէջ իւրաքանչիւր եկեղեցի կը ներկայացնէ մէկ թեմ, որոնց համար վիճակաւոր անունով քահանաներ կը ղրկուին Նոր-Ջուղայէն, եռամեայ պայմանաժամով, ի հարկին պայմանաժամը կրկնելով:

Այսպէս 1. Կալկաթա, 2. Մասրա, 3. Պոմպայ, 4. Չեզրա, 5. Տաֆա, 6. Սուրաթ, 7. Անյսապաս, Հնդկաստանի այն քաղաքներն են ուր Հայ եկեղեցիներ գոյութիւն ունին:

Հնդկաչինու մէջ երեք թեմեր կան որոնք են՝ 1. Ռանգուն, 2. Մանսալէ, 3. Սինկաբուր: Իսկ Ուլկիանիոյ մէջ այսօր միայն 1. Պարալիա, 2. Սուրաբայա (Ճաւա կղզիին մէջ) ունին Հայ բնակչութիւն և եկեղեցի: Մնացեալ տեղերէն Հայերը դուրս կամ օտարացած են:

Գ. ԵՒՐՈՊԻՈՑ Առաջնորդութիւնը իր հոգեւոր իրաւասութեան շրջանակին մէջ ունի Եւրոպական Ռուսիայէն և Պալքանեան թերակղզիէն դուրս հաստատուած Հայերը:

Եւրոպիոյ մէջ Հայոց հաստատութեան թուականը հնագոյն ժամանակներէ կը սկսի: Ժ.Յ. դարէն սկսեալ Եւրոպիոյ զանազան մասերուն մէջ Հայ գաղութներ հաստատուած կը զանկենք: Մասնաւորապէս Անդրկովկասի եւ Ռուսիոյ ճամբով Լեհաստան անցնող գաղթականները կը ներկայացնէին ստուարաթիւ հաստուած մը, որ իր յատուկ առաջնորդութիւնը և կազմութիւնը ունէր: Առաջնորդը ուղղակի էջմիածինէն կ'անուանուէր և կը կրէր «Արեւալիսկոպոս Ընուզաց եւ Օրախաց աշխարհի եւ հոգևոր Առաջնորդ Լեոպոշոյ» (1398 թուականին) տիտղոսը, որմէ դիւրին է հետևցնել թէ ո՞ր աստիճան ընդարձակ էր իր իրաւասութեան սահմանը: Սակայն յետոյ այս ամէն մասերը իրարմէ անջատուեցան և Ռուսիոյ մէջ Աժտէրխանը և Մոլտո-Վալաքիոյ (Ռուլան) մէջ համանուն առաջնորդութիւնները կազմուեցան:

Լեհաստանի գաղութին Հռովմէականութեան անց-
նելովը այս առաջնորդութիւնն ալ Լէոպոլտոյ հռովմէական
արքեպիսկոպոսութիւնն եղած է և մինչև այսօր կը տեւէ :
Գրեթէ այս գաղութին հետ միաժամանակ կը յիշուին նաև
Ճենովայի, Անգլիոյ, Պելճիգայի և մանաւանդ Վենետիկի,
Ամսթերամի, Լիվոռնոյի, Անքոնայի, Հռոմի մէջ Հայ
գաղթականութիւններ, յատուկ եկեղեցիներով, որոնք
իրենց հոգեւոր գործոց մատակարարութեան համար եր-
բեմն ունեցած են հովիւներ և երէցներ, սակայն բնաւ հա-
մախումբ ամբողջութիւն մը չեն ներկայացուցած և ոչ ալ
տեւական միճակ : Ասոնցմէ միայն Վենետիկ և Լիվոռնո
Հայ Կաթողիկ եկեղեցիներ մնացած են :

1898ին Ամենայն Հայոց հայրապետը Եւրոպիոյ գա-
նազան մասերու մէջ զրիւ գտնուած գաղութները հոգեւոր
առաջնորդութեան մը ստորադասեց, կազմակերպելով Եւ-
րոպիոյ Հայոց առաջնորդութիւնը :

Պուլկարիա և Ռումանիա, որոնք Կ. Պոլսոյ Պատրիար-
քութեան ներքեւ միճակներ էին, ըստ հին սովորութեան
Կ. Պոլսոյ Պատրիարքարանի վերին տեսչութեան տակ մը-
նացին, ինչպէս նաև Աթէնք, Կիպրոս և Կրետէ :

Այսօր Եւրոպիոյ առաջնորդութիւնը իրեն ստորադաս
ունի չորս կազմակերպեալ թեմ, այսինքն յատուկ եկե-
ղեցիով և հովիւով թեմեր, իսկ ունի բազմաթիւ փոք-
րաթիւ Հայ գաղութներով քաղաքներ, որոնք եկեղեցի
կամ աղօթարան չունին, սակայն այցելութեամբ հոգեւո-
րապէս զանոնք միախմբելու պարտքը կը ծանրանայ Եւ-
րոպիոյ Առաջնորդին վրայ :

Չորս կազմակերպեալ թեմերն են .

1. Բարիգ որուն առաջին հովիւը եղած է Տ. Յով-
հաննէս քհն. Հիւնքեարպէյէնտիեան : 1865ին Կ. Պոլսոյ
Պատրիարքարանը նկատելով այդ քաղաքին համաշխար-
հային կարեւորութիւնը, այդ քահանան զրկած է :

Այդ օրէն մինչեւ այսօր Կ. Պոլիսէ դրկուած են միշտ Բարիզի հոգեւոր հովիւները : Նախապէս միայն մատուռ մը գոյութիւն ունէր, սակայն այսօր այս գաղութը ունի հոյակապ եկեղեցի մը յանուն Ս. Յովհաննու Մկրտչի :

2. Մարսիլիա ունի յատուկ մատուռ և հովիւ : Անցեալ դարուն վերջին քաւորդին մէջ հաստատուած է այս հովուութիւնը, թէեւ նախապէս ժէ. դարուն մէջ ալ հոս պզտիկ գաղութ մը երբեմն գոյութիւն ունեցած ըլլայ :

3. Մանչեսթըր ունի յատուկ հովուութիւն հաստատուած 1865ին Կարապետ Վ. Շահապարեանի այցելութեամբ : Մինչեւ 1895 իր յատուկ եկեղեցիովը կը ներկայացնէր առանձին հովուութիւն մը : Մանչեսթրի հովիւը կը լրայնէր նաեւ Լոնտոնի Հայոց հոգեւոր պէտքերը տարեկան այցելութիւններով : 1889ին միջոց մը Լոնտոնի մէջ զատ հովուութիւն մը կազմուեցաւ, սակայն շատ կարճ եղաւ իր կեանքը :

4. Սուչովա կը ներկայացնէ Եւրոպիոյ առաջնորդութեան ամէնէն հին հատուածը : Ա. սարիոյ Պուքովինա նահանգին մասը կը կազմէ այս քաղաքը :

Նախապէս իրր Լեհահայոց գաղթականութեան մասնոյն գաղթականութեան առաջնորդութեան կապուած էր, վասնզի—ինչպէս ըսինք—Լեհաստանի եպիսկոպոսին իրաւասութիւնը ժ. դարուն վերջերր Ռուսաց և Ռուսաց աշխարհին և Լէոպոլսոյ վրայ կը տարածուէր միանգամայն :

Ժն. դարուն վերջերր Սուչովա կ'ունենայ իր յատուկ եպիսկոպոսը, սակայն քիչ յետոյ (1629) կը տեսնենք Մուտա-Վալաքիոյ առաջնորդութեան կցուած : Ասոր պատճառը պարզ էր : Այդ թուականին Սուչովա (Պուքովինա), Պեսարապիա, Մուտոյ-Վալաքիա, ամէնքն ալ մի և նոյն քաղաքական հեղինակութեան ներքեւ կը գտնուէին, որով անկարելի էր կապուած մնալ ուրիշ պետութեան մը մէջ գտնուող առաջնորդի մը հեղինակութեան ներքեւ :

Մի և նոյն պատճառներով 1786ին Պուքովինա՝ Մուտո-Վալաքիոյ առաջնորդութենէն կ'անջատուի : Յովսէփ Եպիսկոպոս Արղութեանց այն ատեն առաջնորդ Պեսարապիոյ՝ նկատելով թէ Աւստրիոյ իշխանութեան ներքեւ գտնուող Սուչովայի Հայերը կարելի չպիտի ըլլայ հովուել Քիչնեւէն, կը խնդրէ Աւստրիոյ կառավարութենէն որ արտօնէ Պուքովինայի Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուիլը, ինչ որ կը թոյլատրուի :

1808ին համայն Ռուսիոյ (Աժտէրխանի) առաջնորդ Եփրեմ Եպիսկոպոս օգտուելով պետական սահմաններու փոփոխութիւններէն առաջնորդ ճանչցուեցաւ նաև Սուչովայի և Մուտո-Վալաքիոյ, սակայն այս միացումը շուտով ջնջուեցաւ և Սուչովա՝ Աւստրիոյ իշխանութեան տակ առանձին հովուութիւն մը կազմեց :

Կ. Պոլսոյ Պատրիարքարանի կողմանէ Ռուսմանիա զըրկուած այցելու հովիւները սովորաբար կ'այցելէին նաև Սուչովա, որով Պուքովինայի Հայերը, որոնք Լեհաստանի գաղթականութեան վերջին մնացորդը կը ներկայացնեն, անուանապէս Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրատասութեան ներքեւ կը գտնուէին :

1898ին կարգադրութեամբ Երուսաղիոյ առաջնորդութեան ենթարկուցաւ :

Ունի երկու հնօրեայ եկեղեցի և երկու վանք :

Բ. ԱՄԵՐԻԿԱՅԻ առաջնորդութիւնը նորակազմ վիճակ մըն է : 1829ին Ամերիկացի միախօսարներուն մեր մէջ երեւնալէն յետոյ, գէպի Ամերիկա՝ չահու սկնկալութեամբ գաղթողներ գտնուեցան :

Առաջին անգամ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը նկատի առնելով հետզհետէ գաղթողներուն հոգեւոր պէտքերը՝ 1889ին վարդապետ մը զրկեց իբր հովիւ : 1889էն մինչեւ 1898 Պատրիարքարանը տնտեսած է Ամերիկայի գաղութին հոգեւոր պէտքերը ամէն անգամ որ իրեն դիմում եղած է :

Հայերը այսպէս հետզհետէ Միացեալ-Նահանգաց մէջ կրցան պահպանել հոգեւոր կազմակերպութեան առաջին նշանակը եղող աղօթարաններ եօթը քաղաքներու մէջ առանձին երէցներով, և ուրիշ շատ մը տեղերու մէջ ցըրուած և անկարող հոգեւոր պէտքերը անտեսելու միջոցներէն :

Հետեւարար այդ ցրուած խումբերը մէկ կեդրոնի մը մէջ միացնելու և վարչական գործերը դիւրացնելու համար արդի Հայրապետը Ամերիկայի Հայոց հովուութիւնները միացուց և յատուկ կոնդակով հաստատեց Ամերիկայի Հայոց Առաջնորդութիւնը եպիսկոպոսի մը հսկողութեան տակ և յատուկ կանոնադրով, որ յետոյ թեմականք կազմեցին :

Այդ առաջնորդութեան կեդրոնն եղաւ 1. Ուսըրը՝ ամէնէն հայաշատ քաղաքը Ամերիկայի՝ ուր առաջին անգամ եկեղեցի մը շինուեցաւ. Ս. Փրկիչ անուանով :

2. Նիւ-Յորք ուր ունինք եկեղեցի մը վարձքով գործածուած :

3. Պոսթրն

4. Բրովիքնս

5. Չիքակոյ

6. Լորէնս, այս չորսը միայն մաստուաներ ունին :

7. Ֆրեզնոյ

8. Ուեսթ Հոլոֆրն, որոնք նորակերտ եկեղեցիներ ունին Ս. Երրորդութիւն և Ս. Խաչ անուանով :



ՕՍՏԱՆԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. Ե. Ն. ՍՈՒՂԹԱՆԻՆ

ԿՍ. ՅՍԵՐԱԿԱՆ ՖԷՐՄԱՆՈՎ ՀԻՄՆՈՒԱԾ

20 Սեփեռ 1310, 2/14 Օգոստոս 1892 ին

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ՓՈՒԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ ԴԷՄ

ԿՍՏԱՆԵՆ ԿՐԿ

ՆՆՕՐԵՆ

Ս Ս Ա Լ Թ Ա Ս

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

(Կ. Պոլս, Վալարիա, Կարապետյան)

ՔՐԷՏԻ ԼԻՅՆԷ

CRÉDIT LYONNAIS

ԱՆԱՆՈՒՆ (ANONYME) ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 250,000,000 ՖՐԱՆՔ

ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ՎՃԱՐԵԱԼ

ՊԱԶԵՍ 125,000,000 ՖՐԱՆՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ՃԻՒՂ

Կալաթա, Քարաֆեոյ, Նենի խան

ՄԱՍՆԱՃԻՒՂ Ք

Սթամպուլ. Սուլթան Համամ, Ալլահվերսի խան
Բերա. Մեծ փողոց, թիւ 333

ՔՐԷՏԻ ԼԻՅՆԷԻ Քարաֆեոյի նիւղն ինչպէս
նաեւ Բերայի յուր Սթամպուլի մասնաճիւղերը
դրամական ամէն տեսակ գործողութիւններ կը
կատարեն: Նոյնպէս փոխառութիւններ կ'ընեն
արժեթուղթերու վրայ:

Արժեթուղթերու փոխարէն ընթացիկ հաշիւ-
ներ կը բանան:

Ֆրանսայի եւ օտար երկիրներու զանազան
հրապարակներու վրայ փոխանակագիրներ կը
բաւեն:

Վարկի թուղթեր (Lettres de Crédit) կուտան:

Սահարանի գործողութիւններ (Ordre de Bourse) կը կատարեն Պոլսոյ եւ օտար հրապարակներու վրայ :

Կտրօններ անսիջապէս կը վճարեն :

Ի պահ կ'ընդունին արժեթուղթեր եւ բաժնեթուղթեր ինչպէս նաեւ դրամ չէֆերու փոխարէն վճարելի տոկոսաւոր կամ անտոկոս հաշուարկացով :

Որոշելի պայմաններով տոկոսաբեր եւ պայմանաւոր մուրհակներ կուտան : Ներկայիս մէկ տարուան համար 3% տոկոս :

Վարկի թուղթեր ներկայացնողներու դիրութեան եւ հանգստութեան համար յատուկ սրահ ունին :

Մասնաւոր դրամարկղներ վարձու կուտան :

Առեւտրական մուրհակներ, փոխանակագիրներ կը գանձեն եւ կը գեղչեն, ինչպէս նաեւ բեռնագրերու (Connaissement) փոխարէն գանձումներ կ'ընեն եւ կը գեղչեն :

Եւ անսիջապէս յանձնելու պայմանաւ կը գնեն եւ կը ծախեն տեղական եւ օտար զանազան վիճակահանութեանց արժեթուղթեր :


Սքանկոյի մասնաճիւղը վերոգրեալ բոլոր գործառնութիւններէն զայն ապրանքի վրայ փոխատուութիւններ կ'ընէ :

Վանառներ կ'ընդունի թէ՛ իբր ազատաւանդ (Dépôt libre) մթերանոցի վարձի (արժե) վճարմամբ եւ թէ՛ իբր վանառելի ապրանք Կ. Պոլսոյ եւ օտար երկիրներու մէջ ծախուելու համար :

WIENER BANK-VEREIN

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԵՌԱՅՆ

Հ. Ա. Ս Ս Ս. Տ ՈՒ Ա. Ծ 1869 Ի Ն



ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 130,000,000 ԳՈՒՐՈՆ

ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎՃԱՐՈՒԱԾ

ՊԱՇԵՍՏԻ ԴՐԱՄ 36,000,000 ԳՈՒՐՈՆ

ԿԵՂԵՐՈՆԱՏԵՂՐ. Վ.Ի.Է.Ն.Ն.Ա. 12 գրամենեակներ ունի այդ ֆազակին զանազան արջանակներուն մէջ

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ. — Բրախայի, Կրացի, Պրուսի, Օսիկի, Բեթրայի, Լեմպեկի, Չերնովիչի, Բլախենեուրդի, Պիլից-Պիպրայի, Բարլապասի, Բիլգենի, Բրոզնիցի, Ս. Բայրէնի, Թեքլիի, Վիլպախի և Վիներ Նեոքրասի մէջ:

Կ. ՊՈԼՍՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ

ԿԵՂԵՐՈՆԱՏԵՂՐ. ՂԱԼԱԹԻԱ. Քամանսո իսան Աւստրիական նամակատան վրայ

ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆ ՊՈԼՍՈՅ. Քիւչիւֆ Աւեր ԷՖ. փողոց Կսֆի Զապրիյէ

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԵՐԱՅՆ կը գրողի սեղանաւորական ամէն տեսակ գործողութիւններով, մասնաւորապէս կը բանայ ընթացիկ հաշիւներ, իբրև աւանդ կ'ընդունի պարտավճուղիներ, փոխառուութիւններ կ'ընէ ընթացիկ հաշիւներով, պարտավճուղիներ կամ արժեթուղիներ գրաւ ընդգրկելով կը հանէ չէքեր, վարկագրեր, փոխգրեր և վճարումներ կ'ընէ հեռագիրներով, կը գնէ և կը ծախէ ամէն տեսակ պարտավճուղիներ թէ մեր և թէ բոլոր ասար հրապարակներուն վրայ, կը զեղչէ և կը գանձէ կտրոններ և արժեթուղիներ, կը գնէ և կը ծախէ փոխգրեր բոլոր հրապարակներուն վրայ, կ'ընդունի տեսողի և պայմանաւճարով վճարելի պարտավճուղիներ, կը կտարէ սահարանական ամէն տեսակ գործողութիւններ:

Իրամատուներ բաց է առտուան ժամը 9¹/₂էն իրիկուան 4¹/₂ Ուրբաթ օրերը 9¹/₂էն 4:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԷՌԱՅՆԻ

Պոլսոյ մէջ նոր հաստատուած գրամատուէններ առեւտրական գործառնութիւններու գիւրութիւններ կուտան, սակայն ասոնց մէջ ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԷՌԱՅՆ միակն է որ բացի վաճառականական զարգացման համար նորանոր միջոցներ հայթայթելէ, ժողովրդեան, եսնաճ գասակարգին գիւրութիւն կուտայ իրենց գրամը խնայելու և խնայողական սնտուկ մըն ալ հաստատած է այս նպատակաւ որ 50 դրուշէն սկսելով կ'ընդունի որ և է գումարս

Ամէն մարդ փոխանակ իր խնայած գումարը, անհաստատ թուղթերու և անապահով միջոցներու յատկացնելու, թող յանձնէ այս խնայողական սնտուկին, որուն գրամագլուխը 130,000,000 գուրօն, ամբողջովին վճարուած է:

1000 սկիւէն վար ս և է գումարի համար 100ին 3 1/2 տակոս պիտի վճարուի նոյն սնտուկէն. իսկ ասկէ վեր գումարներու համար 100ին 3, պայմանաւ որ գրամատուէր պէտք տեսած ատեն զեղշէ կամ աւելցնէ անկոսի սակը 15 օր առաջ ծանուցանելով տեղական թերթերու մէջ:

Սնտուկը յանձնուած գումարները եթէ 100 Օամ. սկիւէն վար են, կրնան ետ առնուիլ որ և է ատեն, իսկ 100 սկիւէն մինչև 1000 սկիւ և աւելի գումարներու համար 3էն մինչև 30 օր առաջ տեղեկութիւն պէտք է տալ գումարին քանակութեան համեմատ:

Գրամատուէր իրեն կը վերապահէ փակել ս և է աւանդատուի հաշիւը, ու զուտած ատեն վճարելով անոր մնացորդ պահանջը:

ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԷՌԱՅՆ կրնայ նաև տեսրակ մը յանձնել անչափահաս տղու մը անունով, բայց այդ պարագային նախապէս սրոշուած խնամակալը միայն (վկչի կամ վասի) կրնայ գանձումներ կատարել: Ահաւասիկ գիւրութիւններ ժողովրդեան խնայած գրամը անկորուստ պահելու համար:

Երբ նկատուի թէ շարաշար աշխատութեան արդիւնք եղող որքան խնայուած գումարներ, անապահով միջոցներով կորսուած են, պիտի հասկցուի խկոյն թէ ՎԻՆԸՐ ՊԱՆՔ ՖԷՌԱՅՆԻ հաստատած այս սնտուկը, որքան բարերար և օգտակար դեր մը կատարելու կոչուած է: Աւրիմն պարտք մըն է մեզի համար յորդորել ժողովուրդը որ ՕԳՏՈՒԻՆ ԱՅՍ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՒ ԸՆԾԱՅԱԾ ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ:

ՆՈՐԹՅ ՊՐԻՔԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԵՆՔԱՅԼ

ԵՒ

ՆՈՐԹՅ ԸՐԵ

ՍԱՊԱՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴԵՏԻ ՊԵՏԵՅԻ

Ապաստուածքուն առ հասարակ օգտակարութիւնն և կարեւորութիւնն հարիւրաւոր ընկերութեանց ըրած գործաւորութեանց մեծութեանն յայտնի է: Հրդեհի դէմ ապաստուածքութիւնն իւր գաւաակարգին մէջ ամենակարեւոր ճիւղն է: Այս գրութեամբ ընկերութիւնք կը ստանձնեն տուժել հրդեհէ յառաջ եկած վնասներն ի փոխարէն կանխավճար սակագնայ մը զոր ապաստուածքայ կը վճարէ:

Հրդեհի դէմ կ'ապաստուածքուն Եկեք, Կարասիք, Ապրանք և Տան վարձք ըստ հետեւեալ պայմանաց:

Ա. Այլ որ կ'ապաստուածքէ՝ պարտի տէր լինիլ ապաստուածքելի ստացուածոց մասամբ կամ ամբողջովն:

Բ. Այլ որ կրնայ ստացուածքն իւր արժէքէն աւելի ապաստուածքել և այլեղէն վերջ ստացուածոց իրական արժէքէն աւելի բան մը պահանջել:

Գ. Եկեքի մը շինութեան տեսակն և շրջապատող շինութեանց նկատմամբ ունեցած դիրքը պարտին ճշգրիտ նկարագրուիլ ապաստուածքին մէջ: Հարկ չէ ըսել թէ սխալ նկարագրութեամբ մը ինչ վէճերու առիթ կը տրուի ապագային:

Հետեւեալ պարագայները պարտի ապաստուածքելուն լինաց տուր ընկերութեան:

1. Եթէ իւր մօտ աւրիշ շէնքի մը շինութեամբ կամ գործարանի մը հաստատութեամբ վտանգն աւելնայ:
2. Եթէ կարասիք կամ ապրանք փոխադրուիլ շէնքէ մը միւր:
3. Եթէ իւր ստացուածքն աւրիշի ծախէ:
4. Եթէ իւր բնակած տանը վարձու առ կամ վարձակային տեղ ինք բնակի:
5. Եթէ հրդեհն յառաջ եկած է ապաստուածքելուն սեղանի կամ անուղղակի մասնակցութեամբ ընկերութիւնը կը մերժէ որ և է հաստատուի վնասուել:

6. Ընկերութիւնն ըստ իւր կամաց կրնայ այրեալ ստացուածքն իւր նախկին վիճակին մէջ վերահաստատել կամ փասուց արժէքը վճարել :

7. Եթէ ոք իւր ստացուածքն ապահովագրած է ընկերութեան մը և նոյն ստացուածոց վրայ սրիշ գումար մըն ալ այլ ընկերութեան կ'ապահովագրէ՝ պարտի երկու կողմանց ծանուցանել զայդ հակառակ պարագային մէջ երկու ընկերութեանց ապահովագիրք չեղեալ կը համարուին :

8. Ապահովագրեալը պարտական է հրդեհի ժամանակ, եթէ ներկայ է, ձեռքէն եկածն ընել իւր ստացուածքն ազատելու համար, այս անթիւ յառաջ եկած ծախքերն ու փասներն ընկերութիւնը կը տուժէ ապահովագրուած գումարի համեմատութեամբ :

9. Տան մը վարձքն, ինչպէս յիշուեցաւ, կարելի է ապահովագրել եթէ վարձակալը գոնէ եռամսեայն կանխիկ վճարած է, ի դէպ հրդեհի ընկերութիւնը պարտի վճարել մինչև վճարման պայմանաժամը լրանալի աւուրց համեմատութիւնը միայն :

Ապահովագրեալը պարտի մեծ խնամով ընել ընկերութեան մը ընտրութիւնը. երբ մէկն իւր ստացուածքը կ'ապահովագրէ՝ պէտք է ապահով ըլլալ թէ իւր կրած փասը պիտի ստանայ. քանի՞ գումար է յուսախալ լինելը : Տնտեսագիտութեան սխալ առմամբ է որ, շատեր կը թողուն շնչին տարրերութեան մը համար հաստատուն փորձառու և հարուստ ընկերութիւններն և կը գիտեն փոքր ընկերութեանց որք ինքնաբերաբար կ'ընեն այդ զեղչ գնոց վրայ՝ տեսնելով որ եթէ գործեն նոյն հիման վրայ որպէս մեծ ընկերութիւնք, յաւերժական անգործութեան պիտի դատապարտուին : Ապահովագրութեան ասպարէզին վրայ ՆՈՐԹՉ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹՈՒՅԼ և ՆՈՐԹՉԸՐՆ ընկերութիւնք առաջնակարգ գիրք մը գրուած են իրենց գրամական բարգաւաճ վիճակաւ, և իբր արդարացի նոցա գործոց ընդարձակութեան և մեծահաշակ առատաձեռնութեան զանազան հրդեհներու միջոցին իւրաքանչիւրը 180,000էն մինչև 350,000 Անգլիական սկի վճարած են հրդեհի փասուց համար և ցարգ հրդեհի դէմ միայն իրենց տուժած փասը 48,500,000 Անգլիական սկին կ'անցնի :

ԱՊԱՀՈՎ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՅ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔՆԹԱՅԼ

ՀԻՄՆԵԱԼ



1809 ին

Դրամագլուխ	Անգղ. ոսկի	3,000,000
Պահեստի դրամ	" "	17,808,538
Հասոյթ 1906 տարւոյ	" "	4,001,810

ԾՈՎ ԱՅԻՆ ԱՊԱ

ՄԱՐԻԹ ԱՅՄ

Դրամագլուխ Անգղ. ոսկի 500,000

Ընդհանուր Գործակալք Կ. Պոլսոյ

Կաշարա, Մեհրէտ Աշի Փաշա

ՀՐԴԵՂԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ՆՈՐԹՅԸՆ ԷՇՈՒՐԸՍ



ՀԻՄՆԵԱԼ

1836 իԳ

Դրամագլուխ	Ա.նգդ. ոսկի	3,000,000
Պահեստի դրամ	" "	6,782,000
Հասոյթ 1906 տարւոյ	" "	1,761,000

ՀՈՎԱԳԻՌՈՒԹԻՒՆ

ՀԻՎԸՐԲՈՒԼԻ

Պահեստի դրամ	Ա.նգդ. ոսկի	559,172
--------------	-------------	---------

ԳՍՈՒՆԻԿ ՍԵՐՈՒԵԱՆ 1/2 ՈՐԴԻ

Խաւս, Թիւ 22 եւ 22 կրկին

ՏԵԱՐՔ ԳԱՌՆԻԿ ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ ընդհանուր
գործակալք նորթ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐԲԸՆԹԱՅԻ, ՆՈՐԹ-
ՀԸՐՆ ԵՒ ՄԱՐԻԹԱՅՄ ընկերութեանց, կը ծանուցա-
նեն արգոյ հասարակութեան թէ սոյն *սոսաջին եր-*
կոչ ընկերութեանց հաւաքաբար ընծայած բացար-
ձակ ապահովութեան՝ հսկայ դրամագլխի ու
ահագին պահեստի գումարաց տեսակէտով՝ կ'ըն-
դունին հրդեհի դէմ ապահովագրութիւն մայրա-
քաղաքիս, գիւղօրէից եւ գաւառաց մէջ *խիս*
դիւրամասշտի գնով եւ պայմաններով իսկ որեւէ
այլ ընկերութիւն. Նաեւ ի հաշիւ վերջնոյն կ'ա-
պահովագրեն շոգեմաւուց եւ առագաստամաւուց
մէջ բեռնուած ապրանքներն ու դրամածրար-
ներն, ինչպէս նաեւ ամենուրեք թղթատարով ու-
ղարկուած ինչքերը *խիս շահաւէտ եւ օգտակար*
պայմաններով :

Վնասուց վճարմունցն անմիջական,
առաստձեռնօրէն եւ կասարեալ
արդարութեամբ կը կասարուի:



ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ

Ս. Փրկչեան Հիւանդանոցի



Ծանօթ է արդէն Պատ. Հասարակութեան թէ տարիներէ ի վեր ի նպաստ Ս. Փրկչի Հաստատութեան սիկառի թղթեր շրջաբերութեան հանուած են, որոյ հասոյթէն կ'օգտուին անխտիր սոյն յարկի բոլոր պատասպարներն, և ուրախ եմք յայտնելու թէ այս հասոյթը բաւական կարեւոր գումար մը արտադրած է մինչև ցարդ, ինչպէս յետագայ ցուցակէն կ'երեւի:

Հոգարարձութիւնս փափաքելով որ սոյն ձեռնարկութիւնն աւելի արդիւնաւոր ըլլայ, զանազան միջոցներ ձեռք առած է սիկառի թղթին սպառումը ընդհանրացնելու և ամէն կարգի ծխողաց ճաշակը դահացնելու համար, ինչպէս նաև վերջերս շրջաբերութեան հանած է նոր կողքերով ընտիր թղթեր՝ զորս գործածողներ ջերմապէս գնահատած են:

Հոգարարձութիւնս այս առթիւ իրաւամբ կը սպասէ թէ Պարոյ և թէ գաւառաց պատուարժան մերայնոց քաջալերութեան, զի Հիւանդանոցիս սիկառի թղթերէն գործածողներն ոչ միայն կարգ մը ստորին թղթերէն ազատելով սոյն առող-

Չապահիկ թղթերէն պիտի օգտուին, այլ և պիտի նպաստեն բազմակարօտ Հաստատութեան մը նիւթական ամենօրեայ պիտոյից: Ահա այս պատճառաւ իսկ և վստահութեամբ ի նորոյ հրաւէր կը կարդացուի ընդհանուր ծխողներուն՝ անպատճառ սոյն սիկառի թղթերէն գործածել:

Գնողք պարտին ուշադրութիւն ընել Հիւանդանոցի կնքոյն՝ որով իւրաքանչիւր կողքերն ու տուփերը կնքուած են: Մեծաքանակ և փոքրաքանակ գնողք պարտին դիմել կամ յանձնարարել առ Մարտիկ էֆ. Շիրինեան, Եէնի ճամի, Բօսթահանէ փողոց, Շիրին խան: Գիները խիստ չափաւոր և գոհացուցիչ են:

ՑՈՒՑԱԿ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՒԹԻՑ

1894 տարւոյ զուա	Հասոյթը	• •	43,971 ¹ / ₂
1895	" "	" "	53,779 ³ / ₄
1896	" "	" "	57,239 ¹ / ₂
1897	" "	" "	51,352
1898	" "	" "	44,227
1899	" "	" "	23,553 ¹ / ₄
1900	" "	" "	26,399
1901	" "	" "	16,024
1902	" "	" "	27,605
1903	" "	" "	28,940
1904	" "	" "	37,123 ¹ / ₂
1905	" "	" "	38,925
1906	" "	" "	43,755
			<hr/>
			492,891 ¹ / ₂

Ս. ՅԱԿՈԲԱՅ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՐՅԵՍՏԱՐԱՆՆԵՐԸ

Երևանի Ս. Յակոբյանի տպարանում

ԿՕՇԻԿԻ ԱՐՅԵՍՏԱՐԱՆ

1899 ԻՆ ՇԱՍՏԱՏՈՒԱԾ

Այս Արհեստարանը Հիւանդանոցի բոլոր պատասպա-
րելոց կօշիկ հայթայթելով հանդերձ, արդէն իսկ կ'ըն-
դունի ամէն տեսակ յանձնարարութիւններ, զորս կը կա-
տարէ ամենայն խնամով մաքուր, կոկիկ, դիմացկուն
ու խիստ ճաշակաւոր ու աժան:

ԴԵՐՁԱԿԻ ԱՐՅԵՍՏԱՐԱՆ

1900 ԻՆ ՇԱՍՏԱՏՈՒԱԾ

Նորաձեւութեանց համաձայն՝ մեծ խնամով նոյն
Արհեստարանին մէջ կը պատրաստուին խիստ ձեւաւոր
զգեստներ, յանձնարարութիւններ կ'ընդունուին և ամե-
նայն յաջողութեամբ կը կատարուին, և ջանք չի խնայ-
ուիր յաճախորդները գոհ թողելու:

ԿԱՀԱԳՈՐԾԻ ԱՐՅԵՍՏԱՐԱՆ

1901 ԻՆ ՇԱՍՏԱՏՈՒԱԾ

Այս Արհեստարանը կրնայ ամենայն ճշգրտապահու-
թեամբ և անմրցելի զիններով ու մեծ խնամով պատրաս-
տել ամեն, գրասենեկի և այլ աշխատանոցներու վերա-
բերեալ ամէն կարգի փայտեղէն կան կարասիներ ու
լրեղէններ:

ՏՈՔԹ. ՍԻՆԵՍՍՈՂԼՈՒ

Մասնագէտ Մորթային հիւանդութեանց

Տոքթոր Սինեսուզու, որ նախապէս Պերլինի համալսարանին մէջ մորթային հիւանդութեանց ուսուցչի օգնական եղած է, մորթային և գաղղիական հիւանդութեանց մասնագէտն է, և վերջերս Պերլինէն Կ. Պոլիս գալով, Բերա, Մեծ-Փողոց, Պազար Ալմանի դէմք, 407 թիւ Սթամբուլի արարթըմանին մէջ բացած է իր աշխատանոցը: Ամէն օր ժամը 5էն մինչև 9, իր աշխատանոցին մէջ կ'ընդունի վերայիշեալ հիւանդութեանց ենթարկուած անձերը, զորս կը դարմանէ զիտական վերջին դիւտերու միջոցաւ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

ԱՍԵՂՆԱԴՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԺԻՏԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹՈՑ

ՇԱՒԺԵԱՆ ԵՒ ԹԱՎՇԱՆԵԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊՍԼԱՏԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Էսֆի Զապրիյէ հասէսիւ, թիւ 63

Ազգրանաց տեսակներու նոխութեամբ ու չափաւոր գիներով ծախող հանրածանօթ այս հին վանառւարանը եւրպական առաջնակարգ զոյժարանաց հետ միշտ ունեցած յարաբերութեանց շնորհիւ կը գտնուի պատրաստ հաւարածոյ մը ասեղնագործութեան և օժիտի վերաբերեալ նոր ու ընտիր նիւթերու, ինչպէս մետաքսեայ կերպամներ, անլազ, Թաւիշ, Թաւթա, ոսկեզօծ ու արծաթեայ զուտ ու անզուտ թելեր (խամ և կամ օրրմա), ներմակեղէնի համար ընտիր պոտոկներ, վալանսիէն ու մետաքսէ Թանթէլաներ, ներմակ բրձան, գաղղիական ընտիր շապիկի կերպամներ, բիքէներ, գունաւոր պամիսմներ, և այլն և այլն:

Չեռագործ բանուած ու սկսուած զանազան նոխ նիւթոց հաւարածոյ մը պատրաստ կը գտնուի:

Կ. Պոլսոյ և գաւառաց դպրոցական հարստատուութեանց համար մատուար գեղջ կ'ըլլայ:

Վանառւարան մէջ կը գտնուի միշտ պատրաստ ասեղնագործի զծագրիչ մը:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՅԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱՆ Ի ԲԱՐԻՉ 1828 - 1829

ՀՐԴԵՅԻ ՃԻՒՂ

Գրամագլուխ եւ պահեստ	Ֆր. 142,500,000
1906ին գանձուած ապահովագրին	27,000,000
Մինչեւ 1906ի վերջը հասուցեալ վնասք	333,000,000
Ապահովագրեալ դրամագլուխ	23,500,000.000

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Ընթացիկ ապահովագրութիւնք	302,000,000
1906ին գանձուած ապահովագրին	12,500,000
Մինչեւ 1906ի վերջը հասուցեալ վնասք	157,000,000
Գրամագլուխ եւ պահեստ	174,500,000

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% ինչ



որ **Ի Ի Ն Ի Օ Ն**ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը որուն նմանը կարելի չէ գտնել Արեւելքի մէջ գործող ուրիշ ոեւէ բնկերութեան հոյ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղ-

չեալ զիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ ո ե է ընկերութեան պայմանները: Եահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով **Ի Ի Ն Ի Օ Ն**ի ապահովագրողք զերծ են այն վնասներէն ե յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք որ շահարածիներու բարդման (accumulation des bénéfices) յուր ա վնասակար դրութեամբ գործող բնկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամաւորներն է

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Կենաց նիւղին Տեսուչ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէն
ՄԻՀՐԱՆ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ ՍԻՄՈՆ ՔԱՅՍԷՐԼԵԱՆ

Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Գաբրիել օղլու

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր բաղանջ մէջ:

Արքայական Գազարախոսք



ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ՀԻՄՆԵԱԿ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԿ ԱՊԱՀՈՎԱԳԻ. ԸՆԿ.

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

20,000,000 ՖՐ.

Վճարներու անմիջական վճարում

Ընկերութեան դրամասունք ԲՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ երաշխաւորութեան գումար

50,000,000 ՖՐ.

Կեանքի Ապահովագրութեան շահուէս պայմաններ :
Սակացոյցի անմրցելի առաւելութիւններ : 3⁰/₀ տակոս
Երաշխաւորուած Ապահովագրական մուրհակներ : Է.այլն :

Վերսիլեալ Ընկերութեանց Լիազօր Ներկայացուցիչ

ԻՆԵԱՍ Ս. ՏԱՆՏՐԻԱ

Տեղիւնեալ խան, Թիւ 8, 9, 10, 11, 12, Կանտարն

ՅՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը իր իրաւասութեան շրջանակովը Ամենայն Հայոց Կաթողիկոսէն յետոյ երկրորդ տեղը կը գրաւէ :

Եկեղեցական նուիրապետութենէն աւելի ներկայացուցիչի հանդամանքով կը ներկայանայ անիկա և ծնունդն է արտաքին պարագաներու՝ որոնք անհրաժեշտ կը դարձնէին այսպիսի աստուծոյ մը հիմնարկութիւնը :

Արդէն բոլոր աստուծոնք ծնունդ են արտաքին պարագաներու, և ի սկզբան Քրիստոնէական նախնական դարու մէջ անոնք եկեղեցիներու գաւառական կազմութեան կը հետեւէին/և անոնց կեդրոն կը հանդիսանային : Հետեւաբար եպիսկոպոսական աստուծոնք իբր երէցներու պետքազաքներու մէջ և արքեպիսկոպոսները՝ իբր պետ եպիսկոպոսներու նշանաւոր քաղաքներու և մայրաքաղաքներու մէջ կը նստէին, որով եպիսկոպոսութիւնները ուղղակի ժողովուրդին կապուած պաշտօններ էին :

Միջին դարու մէջ երբ վանքերը կազմակերպուեցան, վանքերու հասոյթներ ապահովելու համար եպիսկոպոսական թեմերը վանքերու վիճակ նկատուեցան : Այնպէս որ գլխաւոր վանքերը իրենց շրջակայ թեմերուն կեդրոն եղան :

Ժամանակին ընթացքին մէջ հետզհետէ կարգ մը վիճակներ վանական շրջանակներէ անջատուեցան :

Փոքր Ասիոյ շրջանակին մէջ Գաղատիոյ Ս. Աստուածածին վանքը առաջին առաջնորդական կայանն է, որուն յաջորդած է յետոյ Արմաշու վանքը :

Վանական այս վիճակներու հետ միասին կազմուած է քաղաքի արքեպիսկոպոսութիւն մը՝ այսինքն Կ. Պոլսոյ

Պատրիարքութիւնը, որուն հիմնադրութիւնը 1461ին եղած է Յաթի՛ն Սուլթան Մէհէմէտ Բ.ի հրովարտակով, սակայն իր ծագումը աւելի հին է :

Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի (+1056) ժամանակ Յունաց կրօնական հալածանքները Հայերը օտար երկիրներ մղած էին, մասնաւորապէս Սելճուգեանց իշխանութեան երկիրները, ուր բազմաթիւ քրիստոնեաներ ապատանեցան ԺԱ. դարէն մինչեւ ԺԴ. դար :

Այդ ժամանակամիջոցին մասնաւորապէս Կուտինայի և Իկոնիոյ շրջակայքը բաւական Հայ բնակչութիւն գոյութիւն կ'առնէ :

Եւ երբ Օսմանեան պետութիւնը հիմնուեցաւ Սուլթան Օսմանի ձեռքով 1299ին, Հայերը բնակութեան տեղեր ստացան, և Օսմանեան Սուլթաններու մեծագործ շինութեանց մէջ իբր բանւոր աշխատեցան :

1324ին պետութեան մայրաքաղաքը երբ Պրուսա փոխադրուեցաւ, Կուտինայի, Իկոնիայի և Գարամանցի Հայեր հոն հաստատուեցան :

Նախապէս սակաւաթիւ էին և որովհետեւ Գարամանէն կուգային կամ աւելի Քէօթահեայէն, անոնց հոգեւոր հովիւները միանգամայն կը հովուէին Պրուսայի Հայերը :

Յովակիմ եպիսկոպոսի Քէօթահեայի մէջ յիշատակներ ունենալը ցոյց կուտայ թէ ինքը լոկ Պրուսայի եպիսոմը չէր, այլ Օսմանեան կայսրութեան սահմանին մէջ գըտնուող Հայերու հոգեւոր հովիւ մը : Այդ հոգեւոր շրջանակին կեդրոնը բնական է թէ Պրուսա չէր, սակայն պարագաներն յետոյ այնպէս բերին որ յարաբերական գործոց համար Յովակիմ եպիսկոպոս ստիպուեցաւ Պրուսա նստիլ :

Ինքը հաւանօրէն Բերիոյ եպիսկոպոս էր կանխապէս (Բիւզանդիոն թիւ 3118) և յետոյ Կաթողիկոսական Աթոռին փոխադրութեան օգնող Կիլիկեցի եպիսկոպոսներէն մէկը ըլլալով, 1442ին Կուտինա և 1445ին Պրուսա անցած է :

Ասոր համար 1441ին Վաղարշապատի եկեղեցական ժողովին թելադրողներէն և անոր եզրակացութեան առաջին համակերպողներէն մէկը եղած է Յովակիմ :

Պրուսա պաշտօնավարած ատեն իր բնաւորութեամբը հաճելի հանդիսանալով Օսմանեան Սւազանիին, երբ Կ. Պոլսոյ գրաւումէն յետոյ Պրուսայէն Հայ գաղթականներ Կ. Պոլիս բերուած են, Յովակիմ եպիսկոպոսն ալ իբր հոգեւոր գլուխ նոյն գաղթականութեան և իբր ներկայացուցիչ Օսմանեան սահմաններու մէջ գտնուող Հայոց Պրուսայէն տեղափոխուած է Կ. Պոլիս, արքունի հրովարտակով հռչակուելով Թուրքիոյ բոլոր Հայոց Պատրիարք :

Այն ատեն Օսմանեան պետութեան սահմանները կը տարածուէին Ասիոյ կողմէն այսօրուան Պրուսայի, Այսրնի, Գասթիւնուցիի, Էնկիւրիի և Սըվազի կուսակալութեանց վրայ, իսկ Եւրոպիոյ կողմէն՝ մինչև Պալգան լեռները :

Նախ քան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հաստատութիւնը, այդ սահմաններուն մէջ կազմակերպեալ թեմեր էին :

Ա. Սըվազ որուն կեդրոնն էր Ս. Նշանի վանքը :

Բ. Էնկիւրի որուն առաջնորդանիստ կայան էր Ս. Աստուածածնայ վանքը :

Գ. Պրուսա-Քոթահեա-Գարաման, որոնցմէ վերջինը Պատրիարքին սեպհական վիճակը մնաց, իսկ միւս երկուքը կցուեցան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան՝ Տաթիհ Սուլթան Մէհմէտի շնորհած հրովարտակի զօրութեամբ :

Սուլթան Մէհմէտ Բ. Տաթիհի օրով գրաւուեցաւ նաեւ Տրապիզոն (1461ին) և Ղրիմ (1479), որով երկու առաջնորդութիւններ եւս միացան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան :

Այսպէս նոյն և յաջորդ դարերուն մէջ Օսմանեան

պետութեան սահմանները հետզհետէ աւելի կ'ընդարձակուին, այսպէս Սուլթան Սէլիմ Բ. (1512–1520) կը տիրապետէ Կիլիկիոյ, Սուրիոյ, Միջագետքի, Բաղէշի, Մալաթիոյ, Պաղեստինի, Եգիպտոսի և նոյն իսկ Ատրպատականի :

Այս յաղթութիւններով Կ. Պոլսոյ Պատրիարքութեան բարոյական հեղինակութիւնը կ'աճի հանդէպ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան և Երուսաղէմի Պատրիարքութեան, որոնք իրենց ամբողջութեամբը, իբր նոյն ազգութեան մաս, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան վերադարձ կը նկատուին Տաթիհի հրովարտակին զօրութեամբը, թէեւ մինչեւ այս դրութեան նուիրագործումը երկար ատեն անցած ըլլայ :

Նոյնը պատահած է նաեւ արեւելեան թեմերու համար, որոնք հնօրեայ աւանդութիւններով առաջնորդներու անուանումը էջմիածնայ Աթոռին սեպհական իրաւունքը ճանչցած ըլլալով, բաւական ժամանակ անցնելէ յետոյ վերջնականապէս Կ. Պոլսոյ Աթոռին իրաւասութեան ենթարկուած են :

Եւ այսպէս ԺԶ. դարուն ընթացքին մէջ միայն երկու թեմ

Ա. Մուս՝ իր յարակից վիճակներով, որոնք յետոյ քանի մը վիճակի վերածուած են :

Բ. Տիարպեփի նոյնպէս իր շրջակայքովը Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան անցած են, և ասով եօթի բարձրացած է ստորադաս առաջնորդութեանց թիւը :

ԺԷ. դարուն սկիզբը կարեւոր փոփոխութիւն մը կը նշմարուի Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ենթակայ առաջնորդութեանց շրջանակին մէջ :

Փոքր Ասիոյ առաջակողման մասին մէջ և Ռուսելի հարաւային կողմերը 1590էն մինչեւ 1606 ստուարաթիւ Դերջանցի, Երզնկացի, Կամախցի, Ակնցի և

Տիվրիկցի գաղթականներ կու գան և կը հաստատուին :

Կ. Պոլսոյ Պատրիարքարանին շրջանակին մէջ հաստատուած այս գաղթականներուն հոգեւոր պէտքերը տընտեսելու համար, կամ ինքնին կամ Պատրիարքարանի հոգածութեամբ՝ թեմական և վիճակային կաղմակերպութիւններ կը ստեղծուին :

Այսպէս Նիկումիոյիոյ շրջակայից մէջ հաստատուող Հայ գաղթականներուն հոգեւոր կեդրոնը կը դառնայ Արմաշու վանքը, որ 1611ին կը հիմնուի նուիրակ Թադէոսեպիսկոպոսի ձեռքով, Ռոսոսքոյի Հայերը իրենց հետ ունենալով Գրիգոր վարդապետ Բարանաղցին՝ անպաշտօն կերպով գոյութիւն կ'առնէ հոն ալ առաջնորդութիւն մը եւայլն :

1612ին և 1613ին Կ. Պոլսոյ Պատրիարքին սեպհական վիճակին ստորաբաժանումը կը նուիրագործուի, (Գրիգոր Վ. Դարսնաղցիի վկայութեամբ. ձեռագիրը Երուսաղէմի վանքը պահուած, և որուն ամփոփումը կը պարտինք Մեսրոպ Վ. Նշանեանի) կրկնակ կարգադրութիւններով որոնց հետեւանքը կ'ըլլայ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան սահմաններուն մէջ կաղմակերպութիւնը բոլորովին նորքանի մը վիճակներու որոնք էին .

Ա. Էսիբնի

Բ. Ռոսոսքո

Գ. Պրուսա որուն կեդրոնն էր հաւանօրէն Արմաշու վանքը, որմէ անջատուեցաւ նոյն դարուն :

Իսկ աւելի ուշ ժամանակներու մէջ՝ դէպի նոյն դարուն վերջերը

Ա. Ամասիա-Մարզուան

Բ. Ուրճա

Գ. Կեսարիա

Կ'ենթարկուին Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան :

Իսկ ԺԸ. դարու ընթացքին մէջ Կ. Պոլսոյ իրաւասութեան ենթարկուած վիճակներն են

- Ա. Արաբկիր
- Բ. Էրզինկեան
- Գ. Էկին
- Դ. Թոֆաս
- Ե. Խարբերդ
- Զ. Կարս
- Է. Ախրլցիսա

Իսկ նոյն դարու ընթացքին մէջ ուրիշ թեմերէ անջատուելով առանձին առաջնորդութիւններ կազմած են :

- | | |
|------------|---|
| Ա. Արմաշ | } որոնք հաւանօրէն Պրուսայէն զատուած են ԺԸ. դարուն առաջին քառորդին մէջ : |
| Բ. Կուսիկա | |

Գ. Շապին-Գարա-Հիսար

Դ. Պանսրմա-Պալրֆեսիր որ նոյնպէս 1780ին Արմաշէն բաժնուելով կազմուած է :

Այնպէս որ ԺԸ. դարուն վերջերը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ գտնուող թեմերը բաւական նշանակելի հանգամանք մը կ'առնեն :

Այդ թուականէն մնացած յիշատակարան մը (Սարգիս դպիր Յովհաննէսեանի ձեռագիր), որ հնագոյն վաւերագիրն է Կ. Պոլսոյ Պատրիարքութեան թեմագրութեան վրայ խօսող, 20 առաջնորդութիւն կը հաշուէ, որոնք են (իր ուղղագրութեամբ)

1. Էսրէնէ
2. Թեֆրսաղ
3. Էնկիւրիւ
4. Ղայսերի
5. Ամասիա
6. Պրուսա
7. Թոֆաս

8. Սրվազ
9. Էկիճ
10. Շապին-Գարա-Հիսար
11. Թումարզա
12. Տրապիզոն
13. Էրզինկեան
14. Տիարպեփր
15. Ուռճա
16. Էրզրում (Մուշի Ս. Կարապետ և այլ շրջակայք
յարակից են այս թեմին)
17. Ղարս
18. Ախրլցղա
19. Ուռումելու մուխաթայն (Ղրիմ, Պեսարապիա ևն)
20. Արմաշու մուխաթայն (Նիկոմիդիա ևն.)

Այս յիշատակարանը որ հաւանօրէն 1780էն առջի վիճակը կը ներկայացնէ, բաւական զգալի փոփոխութեան մը կ'ենթարկուի յաջորդ դարուն սկիզբը, մասնաւորապէս Էջմիածնայ կաթողիկոսներուն կողմանէ նուիրակներու առաքման անկարելիութեան բերմամբ :

Այնպէս որ 1828ի կարգադրութեամբ

Ա. Իզմիր

Բ. Պաղսաս և այլ մեծ և փոքր Օսմանեան տէրութեան մէջ գտնուող Տերունի վիճակներ միացան Կ. Պոլսոյ Պատրիարքութեան և անոր ստորադասեալ առաջնորդութիւններ կազմեցին :

Նոյնպէս կարգ մը վիճակներ կը ստորաբաժնուին տեղական պէտքերը և պահանջքները նկատի առնելով :

Այնպէս որ 1834 թուականով արձանագրութեան մը մէջ (Պատրիարքարան) կը տեսնենք որ վիճակներու թիւը բարձրացած է 36ի :

1. Էսիրնէ

2. Թեփրսաղ

3. Վառնա } Ռուսիի մուխաթային ստորարա-
4. Շուվնու } ժանումները :
5. Նիկոմիդիա
6. Պրուսա
7. Իզմիր (1828ին միացած)
8. Պանսրմա
9. Կուսինա (ժ.Ը. դարուն առաջին քառորդին մէջ
կազմուած է հաւանօրէն, սակայն Սարգիս դպիր
չէ յիշած զայն գուցէ մոռացմամբ) :
10. Մարզուան-Ամասիա
11. Եւդոկիա (Թոֆաս)
12. Թամգարա
13. Գաղասիա
14. Կեսարիա
15. Սեբասիա
16. Չնֆուս եւ Ասիս (ժ.Թ. դարուն կազմուած)
17. Շապին-Գարա-Հիսար
18. Երզնկա
19. Ակն
20. Արաբկիր (1828էն առաջ Տէրունի վիճակ էր)
21. Սդեսիա
22. Չարեամպա (ձանիկ որ նոր կազմուած է 1820-
1830ին)
23. Տրապիզոն
24. Կարին
25. Արղըն (որ Սարգիս դպիրի Տիարպէթիլին կը վո-
խանակէ, վանքը այս ըլլալուն համար այսպէս
յիշուած) :
26. Բաբերդ (Ս. դպիր չունի) } ուրիշ վի-
27. Բալու » » » } ճակներու
28. Դապեմ (Խարբերդ) » » » } յարակից
29. Վան » » » } էիննախապէս

30. Ածպրսեր (Ս. դպիր չունի) Շապին Գարա-
Հիսարէն անջատուած :
31. Մուռ Կարինէն անջատուած անցեալ դարուն
սկիզբը՝ անոր համար կը պակսի Սարգիս դպիրի
ցանկին մէջ :
32. Պուլանրիս (նոյնպէս)
33. Խնուս (նոյնպէս)
34. Կեօֆուս (?)
35. Մասնավանից թեմ (հաւանօրէն Մշոյ մասը կը
համարուէր Սարգիս դպիրէ) :
36. Ս. Դանիէլ Կեսարիոյ բաժնուած Կեսարիոյ
առաջնորդութենէն :

Ասոնցմէ այսօր անջատ վիճակ կազմելէ դադրած են .

- | | | |
|--------------------------------|-----|---|
| 1. Վառնա | } | Երկուքը միանալով Պուլկարիոյ
թեմը կազմած են : |
| 2. Շուսնու | | |
| 3. Չնֆուս | } | Իրարու միացած են : |
| 4. Արդրն | | |
| 5. Ածպրսեր | | |
| 6. Թաւգարա | } | Շապին-Գարա-Հիսարի միացած |
| 7. Պուլանրգ=Մշոյ | | |
| 8. Խնուս=Կարնոյ | | » |
| 9. Կեսարիոյ Ս. Դանիէլ=Կեսարիոյ | | միացած |
| 10. Կեօֆուս= | (?) | » |
| 11. Մասնավանից թեմ = Մշոյ | | » |

Որով այս թեմերուն թիւը (36-11) 25ի իջած է :

Սակայն միւս կողմէն անոնց վրայ աւելցած են փոխ-
առաջնորդութիւններ՝ որոնք վերստին կազմակերպուելով
այսօր յարակից վիճակներ կը կազմեն : Որոնք են .

26. Բասեն (Կարնոյ յարակից)
27. Իերզան » »
28. Քեմախ Երզնկայի »
29. Հեֆեարի Վանայ »

- 30. Չարսաննագ
 - 31. Չմեկածագ
 - 32. Սղերդ
 - 33. Քղի (Կարնոյ յարակից)
- } Իրարու միացեալ

Նոյնպէս նոյն դարուն մէջ բոլորովին նոր կազմակերպուած կամ նոր ստացուած վիճակներ կը ներկայացնեն :

- 34. Պաղտաս
- 35. Պայագիս-Ալաւկերս
- 36. Արմաւ որ 1866ին Նիկոմիդիոյ վիճակէն բաժնուած և Կ. Պոլսոյ յարակից վիճակ մը կազմած է
- 37. Լիւ-Կսուց
- 38. Գասթեմուլի (1898ին նոր կազմակերպուեցաւ)
- 39. Գոնիա (նոյնպէս)
- 40. Պուլկարիա (Վառնա-Շումնուի միացմամբ կազմուած)
- 41. Ռումանիա (Ռումելի մուխաթային մէկ մասը որ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ է)
- 42. Եգիպտոս (Երուսաղէմի Պատրիարքութիւնէն Կ. Պոլսոյ անցած՝ անցեալ դարուն կէսերը)
- 43. Չնուււ-Արդրն երկու վիճակներու միացումովը կազմուած է
- 44. Պիլենիկ որ 1876ին կազմուած թեմ մըն է :

Ասով կը լրանայ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան ուղղակի իրաւասութեան ենթակայ վիճակներու կազմակերպութիւնը, որուն փոփոխութիւնները պիտի պարզենք ի ստորեւ իւրաքանչիւր թեմի վրայ խօսած ատեննիս :

Այս առաջնորդութիւններէն զատ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան մասը կը կազմեն քանի մը հովուութիւններ, որոնք վիճակային կազմակերպութենէ զուրկ կը մնան տակաւին : Ասոնք են .

1. Սեւանիկ
2. Կրեթե
3. Աթենք
4. Տրիպոլիս (Ափրիկեան)
5. Կիպրոս

* * *

1. Կոստանդնուպոլիս՝ Պատրիարքի սեպհական վիճակ : 1453էն առաջ իր յատուկ եպիսկոպոսները ունեցած է ժ. դարէն սկսեալ : 1461ին Պատրիարքական տիտղոս ստացած է և առաջնութիւն Օսմանեան պետութեան սահմաններու մէջ գտնուող առաջնորդութեանց վրայ :

Պրուսա, Ադրիանուպոլիս, Իզմիր մինչև Քէօթահիա նախապէս այս թեմին մասերն եղած են և յետոյ հետզհետէ անջատուած և նոր առաջնորդութիւններ կազմուած են : Այսօր այս վիճակը ունի 43 եկեղեցի և 1 վանք, Կ. Պոլսոյ կուսակալութեան մէջ :

2. Էպիրնէ, Է. դարէն սկսեալ պարբերաբար Հայաքնակ եղած : Թ. դարուն առանձին եպիսկոպոս ունեցած է, սակայն շուտով դադրած : 1612ին վերստին առանձին վիճակ կը կազմէ : Իր իրաւասութեան շրջանակը հին ատեն շատ ընդարձակ էր : Մէկ կողմէն մինչև Պալքանեան լեռները և միւս կողմէն մինչև Պելկրատ այս թեմին մասերը կը կազմէին :

Այսօր սահմանափակուած է Էպիրնէի կուսակալութեան Էպիրնէ, Կիւմիւլճինա և Տէսէ Աղաճ սանճագներու միջև :

3. Էմիւրուսող կամ Առոսսո 1605—1606 թուականներուն Կամախեցի գաղթականներուն հաստատութենէն անմիջապէս յետոյ կազմուած վիճակ մը : Ժ. դարուն մէջ այս թեմին իրաւասութեան տակ կը գրտնուէին նաև Սերէզ, Տրամա, Աելանիկ և Հելլադա, ինչպէս նաև Միջերկրականի կղզիներէն ոմանք :

Հիմա Էտիրնէի վիլայէթին Թէքիրտաղ և Կէլիպօլու սանճագներուն և Չանագ-Գալէ և Չաթալճա ուրոյն սանճագներու մէջ գանուող եօթը քաղաքներ այս թեմին մասը կը կազմեն :

4. Ա. — Իզմիթ կամ Նիկոմիդիա՝ Ժէ. դարուն սկիզբը Հայ գաղթականներ կը հաստատուին մերձակայ շրջանակին մէջ : 1611ին կը հիմնուի Արմաշու վանքը , որ հոգեւոր կեդրոն մը կ'ըլլայ նոյն կողմերը գանուող Հայ գաղթականներուն համար :

1613ի կարգադրութեամբ , Իզմիտի , Պալըքէսէրի և ուրիշ մերձակայ տեղերու Հայ բնակած գիւղերը և քաղաքները Պրուսայի առաջնորդութեան մասը կը կազմեն : Հաւանօրէն Ժէ. դարուն վերջերը կամ ԺԸ.ի սկիզբները Իզմիտի վիճակը Արմաշ կեդրոնով կ'անջատուի Պրուսայէն և կը կազմէ առանձին վիճակ :

Իր իրաւասութեան ներքեւ ունէր այս օրուան Իզմիտի սանճագէն զատ նաև Գասթէմունի կուսակալութենէն Տիւղճէ և Պօլու , ինչպէս նաև Բաղարու գիւղերը Խիւտավէնտիկեարէն : 1866ին , վարչական որոշումով , Արմաշու վանքը անջատուեցաւ վիճակէն :

4. Բ. — Արմաօ 1866 — 1889 լոկ վանահայրութիւն մը եղած է , իսկ 1889էն մինչև հիմա Փոխ-վանահայրութիւն մըն է կ. Պոլսոյ Պատրիարքութեան յարակից : Հոն կը պահուի Իպրեվանք մը՝ ուսումնական վարդապետներ հասցնելու համար :

Թեմական կազմակերպութիւն չունի սակայն նոյն նահիյէին պատկանող երեք գիւղերու՝ Արմաշի , Սասկալի և Մէճիտիյէի հովուութիւնը Արմաշու Փոխ-վանահայրերու իրաւասութեան ներքեւ է :

5. Պրուսա՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան կազմութենէն առաջ կազմուած , սակայն յետոյ անոր միանալով առանձին առաջնորդներ չէ ունեցած :

Ժէ. դարուն սկիզբը դարձեալ առանձին առաջնորդութիւն մը կը կազմէ, իրեն յարակից և ենթակայ ունենալով առաջակողման Փոքր-Ասիոյ հայաբնակ քաղաքներէն մէկ մեծ մասը:

Հետզհետէ իրմէն բաժնուած են Իզմիտի, Պալքէսիր-Պանտրմայի և Քէօթահիոյ վիճակները: Հիմա Խիւտաւէնտիկեարի կուսակալութեան Պրուսա սանճագը կը կազմէ նոյն վիճակը:

6. 'Պալքէսիր-Պանտրմա' ինչպէս ըսինք բաժնուած է Պրուսայի թեմէն ԺԸ. դարուն վերջերը (1784): Խիւտաւէնտիկեարի կուսակալութեան Գարասի սանճագը և Պիղա՝ Չանագ-Գալէի ուրոյն սանճագէն այս վիճակին մասը կը ներկայացնէին: Հիմա Պիղա Ռոտոսթոյի յանձնուած է:

7. 'Քէօթահիա-Աֆիօն-Գարահիսար' այսօր Խիւտաւէնտիկեարի Քէօթահիա և Աֆիօն-Գարահիսար սանճագներովը կը կազմուի այս թեմը, որ բազմաթիւ կերպարանափոխութիւններ կրած է հինէն ի վեր:

Կ. Պոլսոյ առաջին Պատրիարքին՝ Յովակիմ Եպիսկոպի առաջին կայանը եղած է, յետոյ Պրուսայի թեմին մասը:

1613էն յետոյ հաւանօրէն Պրուսայի նորակազմ վիճակին մասը կը կազմէր, որմէ անջատուած է նոյն դարուն կամ աւելի յաջորդին սկիզբները:

Այն ատեն Պիլէճիկի առաջնորդութիւնը նաև մասը կը կազմէր Քէօթահիայի առաջնորդութեան, մինչ Աֆիօն-Գարահիսար և Ուշագ Էնկիւրիի առաջնորդութեան կը պատկանէին: 1844ին այս վերջին երկու քաղաքները Էնկիւրիի առաջնորդութենէն Քէօթահիայի թեմին անջան: Յետոյ կրկին Աֆիօն-Գարահիսար Էնկիւրիի յանձնուած է, որմէ 1872ին վարչական որոշումով անջատուած է, սակայն 1875ին Ուշագի հետ միասին դարձեալ Էնկիւրիի յանձնել պատշաճ դատուած է, ինչպէս նաև

Պիլէճիկ իր շրջականերովը առանձին առանձին առաջնորդութիւն մը կազմած է : Այնպէս որ Քէօթահիա բոլորովին առանձին թեմ մը կը ներկայացնէր : 1880ին Աֆիօն-Գարահիսարի թեմականները ևս անջատ թեմ մը կազմելու ձեռնարկ ըրին , սակայն Պատրիարքարանը միացեալ թեմի հանգամանքով միայն գոհացում տուաւ իրենց փափաքին : Իսկ Էսկիշէհիի նորակազմ գաղութը , որ Պիլէճիկէն կը ստանար իր հոգեւոր գործոց մատակարարութիւնը , 1889ին Քէօթահիայի առաջնորդութեան ենթարկուեցաւ , որով լրացաւ Քէօթահիայի վիճակային կազմակերպութիւնը :

Երկու միացեալ վիճակները ունին իրենց անջատ վիճակային կազմակերպութիւնը և Գաւառական Ժողովները :

Յ. Պիլէճիկ. 1875ին Պիլէճիկ Քէօթահիայէն անջատուելովը կը կազմէ առանձին վիճակ մը , իրեն ստորադաս ունենալով Չալկարա , Մուրատչայ , Ասարլըզ , Եէնի-Քէօյ , Թիւրքուման և Կէօլ Տաղ գիւղերը :

Ինչպէս ըսինք , պահ մը անոնց վրայ աւելցած է նաեւ Էսկիշէհի :

Ծ. Էնկիւրի կամ Գաղատիա . Արևմտեան Փոքր Ասիոյ մէջ յիշուած հնագոյն առաջնորդութիւններէն մէկը : ԺԴ. դարուն սկիզբէն յաջորդաբար կը յիշատակուին իր եպիսկոպոսները :

ԺԵ. դարուն մէջ հիմնուած է Գաղատիոյ Ս. Աստուածածնայ վանքը , որ Հայոց հնագոյն վանքն է Փոքր Ասիոյ մէջ : Եւ որովհետեւ երբեմն վանքերն էին առաջնորդութեանց կեդրոնները , դիւրին է մակարեւել թէ Գաղատիոյ վիճակն ալ հնագոյն է Փոքր Ասիոյ մէջ հաստատուած առաջնորդութեանց : Էնկիւրի հին ատեն էր նաև ընդարձակ և կարեւոր նուիրակութեան մը կեդրոնը , որուն սահմանները կը պատշաճէին հին առաջ-

նորդութեան սահմաններուն, որուն ստորադաս էին Չանդրը, Թոսիա, Պարթըն, Զաֆրանպօլու, Էսկիշէհիր, Աֆիօն-Գարահիսար, Գոնիա, Ղարաման, Ուշագ և Ատալիա: Այս թեմերէն Էսկիշէհիր, Աֆիօն-Գարահիսար և Ուշագ բացառեցինք թէ ինչպէս բաժնուեցան իրմէ:

1904ին, վիճակային վերակազմութեան առիթով, Չանդրրի սանձագը՝ Գասթէմունիի, և Գոնիա, Ատալիա և Պուրսուր սանձագները Գոնիայի նորակազմ առաջնորդութեանց յանձնուեցան:

Միւս կողմէն Գրը-Շէհիր սանձագը յանձնուեցաւ Էնկիւրիի առաջնորդութեան, որով նոյն կուսակալութիւնը բաց ի Եօզղատ և Կեսարիա սանձագներէն, նոյն առաջնորդութեան մասը կազմեց:

10 Իզմիր Ժէ. դարէն մինչև 1828ը Տերունի վիճակ՝ իրեն շրջանակին մէջ ունենալով նաև Արշիպեղագոսի կղզիները: Կ. Պոլսոյ Պատրիարքարանի իրաւասութեան անցնելէն յետոյ սահմանափակուեցաւ Այսրնի կուսակալութեան մէջ, միայն Գոնիայէն՝ Ագ-Շէհիրը ունենալով իրեն ենթակայ:

1904ի կարգադրութեամբ, Այսրնի և Ճէզայիրի Պահրը-Սէֆիաի կուսակալութիւնները կազմեցին Իզմիրի առաջնորդութիւնը, իսկ Ագ-Շէհիր անցաւ Գոնիայի նորակազմ վիճակին:

11. Գոնիա՝ որուն անուամբը եպիսկոպոսներ կը յիշուին ԺԴ. և ԺԶ. դարուն մէջ, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուելէն յետոյ Էնկիւրիի առաջնորդութեան մասը կը կազմէր, 1904ին Կեդրոնական Վարչութեան որոշումով նոր վիճակի մը կեդրոնը եղաւ, իրեն թեմ ունենալով Գոնիա կուսակալութիւնը ամբողջութեամբ: Այսպէս՝

Ա. Իզմիրի առաջնորդութենէն Ագ-Շէհիր:

Բ. Էնկիւրիէն՝ Գոնիա, Պուրսուր, Ատալիա:

Գ. Կեսարիայէն՝ Նիյսե առնուելով կազմուեցաւ այս թեմը, որուն վիճակային կազմակերպութիւնը տակաւին չէ լրացած :

12. Գաւառեացի՝ միւսնոյն ձեւով և միւսնոյն թուականին կազմուած վիճակ մը :

Ա. Նիկոմիդիոյ առաջնորդութենէն Տիւզնէ և Պոլոս :
Բ. Էնկիւրիէն Չանդրըր, ևն. :

Գ. Ամասիա-Մարդուանէն՝ Գաւառեացի և Պոյապատ առնուելով կազմուած է այս թեմը, որուն կեդրոնը՝ Գասթէմունի, Պոյապատի հետ արդէն 1880 թուականին փոխ-առաջնորդութեան վերածուած էր Պատրիարքարանի կարգադրութեամբ : Առաջին անգամ տեղացի քահանայ մը վարած է գործերը : 1902ին վարչութիւնը վարդապետ մը դրկեց և 1904ին վիճակը ընդարձակելով զայն առաջնորդութեան վերածեց :

Վիճակային կազմակերպութիւնը տակաւին վերջնական երևոյթ չէ առած :

13. Կեսարիա . Ժ.Բ. դարուն մէջ կազմուած վիճակ մը որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Աթոռին էջմիածին փոխադրուելէն յետոյ բաւական ատեն կիլիկիոյ վիճակ եղած է, ժ.է. դարուն վերջերը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուած է հաւանօրէն : Այս վիճակէն 1798ին կ'անջատուի Ս. Գանիէլ վանքը, իրեն թեմ ունենայով Մուսնուսուն, Կէրմիր և Պէլէկէսի գիւղերը :

1904ին որոշումովը Ս. Գանիէլի վանքը այլ ևս յատուկ վիճակ մը կազմելէ դադրեցաւ և Կեսարիոյ առաջնորդութեան իրաւասութեան ենթարկուեցաւ :

Գըր-Շէհիր (Էնկիւրի), Նիյսէ (Գոնիա) սանճագնեքու հայաբնակ վայրերու հոգեւոր մատակարարութիւնը որ Կեսարիոյ առաջնորդութեան իրաւասութեան տակ էր, յանձնուեցան Էնկիւրիի և Գոնիայի առաջնորդութեանց :

14. Սերասիա՝ իբր վանքի մը վիճակ՝ Փոքր Ասիոյ հնագոյն թեմերէն մէկն է։ Ժ. դարէն սկսեալ անընդմիջաբար շարունակուած է այս առաջնորդութիւնը, որ երբեմն կաթողիկոսական Աթոռ ալ եղած է։ Սերասիա կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկեալ հնագոյն թեմերէն մէկը եղած է հակառակ մերձակայ քաղաքներէն ոմանց կիլիկիոյ վիճակ ըլլալուն։

Իր հին սահմանները անձանօթ կը մնան։ Այսօր իր իրաւասութեան տակ ունի Սերասիոյ կուսակալութեան կեդրոնական Սըվազ սանճագը, բաց ի Տիվրիկ, Տարէնտէ, Ղանդալ և կիւրին դազաներէն։

15. Թոգաս՝ քաղաքին յատուկ եպիսկոպոսներու յիշատակութիւնը ԺԶ. դարէն սկսեալ կը յիշուի։ Սակայն նկատելով թէ Թոգաս կեդրոնն էր նուիրակութեան մը որուն շրջանակին մէջն էին նաև Արապկիրի, Ակնայ, Սերասիոյ, Կեսարիոյ, Եոզղատի, Ամասիոյ, Մարզուանի և Սամսոնի պէս քաղաքներ, հաւանական է կարծել թէ թեմական կազմակերպութեամբ աւելի հին ըլլայ, սակայն իր կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուած յապաղած ըլլայ։

ԺԸ. դարուն մէջ որոշապէս այլ ևս կ. Պոլսէն կ'անուանուին Թոգատի Առաջնորդները։

Թոգատի վիճակը կը տարածուի Սվազի կուսակալութեան Թոգատ սանճագին վրայ։

1841էն մինչև 1848 Թոգատի հովուութիւնը կը յանձնուի Ամասիոյ Առաջնորդ Յակոբ Եպիսկ. Սերոբեանի լոկ անձի վրայ միացմամբ։

1898ին ալ յանձնուեցաւ Սերասիոյ Առաջնորդ Պետրոս Եպիսկ. Թահմիզեանի միևնոյն սկզբունքով։

Վարչութիւնը այս պարի Պետրոս եպիսկ.ի վախճանումէն յետոյ դարձեալ անջատեց Թոգատի առաջնորդութիւնը։

16. Ամասիա-Մարզուան՝ ԺԴ. դարէն սկսեալ իր յատուկ եպիսկոպոսները ունեցած է այս վիճակը : Այս վիճակին մասը կը կազմէին նախապէս նաև Ճանիկ և Գասթէմուռնի, որոնցմէ առաջինը անցեալ դարուն առաջին քառորդին մէջ անջատ առաջնորդութիւն կազմեց, իսկ երկրորդը՝ վերջին քառորդին (Տէս Ճանիկ և Գասթէմուռնի) : Այսօր իր իրաւաստութեան շրջանակին մէջ է միայն Ամասիոյ սանճագը Սվազի կուսակալութենէն :

17. Շապին-Գարա-Հիսար Սվազի կուսակալութեան համանուն սանճագը կը կազմէ այս առաջնորդութեան սահմանը : Սակայն այս սահմանը անցեալին մէջ անշուշտ նոյնը չէր : Թեմը հին է, սակայն իր կազմութիւնը նոր : Ներկայ վիճակը կը ներկայացնէ երեք վիճակներու միացում մը, որոնք են՝

Ա. Շապին-Գարա-Հիսար

Բ. Աճաքեր

Գ. Թամզարա

Ա. Շապին-Գարա-Հիսար կամ Նիկոպոլիս կը գրտնուի հիներուն կողոնիս կոչած գաւառին մէջ :

ԺԴ. դարուն մէջ յիշուած ըլլալով կողոնիոյ եպիսկոպոս մը, հաւանական է ենթադրել թէ նոյն թեմը նոյն ասեմները կազմուած է, սակայն յիշատակարաններ կը պակսին այս իրողութիւնը հաստատող : Անրևոյ միջաբար առաջնորդներու յիշատակութիւնը ԺԹ. դարուն կը սկսի : 1840ին Թամզարայի առաջնորդութեան կը կցուի, սակայն շուտով կ'անջատուի. 1854-55 միամեայ շրջան մըն ալ Տրապիզոնի և Ճանիկի առաջնորդութեանց հետ միացեալ վիճակ մը կը կազմէ :

1864ին Շապին-Գարա-Հիսարի Առաջնորդ կարգուելով Աբրահամ Վրդայ. Սարկաւազեան, մականուանեալ Պիւլպիւլ, որ երկու տարիէ ի վեր արդէն Թամ-

զարայի և Ածպտերու միացեալ վիճակը կը վարէր, երեք վիճակները կազմեցին միակ վիճակ մը :

Բ. Ածպտեր՝ հաւանօրէն ԺԹ. դարուն սկիզբները կուսակցական վէճերու բերմամբ Շապին-Գարա-Հիսարէն անջատուած վիճակ մըն է : Նոյն հանգամանքները ունեցող Թամզարայի վիճակին հետ քանիցս միացած և բաժնուած է : 1862ին վերջապէս միացաւ Թամզարայի :

Գ. Թամզարա՝ գրէթէ նոյն պայմաններուն մէջ կազմուած և Ածպտերի հետ յաճախ յարակից :

1862ին Թամզարա-Ածպտեր և 1864ին այս երկուքը Շապին-Գարա-Հիսարի կը միանան և կը կազմեն մէկ թեմ :

18. Ճանիկ՝ Տրապիզոնի և Ամասիոյ առաջնորդութեան մասերէն կազմուած առաջնորդութիւն մը, համանուն սանճագին մէջ :

1759ին Նալեան Յակոբ Պատրիարք կը փորձէ վիճակային կազմակերպութիւն տալ, սակայն իրականապէս վիճակին առաջնորդութիւնը կը կազմուի 1825-30ի միջոյններուն : 1854-56, 1866-70, 1880-84 և 1885-90 չորս անգամներ պարբերաբար Տրապիզոնի վիճակին կը միանայ : Ճանիկ նախապէս Չարչամպայի գաղայով կը լրանար, և Սամսուն Ամասիայի հետ կցուած էր, և միայն 1897ին ամբողջ Ճանիկի սանճագով կազմուեցաւ :

19. Տրապիզոն, նախնեաց Պոնտոսը, որուն Հայ բնակչութեան վրայ ԺԱ. դարէն սկսեալ տեղեկութիւններ կան, սակայն քաղաքին անուամբ եպիսկոպոսներու գոյութիւնը ԺԳ. դարէն կը սկսի : Ինչպէս վերը ըստուեցաւ, մերձակայ Ճանիկի առաջնորդութեան հետ քանիցս միացած էին :

Նոյնպէս անցեալ դարուն սկիզբը կամ ԺԸ. դարուն վերջերը այս առաջնորդութեան մշտնջենապէս կցուած է Կիւմիւշխանի առաջնորդութիւնը, որուն գոյութիւնը

նը կ'երաշխաւորեն յիշատակարաններ (Տե՛ս Տ. Գիւտ Քհոյ. Աղանեանի Դիւան Գ. էջ 18, Դ. էջ 168, 178) :

Այսօր Տրապիզոնի առաջնորդութեան իրաւասութեան ներքեւ են նոյն կուսակալութեան երեք սանճագները՝ Տրապիզոն, Լազիստան և Կիւմիւշխանէ :

ՁՕ. Էրզրում կամ Կարին հնագոյն առաջնորդական վիճակներէն մէկը, որուն հաստատութիւնը և հին սահմանները մեծ մասամբ անժանօթ կը մնան :

ԺԱ. դարէն սկսեալ Կարնոյ եպիսկոպոսները կը յիշուին : Այս թեմը հին ասեն աւելի ստորաբաժանուած էր և իր շուրջը կային ուրիշ առաջնորդական Աթոռներ ալ : Որոշապէս շղիտցուիթ թէ երբ Կ. Պոլսոյ Պատրիարքներու իրաւասութեան անցած է, միայն ԺԷ. դարուն վերջերը առաջնորդները տակաւին էջմիածինէն կ'անուանուէին, ինչպէս կ'երևի յիշատակարաններէ :

Յետոյ Մշոյ Ա. Կարապետի վանքին թեմերէն մէկը եղած է : 1847ին վերջնականապէս բաժնուած են երկու վիճակները : Այսօր Էրզրումի կուսակալութեան Էրզրում սանճագին Օվա, Թորղում, Նարման, Կիսկիմ, Սպեր և Խնուս գաղաները ուղղակի Կարնոյ Առաջնորդարանին իրաւասութեան ներքեւ կը գտնուին : Որով այս օրուան սահմանին մէջ կ'իյնան Կարնոյ եպիսկոպոսութենէն զատ նաև երկու ուրիշ հին վիճակներ :

Ա. Սպեր, որուն յատուկ առաջնորդները մինչև ԺԸ. դար գոյութիւն ունեցած են :

Բ. Խնուս, որ մեզի ծանօթ եպիսկոպոսական հին Աթոռներէն մէկն է :

ԺԸ. դարուն Խնուս Մշոյ վիճակին թեմը կը համարուէր և կը կազմէր փոխ-առաջնորդութիւն մը : 1880ին Մշոյ վիճակէն չբաժնուելով կցուեցաւ Կարնոյ առաջնորդութեան : Այսօր ալ Կարին Խնուսի և Սպերի մէջ փոխանորդներ կը պահէ :

Ձ1. Դերձան՝ հնագոյն թեմերէն մէկը, որուն կեդրոնը եղաւ 934ին հիմնուած Խլաձորի վանքը: ԺԴ. և ԺԵ. դարերուն մէջ Դերձան Բաբերդի առաջնորդութեան կցուած է. ԺԸ. դարուն մէջ Դերձան առանձին առաջնորդութիւն կը կազմէ: 1861ին Երզնկա-Դերձան միացեալ վիճակ մը կը կազմեն: 1880ին կրկին Երզնկայի կը միանայ և քանի մը տարի յետոյ Կարնոյ Առաջնորդին իրաւասութեան ներքեւ յարակից վիճակ մը կը կազմէ, իրեն սահման ունենալով Էրզրումի սանճագին Դերձան գաղան:

Ձ2. Բասեն՝ նոյնպէս հնագոյն թեմ. Բասենի եպիսկոպոսները կը յիշուին Լուսաւորչի օրերէն սկսեալ մինչև 1848 շարունակաբար. նոյն թուականին այս վիճակը կը կը միանայ Կարսի առաջնորդութեան և 1853-62 շրջանին կրկին անջատ թեմ մը կազմելէ յետոյ վերջնականապէս 1881ին Կարնոյ վիճակին առաջնորդներու վերին հսկողութեան կը յանձնուի Բասենի առաջնորդութեան հոգեւոր գործերը: Այդ թուականէն ի վեր յարակից վիճակ մը կը կազմէ Հասան-Գալէ կեդրոնով և շրջագիծ ունենալով Էրզրումի սանճագին Բասենէր գաղան:

Ձ3. Քղի կամ Կեղի եպիսկոպոսութիւնը, որուն եպիսկոպոսները ԺԴ. դարէն յիշուիլ կ'սկսին: Յետոյ երբ վանքերը կը դառնան թեմերու կեդրոն Քղի ալ Մշոյ Ս. Կարապետի վանքին թեմերուն կը կցուի: 1767ին Հայրապետական կարգադրութեամբ անջատ առաջնորդութիւն մը կը կազմուի որ իր գոյութիւնը կը պահէ մինչև ԺԹ. դարու կէսերը: 1863ին Քղի և Երզնկա միացեալ վիճակ մը կը կազմեն, սակայն կարճատև կեանք կ'ունենայ այս միութիւնը, 1868ին Բաղէշ-Քղի կը միանան, սակայն կրկին կը բաժնուին:

1880ին Կարնոյ վիճակին յարակից փոխ-առաջնորդութեան մը կը վերածուի: Սակայն վերջին անգամ նո-

րէն իբր յատուկ վիճակ սեպհական տեղապահը ունեցաւ :

Ձ4. Պայպուրդ ժԴ. դարուն սկիզբէն սկսեալ կը յիշուին Պայպուրդի յատուկ եպիսկոպոսներ : ժԶ. դարուն մէջ Դերջանի և Բաբերդի առաջնորդութիւնները իրարու կցուած են : Յաջորդ դարուն մէջ վանական թեմի մը կը վերածուի : ժԸ. դարուն մէջ ալ Կիւմիւշխանէի եւ Պայպուրդի առաջնորդութիւնները միեւնոյն անձին վրայ կը տեսնենք : Նոյն դարուն կէսէն յետոյ Պայպուրդ անջատ առաջնորդութիւն մը կը կազմէ , եւ յաջորդ դարուն սկիզբը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան կ'ենթարկուի :

1840ի միջոցներուն Կարնոյ հետ կը միանայ պտհ մը . 1858ին Երզնկայի և 1861ին Դերջանի , 1870ին դարձեալ Երզնկայի՝ յարակից վիճակ կ'ըլլայ : 1873ին կ'անջատուի և առանձին վիճակ մը կը կազմէ , սակայն երեք տարի յետոյ կրկին Երզնկայի կը կցուի : 1881էն մինչև այսօր անջատ առաջնորդութիւն մը կը կազմէ այս վիճակը , որ գրեթէ միշտ շրջակայ առաջնորդութեանց յարակից եղած է : Այսօր Էրզրումի սանճագին Պայպուրդ գաղան իր հողեւոր իրաւասութեան շրջանակին մէջ է :

Ձ5. Երզնկա և Քեմախ . Անցեալին մէջ անջատ այս վիճակները , որոնք Էրզրումի կուսակալութեան Էրզինկեան սանճագր կը ներկայացնեն . այսօր միացած են և կը ներկայացնեն մէկ վիճակ :

Հնագոյն անցեալին մէջ ալ այս երկու առաջնորդութիւնները շատ շիտի կերպով մը կը ներկայանան և գրեթէ իրարու խառնուած գաւաղանագիրք մը ունին :

Ա. Երզնկայի եպիսկոպոսները Ե. դարէն սկսեալ ծանօթ են : Ինչպէս վերը ըսուեցաւ , այս թեմը քահիցս անդամ կցուած է Պայպուրդի , Դերջանի և Քղիի առաջնորդութեանց (Տես նոյն վիճակներ) :

1904ի վիճակային նոր բաշխման մէջ էրզրումի կուսակալութեան Երզնիկեան սանձագը միակ առաջնորդութեան մը վերածել պատշաճ դատուեցաւ : 1906ին կարելի եղաւ այս ծրագիրը իրականացնել :

Բ. Քեմալի եպիսկոպոսները ԺԴ. դարէն սկսեալ ծանօթ են : ԺԶ. դարուն մէջ կարնոյ վիճակին հետ միացեալ ըլլալը կ'երևի յիշատակարանէ մը : Յետոյ երկար միջոց մը մթութեան մէջ կը մնայ այս թեմին վիճակը : ԺԺ. դարուն կիսուն անջատ վիճակ մը կը կազմէ . 1884էն սկսեալ կը յանձնուի Երզնիկայի իբր փոխ-առաջնորդութիւն , և թէև 1889—1890 շրջանին պահ մը կ'անջատուի , սակայն 1898ին առաջնորդին անձին վրայ կը միանան կրկին երկու վիճակները : 1906էն սկսեալ մէկ առաջնորդութիւն կը կազմեն :

ՋԵ. Պայագիս՝ կ. Պոլսոյ իրաւասութեան 1828էն յետոյ ենթարկուած վիճակ մը , որուն հետ թիւնը մինչև Դ. դար կը բարձրանայ :

Այսօր էրզրումի կուսակալութեան Պայագիսի սանձագը այս առաջնորդութեան հոգեւոր իրաւասութեան սահմանը կը կազմէ : Անցեալին մէջ աւելի ընդարձակ էր այս վիճակը , որ բազկացած է երկու նշանաւոր վիճակներու միացումովը :

Ա. Աշաշկերս՝ որուն կեդրոնն է Ա. Յովհաննէս վանքը : Դ. դարէն սկսեալ նշանաւոր վիճակ մը որ իր առանձնական դոյութիւնը պահած է մինչև 1850 :

Բ. Պայագիս՝ եկեղեցական տարեգրութեանց կողմէն , որուն սեփական առաջնորդները է. դարէն սկսեալ ծանօթ են , թէև յաջորդ դարերուն մէջ շատ հազուադէպ կերպով յիշուած ըլլան : Երբ վիճակներու կեդրոնները , վանքերը տեղափոխուած է , Պայագիս ալ Իւջ ֆիլիսի վանքին թեմերէն մին կազմած է : 1780ին Արտազու Ա. Թադէոս Առաքեալ վանքին սեփական վի-

ճակ մը կը կազմէ Խոյ գաւառին հետ : Արտազ Պարսկաստանի սահմանին մէջ կը մնայ 1828ին և Պայազիս վերստին Իւչ Քիլիսէի վանքին կը կցուի : 1850էն սկսեալ միացեալ թեմ մը կը կազմեն :

ՁԴ. Վան՝ Ժ. դարէն յետոյ Վարազայ վանուց իբր սեփական թեմ կը յիշուի : Նոյն վանքին վանահայրութիւնը և Վիճակին առաջնորդութիւնը գրէթէ անբաժան եղած են վաղուց ի վեր : Այս Վիճակը էջմիածնայ և Աղթամարայ Կաթողիկոսներու հոգեւոր իրաւասութեան յաջորդարար ենթարկուած է պարբերաբար : ԺԸ. դարէն սկսեալ էջմիածնայ իրաւասութիւնը վերջնական հանգամանք ստացած է . 1828էն յետոյ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան կ'ենթարկուի : Առաջնորդութեան հոգեւոր շրջանակը կանոնաւորապէս ճշդուած չէ : Այսօր Վանայ կուսակալութիւնը ամբողջութեամբ Վանայ Առաջնորդարանին իրաւասութեան ներքե կը համարուի , իրեն յարակից Վիճակ համարուելով նոյն կուսակալութեան մէջ գտնուող երկու ուրիշ Վիճակներ , որոնք են՝ Լիմ-Կտուց և Հէքքեարի :

ՁԵ. Լիմ-Կտուց երկու վանքեր , երկուքն ալ Վանայ ծովուն մէջ գտնուած կղզեակներու վրայ շինուած : Երկու վանքերը ցամաքին վրայ ունին իրենց յատուկ թեմերը , որոնց հասոյթներովը կը մատակարարուին : Աւելի վանական Վիճակներ կը ներկայայնեն քան թէ առաջնորդութիւններ : Վիճակային կազմակերպութիւն չունին : Ասոր համար երկու Վիճակները իրարու միացնելէ յետոյ կեդր. Վարչութիւնը 1904ին պատշաճ դատեց Վանայ յարակից Վիճակ համարել այդ Վանահայրութիւնները :

Ա. Լիմ՝ ԺԴ. դարէն սկսեալ ծանօթ է . 1622ին վերանորոգուած է և մինչև 1898 անջատ վանահայրութիւն մը կը կազմէր , երբեմն Աղթամարայ Կաթողիկոսին

իրաւասութեան ներքեւ : 1898ին կցուեցաւ Կտուցի վա-
նահայրութեան :

Բ. Կտուց՝ ԺԵ. դարէն սկսեալ ծանօթ է (Տե՛ս Նո-
տարք Ղևոնդ Վ. Փիրղալէմեանի, էջ 66, 68, 207), թէ և
ոմանք անոր հիմնարկութիւնը մինչև ժէ. կը մօտեցնեն :
Աւանդաբար Կտուց՝ Լիմէն անջատուած միաբաններով
կազմուած է :

Երբեմն վանայ առաջնորդութեան յանձնուած է
անցեալ դարուն սկիզբները : Լիմ-Կտուցի միացումէն յե-
տոյ դարձեալ յանձնուեցան վանայ :

29. Հէֆեսի՝ վանայ կուսակալութեան համա-
նուն սանճագին քանի մը գիւղերը և վանքերը այս ա-
ռաջնորդութեան մասը կը կազմեն : Աղբակի Ս. Բար-
թողիմէոս Առաքեալ վանքը այս թեմին կեդրոնն է :
Հնագոյն վիճակներէն մէկն է որուն թեմական շրջա-
նակը մինչև Ատրպատական կը տարածուէր նախապէս :
Օսմանեան Կայսրութեան միանալէն (1829) յետոյ Կ. Պոլ-
սոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուեցաւ,
և որովհետև թեմական շրջանակը սահմանափակուած էր,
միջոց մը միայն առանձին վիճակ կազմելէ յետոյ փոխ-
առաջնորդութիւն մը կազմեց՝ վանայ յարակից :

30. Պիրիս հին եպիսկոպոսական Աթոռի մը շա-
րունակութիւնն է, որուն առաջին կեդրոնն էր Ախշաք և
գլխաւոր թեմերը՝ Արժկե, Խիզան, Դասուան և Պիրշիս : Ե.
դարուն մէջ իրարու կը յաջորդեն հետզհետէ բազմաթիւ
եպիսկոպոսներ որոնք Ախլաթ կը նստէին : ԺԵ. դարուն մէջ
Պիթլիս աւելի կարեւորութիւն ստացած ըլլալով, 1437-
40ին Աթոռը փոխադրուեցաւ Բաղէշ : ԺԵ. դարուն մէջ
Մշոյ Ս. Առաքելոց վանքին վանահայրութիւնը կը միանայ
Պիթլիսի առաջնորդութեան հետ, սակայն յետոյ կրկին
բաժնուած կը տեսնենք երկու վիճակները : 1860ին
Մշոյ վիճակին կը միանայ առաջնորդին անձին վրայ

միացմամբ, ինչպէս նաև 1868ին Քղիի վիճակին : 1872էն ի վեր առանձին առաջնորդութիւն մը կը ներկայացնէ՝ Պիթլիս կուսակալութեան կեդրոնական սանճագին մէջ :

ՅԱ. Առևճճ՝ Գլակայ Ս. Կարապետի վանքին վիճակը մեր թեմագրական տարեգրութեանց մէջ յիշատակեալ հնազոյն եպիսկոպոսութիւններէն և ամէնէն նշանաւորագոյններէն մէկն է : Չենոր Գլակէն մինչև այսօր անխափան կը շարունակուի այս առաջնորդութիւնը, թէև իր թեմական շրջանակը դարերու շրջանին բազմաթիւ փոփոխութիւններ կրած ըլլայ :

Ս. Առաքելոց և Ս. Կարապետի վանքերու վանահայրութիւնները իրենց յատուկ իրաւասութեան շրջանակները ունեցած են երբեմն, ինչպէս նաև արդի Մշոյ առաջնորդութեան զանազան մասերու մէջ անջատ առաջնորդութիւններ կազմուած են երբեմն : Նոյնպէս նշանակելի է որ ԺԸ. դարուն վերջերը Մշոյ Ս. Կարապետի առաջնորդներու իրաւասութեան շրջանակը մինչև Կարին ընդարձակուած է : ԺԹ. դարուն մէջ հետզհետէ այդ ընդարձակ վիճակը ստորաբաժնուած է, ինչպէս շրջակայ թեմերու մէջ տեսնուեցաւ և պիտի տեսնուի յաջորդարար : 1880ի Խնուսի բաժանումէն յետոյ Մուշի Առաջնորդին հոգեւոր իրաւասութեան ներքև կը գլուխուէր Պիթլիսի կուսակալութեան Մուշ սանճագը : Վերջէն աւելցաւ Կիճն սանճագը ևս :

ՅԵ. Աղերդ՝ նորակազմ վիճակ մը կրնայ համարուիլ արդի կազմակերպութեամբ, սակայն հնազոյն վիճակներու շարունակութիւնն է իրականապէս : Մշոյ Ս. Առաքելոց հնօրեայ վանքին թեմերուն մէջ էր հին ատեն Սղերդ իր այսօրուան թեմերով : Նոյնպէս իր այսօրուան սահմաններուն մէջ կ'իյնայ նաև Սասնոյ եպիսկոպոսութիւնը, որ Ը. դարէն մինչև ԺԸ. դար յա-

Չորդարար իր եպիսկոպոսները ունեցած է: Հաւանօրէն
երբ սանճագին կեդրոնը փոխադրուեցաւ Սղերդ, 1805ին
պետական նոր բաժանումներու համաձայն՝ Հայոց Առաջ-
նորդներն ալ տեղափոխուեցան Սղերդ՝ առօրեայ գոր-
ծառնութեանց դիւրացման համար, մինչ նախապէս Մշոյ
Ս. Կարապետի վանքին թեմը կը կազմէր Սղերդ իրեն
մերձակայ թեմերովը, որոնք մինչև Հազրօ, Լճէ և այլն
կը տարածուէին: Այնպէս որ ժժ դարուն երկրորդ
քառորդէն սկսեալ Սասնոյ առաջնորդութիւնը կ'առնէ
Սղերդի առաջնորդութիւն անունը, իր թեմական շրջա-
նակին մէջ ունենալով Պիթլիսի կուսակալութեան՝ Սղերդ
սանճագին Սղերդ, Շիրվան և Ղարզան գաղաները,
դարձեալ նոյն կուսակալութեան կ'ինճ սանճագը, ինչ-
պէս նաև Մշոյ սանճագին Սասուն գաղան և Տիարպէ-
քիւրի կուսակալութեան Լրճէ, Ալիվան, Տիրիկ, Պէշիւրի,
Հազրօ գաղաները, որով բաւական ընդարձակ թեմ մը
կը ներկայացնէին:

Հազրօ 1845ին Բալուի կցուեցաւ և յետոյ անջատ
առաջնորդութիւն մը կազմեց մինչև 1865 երբ նոր բաշխ-
մամբ Սասուն՝ Մշոյ առաջնորդութեան, և Տիարպէքիւրի
կուսակալութեան ենթակայ Հազրօ և մերձակայ քա-
ղաքները նոյն առաջնորդութեան ձգուեցան և Պուլանըզ
Կորայ Ս. Իանիէլ վանքը կեդրոն ունենալով, ինչպէս
երբեմն էր, սուսնճին վիճակ մը կազմեց (յետոյ կցուած
Մշոյ), որով Սղերդի վիճակը սահմանափակուեցաւ Պիթ-
լիսի կուսակալութեան Սղերդ սանճագին մէջ: 1889—
94 շրջանի Սղերդի առաջնորդութիւնը յանձնուեցաւ Բա-
ղէշի, սակայն յետոյ վերստին անջատուեցաւ:

ՅՅ. Տիարպէքիւր. Այս թեմին եպիսկոպոսները Ը.
դարէն սկսեալ ծանօթ են: Ժ.Զ. կամ Ժ.Է. դարուն
Կ. Պուլսոյ իրաւասութեան ենթարկուած է: Նախապէս
գրէթէ քաղաքին մէջ կը սահմանափակուէր, շրջակայ

Թեմերը—ինչպէս տեսանք—կապուած ըլլալով մօտաւոր առաջնորդութեանց :

1849—54 Արղընի վիճակը, 1856—60 Ակնայ վիճակը Տիարպէքիւրի առաջնորդութեան կցուեցան : 1865ին Սղերդի առաջնորդութեան այն մասերը որոնք Տիարպէքիւրի կուսակալութեան մէջ կը գտնուէին, այս առաջնորդութեան մասը կազմեցին : 1904ի նոր բաշխման հետեանօք բովանդակ Տիարպէքիւրի կուսակալութիւնը Տիարպէքիւրի առաջնորդութեան մաս կազմած է, սակայն երեք առաջնորդութիւններ՝ Բաշու, Արղնի և Չընֆուշ յարակից վիճակներ են որոնք կը պահեն իրենց առանձին կազմակերպութիւնը : Հետեւաբար Տիարպէքիւրի Առաջնորդին ուղղակի իրաւասութեան տակ կը գտնուին Տիարպէքիւրի և Մարտինի սանձագները :

ՅԳ. Բաշու նորակազմ վիճակ մը կրնայ նկատուիլ, վասն զի շրջակայ թեմերուն բազմաամամբ նոր է, առաջին անգամ ԺՁ. դարուն յիշուած ըլլալով իր անուամբ յատուկ եպիսկոպոս մը : Իր կազմութիւնէն յետոյ յաճախ մերձակայ թեմերու միացած է : Մասնաւորապէս Արղնի և Չնֆուշ վիճակները զանազան շրջաններու միացած են այս վիճակին :

1860ին միջոց մըն ալ Սղերդի հետ միացած է, որուն թեմերուն մէկ մասը այսօր Բաշուի առաջնորդութեան անցած են : 1898ին Պատրիարքարանը Բաշու, Չնֆուշ, Արղըն երեք թեմերը, որոնք միևնոյն սանձագին (Արղըն-Մատէն) մէջ կը գտնուէին, միացուց եւ կազմեց մէկ առաջնորդութիւն : 1901ին այս միացումը կարելի չըլլալով պահպանուի ձեռնհաս առաջնորդի շգոյութեան պատճառով, Արղընի-Մատէն սանձագին Բաշու գազան և նոյն սանձագին Արղընի և Չերմիկ գազաները զատ զատ առաջնորդութիւններ կազմեցին :

1904ի բաշխման սկզբունքովը այդ երկու վիճակ-

ները յարակից նկատուեցան Տիարպէքիւրի առաջնորդութեան : Բալուի առաջնորդութեան կեդրոնն է Քաղցրահայեաց Ս. Աստուածածին վանքը :

ՅԵ. Արդևի-Չնփուօ. Իրենց ծագումը չփոթ է , և հարկ է ըսել թէ զանազան առիթներով կազմուած թեմեր են , փոքր ու անհամապատասխան առաջնորդութեան մը կեդրոն ըլլալու :

Ա. Արդևի՝ որուն կեդրոնն է Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանքը , հաւանօրէն 1444ին կազմուած վանական թեմ մըն է , վասն զի վանքը շինուած է նոյն թուականին Մկրտիչ Նազաչ Եպոս . ի ձեռքով , որ այդ միջոցին առաջնորդ էր Տիարպէքիւրի :

Ժէ . դարէն սկսեալ Արդընի առաջնորդները կը յիշուին , որով անշատ առաջնորդութիւն մը կազմուած ըլլալը կը յայտնուի : 1794ին և 1849ին երկիցս Տիարպէքիւրի առաջնորդութեան ենթարկուեցաւ , իսկ 1898ին Բալուի և 1904ին Տիարպէքիւրի : Այս Վիճակին թեմերը կը համարուին Արդընի-Մատէն սանճագին , Արդընի գաղան ամբողջութեամբ և Ջէրմիկ գաղան , բաց ի Չնքուչ նահիյէէն :

Բ. Չնփուչ՝ որուն կեդրոնն է Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքը , կը գտնուի Տիարպէքիւրի կուսակալութեան այն մասին մէջ որ ամէնէն աւելի մօտ է Խարբերդի : Այս Վիճակին կը պատկանին Ջէրմիկ գաղային Չնքուչ նահիյէէն : ԺԹ . դարուն մէջ կազմուած թեմ մըն է , վասն զի որչափ կը կարծուի նախապէս մասը կը կազմէր այն չորս Վիճակներուն որոնք Խարբերդի չորս վանքերը իրենց կեդրոն ունէին : 1880ին զատ Վիճակ կազմած է Խարբերդէն անջատուելով :

ՅԶ. Խարբերդ՝ ԺԵ . դարուն մէջ առաջին անգամ կը յիշուի Խարբերդի առաջնորդութիւնը , որ յետոյ բաժան բաժան եղած է և բազմաթիւ վանքերու մէջ բաժնուած : Ամէն վանք իր սեփական թեմական շրջանակը

ունէր և առանձին առաջնորդութիւն մը կը կազմէր : Իրաւասութեան խնդիրներ և վէճեր անպակաս էին այս թեմին մէջ , որ ԺԹ. դարուն սկիզբը չորս թեմերու բաժնուած էր : Այս թեմերու կեդրոններն էին մէկմէկ վանք :

Ա. Գաղէմի Ս. Աստուածածին :

Բ. Ապտիւլ Մեսիհի վանքը (Զարդարիչի Ս. Աբղլմսէն) :

Գ. Սորսորի (Ս. Գէորգ վանքը) :

Դ. Գուլէ (Ս. Գէորգ վանքը) :

Այս չորս վանքերուն թեմերը կը հերկայայնէին մերձաւորապէս այս օրուան Խարբերդի և Զմշկաձագի առաջնորդութիւնները ամբողջութեամբ :

1845ին Պատրիարքարանը նկատելով այս չորս իրարու մերձակայ և շփոթ սահմանով առաջնորդութեանց անտեղութիւնը , թեմական գործոց կանոնաւորութեան համար միացուց չորս վիճակները և կազմեց միակ առաջնորդութիւն մը Խարբերդ կեդրոնով : Երկու տարուան տեսողութենէ մը յետոյ այս միութիւնը քակուեցաւ : 1856ին երկրորդ անգամ Պատրիարքարանը միացուց այդ վիճակները և այս անգամ յաջողեցաւ : 1858ին այս միութենէն անջատուեցան միայն Զմշկաձագ-Կապան-Մասկն , Գուլէ վանքին թեմերէն և կազմեցին անջատ առաջնորդութիւն մը : 1880ին ալ Զնքուչ անջատուեցաւ : Այսօր Մամուրէթ-իւլ-Ալիզ կուսակալութեան Խարբերդ սանճագին Մեզլիւրէ , Խարբերդ , Բիւղիւրկէ գաղաները այս առաջնորդութեան մաս կը կազմեն :

ՅԷ. Զմօկաձագ. Հին ատեն կը կոչուէր Երապոյիս կամ Յերապոյիս , որուն եպիսկոպոսները ԺԹ. դարէն սկսեալ յաճախ կը յիշուին : ԺԸ. դարուն վերջերը կամ ԺԹ.ի սկիզբները այս թեմը Կապան-Մատենի հետ միասին Խարբերդի Գուլէ վանքին սեփական վիճակ կը

դառնայ : Կրկնակ միացման փորձերու ատեն (Տե՛ս Խարբերդ) այս Վիճակն ալ կը միանայ Խարբերդի թեմին , սակայն 1858ին կ'անջատուին Գուլէ վանք կեդրոնով և զատ թեմ մը կը կազմեն : 1865ին Գուլէ վանքը Խարբերդի առաջնորդութեան կը ձգուի , սակայն Չմշկածագի առաջնորդութիւնը իր գոյութիւնը կը պահէ : Քանիցս անգամ անցեալին՝ ինչպէս նաև ներկային մէջ , Չարսանձագի հետ միացեալ Վիճակ մը կազմած է : Իր սեփական թեմերն են Մամուրէթ-Խուլ-Ալիզ կուսակալութեան Խարբերդ սանձագին Գրղըլ-Քիլիսէ , Օվաճրգ գաղաները և Տերսիմի սանձագին Չմշկածագ գաղան :

ՅՑ. Չարսանձագ՝ որ և է աւանդական յիշատակ գոյութիւն չունի անցեալէն : Հաւանօրէն նախապէս Խարբերդի չորս վանքերէն միոյն սեփական թեմերէն մէկը կը ներկայացնէր : Աւելի հաւանական է կարծել թէ Չմշկածագի բաժանման պահուն նաև բաժնուած է այս թեմը կամ տարի մը յետոյ (1859) անկէ բաժնուած է : Ինչպէս ըսուեցաւ , յաճախ միացեալ առաջնորդութիւն մը կը կազմէ Չմշկածագի հետ , ինչպէս է և այսօր :

Տէրսիմ սանձագին Չարսանձագ , Խօզաթ և Մաղկերտ գաղաները այս թեմին հողերոր իրաւասութեան շրջանակին մէջ են :

ՅԾ. Ակն կամ Էկին քաղաքը և մերձակայ Նարեկայ վանքը ԺԱ. դարուն սկիզբները շինուած ըլլալով , հաւանական է կարծել թէ նոյն թուականներուն կազմուած է այս թեմը , որուն առաջնորդները ԺԶ. դարէն յետոյ միայն ծանօթ են մեզի : 1855—1861 Տիարպէքիւրի և 1898—1900 Արաբկիւրի վիճակին միացած է : 1904ի վիճակային նոր բաշխման ատեն Արաբկիւր և Ակն միացեալ Վիճակ կազմեցին , իրենց ուրոյն վիճակային կազմակերպութիւնը պահելով : Սակայն գործադրելի չեղաւ , և այսօր Խարբերդի առաջնորդին յանձնուած է : Խարբերդի

սանճագին էկին գազան այս վիճակին ստորադասուած է :

40. Արարկիր՝ նոյնպէս ժԱ. դարուն կազմուած է : Երկար ատեն Տերունի վիճակ էր : 1759ին կամ քիչ առաջ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան ենթարկուեցաւ : Իր իրաւասութեան ներքեւ են Սարբերդի սանճագին Արարկիր գազան :

41. Ուրճա կամ Եղեսիա՝ երբեմն Կիլիկեան և երբեմն էջմիածնական վիճակ եղած է այս թեմը, որուն անուամբ եպիսկոպոսի մը միայն ժԲ. դարուն մէկ անձի կը հանդիպինք : Այդ թուականէն յետոյ երկար միջոց մը որ և է եպիսկոպոսի անուն չէ տեսնուած սարեգրութեանոյ մէջ : ԺԵ. դարուն վերստին կը յիշուի Ուրճայի թեմը իբր յարակից Տիարպէքիլի առաջնորդութեան : ԺԸ. դարուն անջատ առաջնորդութիւն մը կը կազմէ, որուն իրաւասութեան շրջանակին մէջ էին Մալաթիա, Հիւանի-Մանսուր և Պեհեմնի, որով հաւանական է կարծել թէ Ուրճա նոյն իսկ երբեմն մասը կազմած է Եփրատացւոց առաջնորդութեան : 1848ին Մալաթիա, Պեհեմնի, Հիւանի-Մանսուր բաժնուեցան և դատ առաջնորդութիւն մը կազմեցին :

Նիզիս, Էհնէշ, Ճիպին, Պիր, Կիլիկեան վիճակներէն անցած են Եղեսիոյ թեմին, որ ճշդիւ կը համապատասխանէ Հալէպի կուսակալութեան Ուրճա սանճագին :

42. Պաղօսա՝ Տէրունի վիճակ մինչև 1828 թուական և մաս Պարսկաստան Հնդկաստանի առաջնորդութեան : Երեք թեմ միայն ունի՝ Պաղսաս, Պասրա և Մուսուլ՝ երեք կուսակալութեանց կեդրոններ : Թրքահայ վիճակներուն ամէնէն ընդարձակն է :

43. Եզիպօսա՝ նախապէս Երուսաղէմի Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ կը գտնուէր այս թեմը, ուր ժԱ. դարէն սկսեալ Հայ գաղութ մը գտնուիլը կը յիշատակուի :

1852ին առաջին անգամ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան ներքեւ մտաւ Վիճակը, սակայն անոր վերջնականապէս Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան ենթարկուիլը 1872 թուականէն կը սկսի : Մասնաւորապէս երկու քաղաքի մէջ կ'ամփոփուի այս վիճակը, Գահիրէ և Աղեքսանդրիա, որոնք 1907ին վարչական որոշումով անջատ կազմակերպութեամբ եւ Գաւառական ժողովով միացեալ Վիճակներ ընել որոշուեցաւ : Տակաւին դործադրութեան չէ դրուած այս որոշումը :

44. Պուլկարիա՝ Բոււնդիի նուիրակութիւնը՝ որ իր մէջ կը պարունակէր Պետարապիան, Ռոււմանիան և Պուլկարիան, ԺԺ. դարուն սկզբնաւորութեանը կարեւոր կերպարանափոխութեան մը ենթարկուեցաւ :

Պետարապիա՝ Ռուսիոյ անցնելով զատ թեմ մը կազմած էր, մինչ նուիրակներու առաքումը դադրած : Հետեւաբար Պատրիարքարանը ստիպուեցաւ այդ շրջանակին հոգեւոր պէտքերը հոգալու դործը իր վրայ առնուլ : Այս պատճառով Վ.Ս.Ն.Ս. թեմագլուխով առաջնորդութիւն մը կազմուեցաւ 1828ի միջոցներուն, որուն իրաւասութեան ներքեւ էին Պուլկարիոյ եւ Տոպրուճայի Հայերը : Նոյնպէս Վ.առնայի առաջնորդներուն վրայ պարտք դրուեցաւ նաեւ իրր այցելու՝ երկու տարին անգամ մը Ռոււմանիոյ քաղաքները շրջագայիլ հովուական պաշտօնով եւ հոգալ այդ տեղերու Հայոց կրօնական պէտքերը :

Պահ մը թեմագլուխը ՌՈՒՍՃՈՒԳ կ'ըլլայ եւ առաջնորդութիւնն ալ նոյն անուամբ յիշուիլ կը սկսի : 1878էն յետոյ Տոպրուճա (Պասլա-Տաղ) Ռոււմանիոյ վիճակին կ'անցնի, իսկ 1884էն յետոյ Էտիրնէի վիճակէն քանի մը քաղաքներ Պուլկարիոյ առաջնորդութեան կը կցուին :

1890ին Ռոււմանիա-Պուլկարիա միացեալ Վիճակ մը

կը կազմեն : 1893-94 շրջանին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ուղղակի իրաւասութեան ձգուեցաւ , սակայն դարձեալ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին վերադարձուեցաւ այս թեմերուն մատակարարութիւնը : 1903ին առաջին անգամ ըլլալով Պատրիարքարանը կրցաւ առաջնորդական կանոնաւոր կազմակերպութիւն եւ առաջնորդի ընտրութիւն կատարել տալ :

45. Ռուսանիա. Հին Ռուսիաց երկիրը Հայ գաղթականներ հիւրընկալած է ԺԱ. դարէն սկսեալ : Այդ գաղթականներուն հոգեւոր տեսչութիւնը կը կատարէին ի սկզբան լեհաստանի արքեպիսկոպոստները , որոնց իրաւասութեան շրջանակին մէջ էին նաեւ Պեսարապիա , Պուքովինա , Մոլտաւիա (Տես Եւրոպա եւ Պեսարապիա) :

ԺԶ. եւ մանաւանդ յաջորդ ԺԷ. դարուն «Ռուսիաց աշխարհ»ի յատուկ եպիսկոպոստներու գոյութիւնը կրնայ ապացոյց համարուիլ նոր առաջնորդութեան մը կազմութեան , որուն կեդրոնն էր Եաչ քաղաքը : Այն աստե՛ն այդ առաջնորդութեան իրաւասութեան ներքեւ էին նաեւ Պեսարապիա եւ Պուքովինա : Սուչովայի Ս. Օքսինտ վանքը Եաչէն յետոյ կեդրոն իսկ եղած է այս առաջնորդութեան :

1786ին Պուքովինան անջատուելով Ռուսանիոյ թեմէն , Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան կ'անցնի :

1808ին Սուչովա , ինչպէ՛ս նաեւ Մոլտո-Վալաքիա-Պեսարապիա կցուեցան համայն Ռուսիոյ առաջնորդութեան , սակայն կարճ միջոց մը յետոյ բաժնուեցան :

Պեսարապիա , 1836ի կարգադրութեամբ , ուղղակի էջմիածնայ իրաւասութեան ներքեւ նոր Վիճակ մը կազմեց : Իսկ Ռուսանիա անցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին իրաւասութեան ներքեւ : Սովորութիւն եղաւ այցելուներ ղրկել երկու տարին անգամ մը , փոխանակ

հաստատուն առաջնորդ մը պահելու : Այս սովորութիւնը մինչև հիմա կը պահուի :

* * *

Իսկ գալով չորս մասնաւոր թեմերուն , ասոնք ուղղակի կ' Պոլսոյ Պատրիարքին իրաւասութեան ներքեւ կը գտնուին և առաջնորդական հանգամանք չունին :

1. Սելանիկ՝ 1885էն ի վեր հաստատուած հոգեւոր տեսչութիւն մըն է , որ ունի Սելանիկի մէջ եկեղեցի մը և դպրոց մը և յատուկ Հոգաբարձութեամբ մը կը մատակարարուին :

2. Կրէտէ՝ Ժէ . դարէն ի վեր Հայերը կղզիին Գանճիա քաղաքին մէջ ունին եկեղեցի մը : Ի սկզբան իզմիրի Տերունի վիճակին մասը կը կազմէր այս կղզին , որով 1828էն ի վեր Պատրիարքարանի իրաւասութեան ենթարկուած է : Քահանայ մը կը պահուի հոն , եկեղեցւոյ հսկողութեան և փոքրաթիւ Հայերուն հոգեւոր մատակարարութեան համար , և Հոգաբարձութիւն մըն ալ կալուածոց համար :

3. Արէնք՝ հազիւ տասը տարիներէ ի վեր հաստատուած հոգեւոր տեսչութիւն մը փոքրաթիւ Հայերու համար որ մատուււ մը կը պահեն :

4. Յրիպոլիս Ափրիկեան կամ Դարապուսը Ղարա՛նոր կազմուած գաղութի մը հոգեւոր պէտքերը տնտեսելու մտադրութեամբ եւ իրենց խնդրանքով քահանայ մը ղրկուեցաւ 1904 թուականին : Քահանան պաշտօնը լքելով մեկնած է , այնպէս որ առայժմ այս պաշտօնը գոյութենէ դադրած կրնայ համարուիլ :



ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ կը գրաւէ մասնաւոր տեղ մը :

Եպիսկոպոսապետութիւնը մէկ է : Եկեղեցին միայն մէկ գլուխ կրնայ ունենալ , որ է Էջմիածնայ Լուսաւորչաշէն աթոռին օրինաւոր յաջորդը : Սակայն պարագաները այնպէս մը բերած են որ հակառակ տեսականին մէջ եկեղեցւոյ միութիւնը անվրէպ ընդունուած ըլլալուն , գործնականին մէջ այդ միութեան մէջ մասնաւոր կեդրոններ ալ եղած են :

Ասիլա եկեղեցւոյ վարդապետութեան թէև չէ մնասած , սակայն մնասած է անոր բարոյական շէնքին՝ թիրամացութեանց և զանազան դժուարութեանց տեղի տալով : Սակայն աւանդութիւններ , նախապաշարումներ , ինչպէս նաև քանի մը նկատումներ՝ արտաքին պարագաներէն ծնունդ առած , պահպանած են Էջմիածնայ Կաթողիկոսութեան հետ միասին երկու ուրիշ աթոռներ ևս՝ Սսոյ և Աղթամարայ մէջ՝ մասնաւոր Կարողիկոսութեան հանգամանքով և թեմական սահմանափակ շրջանակով : Իրենց դիրքը հանդէպ Ընդհանրական Կաթողիկոսութեան կրնայ համեմատուիլ վիճակաւոր եպիսկոպոսին դիրքին՝ Մետրապոլիտ-Արքեպիսկոպոսին հանդէպ :

Կիլիկիոյ մասնաւոր Կաթողիկոսութեան հաստատութիւնը և շարունակութիւնը մանաւանդ՝ կարեւոր աւանդութիւններու վրայ հիմնուած է :

Սիս՝ այսօրուան Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը՝ երբեմն եղած է նաև Աթոռ Ընդհանրական Կաթողիկոսութեան , որուն իր բնավայրը վերադարձէն յե-

տոյ՝ Կաթողիկոսի հանգամանքը պահել փորձած և յաջողած են ոմանք օգտուելով պարագաներէն :

Հին ատեններէն սկսեալ սակայն , մանաւանդ Ը. դարուն մէջ , Հայ վաճառականներ կը հաստատուին Ճիհանի հովիտին զանազան քաղաքներուն մէջ , մասնաւորապէս Տարսոն՝ որ աշխարհի ամենէն վաճառաչան քաղաքներէն մէկն էր : Այսպէս այսօրուան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռ եղող Ստոյ մէջ՝ Հայերը կը հաստատուին առաջին անգամ 809ին և Ժ. դարուն վերջերը Կիլիկիոյ մէջ բնակող Հայոց համար Արգինա նստող Սաչիկ Ա. Կաթողիկոս 972ին կը ձեռնադրէ երեք եպիսկոպոսներ Տարսոնի , Անտիոքի և Սէլինոնի վրայ , բայց այս առաջին երեք վիճակները հետզհետէ կը ստորաբաժնուին զանազան առաջնորդութեանց , քաղաքներու և շրջակայից մէջ վիճակներ ձեռացնելու շափ հօտեր կազմուելով :

Կիլիկիոյ շէն ու արգաւանդ երկիրը օրէ օր վաճառականներով կը լեցուի և կը հասնի այնպիսի վիճակի մը , որ արդէն էջմիածնայ Աթոռէն հեռացած Կաթողիկոսական Աթոռը , որ այլևայլ տեղեր շրջած էր , կամայ կամայ կը փոխադրուի դէպի Կիլիկիա , և իրեն առաջին կայանը կ'ըլլայ Մաշկեօորի վանքը՝ որ հիմնուած էր 1105ին՝ այն տեղն ուր այսօր Ճէպէլ-Պէրէքէթ (Արասուս) կը յորջորջուի , և որ նոյն թուականին իսկ փոխադրուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը :

Հոս մինչեւ 1166 կը մնայ Հայրապետական Աթոռը և անկէ կը փոխադրուի Հռոմկլայ , ուր երկար դադար մը կ'առնէ մինչեւ 1293 , ուրկէ կրկին տեղափոխմամբ կուգայ կը հաստատուի Սիս՝ ուր կը մնայ մինչեւ 1441 :

Բնական է թէ Հայրապետներու Կիլիկիոյ այսքան մօտ ապրիլը՝ անոնց նոյն վիճակին վրայ մասնաւոր հոգածութիւն մը ունենալուն թելադիր պիտի ըլլար , և պատճառ՝ հաստատուելու նորանոր առաջնորդութիւններ ,

իրենց հոգեւոր հօտին կանոնաւոր տնտեսութեանը համար :

Այսպէս Հնդհանրական Կաթողիկոսութեան Աթոռը Մաշկեւորի վանքին մէջ եղած ատեն կը սկսին յիշուիլ 1113էն սկսեալ Սոյ արքեպիսկոպոսներու շարք մը , որոնք մինչեւ 1292 , Աթոռին Սիս փոխադրութեան թուականը սոսկական թեմակալ արքեպիսկոպոսներ էին :

Երբ Հայրապետական Աթոռը Սիս եկաւ , անոնք իբր Դրան եպիսկոպոս իրենց պաշտօնը պահեցին մինչեւ Ժ.Դ. դար , ուրկէ յետոյ Սիս և շրջակայքը Կաթողիկոսին սեպհական վիճակն համարուեցան :

Իսկ Աթոռն Հռոմկլայ գտնուած միջոցին Կիլիկիոյ և շրջակայից մէջ գտնուող եպիսկոպոսական աթոռներուն թիւը բաւական աճում կը գտնայ : Գրիգոր Դ. Տղայ Կաթողիկոսին (1773–1193) ի Հռոմկլայ գումարած եկեղեցական ժողովին (1179) մասնակցող 32 վիճակաւոր եպիսկոպոսներուն մէջ կը յիշուին հետեւեալ եպիսկոպոսներն , որոնք Կիլիկիոյ և շրջակայից մէջ հաստատուած են Թ. և Ժ. դարերուն մէջ :

- | | |
|----------------------|----------------------------|
| 1. Տարսոն | } Արդէն նախապէս յիշուած են |
| 2. Անտիոք | |
| 3. Սիս (Խոզան) | |
| 4. Գայսերի | |
| 5. Մալաթիա | |
| 6. Անաւարզա | |
| 7. Սեյիֆե | |
| 8. Մամեսիա | |
| 9. Սամսաթ | |
| 10. Կիպրոս (Նիկոսիա) | |
| 11. Կոֆսուն | |
| 12. Համա կամ Համուս | |
| 13. Լաթաֆիա | |

Նոյն միջոցներուն կը հաստատուին կամ յիշուիլ կը սկսին նաեւ Լամբրոնի արքեպիսկոպոսութիւնը—որ շատ վաղանցիկ փայլ մը ունեցած է Ներսէս Լամբրոնացիի շնորհիւ, և ի վերջոյ հաւանօրէն կցուած է ուրիշ մերձակայ առաջնորդարանի մը—և Կապանի եպիսկոպոսութիւնը (հիմա նոյն անուամբ քաղաք Փուսնուզի մօտ) — որ երկար ատեն պահած է իր գոյութիւնը :

1197ին հոպեւոր համախմբումի մը մէջ քանի մը ուրիշ եպիսկոպոսներ ալ կը յիշուին որոնք մինչև այն թուականը անձանօթ են, և ընդհանրապէս վանքերու անուններ են, որոնց տեղերը ճշդեւ դժուար է, այսպէս են,

1. Մեծփար
2. Սանվիլանց
3. Անդրիասանց
4. Յովնանց
5. Փիլիպպոսեանց
6. Բերդուս

1307ին Սիւսի մէջ կաթողիկոսական ընտրութեան համար դուժարուած 41 եպիսկոպոսներու շարքին մէջ արդէն կը տեսնենք թէ յիշուած չեն այս վիճակները և աւելի կանոնաւորութիւն և չափաւորութիւն կայ թեմերու կազմութեան մէջ :

Կիլիկեան վիճակներէն կը մասնակցին այդ ժողովին •
Եպիսկոպոսունք

1. Կեսարիոյ
2. Սսոյ
3. Տարսոնի
4. Բարձրբերդի
5. Անարզաբայի
6. Աճանայի

7. Այասի
8. Նիկսեի (Պօռ և շրջակայքն ալ միասին)
9. Կապանի
10. Շամանքը
11. Մարաշի
12. Պիրեճիփի (Եփրատայ վրայ)
13. Մաշկեւորի
14. Կիպրոսի
15. Չմեկաձագի
16. Մաղարդի (? անձանօթ)
17. Կոպիսառի (Տարսոնի մօտերը)
18. Հարգանի (Հանրն)

1316ին Աստանա գումարուած 17 եպիսկոպոսաները գրեթէ միեւնոյն վիճակին մէկ կրկնութիւնը կը հաստատեն, իսկ 1342ին Սիս գումարուած 29 եպիսկոպոսաներու շարքին մէջ Կիլիկիոյ և շրջակայից մէջ գանուող նախապէս ծանօթ առաջնորդութեանց վրայ կ'աւելնայ նաեւ Իկոնիոյ (Իոնիա) եպիսկոպոսութիւնը, որով դարձեալ կը պահպանուէր ուրեմն նախորդ կացութիւնը վիճակային բաժանման տեսակէտով :

Այդ թուականներէն յետոյ այլևս Սսոյ Կաթողիկոսական Աթոռը անշքանալ կը սկսի : Նոյն իսկ դար մը յետոյ այնքան խեղճ վիճակի մը հասած և զեղծումները շատցած են որ ժողովուրդին ընդհանրութեան կողմէ Աթոռին Սիս պահպանուիլը անօգուտ նկատուելով, 1441ին Ընդհանրական Կաթողիկոսութիւնն իր նախնական որոշումնր՝ Լուսաւորչաշէն Ս. Էջմիածին փոխադրուիլ որոշուած է : Այդ փոխադրութեան որոշումը տուող եկեղեցական ժողովին մասնակցողներու ստուար շարքին մէջ Կիլիկեան թեմերէն եպիսկոպոս չկայ, միայն Սսոյ չորս եպիսկոպոսներուն գործակցութիւնը հաստատուած է :

Բոլոր արեւելեան կղերին միաձայն որոշման հակառակ երբ Գրիգոր Մուսարէզեան Կաթողիկոս (1439 կաթողիկոսացած) կը նախընտրէ չտեղափոխուիլ, ժողովականք միաձայն կ'ընտրեն Կիրակոս Վիրապեցին (1441-1443) որուն առաջին գործը կ'ըլլայ Ընդհանրական մը հանել իր Կաթողիկոսական պաշտօն ստանձնելը ծանուցանող և բանադրանքի կապանքէն ազատելով Աղթամարայ և այլ թեմօրէից կղերն ու աշխարհականները : Այս քրիստոնէական գաղափարով գործն համակրութեամբ կ'ողջունուի ամէն կողմէ եւ նոյն իսկ Կիլիկիոյ մերձաւոր վիճակներն իր հոգեւոր իրաւասութեան կ'անցնին, ինչպէս նաև Երուսաղէմի, Անատոլուի (Փոքր Ասիոյ), Կ. Պոլսոյ, Պանտոսի, Ղրիմի, Պարսկաստանի, Վրաստանի և այլ տեղերու թեմականներն որոնք մասնակցած չէին Վիրապեցի Կաթողիկոսին ընտրութեան գործին : Այնպէս որ Գրիգոր Մուսարէզեանի մահէն յետոյ (1442) իրեն անմիջապէս յաջորդ մը չընտրուիլը արդէն ապացոյց մըն է թէ Կիլիկեան վիճակայինք ալ համակիրպած էին Աթոռին Ս. Էջմիածնայ մէջ վերահաստատման և կը ճանչնային անոր հեղինակութիւնը :

Կարապետ եպիսկ. Նւղոկիացի որ եպիսկոպոսական աստիճանն ի Մայր Աթոռ Կիրակոս Վիրապեցիէն ստացած էր, թէ արեւելեան կղերին մէջ ծնած պառակտումը և թէ արտաքին պարսղաները ի նպաստ իրեն գործածելով յաջողեցաւ կաթողիկոսանալ և իր հոգեւոր իրաւասութեան ներքեւ առնել կարգ մը առաջնորդական թեմեր, Մուսարէզեանի մահէն հինգ տարի յետոյ :

Կարապետ եպիսկ. Նւղոկիացի՝ Սևբաստիոյ, Կեսարիոյ, Մալաթիոյ, Տիարպէքիի և ամբողջ Կիլիկեան շրջանակին, Սուրիոյ, Պաղեստինի և Միջագետքի Հայ եպիսկոպոսներու պետ ճանչցուեցաւ :

Մերձաւորապէս 40 տարի յետոյ երբ Փաթիհ Սուլ-

Թան Մէհմէտ Բ. Գարամանի տիրապետեց (1482) և Սուլթան Սէլիմ Ա. Եափուզ յաջողեցաւ (1512–1519) եօթը տարուան մէջ բոլոր Կիլիկիան, Սուրիան և Միջագետքը, ինչպէս նաև Եգիպտոսը նուաճել՝ Կիլիկիոյ Կաթողիկոսը իր գոյութիւնը պահեց, սակայն Թուրքիոյ Հայոց ներկայացուցիչ–պատրիարքութեան ստորադաս համարուեցաւ, և Կիլիկիոյ բնական սահմաններէն դուրս՝ ակամայ Կիլիկիոյ միացած թեմերը վերստին էջմիածնայ Աթոռին իրաւասութեան անցան :

ԺՁ. դարուն Ունիթու ժամանակագիր մը և ԺԷ. դարուն սկիզբները Սիւս այցելելող և Աղարիա Կաթողիկոսին (1584–1602) հետ տեսնուող Լէոնարտոյ նուիրակ եպիսկոպոսը միահամուռ կը հաստատեն թէ Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւասութեան ներքեւ կը գտնուէին 24 եպիսկոպոսական վիճակներ : Աոռոց մէջ յանուանէ յիշուածները միայն Երուսաղէմի, Տիւրիկի և Չէյթուռի վիճակներն են :

Նոյնպէս էջմիածնայ Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոսին ուղղուած թուղթին մէջ (Գրուած 1632ին) Կիլիկիոյ Սիմէոն Կաթողիկոսը (1626–1636) յայտնապէս և պարծանօք կը յիշատակէ Երուսաղէմի իր հոգեւոր իրաւասութեան ներքեւ գտնուիլը :

Նոյն թուղթին մէջ իբր էջմիածնայ Վիճակ կը յիշուին Եդեսիա, Կեսարիա, Սերաստիա, Նաֆա, Գոնիա և Մերտին՝ որմէ դիւրին է հետեւեցնել թէ մինչև 1632 անոնք արդէն դադրած էին Կիլիկեան Վիճակ ըլլալէ :

Իսկ երբ Կիլիկիոյ մաս յիշուած են Անտիոք, Հալէպ, Գամիրք և Մալաթիա, ստով մասամբ կրնայ ճշգուիլ Կիլիկիոյ Կաթողիկոսներուն հոգեւոր իրաւասութեան շրջանակը :

Այսօր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր իրաւասութենէն կախում ունին հետեւեալ շրջանակին Հայ եկեղեցիները .

Ատանայի կուսակալութիւնը ամբողջութեամբ, Հալէպի կուսակալութեան Հալէպ և Մարաշ սանճագները, Սըվազի կուսակալութենէն Տիվրիկ, Կիւրին, Տարէնտէ, Թէնոս, Ազիզիյէ, Ղանղալ, Պիւնեանի-Համիտ գաղաները և Մանճըլըզ և Կէմէրէկ նահիյէները, Էնկիւրիի կուսակալութենէն՝ Եօզկատի գաւառը: Մամուրէթիւլ Ազիզի կուսակալութենէն Մալաթիա սանճադը:

Այդ հոգեւոր վարչութեան կեդրոն է Սսոյ Մայրավանքը ուր կը նստի Կիլիկիոյ Կաթողիկոսը:

1447էն մինչև ԺԸ. դարուն առաջին քառորդը շատ անկանոն կերպով մը շարունակուած է այդ կաթողիկոսութիւնը որ միշտ քանի մը աթոռներու բաժնուած և իրարու հակառակորդ աթոռակալներով տխուր վիճակ մը ներկայացուցած է:

ԺԸ. դարուն առաջին քառորդէն յետոյ Աջապահեանները իրենց ընտանիքին սեպհականած են Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը մինչև 1866 յաջորդաբար իրենց սերունդէն Կաթողիկոսների առանց օրինաւոր ընտրութեան և եկեղեցական կանոնաց բողոքովին անհամաձայն կերպով մը Աթոռը իւրացնելով:

Ասոնք ինքնակամ կերպով մը վարած են իրենց թեմական ներքին գործերը, միայն յարաբերական գործոց մէջ Կ. Պոլսոյ Պատրիարքարանին աջակցութեանը դիմելով:

Մինչև սոյսօր Կիլիկիոյ կաթողիկոսութեան վարչական կազմակերպութիւնը տակաւին վերջնապէս որոշուած չէ: Կաթողիկոսը՝ անձնապէս կը տնօրինէ թէ՛ վանական, թէ՛ միաբանական և թէ՛ վարչական գործերը առանց որ և է հակակշռող կամ ստորադաս մարմինի: Գոնէ միաբանական ժողով կամ վիճակային համագումար ժողովներէն ընտրուած կրօնական ժողովի մը գոյութիւնը կարեւոր է:

Պատրիարքարանի օրինաց համաձայն Գաւառական

վարչութիւնք պարտին ունենալ յատուկ ժողովներ ,որոնցմէ
գուրկ է Ստոյ կաթողիկոսարանը , որ միանգամայն առաջ-
նորդարանն է Ստոյ վիճակին որ կաթողիկոսին յատուկ
թեմն է :

Իսկ Ստոյ կաթողիկոսական աթոռին իրաւասութեան
ներքեւ գտնուած թեմերը , կը կառավարուին հոգեւորա-
պէս առաջնորդներով որոնք կ'ընտրուին օրէնքին սահմա-
նած եղանակովը Թուրքիոյ բոլոր առաջնորդներու պէս
Գաւառական ժողովներէ : Հաստատութիւնը կիլիկիոյ կա-
թողիկոսի և վաւերացումը և Պէրաթներու ստացումը
Պատրիարքարանին կը պատկանի :

Առաջնորդները վիճակային գործերը կը վարեն Գա-
ւառական ժողովներէ ընտրուած կրօնական և Քաղաքա-
կան ժողովներու հսկողութեան տակ , և հոգեւոր վերին
գործոց համար կիլիկիոյ կաթողիկոսին իշխանութեան
կը դիմեն :

Այսօր կիլիկիոյ վիճակները սասնելիքի կը բաժնուին
հետեւեայ կերպով ,

- Ա. Սիս
- Բ. Ասանա-Պերեք
- Գ. Հանրն
- Դ. Հալեպ-Իսքենդերուլ-Քիլիս
- Ն. Այնթապ
- Զ. Անթաքիա
- Է. Մարաշ
- Ը. Չիքուլ
- Թ. Մալաթիա
- Ժ. Սօզյաթ
- ԺԱ. Կիւրիս-Մաներլըզ
- ԺԲ. Տիվրիկ
- ԺԳ. Տարեցե

Ա. Սիս. — Աթոռ կիլիկիոյ կաթողիկոսութեան , Նա-

խապէս աթոռ Արքեպիսկոպոսութեան : 1105ին կը շինուի Դրազարկու վանքն և անկէ կը սկսի Սիսի Եպիսկոպոսութիւնը : 1293ին Կաթողիկոսութիւնը կուգայ հաստատուիլ ի Սիս, բայց Եպիսկոպոսութիւնը մերձաւորաբար դար մը ևս կը շարունակէ : ԺԵ դարէն սկսեալ Սիս իր շրջականերովը Կաթողիկոսին սեպհական Վիճակը կը դառնայ : Այսօր այս Վիճակին մաս կը կազմեն Ատանայի կուսակալութեան Գողանի սանձազին Սիս, Ֆէքքէ և Գարս-Չիւլքասէրի, գաղաները : Այսօր Սսոյ թեմը կը պարունակէ հին երկու կարեւոր Վիճակներ, Սսոյ և Անարզաբայի Արքեպիսկոպոսական Վիճակները, որոնցմէ վերջինը միայն մինչեւ ԺԴ. դար գոյութիւն ունեցած է :

Բ. Առանա-Պէրէէթ . — Ամէնէն ընդարձակ և ամէնէն կարեւոր Վիճակը Կիլիկիոյ կաթողիկոսութեան : ԺԴ. դարուն սկիզբէն սկսեալ կը յիշուի Ատանայի առաջնորդութիւնը որուն կարեւորութիւնը աւելի ուշ ժամանակներու մէջ կը սկսի : Նախապէս կարեւորութեան կարգով այսօրու ան Ատանայի առաջնորդութեան թեմերէն Տարսոն կը գրաւէր այն տեղը՝ որ այսօր Ատանա ունի Կիլիկիոյ մէջ : Տարսոնի եպիսկոպոսութիւնը հաստատուած էր 972ին Խաչիկ կաթողիկոսէն : Իբր նախապատիւ թեմ արքեպիսկոպոսական տիտղոս կրած են Տարսոնի եպիսկոպոսները, որոնք իրենց իրաւասութեան ներքեւ ունեցած են քանի մը եպիսկոպոսութիւններ :

Տարսոնի եպիսկոպոսները կը նստէին Մլիճոյ վանքը մինչև ԺԵ. դարուն սկիզբը, որմէ յետոյ կորուսած ըլլալով իր կարեւորութիւնը, կցուած է Ատանայի թեմին, թէև երբեմն իր յատուկ հոգեւոր հովիւները ունեցած ըլլայ : 1886ին ուղղակի Սսոյ վանքին ալ կապուած է պահ մը, սակայն յետոյ դարձեալ Ատանայի կցուած է :

Գալով Պէրէքէթի, անիկա այսօր յարակից Վիճակ

մըն է Ատանայի առաջնորդութեան իրաւասութեան ներքեւ և ոչ թէ Ատանայի թեմերէն մէկը :

Մաշկեւորի վանքը այս թեմին մէջ կ'իյնայ : Անիկա շինուած է 1105ին և առաջին անգամ բնակարանը եղած է Ամենայն Հայոց Կաթողիկոսներուն 1105էն մինչև 1166, որմէ յետոյ Հռոմկլայ փոխադրուած է :

Մաշկեւորի վանքը իր յատուկ եպիսկոպոսութիւնը պահած է մինչև ԺԴ. դարուն վերջերը, երբ արդէն Ատանայի եպիսկոպոսութիւնը հաստատուած էր : Հաւանորէն քիչ յետոյ Ատանայի առաջնորդութեան կցուած է : Սակայն յետոյ անջատ առաջնորդութեան մը կրկին վերածուած ըլլալ կը թուի : 1885ին Հաճընի առաջնորդութեան կապուած է և յետոյ անջատ առաջնորդութիւն ընել խորհուած է, սակայն տակաւին այսօր Ատանայի կցուած կը մնայ :

Պէրէքէթ հիներուն Սեւ Լեռն է կամ Թրքաց Կեաւոր Տաղը :

Պէրէքէթ յարակից վիճակին կեդրոնն է Չորհ-Մարգուան : Տ. Սահակ Կաթողիկոս Ռապտեան 1904ին Ատանայի առաջնորդական ընտրութեան ատեն փոփոխութիւն մտցուց անոր կազմութեան մէջ. Ճէպէլ-Պէրէքէթի սանճագն իր հինգ գաղաներովը Ատանայի վիճակէն զատելով և որոշելով որ յարմար պարագայի մը զայն նոր ի նորոյ կազմակերպէ և իբր յարակից վիճակ ուղղակի կապէ Սոյ մայրավանքին իրաւասութեան : Բայց առ այժմ այս որոշումը գործադրուած չըլլալով, հին ձեւը պահեցինք մենք, այնպէս որ այսօր Ատանայի առաջնորդները իրենց իրաւասութեան ներքեւ ունին համանուն կուսակալութեան Ատանա, Մերսին, Իշիլ եւ Ճէպէլ-Պէրէքէթ սանճագները :

Գ. Հաճըն.—ԺՁ. դարէն սկսեալ կը յիշուի : Ատանայի կուսակալութեան Գոզան սանճագին Հաճըն գա-

զան ամբողջութեամբ այս առաջնորդութեան մասը կը կազմէ : Առաջնորդարանը վարչական կանոնաւոր կազմակերպութիւն տակաւին նոր ստացած է : Ոմանց կարծիքովը տեղւոյն եպիսկոպոսութեան հաստատութիւնը մինչեւ ժ.Գ. դարուն սկիզբը կ'առաջանայ :

Գ. Հալէպ-Իսկէնսերուճ-Քիլիս. — Հալէպի կուսակալութեան կեդրոնական սանձագիննոյնանուն գաղաները անցեալին մէջ կը ներկայացնէին առանձին առաջնորդութիւններ : Հալէպ կուսակալութեան կեդրոնը, այսօր անոնցմէ ամէնէն կարեւորն է յարաբերական գործոց համար առաջնորդին ներկայութիւնը կարեւոր ըլլալով :

Հալէպի մէջ Հայերը հաստատուած են ժ.Գ. դարուն մէջ : Իսկ առաջնորդութիւնը հաւանօրէն ժ.Ե. դարէն սկսեալ հաստատուած է, վասն զի 1438 թուականէն սկսեալ մինչև հիմա անխափան կը յիշուին Հալէպի առաջնորդներ : Ժ.Բ. դարուն մէջ (1781-85) միջոց մը Հալէպ անջատուելով Կիլիկիոյ Աթուէն, էջմիածնայ թեմ եղած է, սակայն յետոյ կրկին Կիլիկիոյ միացած : 1866ին Մկրտիչ Վրդ. Տիգրանեանի Առաջնորդ ընտրուելէն յետոյ այս թեմին կցուած են Ա.յնթապի, Մարաշի և Զէյթունի թեմերը, իսկ իր յաջորդին՝ Մկրտիչ Եպիսկ. Քէֆսիղեանի պաշտօնավարութեան միջոցին (1870) այս ընդարձակ Վիճակին կը կցուին Կաթմաս և Անթաքիա : Ասով վեց Վիճակներ կը միանան և ամբողջ Հալէպի կուսակալութիւնը մէկ առաջնորդութեան կը վերածուի : Քէֆսիղեան իր Կաթողիկոսանալէն յետոյ այդ միացեալ Վիճակները իրարմէ կ'անջատէ : Արդի Կաթողիկոսը այս Վիճակը վերակազմեց Իսկէնսերուճի նորակազմ թեմը և Քիլիսի առաջնորդութիւնը Հալէպի հետ միակ առաջնորդութեան մը վերածելով :

Իսկէնսերուճ հոգեւոր տեսչութիւն մըն էր որ նոր կարեւորութիւն մը գրաւել սկսած էր, քաղաքը առեւ-

տրական տեսակէտով մեծ զարգացում գտած ըլլալով վերջին դարուն մէջ : Նախապէս նոյն դիրքը ունէր մերձակայ Այսա քաղաքը՝ որ երբեմն իր յատուկ առաջնորդութիւնը ունեցած է (ԺԴ.—ԺՁ. դար), յետոյ իր կարեւորութիւնը կորսնցնելով, Վիճակն ալ դադրած է գոյութիւն ունենալէ :

Անցեալ դարուն մէջ Իսկէնտէրունի ծոցին շրջակայքը, Փայսա, Պեշեհ, Իսկէնտէրուն և այլք միասին հաւաքարար մասը կը կազմէին Անտիոքի առաջնորդութեան, որմէ անջատելով զատ թեմ մը ըրած է Մկրտիչ Կաթ. Քէֆսիզեան : Իսկ Քիլիսի առաջնորդութիւնը նոյնպէս ԺԹ. դարուն կէսերէն ասդին յիշուիլ սկսած է եւ յաճախ Այնթապի վիճակին միացեալ թեմ մը եղած է :

Ե. Այնթապ. — Հալէպի կուսակալութեան մէջ նոյնանուն գազան կը ներկայացնէ անջատ առաջնորդութիւն մը, թէև անձի վրայ միացմամբ Հալէպի վիճակին միացուած ըլլայ : Ունի Գաւառական անջատ կազմակերպութիւն և ինքնուրոյն մատակարարութիւն :

Այս առաջնորդութիւնը հաղիւ ժէ. դարէն սկսեալ յիշուիլ կը սկսի, սակայն իր ծագումը շատ աւելի հին է : Այնթապ կ'իյնայ այն գաւառին մէջ որ հիներէն կը կոչուէր Եփրատացիք :

Արդ, այդ գաւառին մէջ գտնուող Հռոմկլայ քաղաքին մէջ երկար ատեն (1166—1293) հաստատուած է Ընդհանրական Կաթողիկոսութեան Աթոռը, որ նոյն թուականէն յետոյ Հռոմկլայի աւերման հետևանօք փոխադրուեցաւ Սիս : Սակայն այդ կողմերու թեմականներու հովուութիւնը յանձնուած կը տեսնենք եպիսկոպոսի մը, որուն Աթոռն էր նոյն Եփրատացոց շրջանակին մէջ գտնուող Պիր կամ Պիրէճիկ քաղաքը, որուն եպիսկոպոսները ԺԴ. դարէն սկսեալ կը յիշուին :

Այնթապի Հայերը ուշ ժամանակներու մէջ գաղթած են Ազուլիսի շրջակայքէն և Կեալուր-Տաղի վրայով եկած հաստատուած են այս քաղաքին մէջ : Իրենց թիւը շրջակայ քաղաքներու մէջ գտնուողներէն աւելի շատ ըլլալով, կ'երևի թէ առաջնորդութեան կեդրոնն ալ հոն փոխադրուած է ժէ. դարուն մէջ : Հռոմկլայ, Պիրէճիկ, Նիզիպ, Էհնէշ և այլն՝ այդ թուականին Այնթապի առաջնորդութեան իրաւասութեան ներքև էին իբր Եփրատացւոց մաս, սակայն յետոյ անցան Եդեսիոց առաջնորդութեան՝ Պետական բաժանումով Ուրֆայի գաւառին ենթարկուած ըլլալով :

Ինչպէս վերը յիշատակեցինք, Այնթապ 1866-1871 շրջանին Հալէպի վիճակին միացած է և յաճախ Քիլիս իր իրաւասութեան ենթարկուած :

Զ. Անքաւիա, համբաւաւոր Անտիոքը, որ բազմաթիւ եպիսկոպոսութեանց ալ կայան եղած է և նախնական դարերու պատմութեան մէջ երեւելի : Այս առաջնորդութիւնը Կիլիկիան շրջանակին մէջ հաստատուած առաջին առաջնորդութիւններէն մէկն է : Տարսոն և Անտիոք այն քաղաքներն են որոնց համար մէկ մէկ եպիսկոպոս ձեռնադրեց Խաչիկ Ա. Կաթողիկոս Արգինայի մէջ : Անկէ ի վեր անխափան շարունակուած է այս առաջնորդութիւնը վանազան կերպարանափոխութիւններով : Առաջնորդութեան կեդրոնին մէջ Հայերը բազմաթիւ չեն, սակայն շրջակայ գիւղերու մէջ՝ բազմաթիւ հայաբնակ գիւղեր կան, որոնց հոգեւոր հովութիւնը Անթաքիոյ առաջնորդին վրայ կը ծանրանայ :

Անտիոքի վիճակը ինքնին առաջնորդ մը պահելու անկարող ըլլալով, երբեմն Փայաս և Պէլէն այս վիճակին թեմագլուխ եղած են, կամ միացեալ առաջնորդութիւն մը կազմած են :

Վերջերս՝ Իսկէնճերուն իր անմիջական մերձաւոր շրջ-

Չանակովը յանձնուած ըլլալով Հալէպի, Անտիոքի շրջակայ գիւղերը, Սուրիոյ կուսակալութեան մէջ գտնուող Լաթաքիոյ վանքին—որ Երուսաղէմի Պատրիարքին իրաւասութեան ներքե կը գտնուի—Երուսաղէմի կողմանէ կարգեալ Տեսչին յանձնել սովորութիւն եղած է: Երուսաղէմի Պատրիարքութեան շրջանակէն դուրս են նաև Լաթաքիոյ շրջակայ գիւղերը, որոնք Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւասութեան ներքե կը գտնուին: Հետևաբար Լաթաքիոյ տեսուչները միանգամայն Անթաքիոյ առաջնորդներ կը ճանչցուէին: Տ. Սահակ Կաթողիկոս սակայն վերջերս նոր փոխանորդ մը կարգելով անջատեց այս պաշտօնը:

Է. Մարաշ.— Մարաշի առաջնորդութիւնը նոյն շրջանակի մէջ հաստատուած առաջնորդութեանց կարգին մէջ հին վիճակներէն մէկը կրնայ համարուիլ:

Առաջին անգամ 1085 թուականին Պօղոս Եպ. վահայր Վարազայ վանքին՝ Մարաշի մէջ հակաթու Կաթողիկոս կը նստի: Այս հակաթու Կաթողիկոսութիւնը հազիւ քանի մը ամիս կը տևէ, սակայն քիչ յետոյ 1192ին Ստեփաննոս Մանուկ կը ձեռնադրուի եպիսկոպոս Մարաշի, Քեսունի և շրջակայից վրայ, կեդրոն ունենալով Կարմիր վանքը: Հետևաբար ԺՍ. դարէն սկսեալ հաստատուած է Մարաշի առաջնորդութիւնը և անխափան շարունակուած է մինչև հիմա: 1866ին, ինչպէս յիշելու առիթ ունեցանք, կցուած է Հալէպի, սակայն յետոյ վերստին զատուած է:

Այսօր Հալէպի կուսակալութեան Մարաշ սանձագին Մարաշ, Պաղարծրց և Անտիքին զաղաները այս առաջնորդութեան իրաւասութեան ներքե կը գտնուին: Այս առաջնորդութեան իրաւասութեան ներքե չի գտնուիր այսօր Փռնուզի վանահայրութիւնը, որ կրնար առաջնորդութիւն նկատուիլ իրեն սեպհական յատուկ վիճակ և թեմ ունենալով, բայց այժմ Զէյթունի յարակից է:

Ը. Ջէյքոն. — Մարաշի սանճագին Չէյթուն եւ Էլպիստան գազաները կը կազմեն այս թեմը: Վիճակային կազմակերպութիւն չունի: Ինչպէս վերն յիշուեցաւ, կարճ միջոց մը Հալէպի և Մարաշի վիճակներուն կըցուած է: Իր հնութիւնը հազիւ ժ.Ն. դար կը հասնի: Այդ թուականէն մինչև հիմա սակայն կանոնաւորապէս շարունակուած է այս թեմին առաջնորդութիւնը, որուն կեդրոնն է Ս. Կարապետի անունով կառուցուած վանքը:

Ֆունուզի վանքն ալ՝ որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նշանաւոր վանքերէն մէկն է, իր այս նոր անուամբը հազիւ ժ.Չ. դարուն մէջ յիշատակուիլ կը սկսի, սակայն նորագոյն ուսումնասիրութիւններ հաստատած ըլլալով թէ Արեգնի վանքը կեդրոնն էր Կապանի արքեպիսկոպոսութեան—որ այնքան մօտ է Ֆունուզի,—հաւանական է ենթադրել թէ Ֆունուզի վանքը եթէ նոյն իսկ Արեգնի վանքը չէ իսկ և իսկ, գէթ Ֆունուզի վանահայրութիւնը յաջորդութիւնն է Կապանի արքեպիսկոպոսութեան և և Արեգնի վանահայրութեան. իրաւամբ ալ ժ.Բ. դարէն մինչև ժ.Ն. դար Կապնոյ եպիսկոպոսութեան յիշատակութեան կը հանդիպինք, իսկ անկէ յետոյ ժ.Չ. դարէն սկսեալ Ֆունուզի եպիսկոպոսներու, որով անգամ մը ևս կը հաստատուի մէկուն միւսին շարունակութիւնը ըլլալը:

Թ. Մալաթիա. — Կիլիկիոյ բնական սահմաններէն դուրս գտնուող այս ընդարձակ թեմը կը կազմէ Կիլիկիոյ ամէնէն կարեւոր վիճակներէն մէկը, տարածուելով Մամուրէթ-իւլ-Ալիզ կուսակալութեան Մալաթիա սանճագին վրայ որ բաժնուած է 5 գազաներու (Մալաթիա, Հիւանի Մանսուր, Պէհեանի, Քեախթէ և Հէքիմխան) և կը բովանդակէ ընդամէնը 15 եկեղեցի: Այս վիճակին գոյութիւնը ծանօթ է ժ.Բ. դարէն սկսեալ: 1447ին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթարկուած է: 1841-1848 իր յարակից գաւառներովը Եդեսիոյ առաջ-

նորդութեան կցուած է, և էջմիածնայ Աթոռին իրաւասութիւնը անցած է, սակայն յետոյ կրկին կիլիկիոյ յանձնուած է: Վիճակին այսօրուան սահմանը պետական սահմաններու պատշաճեցնելով կազմուած է, մինչ առաջ Մալաթիոյ երկու կարեւոր թեմերը՝ Պեհեանի և Հիւսնի-Մանսուր երբեմն ուրիշ առաջնորդութեանց մասը և երբեմն անջատ առաջնորդութիւններ կազմած են: Պեհեանի կամ Պեհեսիսիէ մօտ էր հին Քեսուն կամ Քեսուն քաղաքին՝ որուն մօտերը շինուած էր Կարսիւր վանքը: Այս վանքը ԺԱ. դարուն մէջ յանկարծ փայլ առաւ և իր վահահայրերը իբր առաջնորդ իրենց հոգեւոր իրաւասութեան ներքեւ ունեցան Մարաշ, Քեսուն, և շրջակայ տեղերը, որով կը հաստատուի թէ Պեհեանի երբեմն Մարաշի հետ առաջնորդութիւն մը կազմած է, անջատ բուրովին Մալաթիաէն: Յետոյ միջոց մըն ալ կը կարծուի թէ մասը կազմած է Եփրատացոց թեմին (Պիր, Հռոմկլայ, և այլն), որուն մասը կրնայ համարուիլ աշխարհագրական դիրքով և մերձաւորութեամբ: Իսկ 1867ին Պեհեանի և Հիւսնի-Մանսուր Պատրիարքարանի կարգադրութեամբ միջոց մը Մանճըլըզի վանահօր իրաւասութեան ենթարկուած են:

Իսկ անջատ առաջնորդութեան մը խորհուրդը յղացած է Մկրտիչ Կաթողիկոս 1883ին, սակայն քանի մը տարի յետոյ կրկին Մալաթիոյ յանձնուած է այդ Վիճակը:

Գալով Հիւսնի-Մանսուրի, ոմանք կը կարծեն թէ այս քաղաքին կը վերաբերի ԺԲ. դարուն մէջ յիշատակուած Հարդունի կամ Հարքանի եպիսկոպոսութիւնը, որ ոմանք Հարգան ալ կը կարդան: Բանասէրները երկու կարծիքի բաժնուած են սակայն, վասն զի ոմանք կը պնդեն թէ այդ քաղաքը հին Հաճըն է, ինչ որ աւելի հաւանական կը թուի մեզի, մանաւանդ որ Հիւսնի-Մանսուր իր աշխարհագրական դիրքովը կամ Մա-

լաթիոյ կամ Եփրատացւոց յարակից հարկ է որ ըլլար : 1887ին պահ մը անջատ վիճակ ճանչցուած է, սակայն յետոյ դարձեալ կցուած է Մալաթիոյ առաջնորդութեան, որուն վիճակային կազմակերպութիւնը գրէթէ առաջին անգամ տուաւ Սահակ Կաթողիկոս՝ պաշտօնի ձեռնարկելէն քիչ յետոյ :

Ժ. Եոզկաս. Այս առաջնորդութեան հաստատութիւնը հազիւ թէ 90-100 տարուան հնութիւն մը ունի :

Մինչեւ ԺԸ. դարուն վերջերը՝ տակաւին աննշան գիւղ մըն էր Եոզկաս : Զափան-Օզլու՝ երեւելի թիւրքմէն Աշիրէթին պետը և իր յաջորդները՝ որոնք Եոզկասի շրջակայքը հաստատուած էին Օսմանեան կառավարութեան թոյլտուութեամբ, Եոզկասը իր առողջարար և օգասուն դիրքին համար, իրենց բնակավայր և կեդրոն որոշեցին և զայն շէնցնելու ձեռնարկեցին : Այս առթիւ Կիւրիինի և Ուզուն Եայլայի (Աղիզիյէի գաւառակին մէջ ընդարձակ լեռնադաշտ մը՝ սահմանակից Կիւրիինի, Մանճըլըգի և Կէմէրէկի) բնակիչներէն, արհեստաւոր, երկրագործ և վաճառական Հայեր Եոզկաս հաստատուեցան :

ԺԹ. դարուն սկիզբները գաղթականութիւնը բաւական ստուարացած էր, հետեւաբար այն ժամանակուան Կիլիկիոյ Կիրակոս Ա. Աջապահեան Կաթողիկոսը (1796-1825) այդ գաղթականները որոնք մեծ մասամբ իր թեմականներէն կը բաղկանային, հողեւորապէս անխնամ ու անհովիւ չձգելու համար՝ անոնց առաջնորդ և հովիւ կը կարգէ (1810) Ստոյ միարաններէն Կ. Պոլսեցի Մատթէոս վրդ.ը որ երկար ատեն այդ պաշտօնը կը վարէ, այդ թուականէն յետոյ օրէ օր աւելի կը բազմանան Եոզկասի և մերձաւոր շրջանակի մէջ հաստատուած Հայերը և երբ Օսմ. կառավարութիւնը Եոզկասը Էնկիւրիի կուսակալութեան կը կցէ առաջնորդական պէրաթով կը նուիրագործէ այդ առաջնորդութեան հաստատութիւնը : Այսօր Եոզկա-

տի առաջնորդութենէն կախում ունին 35 եկեղեցիներ
ցրուած էնկիւրիի կուսակալութեան Եօզկատ սանճագին
մէջ՝ որուն Չօրում գազան միայն խնդրոյ առարկայ է
էնկիւրիի և Եօզկատի առաջնորդութեանց միջեւ :

Այս որոշ սահմանը գծուեցաւ՝ երբ Կիւրիև-Մաննըրըզ
Վիճակը իրր ուրոյն առաջնորդութիւն անջատուեցաւ վերջ-
նապէս Եօզկատէն որ ի սկզբան Կիւրիևի մասը կը հա-
մարուէր : Միւս կողմէն Կեւեռեկ՝ որ այսօր Կիւրիևի մասը
կը կազմէ իր 20 գիւղերովը Եօզկատի առաջնորդութեան
մասը կը կազմէր անցեալ դարուն կէսէն առաջ : Քէֆ-
սիզեան կաթողիկոս զանոնք Կիւրիևի առաջնորդութեան
կցեց, սակայն յետոյ ստիպուեցաւ վերադարձնել Եօզկատի
առաջնորդութեան որմէ 1890ին կրկին առնուելով Կիւ-
րիևի կցուեցաւ :

Եօզկատի առաջնորդութիւնը պահ մըն ալ էնկիւրիի
առաջնորդութեան կցուած է անձի վրայ միացմամբ (1854-
1858) վասն զի Եօզկատի առաջնորդ Մասթէոս վրդ-
միանգամայն էնկիւրիի առաջնորդութեան կոչուած է :
Միեւնոյն ձեւով 1859-1862 շրջանին Կիւրիև և Եօզկատ
միացուած են : 1870-1872ին Դերձակեան Եպ.ի պաշտօ-
նավարութեան միջոցին էնկիւրի-Եօզկատ-Աֆիոն Գարա-
Հիսար միացեալ Վիճակ մը կազմած են, և այդ թուականէն
ի վեր Եօզկատ կը ներկայացնէ անջատ վիճակ մը՝ որ տա-
կաւին նոր վիճակային կազմակերպութիւն ստացած է :

Վ.Ա. Կիւրիև-Մաննըրըզ, և Ժ.Ն. Յարեւոյտ. Այս վի-
ճակները թէև անջատ նկատուած են, սակայն անցեալին
մէջ շարունակ իրարու յարակից և միացեալ գտնուած են,
երբեմն ալ անջատ կամ ուրիշ վիճակներու ստորադաս-
ուած : Իրենց սահմանները և բաժանումներն իսկ այնքան
խառն ու շփոթ են՝ որ յարմար կը դատենք զանոնք հա-
ւաքարար ներկայացնել, վասն զի արդէն ամէնքն ալ
միեւնոյն անցեալը ունին և միեւնոյն վիճակը :

Այս շրջանակին մէջ Հայ գաղութի մը հաստատութեան թուականը մինչեւ ժ. դար կը բարձրանայ : Ջահանգաւառին թաւրջուր աւանը, Տարէնտէի մօտերը և Կոկիսոնի շրջակայքը պղտիկ գաղութ մը հաստատուած ըլլալը կը յիշուի : Նոյնպէս 1192 թուականին Ջահանի եպիսկոպոս մը, ինչ որ կը հաստատէ առաջնորդութեան մը գոյութիւնն նոյն թուականներուն :

Իսկ Կոկիսոնի եպիսկոպոսներ ժԱ. և ժԳ. դարուն մէջ կը յիշուին : Իսկ 1586 թուականին (ժԶ. դարուն) կը յիշուի Աշոցայ եպիսկոպոս մը որ հաւանօրէն պէտք է ըլլայ Աշոտիյէի առաջնորդ մը : Մանճրլըզի Ս. Թորոս վանքն ալ հաւանօրէն շինուած ըլլալով ժԶ. դարուն վերջին կէսին, հաւանական է ենթադրել թէ այս թեմերուն առաջնորդական աստուր ժամանակին հետ տեղափոխուած է : Այս շրջանակը Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթարկուած է ճիշդ այն պատճառներով որոնցմով Մալաթիա և այլ թեմեր Կիլիկիայէն դուրս ըլլալով նոյն աստուին ենթարկուած են :

Այսօր այս երեք վիճակներն կը պարունակեն հաւաքաբար ընդամէնը 25 գիւղեր : Նախապէս այդ գիւղերէն միայն հինգը կախում ունէին Կիւրինի առաջնորդարանէն, իսկ մնացեալ 20ը (որոնցմէ ամէնէն կարեւորն Կէմէրէկն է) բաւական հին ժամանակէ ի վեր Եոզկատի առաջնորդարանին հոգեւոր իրաւասութեան ենթարկուած էին :

Սակայն Չաքարիա եպիս. Բանջարեան Կէմէրէկցին 1857ին Կիւրին-Տարէնտէ վիճակին առաջնորդ և Մանճրլըզի Ս. Թորոս վանքին վանահայր ընտրուելով Կէմէրէկ իր շրջակայ 18 գիւղերովը յանձնուեցաւ Մանճրլըզի վանահօր հոգեւոր իրաւասութեան :

Այդ թուականէն յետոյ միացումներով և բաժանումներով բազմաթիւ փոփոխութիւններ կրած են այս թեմերը, որոնք նոյն իսկ երբեմն Սերաստիոյ առաջնորդին

իրաւասութեանը և հսկողութեանը ենթարկուած են :

1904ին բանաւոր կարգադրութեամբ մը այս Վիճակները միացան Տ. Սահակ կաթողիկոսի որոշումով և կազմեցին միակ առաջնորդութիւն մը որ տակաւին չվերակազմուած դարձեալ բաժնուած է՝ Տարէնտէն անջատ առաջնորդութիւն նկատուելով , թէ և այս վիճակն ալ չկըրնար հաստատուն ձեւ մը նկատուիլ , զուրկ ըլլալով Վիճակային կազմակերպութենէ :

Այսօր այս երեք վիճակները կը գրաւեն Սըվազի կուսակալութեան հետեւեալ մասերը :

Ա. Կիւրինի գաղան ուր կը գտնուին 5 եկեղեցիներ :
Բ. Մանճըլըզի նահիյէն (1 եկեղեցի , 1 վանք) որ Սըվազի կեդրոնական գաղաէն կախում ունի :

Գ. Թէնոսի գաղան (18 եկեղեցի) որուն միայն Կէմէրէկ նահիյէին մէջ խտացած են Հայերը :

Դ. Ազիզիէ
Ե. Զանգալի
Զ. Պիւնեան-Համիտ

գաղաները ամբողջութեամբ եկեղեցականապէս Կէմէրէկի մասը կը համարուին Պիւնեան-Համիտ 1903ին Սըվազի տրուած է կեսարիայէն անջատուելով

է. Տարէնտէ գաղան
Ը. Աշոտիյէ նահիյէն

որոնք հաւաքաբար ունին 6 եկեղեցի

ԺԳ. Յիւրիկ Սերաստիոյ կուսակալութեան կեդրոնական սանճազին համանուն գաղան , կը ներկայացնէ անջատ առաջնորդութիւն մը որ Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքեւ կը գտնուի :

Այս քաղաքին եպիսկոպոսները ԺԳ. դարէն սկսեալ կը յիշատակուին : Վիճակային կազմակերպութենէ զուրկ է հիմա և համեմատապէս անկեալ վիճակի մէջ կը գտնուի :



ԱՂԹԱՄԱՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Այս մասնաւոր Կաթողիկոսութիւնը մեծ նշանակութիւն մը չէ ունեցած : Աթոռը 14 տարիներէ ի վեր դատարկ է սակայն տակաւին կը պահէ իր Կաթողիկոսական տիտղոսը և միայն տեղապահներով կը կառավարուի :

Այս աթոռին հաստատութեան պարագաները շփոթ են : Եկեղեցական տարեգրութեանց մէջ անոր հաստատութիւնը 1114ին Դաւիթ եպիս. Թոռնիկեանի կը վերագրուի, մինչդեռ վանքին մէջ պահուած «Հաւաքարան» մը կը հաստատէ թէ անոր հաստատութիւնը 921 թուականին եղած է :

Ստոյգ է այս իրողութիւնը որ Աղթամար պահ մը եղած է Աթոռ Ընդհանրական Կաթողիկոսութեան (930-950) և անոր հեռանալէն ետք Աղթամարայ աթոռակալները առաւելութեան ձգտումներ ունեցած են, մինչև որ Դաւիթ Թոռնիկեան բացարձակապէս Կաթողիկոս հռչակուելու յաւակնած է, ընդդէմ Գրիգոր Գ. Պահլաւունիի (1113-1166) որուն կաթողիկոսացումը փնհածոյ թուած էր արեւելեան կղերին :

Այդ թուականէն մինչեւ հիմա կը շարունակուի Աղթամարայ Կաթողիկոսութիւնը միշտ երկրորդական կարեւորութեամբ մը և նեղ հոգեւոր իրաւասութեան շրջանակի մը մէջ սահմանափակուած :

1114էն մինչեւ 1441 երբ Ընդհանրական Կաթողիկոսութեան Աթոռը Կիլիկիա էր, Աղթամարայ Կաթողիկոսները աւելի ընդարձակ թեմական շրջանակ հաւանական է որ ունեցած ըլլան արեւելեան գաւառներու մէջ, սակայն երբ աթոռը դարձեալ Ս. Էջմիածին վերադարձաւ քնական է թէ այլեւս ալ աւելի սահմանափակուե-

ցաւ Աղթամարայ Կաթողիկոսութեան շրջանակը : Ասոր համար է որ Ընդհանրական Հայրապետութեան Ս. Էջմիածին փոխադրուելուն օգնած են Աղթամարցիները և Զաքարիա Գ. ուղած է իրեն անցնել Էջմիածնի Կաթողիկոսութիւնը, սակայն չէ յաջողած : Անկէ յետոյ հետզհետէ կը սահմանափակուի իր հոգեւոր շրջանակը և այսօր գրեթէ իր իրաւասութեան շրջանակին մէջ ունի գիւղախումբեր, և Կեալաշի և Շատախի գաւառները որոնց կեդրոնն է Վանայ ծովուն մէջ գտնուած Աղթամար կղզին՝ ուր է Կաթողիկոսական Աթոռանիստ եկեղեցին՝ Ս. Խաչ :

Այսօր Աղթամար Կաթողիկոսութիւնը ունի երկու վիճակ՝ երկուքն ալ Վանայ ծովու հարաւային եզերքը տաքածուած :

Ա. Աղթամար՝ որ ուղղակի Կաթողիկոսին (հիմա Տեղապահին) սեպհական թեմն է : Վանայ կուսակալութենէն եօթը գիւղախումբեր այս թեմին շրջանակին մէջ են : Այս եօթը գիւղախումբերուն մէջ ընդ իրաւասութեամբ Աղթամարայ Կաթողիկոսին կան 193 եկեղեցիներ և 41 վանքեր, որոնց հասոյթներով կը մատակարարուի Աղթամարայ վանքը ու Կաթողիկոսարանը :

Բ. Խիզան՝ որ իրր անջատ առաջնորդութիւն մը կը յիշուի ժ.Գ. դարէն սկսեալ, և մինչև հիմա կը պահէ նոյն հանգամանքը : Իր առաջնորդը կամ առաջնորդական փոխանորդը կ'անուանուի Աղթամարայ Կաթողիկոսներէն կամ անոր տեղապահներէն :

Վիճակային կանոնաւոր կազմակերպութենէ զուրկ է :

Իր հոգեւոր շրջանակին մէջ են Ստորին Կարկառ, Շինիձորս, Ապարկերտ, Մամրտանի, Նգար, Խորորս գիւղախումբերը, որոնց մէջ սփռուած են 109 եկեղեցիներ և 17 վանքեր՝ որոնք Աղթամարայ Կաթողիկոսութեան ենթակայ են :

Խիզան այժմ Պիթլիսի կուսակալութեան կը պատկանի :

Մասնաւոր աթոռներուն մէջ Աղթամարայ Կաթողիկոսները ամենէն աւելի էջմիածնայ նախամեծար աթոռին հետ բարւոք յարաբերութիւններ մշակած և անոր գերագահութիւնը և նախապատուութիւնը ընդունած են, մասնաւորապէս 1441էն յետոյ երբ Կիրակոս Վիրապեցի բանադրանաց կապանքէն լուծեց Աղթամարայ Կաթողիկոսները և թեմականները :

Հիմա այս աթոռին մատակարարութիւնը այնքան փայլուն երեւոյթ մը չունի : Վանական Տնօրէն խորհուրդ մը և նոր կազմած քաղաքական առժամեայ ժողով մը տեղապահի մը նախագահութեամբ կը վարեն գործերը Կ. Պոլսոյ Պատրիարքարանին վերին հսկողութեան ներքեւ :

Օրինական տեսակէտով իր դիրքը Կիլիկիոյ Կաթողիկոսին դիրքը ունի, և միեւնոյն յարաբերութեանց եղանակը :



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ

Կրօնական նուիրապետութեան տեսակէտով Երուսաղէմի Պատրիարքութիւնը կրօնական-եկեղեցական յիշատակներու կապուած և հնութեան իրաւամբ իբր Հայրապետական Աթոռ նախապատիւ հանգամանք ունի :

Երուսաղէմի Աթոռին հիմնադրութիւնը Առաքելական է, վասն զի անիկա կը սկսի Տեառն-Նղրայր Յակոբոս «Արդար» Առաքեալէն որ երկոտասանից կողմէ հաստատուեցաւ : Աթոռին առաջին հիմնադիրին բնակած տան տեղւոյն վրայ 14 դարէ ի վեր բարձրացած է Հայոց Ս. Յակոբեանց վանքը, որուն աթոռակալները իրապէս կրնան յաջորդները համարուիլ ուղղակի գծով Առաքելահաստատ

այս Աթոռին : Հայոց վանքին Աւագ սեղանին ներքեւ ,
—ինչպէս կը վկայեն միւս քրիստոնեայ ազգերն ալ—ամ-
փոփուած է Ս. Առաքեալին մարմինը , որով անգամ մը
եւս կը շեշտուի Հայոց վանքին կարեւորութիւնը և պատ-
մական ու եկեղեցական արժէքը :

Ինչպէս յայտնի է քրիստոնէութեան առաջին դարե-
րուն մէջ եկեղեցին մէկ էր և աթոռները ընդհանրական
ու համազգային : Յետոյ անոնք զանազան պատճառնե-
րով զանազան ցեղերու մէջ բաժնուեցան :

Նոյնը պատահեցաւ նաեւ Երուսաղէմի Աթոռին հա-
մար , որուն բաժանումը է. դարէն կը սկսի : 637ին Երու-
սաղէմ կը մտնէ Էօմէր-Հաթթապ ամիրան Կոչեալն՝ «Ամիր-
էլ-Մուխամին» , և կը կանգնէ Հարեւր-Շէրիֆ անուն հոյա-
կապ մզկիթը Սողոմոնեան տաճարին տեղւոյն վրայ :

Էօմէր Ամիրապետին հրովարտակով Հայերը կուռե-
նան Երուսաղէմի մէջ Պատրիարք ունենալու իրաւունք ,
և Աբրահամ եպիս. կ'ըլլայ առաջին Պատրիարքը :

Արարական տարեգրութիւնք ալ կը հաստատեն թէ
վիայն Հայերուն տրուեցաւ այն աստիճան Երուսաղէմի մէջ
պատրիարքական իշխանութեամբ եպիսկոպոս մը ունե-
նալու իրաւունք իրիւ անմիջական յաջորդ և Տէր Ս.
Յակոբեան Առաքելական աթոռին :

637 թուականէն մինչև հիմա այս աթոռը անընդ-
հատաբար շարունակուած է :

Սուլթան Սէլիմ Ա. Եալուզ 1517ին Երուսաղէմի
տիրելէն յետոյ Հայոց Երուսաղէմի Պատրիարքներուն
տրուած իրաւունքները իր կողմանէ ալ հաստատեց , միայն
հոգեւորապէս իր առանձնական նշանակու թիւնը պահելով
հանդերձ Երուսաղէմի Պատրիարքութիւնը ենթարկուեցաւ
Կ. Պոլսոյ Պատրիարքութեան վերին հսկողութեանը : Նոյն
խակ միջոց մը երկու աթոռներ միացան (1694-1715) սա-
կայն յետոյ անջատուեցան , աւանց սակայն Կ. Պոլսոյ

կեդրոնական վարչութեան հսկողութենէն բաժնուելու :

Այսօր Երուսաղէմի Պատրիարքութիւնը գրեթէ ունի Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հանդէպ այն դիրքը որ ունին Կիլիկիոյ և Աղթամարայ Կաթողիկոսները, միայն թէ իր կապերը և յարաբերութիւնները աւելի ճշդուած են և կեդրոնին իրաւասութիւնները աւելի լայն և աւելի ընդարձակ :

Այսպէս Երուսաղէմի Պատրիարքութեան ընտրութեան գործին մէջ թեմականները — որոնք արդէն շատ աննշան թիւ մը կը ներկայացնեն — ձայն չունին :

Միայն վանքին միաբանութիւնը ընտրելիներ կը ներկայացնէ և կեդրոնը այսինքն Կ. Պոլիս, այդ ընտրելիներէն մին պաշտօնի կը կոչէ, որով գրեթէ Կ. Պոլիս կ'ընտրէ Երուսաղէմի Պատրիարքը հինուց ի վեր :

Աթոռին ներքին մատակարարութեան գալով, Երուսաղէմի առաքելական աթոռին յաջորդը Վանահայր-Պատրիարք մըն է, որուն պաշտօնն է պաշտպանութիւն և պահպանութիւն Ա. տեղեաց մէջ Հայոց սեպհական իրաւանց, օժանդակութեամբ միաբանից :

Պատրիարքը՝ այդ մատակարարութեան գործադիր պաշտօնեան և պետն է :

Վանական վարչութիւնը կը կատարէ ուղղակի միաբանութիւնը կամ անկէ բղխած գործադիր վարչութիւնը որ է Տնօրէն Խորհուրդը :

Երուսաղէմի Պատրիարքութիւնը ունի նաեւ պաշտօն հովուելու Պաղեստինի և Սուրիոյ մէջ բնակող Հայերը որոնք այնքան մեծ թիւ մը չեն ներկայացներ :

1447ին երբ կարապետ եպ. Եւդոկիացի Սիսի մէջ կաթողիկոսացաւ. Գահիրէի էմիրին հրամանովը, և անոր իշխանութեան ներքեւ գտնուող Հայոց հոգեւոր պետ ճանչցուեցաւ, Երուսաղէմի Պատրիարքները որ այդ սահմաններուն մէջ կը գտնուէին, ենթարկուեցան կամ աւելի

ճիշդ ըսելով կապուեցան Կիլիկիոյ կաթողիկոսութեան : Այս վիճակը տեւեց մինչեւ Սուլթան Սէլիմ Ա.ի Երուսաղէմի տիրելը , անկէ յետոյ Երուսաղէմի Պատրիարքները շարունակ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հետ յարաբերութեան մտնելու պարտաւորուելով , քիչ քիչ խզուեցան Միսի և Երուսաղէմի աթոռներուն կապերը :

Երուսաղէմի Պատրիարքները իբր Արքեպիսկոպոս վիճակաւորներ են և իրենց իրաւասութեան ներքեւ ունին թեմեր որոնք ուղղակի իրենց կողմանէ կարգեալ վարդապետներով կը կառավարեն :

Այսօր Երուսաղէմի Պատրիարքութիւնը իր իրաւասութեան ներքեւ ունի Երուսաղէմի ու յոյն սանձագը , Պէյրութի և Սուրիոյ կուսակալութիւնները և կը բաժնուի միայն հինգ վիճակներու :

1. Երուսաղէմ որ ուղղակի Պատրիարքին իրաւասութեան ներքեւ կը գտնուի և ունի բաւական թուով Հայ բնակչութիւն որոնց հոգևոր գործոց մատակարարութիւնը կը կատարեն Երուսաղէմի վանքին միարանները : 9 եկեղեցիներէ և 8 վանքերէն զատ Աթուր կը պահէ նաև երկսեռ վարժարան մը յոյնովին անջատ վանքին ժառանգաւորաց վարժարանէն՝ լոկ քաղաքացւոց համար :

2. 'Իամասկոս' ունի սակաւաթիւ Հայ գաղութ մը և մէկ եկեղեցի , որոնք Երուսաղէմի Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ են : Երուսաղէմէն կարգեալ Տեսուչը թէ՛ հոգեւորապէս կը հովուէ այդ գաղութը և թէ՛ կը կատարէ վանքապատկան կալուածներու հսկողութիւնը :

3. Եւֆրատ նաւահանգիստ Երուսաղէմի : Միայն քանի մը տունուոր Հայ բնակչութիւն ունի , որոնց հովուութիւնը յանձնուած է Տեսուչի մը որ կը մատակարարէ եկեղեցի մը և վանք մը , ինչպէս նաև վարժարան մը :

Մասնաւորապէս կարեւորութիւն ունի Եաֆայի տեսչութիւնը, վասնզի ուխտաւորներու երթ ու դարձի միջոցին հարկ եղած հիւրընկալութիւնն ընելու պաշտօնը Եաֆայի տեսուչներուն վրայ կը ծանրանայ :

1730ին շինուած է Եաֆայի Ս. Նիկողայոս վանքը և անկէ յետոյ ուղղակի Երուսաղէմի իրաւասութեան ենթարկուած : Սակայն նոյն թուականէն առաջ հաւանական է որ Եաֆա անջատ թեմ մը եղած ըլլայ, վասն զի Ժ.Չ., Ժ.Է. և Ժ.Ը. դարուն սկիզբը կը յիշուին Յոպպէի եպիսկոպոսներ, որոնցմէ Ժ.Չ. և Ժ.Է. դարերուն պատկանողները հաւաստեալ գիտենք թէ Ստոյ կաթողիկոսներէն առած են իրենց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, ինչ որ կը հաստատէ կրկին նոյն շրջանակներու միջև այն աստիճանները կիլիկիոյ Աթուին հետ ունեցած յարաբերութիւնները :

4. Պէյրուք՝ Սուրիոյ այս բանուկ նաւահանգիստը հետզհետէ կարեւորութիւն ստացած ըլլալով, զանազան կողմերէ 40-50 տն.որ Հայեր հաստատուած են հոն առեւտրական գործերով :

Ունի եկեղեցի մը որ անցեալ դարուն սկիզբները շինուած է հաւանօրէն : Երուսաղէմի Պատրիարքները Պէյրութի մէջ կը պահեն Տեսուչ մը որ այդ գաղութին հոգեւոր պէտքերը կը հոգայ, և իր իրաւասութիւնը Լիբանանի վրայ ալ կը տարածուի :

Վարժարան մը եւս ունի :

5. Կիպրոս՝ այս կղզին մէջ Հայ բնակչութիւն հին ժամանակներէ ի վեր հաստատուած է, այնպէս որ Ժ.Բ. դարուն մէջ անոնց մեծ բազմութեան հասած ըլլալը օտար պատմիչներ կը հաստատեն :

Կղզին բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ Հայոց վանքեր և եկեղեցիներ կային և երկու եպիսկոպոսական թեմեր, որոնց մին Նիկոսիա և միւսը Փամագուստա իրեն կեդրոն ունէր :

1403 և 1421 թուականներուն նոր գաղթականներով Հայոց թիւը աւելի կը բազմապատկուի :

Այսօր այդ ծաղկեալ գաղթականութենէն աննշան բեկոր մը և Նիկոսիոյ մօտ Ս. Մակարի վանքը և քաղաքին մէջ 1310ին շինուած եկեղեցի մը և գերեզմանատան մէջ նորաչէն մատուռ մը կայ : Այս երեք եկեղեցական հաստատութիւնները սակաւաթիւ Հայ բնակչութեան մը հետ յանձնուած էին Երուսաղէմէն կարգեալ Տեսուչի մը հսկողութեան :

Կիպրոսի թեմը նախապէս առաջնորդութիւն մըն էր և ուղղակի Կաթողիկոսական Աթոռին իրաւասութեան կապուած էր :

ԺՁ. դարէն յետոյ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան կ'ենթարկուի, իսկ 1775ին յատուկ կարգադրութեամբ Երուսաղէմի Պատրիարքութեան կը ձգուի նոյն թեմին հովուութիւնը :

Սակայն 1799ին Դանիէլ Կաթողիկոսի կոնդակով և Կ. Պոլսոյ Պատրիարքարանին հաւանութեամբ առաջնորդ մը Կիպրոս եկած ըլլալով կ'երեւի թէ կամ այս որոշումը չէ գործադրուած կամ զանցառութեան ենթարկուած : 1815ին կրկին Կիպրոսի թեմը Երուսաղէմի Պատրիարքութեան հոգևոր վերին տեսչութեանը կը յանձնուի 1775ին կարգադրութեան հիման վրայ, որ Օսմ. կառավարութենէն ալ նուիրազորուած էր հրովարտակով :

Այս որոշումն ալ քսաներկու տարի միայն կեանք կ'ունենայ, վասն զի 1837ին Կիլիկիոյ Միքայէլ Աջապահեան Կաթողիկոսը Յովհաննէս անուն եպիսկոպոս մը Կիպրոս ղրկելով, սպահ մը Կիպրոսի առաջնորդութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կը կցուի, սակայն քիչ յետոյ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը վերստին կը յաջողի իր իրաւասութեան ներքեւ առնել Կիպրոսի թեմը (1844), որ երկու տարի յետոյ կրկին Սիսէն ղրկուած եպիսկոպոս մը

Կ'իւրացնէ : 1848ին Երուսաղէմէն Առաջնորդ մը կը դըրկուի և վերստին Կիպրոս՝ Երուսաղէմի Պատրիարքի իրաւասութեան կ'ենթարկուի, թէև յաջորդ տարիներուն մէջ քանի մը անգամ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը կը ստիպուի միջամտել առաջնորդարանի գործոց, մանաւանդ երբ ժողովուրդը դժգոհութիւն ունեցած է Երուսաղէմէն ղրկուած առաջնորդներէն : Այդ գանգատները այնքան կը մեծնան որ 1878ին Կ. Պոլսոյ Պատրիարքարանը Կիպրոսի թեմին պէտքերը հոգալու գործը իր վրայ կ'առնէ եւ Կ. Պոլիսէն կը ղրկէ յաջորդաբար մինչեւ 1883 երեք առաջնորդական փոխանորդներ և 1883էն 1889 չրջանին տեղական քահանաներով կը վարէ թեմական գործերը :

1889էն մինչև 1899 Կ. Պոլսոյ Պատրիարքարանը յարմար ընտրելի չգտնելով, վերստին հարկ կը դատէ Կիպրոսի հովուութիւնը յանձնել Երուսաղէմի Պատրիարքութեան, այլ սա ալ հեռաւոր վիճակ մը հովուելու ղիւրութիւն չունենալուն, կը հրաժարի և հիմա Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ինքը կը յանձանձէ կղզիին գաղթական Հայոց Հոգևոր պէտքերը՝ տեսուչներ ղրկելով հոն :

Երուսաղէմայ Պատրիարքութեան իրաւասութեան ներքեւ գտնուող այս հինգ վիճակաւոր տեսչութիւններէն զատ նաև Երուսաղէմի Պատրիարքական Աթոռին ստորադաս են վեց ուրիշ տեսչութիւններ, երեքը Երուսաղէմ քաղաքին մէջ և երեքը քաղաքէն դուրս, որոնց պաշտօնը լոկ վանական է և ոչ առաջնորդ-հովուական :

Այսպէս Ս. Յարութիւն, Ս. Աստուածածին և Ս. Հրեշտակապետ (երկուքին մէջ միւս քրիստոնեայ ազգաց հետ իրաւակից ենք և երրորդը լոկ անջատ վանք մըն է) ունին իրենց յատուկ տեսուչները, որոնք չունին որ և է

հովուական իրաւասութիւն կամ ծխականներ, այլ լոկ եկեղեցական իրաւանց պահապաններ են .

Իսկ Բեթղեհեմ, Ռաւիէ և Լաթաֆիա կը կազմեն առանձին տեսչութիւններ, որոնց տեսուչները միայն մէկ մէկ վանք ունին հողալիք :

1. Բեթղեհեմ, ուր է Ծննդեան այրը, Երուսաղէմէն քիչ հեռու գիւղ մըն է, որուն տեսուչը ուրիշ պաշտօն չունի եթէ ոչ անխափան կատարել այն պարտքերը եւ յարգել տալ այն իրաւունքները որոնք Հայոց տրուած են Բեթղեհեմի այրին մէջ :

2. Ռաւիէ՝ ուր Հայերը ունին վանք մը : Գիւղը կը գտնուի Երուսաղէմէն Եաֆա երթալու ճանապարհին կիսուն վրայ : Այս վանքը Եաֆա-Երուսաղէմ երկաթուղիին շինութենէն առաջ իբր օթեան նշանակութիւն մը ունէր, ինչ որ այսօր կորսուած է :

Միայն վանքին պահպանութեան և յարակից կաշուածներու հսկողութեան համար տեսուչ մը կը պահուի հոն :

3. Լաթաֆիա՝ Սիւրիոյ կուսակալութեան հիւսիսային կողմը ծովեզերեայ քաղաք մը՝ համբաւաւոր Լաւտիկէն : Երուսաղէմի Պատրիարքութիւնը հոն ունի միակ վանք մը և քանի մը կաշուածներ : Երջակայ գիւղերը, ինչպէս նաև Անտիոք իր շրջականերովը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռին իրաւասութեան ներքեւ գտնուելով, սովորութիւն եղած էր վերջերս Լաթաֆիոյ համար Երուսաղէմէն կարգեալ Տեսուչները՝ որոնք որ և է հովուական պաշտօն չունին, Կիլիկիոյ Կաթողիկոսներուն կողմանէ ճանչնալ իբր Անտիոքի առաջնորդութեան տեղապահ, շրջակայ գիւղերու հովուութիւնը յանձնելով առնոց, ինչ որ այսօր դադրեցաւ յատուկ Անտիոքի առաջնորդութեան տեղապահ մը անուանուելով :

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԲԱԺԻՆ

ՆՇԱՆԱԿԵԼԻ ՅՈՒԱԿԱՆՆԵՐ

- 1832 Հիմնարկութիւն Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի
- 1834 Յունւար 3 — Մահ Հիւանդանոցի հիմնադիր բարերար Պէզճեան Յարութիւն ամիրայի
- 1834 Աւարտում շինութեան Ազգ. Հիւանդանոցի և բացում Տ. Ստեփաննոս Աղաւնի Պատրիարքի ձեռքով:
- 1834 Մարտ 19 — Կ'ընարտին տասն երեւելիներ Ազգ. Հիւանդանոցին մատակարարութեան համար:
- 1835 Մայիս 25 — Հինգ ամիրաներ Ս. Խաչ եկեղեցւոյն վրայ իրենց ունեցած 50.000 զրշ.ի պահանջքն կը նուիրեն Ազգ. Հիւանդանոցին:
- 1836 Յունիս 26 — կը հաստատուի մամուրանը նախաձեռնութեամբ Փիշիշեան Միքայէլ ամիրայի
- 1844 Տասեան Պողոս պէյ միւթեվէլլի կը կարգուի Ազգ. Հիւանդանոցին — Հինգ անգամէ բաղկացեալ Հոգարար-ձուլութիւն մը կը կազմուի Ազգ. Հիւանդանոցին համար — Պողոս պէյ իրեն և ընտանիքին յատկացեալ օրական 10 օխա միւր մշտնջենապէս կը թողու Հիւանդանոցին:
- 1845 Տասեան Յովհաննէս պէյի խնդրանօք Վ.Է.Տ. Սուլթան Ապտիւլ Մէճիտ Կայսր օրական 15 օխա միւ և 37½ օխա հաց կը յատկացնէ Ազգ. Հիւանդանոցին:
- 1845 Մայիս — Սամութիտ պատահած մեծ հրդեհի մը հետեւանօք, ուր այրեցան 600 տուներ և 160 խանութներ, հրկիզեալները կը պատասխարուին Հիւանդանոցի մէջ:
- 1847 Պատրիարքարանի նշանաւութեան հասոյթին կէսը կը յատկացուի Ազգ. Հիւանդանոցին:
- 1848 Ամուսնական հրամանի հասոյթն ալ կը յատկացուի Ազգ. Հիւանդանոցին:
- 1848 Տասեան Պողոս պէյի հրաժարման վրայ Գերագոյն ժողովը կ'ընարէ Հիւանդանոցի աւաջին Հոգարար-ձուլութիւնը, միշտ միւթեվէլլի պահելով Պողոս պէյը:

- 1849 Հոգաբարձութիւնը կը պատրաստէ Հիւանդանոցին համար կասնազիր մը, որ կը վաւերանայ Գերագոյն ժողովէն:
- 1850 Գերագոյն ժողովը կը կարգէ յանձնաժողով մը հիւանդանոցի ելեմտական կանոնաւորութեան համար և այս առթիւ կարգադրութիւններ կ'ըլլան Պատրիարքարանի մէջ:
- 1851 Յիմարաց համար կը շինուի Եէնի Տարիէ կոչուած շէնքը 600 ոսկի ծախքով:
- 1851 Մարտ — Հիւանդանոցի մէջ կը հաստատուի կօշիկի և դերձակի արհեստարան մը, ուր կ'աշակերտին ուսման փոփոք չունեցող տղայք:
- 1851 Սկիտարի Ճեմարանը Աղգ. Հիւանդանոց կը փոխադրուի և Ուրանոցի մատակարարութեան կը միանայ:
- 1851 Հիւանդանոցի Ուրանոցին մէջ կը սկսի կրօնային դասախօսութիւն յատկապէս վարդապետ հասցնելու համար:
- 1852 Ապր. — Գերագոյն ժողովը կ'ընտրէ երկրորդ Հոգաբարձութիւնը
- 1851 Նոր Հոգաբարձութիւն մը կ'ընտրուի Գերագոյն ժողովէն:
- 1854 Աղգ. Հիւանդանոցի մէջ կը բացուի Արկրագործական վարժարանը:
- 1856 Գերագոյն ժողովը կը կազմէ Տնտեսական ժողով մը, որուն կը յանձնէ Հիւանդանոցի մատակարարութիւնը:
- 1858 Նորընտիր Հայրապետ Տ. Մատթէոս Կաթողիկոս կ'այցելէ հիւանդանոցի որբանոցը:
- 1858 Անպատ. 28 — Կրթական նախարար Խայրուլլահ էֆ. այցելելով որբանոց քահ կը մնայ ուսումնական առաջադիմութեան:
- 1859 Հիւանդանոցի յարակից Ա. Յակոբայ վանքին մէջ կը բացուի Ժառանգաւորաց վարժարան մը:
- 1859 Արապեան տպարանի մամուլը աւտաւերը 50,317 դշ.ի գնուելով կը փոխադրուին Աղգ. Հիւանդանոց, ուր հաղիւ երկու տարի մնալէ վերջ վարձու կը տրուին:
- 1860 Կը կարգուի Խորեգործութեան յանձնաժողով մը որ Գեորգ Պարրք.ի հետ կը յաջողի գարմանել կարգ մը ղեղձուժներ:
- 1860 Նոյեմ. — Հիւանդանոցի օրինական առաջին Հոգաբարձութիւնը կը կազմուի ատենապետութեամբ Ասպետ Աստուածատուր Զուճգի:
- 1860 Առաջին անգամ կը կազմուի Տիկնանց Խնամակալութիւն մը 20 անդամէ բաղկացեալ:
- 1861 Առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի հաստատութեան տեղեկագիրը Ասպետ Զուճգի խմբագրութեամբ:

- 1862 Հիւանդանոցի համար կազմուեցաւ Օգնական ընկերութիւն մը, որուն իւրաքանչիւր անդամը պիտի վճարէր գոնէ մէկ բաժին ամսական 40 դրուշ:
- 1863 Կազմուեցաւ երկրորդ օրինական Հոգարարձութիւնը:
- 1863 Եղիպտոսի Խըտիվ Իսմայիլ բաշա՝ Պալիս այցելելուն առթիւ 40,000 դշ. կը նուիրէ հիւանդանոցին:
- 1864 Վ.Ե.Տ. Մայր Թագուհին 20,000 դրշ. չափ շնորհ մը կ'ընէ, հիւանդանոցի այգիին և պարտէզին ինթիզայի ծախքը շառնելով և դրամադէս ալ նպաստելով:
- 1865 Հիւանդանոցի շէնքը կը նորոգուի, Նորիկեան Նշան աղայի նախաձեռնութեամբ հայթայթուած 2000 սակի գումարով:
- 1866 Խառն Ժողովի ատենապետ Գրիգոր Էֆ. Մարկոսեան կը հրատարակէ պաշտօնական ծանուցում մը, հիւանդանոցի կանոնադիր մը, և վարչային հրահանգ մը ուղղեալ հիւանդանոցի Հոգարարձութեան:
- 1867 Հիւանդանոցի մատակարարութիւնը կը խանդարուի և պատասպարեալները գիշեր մը անօթի կը մնան:
- 1867 Հիւանդանոցը կը յանձնուի Կ. Փանոսեանի իրբեւ ընդհանուր անօրէն և Տօքթ. Գալուստեանի իրբեւ ներքին տեսուչ և բժիշկ: — Պողոս Պատրիարքի թագրերով, պետական առօրեայ նպաստը 15 օխայ միսը 30 օխայի և հացն ալ 37 1/2 օխայէն 75 օխայի կը բարձրանայ:
- 1868 Փանոսեան—Գալուստեան մատակարարութիւնը կը դադրի և Բարուսակ պէյ առժամանակեայ վերատեսուչ նշանակուելով, բոլոր պատասպարեալները գիշերանց կ'արձակէ:
- 1868 Նոր Հոգարարձութիւն մը կը կազմուի երեք անդամներէ, Սեւեքերիմ Էֆ. Մանուկեանի ատենապետութեամբ, որ կը տեսէ մինչեւ 1872, և կարգ մը բարեկարգութիւններ կ'ընէ:
- 1869 Մեծ Եղիպտոս Ալի փաշա լսելով Հիւանդանոցի նիւթական խեղճութիւնը 500 սակի նպատակ մը կ'ընէ: Այս միջոցին հային քանակութիւնն ալ օրական 75 օխայէն կը բարձրանայ 200 օխայի:
- 1872 Զարգարեան Գեորգ Էֆ.ի ատենապետութեամբ նոր Հոգարարձութիւն մը կը կազմուի — կը վերարացուի մամաբանը, որ դադրած էր 1860էն ի վեր:
- 1873 Կը հաստատուի ամսական 40 փարայի բաժանորդագրութիւնը, որ բաւական ատեն տեւեց:

- 1874 Աւաջին Պարահանդէսը կը տրուի ի նպաստ Հիւանդանոցի, հովանաւորութեամբ Տասեան Յարութիւն էֆ.ի և 300 ոսկի շահ կ'արտադրէ:
- 1874 Անեքերիմ էֆ. Մանուկեան վերասին կը կոչուի ատենապետեր նորընտիր Հոգարարձութեան: Այս Հոգարարձութեան օրով հաստատուեցաւ այն դրութիւնը՝ որուն համեմատ Մնեդեան և Զատիկի այցելութիւններէ ազատ մնալ ուղղներ մէկ մէկ մէճիւս կը նուիրեն հիւանդանոցին:
- 1878 Նոյեմ.— Ներսէս Պարթիարքի օրով կը կազմուի Միքայէլ էֆ. Յակոբեանի ատենապետութեան ներքեւ Հոգարարձութիւն մը:
- 1879 Օգոստ.— Օրացոյցի հրատարակութեան հասոյթը թողուեցաւ հիւանդանոցին, Բարոյի համար նոր յարկ մը շինուեցաւ, և բժշկական ու մատակարարական բարեկարգութիւններ եղան:
- 1880 Աւժամեայ դադարում պետական հացի և մսի պարէնին:
- 1882 Վերահաստատում հացի և մսի պարէնին:
- 1888 Հոգարարձութիւնը երրորդ անգամ վերահաստատուելով պաշտօնին մէջ ձեռնարկեց հիւանդանոցի վերաշինութեան:
- 1892 Օգոստ.— Վ.ե.հ. կայսեր հրամանաւ օրական 200 օխոյ հացը 400ի և 30 օխոյ միսը 60 օխոյի բարձրացաւ:
- 1894 Սարգիս էֆ. Թաշճեան Գ ամիս աւանձին կը վարէ Հոգարարձութիւնը: Այս միջոցին կը հաստատուի սիկաուի թուղթը և փոխան ծաղկեպսակի նաւիրատուութիւնը, որ կարեւոր շահ մը կ'արտադրեն հաստատութեան:
- 1894 կազմուեցաւ Տիկնանց նոր Խնամակալութիւն մը:
- 1895 Մանուկ էֆ. Արզրեանի ատենապետութեամբ նոր Հոգարարձութիւն մը կը կազմուի:
- 1895 Հիւանդապահ մայրապետներ կը դրուին հիւանդանոցի մէջ: Արամոյցի աղայք Ս. Յակոբայ վանքը կը փոխադրուին:
- 1897 Աւանին գանձանակներ կը հաստատուին ատներու մէջ:
- 1897 Մարտ 1.— Պետական բնդհանուր կարգադրութեամբ բնդհանուր ծախսից վրայ 100ին 15 գեղջով մը՝ 100 օխոյ հացը 340ի և 60 օխոյ միսը 51ի իջաւ:
- 1897 Նոյեմ.— Հիւանդանոցի մատակարարութիւնը յանձնուեցաւ Զայեան Էլիաս էֆ.ի ատենապետութեամբ: Վարչական յանձնաժողովին:
- 1898 Օգոստ.— կազմութիւն նոր Հոգարարձութեան Պարթիկ էֆ. կիւլպէնկեանի ատենապետութեամբ: — Վ.ե.հ. կայսրը

Տ. Մաղաքիա Պատրիարքի խնդրանք օրական 340 օխա
հացը 600ի և 51 օխայ միսը 450ի բարձրացուց:

1898 Կազմուեցաւ Տիկնանց Խնամակալութիւն մը, որուն նախա-
ձեռնութեամբ առաջին նուագահանդէսը տրուեցաւ ի նը-
պատտ հիւանդանոցին և 625 սակի հասոյթ արատգրեց:

1899 Շինուեցան Ս. Յակոբայ Որբանոցի զանազան մասերը և ար-
հեստանոցի յարկերն, Հիւանդանոցի ջուրի ճամբաներն
ու ծորակներ, ինչպէս նաեւ ներքին թէլէֆոն հաստատ-
ուեցաւ:

1899 Տնօրինութեան և պաշտօնէից յատուկ շէնքին շինութեան կը
ձեռնարկուի:

1906 Փետր. 10— Հիմնարկութիւն Ս. Փրկիչ եկեղեցւոյն և հաստատու-
թեան երրորդ թե. ինչ Շինութիւն դեղատանի, որուն հա-
մար Տոբթ. Խորատան ճեան Լ.Ք.ի նուիրած 300 սակին 500
սակի բարձրացուցին իւր այրին և զաւակունք:

1906 Դեկտ. 3— Օծումն Ս. Փրկիչ եկեղեցւոյ ի ձեռն Տ. Մաղաքիա
Պատրիարքի և բացումն Յովհաննէս Յակոբեան նորաշէն
բաժնի:

1907 Մարտ— Հիւանդանոցի շնորհուած հացին և միսին վրայ 15 առ
հարիւր նոր զեղչ մը եղաւ:

1907 Օգոստոս— Կազմութիւն արդի Հոգաբարձութեան:



ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՇԷՆՔԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բարեգործական հաստատութեանց գոյութիւնը Հա-
յոց մէջ շատ հին մամանակներէ սկսեալ նշանակուած է:
Կ. Պոլսոյ Հայ դպրութիւնը այսքան կարեւոր կեդրոնի մը
մէջ մարդասիրական զգացումներէն անմասն չմնաց, և
ազգը ունեցաւ իր հիւանդանոցը, ժ.Ը. դարուն առաջին
կէսէն սկսեալ:

Նկատի առնելով վերջին երկու սարիներու միջոցին
Ազգ. Հիւանդանոցին իբր շինութիւն կրած կերպարանա-
փոխութիւնը նորաշէն յարկերու յաւելմամբ, կ'ուզենք հա-
մառօտ պատմութիւնը բնել Կ. Պոլսոյ հիւանդանոցնե-
րուն՝ զանոնք լոկ իբր շինութիւն նկատի առնելով:

Կ. Պոլսոյ մէջ երեք սարքեր տեղերու վրայ հիւան-

դանոցներ ունեցած ենք, որոնք են Նարլը Գարու, Բերա
և Եէտի-Գուլէ: Հետեւաբար երեք հատուածներով պիտի
ներկայացնենք իւրաքանչիւրին իբր շէնք կրած կերպա-
րանափոխութիւնը:

Ա. ՆԱՐԼԸ-ԳԱՐՈՒԻ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

1743ին Նարլը-Գարուի ծովեզերքը արտաքոյ պա-
րիսպին հիւանդանոց մը կառուցանելու ֆէրմանը կը շը-
նորնէ երջանակայիշատակ Սուլթան Մահմուտ Ա. կայսրը՝
Նալեան Յակոբ Պատրիարքի խնդրանօք: Հաւանօրէն անոր
շինութիւնը կը յապաղի մինչեւ 1751՝ երբ ժամտախտի
համաճարակի մը հետեւանօք Գէորգ Ղափանցի Պատրի-
արքի օրով կը հաստատուի Նարլը-Գարուի հիւանդանոցը
արդի Ս. Յովհաննէս եկեղեցւոյն տեղը: Սուլթան Օսման
Գ. կը հաստատէ 1755ին 1743ին արուած հրովարտակը և
ասով կ'ապահովուի Նարլը-Գարուի հիւանդանոցին յարա-
տեւութիւնը:

Այդ հիւանդանոցը ինչ տեսակ շէնք մը եղած ըլլալը
յայտնի չէ, սակայն շատ դիւրին է ենթադրել թէ շատ
խեղճ ու փոքր շէնք մը եղած է ան, ուր տարեկան հա-
զիւ 24 հիւանդներ կը դարմանուէին (1), և ասով հան-
դերձ դարձեալ նեղ կուգար: Շէնքն այ կատարելութիւն
ունենալէ դուրի էր, և դանաղան յիշատակարաններէ կը
հաստատուի թէ հետզհետէ նոր մասերով ձօխացած և ըն-
դարձակուած է:

Այսպէս 1777ին շէնքը նորոգութիւն մը կը կրէ եւ
ջրամբարով մը կ'օժտուի: 1781ին ծովին տեղում-
ներուն դէմ շէնքը պաշտպանելու համար քարափ մը
կը շինուի, և վերջապէս 1789 թուականին Ապուշեխցի
հանգուցեալ Խանրմի որդին Մահտեսի Յովհաննէս ամիրա
հիւանդանոցին կից ունեցած իր քերէստէճի խանութը—

(1) Տես Արեւելք Թիւ 6518 Տ. Միբայէլ քհ. Աշենան:

որուն գետինը 600 կանգուն ընդարձակութիւն ունէր— հիւանդանոցին կը նուիրէ, որպէսզի խանութին վրայի սենեակները հիւանդանոցին ընդարձակման ծառայեն և եկամուտն ալ հոն ապաստանողներու մաքրութեան ու աննդեան յատկացուի (1) :

Ասով բաւական ընդարձակութիւն կը գտնէ շէնքը, սակայն 1751ին կառուցուած շէնքը եւ 1789ին նուիրուած յաւելեալ մասը՝ արդէն հինէն կառուցուած՝ կ'երեւի թէ հինցած էին, վասն զի աւելի յարմար կը դատուի որ 1794ին «Ի հիւնակե մեծ եւ ընդարձակ ըստ արեւելայն պիտոյից» նոր մը կը կառուցուի :

Այս շէնքը մասամբ կը մնայ մինչեւ հիմա և քիչ ու շատ գաղափար մը կրնայ տալ այդ հիւանդանոցին վրայ(2) : Միայն կը բաւէ ըսել թէ շէնքը համեմատաբար այնքան ընդարձակուած էր որ 100—120 պատասպարեալներ կըրնար բովանդակել :

1807ին այս շէնքին վրայ կ'աւելցուի նաև եկեղեցի մը «Ս. Յովհաննէս Աւետարանիչ» անունով, որով հիւանդանոցը կ'օժտուի նաև եկեղեցիով մը :

Այդ շէնքը իբր հիւանդանոց կը գործածուի մինչև 1834—35 թուականները, երբ արդէն շինուած ըլլալով Սէտիգուլէի հիւանդանոցը, հիւանդները հոն կը փոխադրուին : Այդ առթիւ 1835ին եկեղեցին աւելի ընդարձակօրէն կը վերաշինուի և նոյն տարուոյ 'Ինկաւմբեր 28ին կ'օժտուի :

Հիւանդանոցի շէնքը այդ առթիւ մասամբ կը քանդուի : Նոյն տեղւոյն վրայ յետոյ կը բարձրանան թաղային երկսեռ վարժարանները (1847) :

(1) Տես Արեւելիք Թիւ 6527 Տօքթ. Թորգոմեան :

(2) Թաղ. Խորհրդարանի բարաշէն սենեակը այդ շինութենէն մնացած է հաւանօրէն, ինչպէս կ'երևի վրայի արձանագրութենէն, ինչպէս նաև շրամբարը որ եկեղեցւոյն փակին մէջ է :

Բ. ԲՆՐԱՅԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բերայի հիւանդանոցը կառուցուած էր այսօրուան
Էսաեան վարժարանին տեղւոյն վրայ, գրէթէ Նարլը-
Փարուի հիւանդանոցին շինութեան ժամանակները: Իր
առաջին հիմնարկութիւնը մութի մէջ կը մնայ:

Կալուածագիրներ անոր սեպհականութեան իրա-
ւունքը բաւական հին ժամանակներ կը բարձրացնեն:

1738 Հոկտեմբեր 3 (1151 Րէճէպ 1) թուակիր կալ-
ուածագիր մը 315 կանգուն գետինի մը գնումը ցոյց
կուտայ նոյն տեղւոյն վրայ, սակայն հողին այդ պզտիկ
կտորին վրայ հիւանդանոցի մը կառուցումը հաւանա-
կան չէ:

1744 Նոյեմբեր 30ին (1157 Զիլգաստէ 5) կը գնուի
արդի Էսաեան վարժարանին և Ս. Յարութիւն եկեղեց-
ւոյն ընդարձակ գետինը որուն վրայ՝ վերաշինութենէն
քիչ առաջ՝ 1793 Օգոստոս 17ին (1208 Մուհարրէմ 22)
աւելցած է նաև 406 կանգուն գետին մը ևս:

1744էն քիչ յետոյ, հաւանօրէն 1751ին, պէտք է կա-
ռուցուած ըլլայ Բերայի հիւանդանոցը Նարլը-Փարուի
հիւանդանոցին պէս, ժանտախտի պատճառով:

Տ. Միքայէլ քհ. Աշճեան 1722 թուականով հոգե-
տան մը դոյութիւնը կը հաստատէ թագսիմի մէջ⁽¹⁾, ինչ
որ կը ստիպէ զմեզ Բերայի հիւանդանոցի հնութիւնը ա-
ւելի առաջ տանիլ, վասն զի որքան որ ումանք հոգե-
տունը և հիւանդանոցը իրարմէ բոլորովին տարբեր հաս-
տատութիւններ կը ճանչնան, սակայն այդպիսի բնակ-
չութենէ հետո անդ մը աղօթարանի դոյութիւնը տա-
րակուակի է, երբ հիւանդանոցի մը համար կառուցուած

(1) Տե՛ս Մանգուսէ Թ. 1834:

չէ : Սակայն աւելի բանաւոր է ընդունիլ թէ «հոգետուն» բացատրութիւնը եկեղեցիներու և մատուռներու յատկացած բացատրութիւն մը չէ , այլ ինչպէս սովորութիւնն ալ կը հաստատէ , իբր պատապարան ծառայող տեղերու , ինչպէս նաև հիւանդանոցի : Այս մասին շահագրգռական լուսաբանութիւն մը կուտայ Նարլըգարուի Ս . Յովհաննէս եկեղեցւոյ 1807ի շինութեան արձանագրութիւնը ⁽¹⁾ ուր — այնպիսի թուականի մը մէջ ուր այլ ևս տարակոյս չկայ թէ Նարլը-Գարու հիւանդանոց մըկայ — փոխանակ հիւանդանոցի հոգեւորն բառով կը բացատրուի այդ միտքը , ինչ որ կը հաստատէ , ինչպէս յիշեցինք , թէ հիւանդանոցները , անկերանոցները և ամէն կարգի պատապարանները նախնիք սովորութիւն ունէին կոչելու նաև հոգեւորն ⁽²⁾ :

Այս պայմաններու մէջ 1722ին յիշուած հոգետունը և յաջորդ տարիներուն պետական արձանագրութեանց մէջ յիշատակեալ էրսկենի թեֆիսին՝ Բերայի հիւանդանոցին առաջին ծիւրն են : Այս առաջին շէնքին վրայ գաղափար մը կազմել կարելի չէ :

1794ին Նարլը-Գարուի հիւանդանոցը ի հիմանէ վերաշինուած տանն , Բերայի հիւանդանոցն ալ վերաշինուած է բարերարութեամբ նոյն դարուն ամէնէն նշանակելի անձնաւորութիւններէն Շնորհք Մկրտիչ Ամիրա Միրիճանեանի :

Այդ փայտաշէն շինուածը մինչև 1834 իբր հիւանդանոց ծառայելէ յետոյ լքուած է , հիւանդները Յէտի-Գուլէի հիւանդանոցը փոխադրուած ըլլալով :

1850ին քանի մը փլփլած սենեակներ և մատուռը միայն մնացած էին : Հիւանդանոց անունը միայն մնացած էր , վասն զի այդ սենեակներուն մէջ աղքատ ընտանիքներ կը պատապարուէին : Հիւանդանոցը գոյու-

(1) Տես Ընդ. Օրացոյց 1900 էջ 159-60 :

(2) Տես Բիւզանդիոն Թ. 3369 :

Թիւն ունեցած ատեն ալ այս հաստատութիւնը շատ ընդարձակ շէնք մը ըլլալու չէր, վասն զի հազիւ 30—50 հիւանդ կրնար պարուհակել :

Շրջակայ ընդարձակ տարածութեամբ գետիններու վրայ յետոյ Յակոբ աղա Մուպահեաճեանի ջանքով կառուցուած են հաստութարեր կալուածներ և շէնքն ալ նորոգուելով բաւական երկար ատեն իբր դպրոց ծառայելէ յետոյ՝ 1895ին վար առնուած և կառուցուած է էսասեան վարժարանը, և փակին մէջ Ս. Յարութիւն եկեղեցին :

Գ. ԵՃՑԻ-ԳՈՒԼԷԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Բերայի և Նաուր-Գարուի հիւանդանոցները ինչպէս տեսնուեցաւ փոքրիկ շէնքեր էին, որոնք հետզհետէ տուներով կը շրջապատուէին Կ. Պոլսոյ մէջ բնակչութեան խտանալուն համեմատութեամբ : Հետեւաբար 1833ին մտածուեցաւ միակ և ընդարձակ հաստատութիւն մը ունենալ թէ՛ մատակարարութեան և թէ հսկողութեան տեսակէտով ալ դիւրացնելու համար գործերը :

Այս տեսակէտով Սարաֆներու էսնաֆին արդեամբը և մամուտը նպատակով Պէզճեան Յարութիւն Ամիրայի և Հոգարարձութեամբ Միքայէլ Ամիրա Փիչմիչեանի և Յարութիւն Ամիրա Երկանեանի՝ արտաքոյ Եէափ-Գուլէի պարիսպին շինուեցաւ միեւնոյն գեանին վրայ երկու հատ իրարմէ բաւական հեռաւորութիւնով դատ դատ յարկեր, մին սովորական հիւանդներու համար Ս. Փրկիչ անունով և միւր ժանտախտաւորներու համար Ս. Յակոբ անունով :

1. Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Ս. Փրկչեան հաստատութիւնը 1833ին ստացին հիմնարկութեան ատեն կառուցուած էր 4000 կանգուն գետնի մը վրայ 20,000 ոսկի (այժմեան դրամով) ծախքով

մը : Շէնքը փայտաշէն էր և այնպէս մը շինուած էր որ շուրջը ճական կանգուն տեղ բաց ձգուած էր , որպէս զի եթէ առաջիկային շրջակայքը տուներ շինուի , դուրսէն հիւանդանոցին մէջ չկարենայ դիտուիլ :

Այս շէնքին ամէնէն վերջին մնացորդներն էին այժմեայ հիւրանոցին տեղը գտնուած փայտաշէն մասը և մասուռը , որոնք վերջին շինութեանց ատեն վար առնուեցան :

Պէզճեանի բարերարութեամբ կառուցեալ այդ շէնքը 1833ին հրատարակեալ յայտարարութեան մէջ սապէս կը նկարագրուի . «Տնօւարձակ , կրկնայարկ , բազմասենեակ , որոշեալ բնակարանօք յաղագս իւրաքանչիւր ախտաժէտաց . . . Եկեղեցի փոքրիկ Ս . Փրկիչ անուամբ վայելուչ : Եւս խանութ դեղավաճառի . . . , բաղնիք . . . , նոյնպէս առ ի պէտս այլեւայլ կահուց և կարասեաց . . . տեղիք յարմարաւորք » :

Սակայն պէտքերը յարաճուն ըլլալով Պէզճեանի մահէն յետոյ Փիշմիշեան Միքայէլ ամիրա կարգ մը շինութիւններ ևս կ'ընէ , և այդ առթիւ , Հիւանդանոցի մերձակայ հողերը գնելով անոր շրջափակին մէջ կ'առնէ :

Այնպէս որ 1833ին կառուցուած Հիւանդանոցին շրջափակը հապիւ 18,333 քառ . կանգուն էր մինչ հիմա 34,800 քառ . կանգունը կ'անցնի :

Այդ նախնական շէնքին շուրջը յաւելեալ հաստատութիւններէն մէկն է մոմարանը որ կառուցուած է 1836ին :

1851ին Հիւանդանոցի մէջ կարեւոր փոփոխութիւններ կը մտնեն , վասն զի հոն կը հաստատուին նաև երկու հաստատութիւններ , Ա . Արհեստանոց և Բ . Վարդապետանոց , որոնք կը պատրաստուին Հիւանդանոցին հին շէնքին մէջ քանի մը անհրաժեշտ նորոգութիւններ և բաժանումներ գործադրուելով : Եւ որովհետեւ տեղ կը

պակսէր, միւս կողմէ կը կառուցուի նոր շէնք մը որ ապուշանոցի կը յատկանայ (Եհնի քարեհ կը կոչուէր) :

1856ին դարձեալ զանազան նորոգութիւններ եղած են հին շէնքին վրայ՝ ձեռնտուութեամբ հոգարարձու Մհ. Մաղաք աղայի, որ կարապետ ամիրա Պալեանի գրագիրն էր :

Երկու տարուան ընթացքին մէջ Հիւանդանոցին երկու երրորդ մասը նորոգուած և շէնքին վրայ յաւելումներ եղած են : Այս շինութեան գործին մեծապէս նպաստած է Ճարտարապետ Ամիրան մեծ քանակութեամբ շինուածանիւթ հայթայթելով :

Այս առթիւ սկսուած քարուկիր շէնք մը Ասպետ Զուհդի Հոգարարձութեան օրով 1861ին աւարտեցաւ, և խառնուեցաւ շէնքին միւս մասերուն հետ, 15,000 դրուշ ծախքով : Այդ քարուկիր շէնքին վերի լուսաւոր սենեակը ապաքինեալներու յատկացուեցաւ և դուռով մը հաղորդակցութեան դրուեցաւ ընդարձակ սրահի մը հետ, որ 50 անկողին կրնար պարունակել : Այս եղաւ բուն հիւանդարանը : Յատուկ սենեակներ յատկացան նաեւ տարափոխիկ հիւանդութիւններէ վարակեալներու և հիւանդ տղայոց :

Կանայք ալ յատուկ հիւանդարան ունեցան, որով շէնքը ալ աւելի ընդարձակուեցաւ :

Այս Հոգարարձութիւնը Հաստատութեան վրայ աւելցուց նաեւ փուռ մը՝ ուր կը պատրաստուէր Հիւանդանոցին պէտք եղած հացը :

1863ին Ասպետ Զուհդ իր երկրորդ Հոգարարձութեան միջոցին 9000 դրշ. կը նուիրէ և Տոքթ. Ռափայէլեանի վերակացութեամբ նոր յարկ մը կը շինուի կին խելագարներու համար :

Սակայն ասոնք ամէնը մասնաւոր և առօրեայ պէտքերը միայն կը լրացնէին, մինչ բուն շէնքը երեսնամեայ

չարաչար գործածութեամբ խիստ հինցած և խարխուլ կերպարանք մը առած էր և նորոգութեան մը պէտքը կը ներկայանար, սակայն ոչ Հոգաբարձութիւնը և ոչ ալ Պատրիարքարանը ի վիճակի չէին այդպիսի բազմածախ գործի մը ձեռնարկելու: Նշան Նորիկեան՝ Տնտեսական Խորհուրդի ատենապետը, անհատաբար յանդգնութիւն ունեցաւ այս դժուարին գործը իր վրայ առնելու և 1864-65 տարուան ընթացքին մէջ Ս. Փրկչեան հաստատութեան հնացեալ մասերը նորոգեց 223,600 դրշով, որուն մեծագոյն մասը նուիրած էին Եգիպտոսի բարձր. Խալիվին Մայրը, Երամեան Գէորգ պէյ, Աբրահամ փաշա, Էպրու հանրմ և Նուպար փաշա և այլք: Նորոգութենէն յետոյ Հոգաբարձութիւնը իր տեղեկագրին մէջ կատարուած կերպարանափոխութիւնը սապէս կը նկարագրէ:

«Նորիկեան Նշան էֆէնտին յաջողեցաւ... յանձնել գրեթէ նոր կառուցուած հաստատուն շէնք մը, ըստ որում այսօր Հիւանդանոցը լողորովին կերպարանափոխ եղած է, ներսով և դրսով նորոգուած ներկուած, պատուհաններն ամբողջապէս նորէն շինուած, շէնքին բաժանումներն ու սանդուխները աւելի կանոնաւորուած, բակերն ու պարտէզները երկաթէ վանդակներով շրջապատեալ՝ մաքուր ու զարդարուն, մէկ խօսքով տխուր ու քայքայուած շէնքի մը տեղ, ուր ամէն կողմէ հովն ու արեւը ներս կը թափանցէր՝ ձիւնը և անձրեւը ներս կը տեղար, հաստատուն, վայելուչ և զուարթատեսիլ շէնք մը յաջորդած է, աւելի համաձայն ողջպահիկ կանոնաց:» Ասկէ պարզ է հետեւցնել թէ նախորդ շէնքը իբր Հիւանդանոց՝ որ աստիճան խեղճ յարկ մըն էր, և 1865ին հիացում գրաւող յարկը ներկայ շէնքին քով որքան ողորմելի հաստատութիւն մը:

Այս հիմնական համարուած նորոգութենէն հազիւ 2-3 տարի յետոյ Փանոսեան մատակարարութեան միջո-

ցին Հիւանդանոցի վարժարանին աշակերտները հիւանդարանի շէնքէն դուրս հանելու համար, քարուկիր շէնք մը կառուցուեցաւ, իբրեւ յաւելուած որբանոցին, և յիմարներու համար նոր սենեակներ շինուեցան: Նոյնպէս անգործածելի դարձած երկու բաղնիքները նորոգեց Փանոսեան և զանոնք գործածելի վիճակի մէջ դրաւ:

Սենեքերիմ Մանուկեանի ատենապետութեան ներքեւ կազմուած յաջորդ Հոգաբարձութիւնը (1868-72) Փանոսեանի շինած որբանոցին թերի մասերը լրացուց, և 10,000 դրուշ ծախսելով 1851ին շինուած ապուշանոցը (Նէնի-Տայրէն) նորոգեց: Նոյնպէս յարդարեց լողարանի սենեակ մը և նորոգեց մեծ բաղնիքը և ըրաւ զանազան ուրիշ նորոգութիւններ:

1878ին Միքայէլ էՖ. Յակոբեանի ատենապետութեան ներքեւ կազմուած Հոգաբարձութիւնը իր պաշտօնավարութեան միջոցին Մասեհեան ժառանգային խընդիրին կարգադրութեամբը ձեռք անցուցած 550 ոսկի դրամով դպրոցի համար նոր շէնք մը կառուցց, վասն զի Փանոսեանի շինել տուած որբանոցը անյարմար էր:

Այդ նոր Որբանոցը ունէր չորս դասարան, ընտելարան, ծաղկոց, նաև թանգարան և հիւրանոց, իսկ միւս հին շէնքը գործածուեցաւ իբր ննջարան և անոր տակն ալ սեղանատուն:

Սակայն այս ամէն նորոգութիւնները և յաւելուածները որոնք հին ու փտտած արմատի մը վրայ կը կատարուէին, միայն 'առօրեայ բարոքութիւնը կրնային մտցնել հաստատութեան ընդհանուր վիճակին վրայ:

Բժշկական նոր ծանօթութիւններու համաձայն այդ հնացեալ և փայտաշէն շէնքը ամէն կերպով անյարմար էր հիւանդանոցի մը համար: Անիկա տգեղ համադրութիւն մը դարձած էր խարխուլ ու հնացեալ, մասամբ նոր՝ մասամբ քայքայուած կամ բոլորովին նոր՝ սակայն ոչ նպաստաւոր:

տակայարմար կարգ մը շէնքերու որոնք միշտ նորոգութեան և փոփոխութեան կը կարօտէին :

Իրարու յաջորդող բոլոր հողաբարձութիւններ առօրեայ պէտքերը հազիւ կրնային լրացնել և ասոր համար միշտ կը գանգատէին թէ այդ յարաճուն ծախքերուն հետ պարտաւորուած են նաև շէնքին նորոգութեան համար ալ բաւական կարեւոր դրամներ յատկացնելու :

1887ին հիւանդանոցի հողաբարձութիւնը իր պաշտօնավարութեան քառամեայ տեղեկագրին մէջ դիտել կուտար թէ իր ութամեայ պաշտօնավարութեան միջոցին (1878էն սկսեալ պաշտօնի կոչուած ըլլալով), 500 ոսկիէն աւելի ծախք ըրած էր հիւանդանոցի շէնքին մասնակի նորոգութեանց համար, և ասով հանդերձ շէնքը այնքան խարխուլ և հին և անառողջապահիկ էր որ բոլորովին նորոգ շինութեան մը պէտքը կը ներկայանար : Այդ վերաշինութեան համար 25—30,000 ոսկիի ենթադրուած ծախքով քարուկիր շէնքի մը ծրագիրը պատրաստուած և ընդունուած էր Հողաբարձութեան կողմէ և կը խընդրուէր որ Աղգային Վարչութիւնը պարտ ու պատշաճը ի գործ դնէ :

Վարչութիւնը 1887ին վերահաստատելով երրորդ անգամ ըլլալով Միքայէլ էֆ. Յակոբեանի ատենապետութեան ներքև գտնուող այդ Հողաբարձութիւնը, անոր յանձնուց վերաշինութեան ծրագրի գործադրութիւնը :

1888 Օգոստոսին՝ կայսերական Իրատէին ստացումէն քիչ յետոյ սկսաւ հիւանդանոցի վերաշինութիւնը որուն հսկողութիւնը յանձնուեցաւ յատուկ շինութեան յանձնաժողովի մը որուն ատենապետն ու գանձապետն էր Միքայէլ էֆ. Յակոբեան, և ամէնէն գործօն անդամներն էին Արիկ էֆ. Ունճեան և Մկրտիչ էֆ. Ֆրէնկեան, որոնք մինչև վերջը չգործակցեցան իրենց պաշտօնակիցին :

Ծրագրեալ յատակագիծին համաձայն ամբողջ շինու-

Թիւնը երեք գլխաւոր թեւերով, հիւրանոցով և ուրիշ յարակից մասերով պիտի կառուցուէր 5257 քառակուսի մէթրի վրայ, սակայն գործադրութեան մէջ աւելի ընդարձակուեցաւ և աւելի լայն տեղ մը գրաւեց :

1889—1891 տարիներու ընթացքին ծրագրեալ շինութիւններէն հետեւեալներու բացումը կատարուեցաւ հետզհետէ .

1. Առաջին թեւ՝ այն որ կը գրաւէ մեծ փակին ճակատը, հիւսիւսէն հարաւ տարածուած շէնքը որ իբր յիմարանոց կառուցուած է, սակայն մինչև հիմա կարելի չէ եղած ամբողջաբար իբր այն գործածել : Այսպէս այսօր այդ շէնքէն վերի յարկը կը ծառայէ իբր արանոց հիւանդանոց և վարի յարկէն մաս մը իբր արանոց ծերանոց :

Այս յարկին գետնայարկը կը գտնուի նաև մումարանը :

2. Երկրորդ թեւ՝ որ կը գտնուի մեծ բակին հարաւային կողմը և կ'երկարի արեւելքէն դէպ ի արեւմուտք, և կառուցուած է իբր ծերանոց, սակայն այսօր վերի յարկին մէջ դրուած է կանանոց հիւանդարանը, և աղջկանոց որբանոցը, իսկ վարի յարկին մէջ արանոց և կանանոց ծերանոցը և կանանոց յիմարանոցը :

3. Լուսցարանը և բաղնիքը, որոնց վրայի յարկը հաստատուած է հանդերձարանը և ուր վերջերս զետեղուեցաւ Գարամանեան էֆէնտիի նուիրած հականեխիչ ջեռոցը (եթիւվ) :

4. Խոհանոցը՝ որ հաստատութեան ամէնէն կատարեալ մասերէն մէկը կը ներկայացնէ :

Այս շէնքերը հաստատութեան ամէնէն պարզ մասերը կը կազմէին, վասն զի ամէնէն կարեւոր, ամէնէն աւելի նուրբ և բազմածախս մասը հիւանդարանն էր որ ետքի ձգուած էր :

Եւ դժբաղդութիւնը հոն էր որ առաջին ոգեւորութեամբ ձեռք բերուած դրամներէն մեծագոյն մասը ծախ-

տուած էր, և դրամական անձկութիւնը կը ստիպէր շինութեան յանձնաժողովը գործը կիսաւարտ թողուլ:

Քիչ յետոյ երկրաշարժը եւս տեղի ունենալով, Միքայէլ էֆ. Յակոբեան կրցաւ միայն կարեւոր նկատուած նորոգութիւններն ընել և կառուցանել իբր յաւելուած կամ յարակից մասը առաջին թեւին, ապուշարանը:

1899ին Յակոբեան էֆ. յաջողեցաւ վերսկսիլ ընդհատուած աշխատութիւնը և ձեռնարկել պաշտօնատուն և հիւրանոց մասին շինութեան, որ 1900ին աւարտեցաւ:

Այդ շէնքը՝ որ հիւանդանոցի արտաքին դրան ամէմէն մերձակայ շէնքն է, կը պարունակէ իր մէջը Տնօրէնութեան սենեակը, դիւանատունը, բժիշկներու սենեակը և դահլիճը:

Այս շինութեան աւարտումէն յետոյ Միքայէլ էֆ. Յակոբեան շինութեան յանձնաժողովին տեղեկագիրը տուաւ և գործէ քաշուեցաւ, առանց հիւանդարանը, դեղարանը և մատուռը վերաշինելու:

Այդ առթիւ շինութեան յանձնաժողովին ձեռքով եղած վերանորոգութեանց համար, Ս. Փրկչեան հաստատութեան մուտքին հանդէպ, հիւրանոցին երկու կողմնակի պատերուն վրայ զետեղուեցաւ հետեւեալ արձանագրութիւնը՝ որուն կցուած է նաև նուիրատուներուն ցուցակը որ մինք զանց կ'առնենք:

« Ե .

«Սուրբ Փրկչեան Ազգային Հիւանդանոցս Հայոց, ռուս գրութեան եւ պատկարան ամենազան անկելոց, օհնեալ փայտակերտ ի տեղւոցս նպաստիւմ ազգայնոց եւ գլխաւոր արդեամբ բարեյիտասակ Յարութիւն ամիրայի Պեգնեան, եւ աւարտեալ զկնի վախճանի նորին յամին 1834, յանցանել ժամանակաց զսաւ խաթարեալ եւ անբաւական, որոյ վասն յամին 1888 ձեռն արկաւ ի օր-

նութիւն, որո՞ւմամբ ազգային Կեդրոնական Վարչու-
թեան եւ ջանիւք Հոգաբարձութեան, ըստ բարձր հրա-
մանաց Օգոստոսիան Ինֆնակային Սուլթան Ապսիւլ Հա-
միտ Խան վեհազօր Կայսեր, ի Հայրապետութեան Տ. Տ.
Մակարայ Ս. Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Տ.
Յարութեան Արքեպիսկոպոսի, եւ յառաջացեալ շինու-
թեանց մասն առ մասն եւ համակ քարուկիր աւարտեցան
երեքին մեծ թելքն որք յարեւելս եւ ի հարաւ եւ յարեւ-
մուտս մեծի բակին, հանդերձ յարակից մասամբք ի պէս
պէսպիսիս եւ Երզրափակ որմովք, յամս երկոսասան ցվերջ
մայիսի 1900 տարւոյ, յաւուրս Հայրապետութեան Տ. Տ.
Մկրտչի Ս. Կաթողիկոսի եւ ի Պատրիարքութեան Տ. Մա-
ղափայ Արքեպիսկոպոսի : Միքայէլ Էֆէնտի Յակոբեան
ասեցնապէս Հոգաբարձութեան եւ յետոյ յանձնաժողովոյն
շինութեան ջանադիր եղել յարդիւնս գործոյն եւ հայ-
քայքման նպաստից : Մեծամեծք Ազգիս առաս նուիրօք
եւ բարեսերք բազումք ըստ ձեռին բաւականութեան
նպաստեցին ի յրուսն աւարտեալ մասանցն, որք հասա-
նեն ի տարածութիւն իբր ինն հազար նարտարապետա-
կան կանգնոց եւ ի գումար ծախուց երկերիւր բիւրուց
Օսմանեան ոսկի դահեկանաց գոթս նուիրեցին, եւ այլն :»

1898 օգոստոս 4ին Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեանի ա-
տենապետութեամբ կազմուած Հոգաբարձութիւնը՝ հաս-
տատութիւնը դժուարին պայմաններու մէջ վարելէ զատ
առօրեայ պէտքերու համաձայն դանազան շինութիւններ
ըրաւ իր աշխատութեամբը առանց ծանրանալու շինու-
թեան յանձնաժողովին վրայ :

Այսպէս նկատելով որ յիմարներու թիւը հետզհետէ
կ'աճի և յիմարանոցը հիւանդարանի չգոյութեան պատ-
ճառով հիւանդներով լեցուած է, որոշեց աշխատող յի-
մարներու համար 40 անկողիններ պարունակող ննջարանի

մը ու իրեն յարակից մասերով շէնքի մը շինութիւնը որ 600 ոսկիէն աւելի գումարով մը իրագործուեցաւ (1899) :

Նոյնպէս 1860ի ատեններէն կը մնար $1\frac{1}{2}$ մասուրա ջուր որմէ չէր կրցած օգտուիլ Ազգ. Հիւանդանոցը, որովհետեւ ճամբաներու շինութիւնը՝ թէեւ քանիցս ձեռնարկուած սակայն կարելի եղած չէր յաջողցնել :

Հոգարարձութիւնը աջակցութեամբ Յարութիւն էֆ. Ասլանեանի յաջողեցաւ աւարտել այս շինութիւնը, 1300 մէթր երկարութեամբ երկաթ խողովակներ հոգալ և զետեղել տալով : Ասկէ դաս Հոգարարձութիւնը հիւանդանոցի բոլոր յարկերուն մէջ թէ՛ տաք և թէ՛ պաղ ջուր վազցնելու համար ճամբաներ և ծորակներ, ինչպէս նաև այրերու և կիներու յատուկ ճուղի սենեակներ շինել տուաւ, և բոլոր յարկերը հեռաձայնով (թէլեֆօն) միացուց Տնօրէնութեան սենեակին հետ :

Այդ բոլոր շինութեանց ծախքը յանգեցաւ 1300 ոսկուոյ գումարի մը, որ ժապաւինեալ տաւարով մը հայթայթուեցաւ :

Յաջորդ 1900 տարուոյ ընթացքին մէջ կանանց յիմարանացի խճողեալ վիճակը նկատի առնուելով Հոգարարձութիւնը շինեց օժանդակ շէնք մը որ 18 անկողիննոց ննջարահի մը վերածուեցաւ :

Հիւրանոցի շինութենէն յետոյ երբ Միքայէլ էֆ. Յակոբեան շինութեան յանձնաժողովին տեղեկագիր տուաւ և գործէ քաշուեցաւ (1900), Հիւանդանոցի Հոգարարձութեան վրայ ծանրացաւ հիւանդանոցի մնացեալ հին մասերուն վերաշինութեան գործը, զոր ստանձնեց Հոգարարձութիւնը և կրցաւ գլուխ հանել բարեսէրներու օժանդակութեամբ :

1905ին Յարութիւն էֆ. Գարամանեան փափաք կը յայտնէ իր հանգուցեալ եղբորը Յակոբ էֆ.ի բաղձանաց համաձայն հիւանդանոցին նուիրելու հականեխական ջե-

րոց (էթիւվ) մը, որուն հաստատութեան լուացարանին մէջ զետեղուած — 1000 ոսկի գնման և զետեղման ծախքով — 1906ին հազիւ աւարտեցաւ : Գարամանեան էֆ. և հանգուցելոյն այրին Տիկին Թագուհի և դուստրը նուիրած էին միայն մեքենային արժէքը որ էր 650 ոսկի և միւս մասը Հոգաբարձութիւնը հոգացած էր : Սակայն ասով հաստատութեան ամէնէն կարեւոր մէկ պէտքը կը լրանար : Էթիւվը առայժմ շարաթը երկու անգամ կը վառուի, և ամէն վառելուն երկու կենդինար ածուխ կը սպառէ, բայց հազար կտորէ աւելի հագուստեղէն կամ անկողնի կազմածք կը մաքրէ մանրէներէ, լուէ և մլուկէ, խոնաւ շոգիէ և չոր ջերմութենէ անցնելով յաջորդաբար :

Միւս կողմանէ Թահթապրունեան Եղբարք պատրաստակամութիւն յայտնած ըլլալով եկեղեցին վերաշինելու, հին մատուռին տեղւոյն վրայ սիրուն եկեղեցի մը կառուցուեցաւ :

Եկեղեցւոյն հիմնարկութիւնը կատարուեցաւ 1906 փետրվար 10ին նախագահութեամբ Ա.մեն. Ս. Պատրիարք Հօր, որ շինութեան գործին ալ յաճախակի այցելութիւններով և անդադար հսկողութեամբ մեծ հոգ տարաւ :

Եկեղեցւոյն օծումը կատարուեցաւ 1906 Դեկտեմբեր 1—2—3 երեք օրերուն մէջ փառաւոր հանդիսաւորութեամբ, և տեառնագրուեցաւ նախկին անուամբ յանուն Ս. Փրկչի :

Եկեղեցւոյն ճակատը զետեղուած է հետեւեալ արձանադրութիւնը .

«Տանարս Ս. Փրկչին

Փայտակերտ կառուցաւ զառաջինն յամին 1833

Ի հոգելոյս Պեգնեան Յարութիւն ամիրայե.

«Զարդիս վերսին կառուցաւ ի հիմանց՝ տունս սքուրթեան ի տեղւոջս գրութեան՝ արդեամբ իւ ծախիւմ

բարեպաշտօնի տարց Ազաթանայ եւ Կարապետի հարազատաց Թահթապրունեան ի յիշատակ եւ ի հանգիստ հոգւոյ եղբօր իւրեանց Դիոգիւնեայ վաղածամ վախճանելոյ յամին 1898, եւ տառնագրեցաւ յանուն ամենասուրբ Փրկչին ի Կաթողիկոսութեան Տ. Տ. Մկրտչի եւ ի Պատրիարքութեան Տ. Մաղափայ: Յամին 1906 ՌՅԾԵ:»

Երբ այս շինութիւնը կը կատարուէր, Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը յաջողեցաւ երեք բարերարներու աջակցութեամբ Հաստատութեան ամէնէն կարեւոր մասը եղող երրորդ թէին, այսինքն հիւանդարանին շինութեան ձեռնարկել:

Եւ կառուցուեցաւ 1905—906 տարւոյ ընթացքին մէջ հոյակապ եւ սքանչելի շէնք մը երեք մասերէ կամ յարկաբաժիններէ բաղկացեալ — երեք բարերարներու անունով — . մեծ բակին հիւսիսային կողմը երկրորդ թէին ճակատը և անոր պէս արևելքէն արևմուտք ուղղութեան վրայ: Արտաքուստ դիտելով երեք յարկաբաժիններու կեդրոնը կը գրաւէ Կիւլպէնկեանց յարկաբաժինը, որ միւսներէն յարկ մը աւելի բարձր շինուած է: Իր ճակատը, բոլորաձև դէպ ի դուրս կը ցցուի վիրաբուժական մեծ գործողութեանց սրահը, ապակեպատ: Իսկ երկու քովի յարկերը՝ յար և համան իրարու՝ կցուած են կեդրոնական յարկին անցքերով:

Արևելեան կողմինը Ունձեանց և արևմտեանը Յակոբեան յարկաբաժինն է:

Այս երեք յարկերը թէ՛ իրենց արտաքին երևոյթովը և թէ՛ ներքին շինութեան ոճովը կը զանազանուին առաջին երկու թիւերէն. նոր շէնքերուն ոճը հիներու վրայ ունի անգնահատելի առաւելութիւնը դիւրաւ չաղտոտելու, շուտ մաքրուելու, որով և հիւանդարոյր մանրէներ չհիւրընկալելու և չքուծանելու: Սանդուխները արհեստա-

կան մարմարեայ, պատերն աւելի քան մարդու բարձրութեամբ ողորկ իւղաներկ, ձեռքի տակ գայիք ամէն ինչ հարթ, ողորկ, ոչ-ծակոտկէն, յղկուած մտաաղէ կամ վերնի ատաղձէ — թէև ատաղձ շատ քիչ կայ — յատակները ոչ անկիւնաւոր, այլ կլոր դարձած և ապակիի չափ փայլուն մոզայիք են :

Ներքին բաժանման գալով, իւրաքանչիւր յարկաբաժին կը բաղկանայ գլխաւորաբար երկու յարկերէ, որոնց վերին յարկը պիտի յատկացուի ներքին հիւանդութեանց և վարի յարկը արտաքին հիւանդութեանց, այսինքն անոնց որոնք վիրաբուժական գործողութեանց պիտի ենթարկուին :

Յովհաննէս Յակոբեան յարկաբաժինը ամբողջութեամբ կանանց և Ունճեան յարկաբաժինը՝ արանց յատկացած է, իսկ կիւլպէնկեանց բաժինին մէջ երկու սեռէ ալ հիւանդներ պիտի ընդունուին գործողութեան ենթարկեալ եղողներէն :

Իւրաքանչիւր յարկաբաժին ունի մէկ սրահ 12 անկողիննոց, չորս սենեակ երկերկու անկողիննոց՝ վճարեալ հիւանդներու համար, մէկ սենեակ մահաօմերձ հիւանդներու մեկուսացման համար, մէկ սենեակ լոգանքի համար, մէկ սենեակ ճերմակեղէններու յատուկ թուահամարեալ դարակներու մէջ պահպանութեան համար, որով իւրաքանչիւր մահիճ իրեն յատուկ ճերմակեղէնը պիտի ունենայ զոր այդ մահիճին մէջ պառկողը միայն պիտի կրնայ գործածել :

Ներքին հիւանդարաններու առջև՝ ոտքի ելլալու կարող հիւանդներու կազդուուման համար ճեմավայրեր կան, թէ՛ վրան գոց և թէ՛ բոլորովին բաց, օդին և իրենց վիճակին համեմատ լայն շունչ աւնելու և «Արևու լոգանք» ընդունելու համար :

Կայնաւ յատուկ սենեակ մը կերակուրները վերելակով վեր հանելու յատուկ, վճարող և ձրի հիւանդներու ճե-

միշներն ալ անջատ են իրարմէ: Այդ վերելակներն և ճե-
միշի կազմածները բոլորովին նոր դրութեամբ շինուած՝
յատկապէս Անգլիայէն բերուած են և օժտուած առող-
ջապահական և բժշկական վերջին կատարելութեամբ:

Յակորեան և Ունճեան յարկաբաժիններու կեդրոնը
բարձրացած կիւլպէնկեան յարկաբաժինին վարի յարկը
յատկացուած է վիրաբուժական գործողութեանց: Մեծ
բակին վրայ նայող լուսաւէտ վիրաբուժական մեծ սրա-
հին հանդիպակաց կողմը, եկեղեցւոյն շրջաբակին վրայ
նայող ուրիշ սրահ մը ևս կայ բազմաառարար աւելի փոքր,
յատկացած վարակիչ վէրքերու գործողութեանց:

Այդ սրահները որոնք միւս յարկաբաժիններու ալ
պիտի ծառայեն, միքրոպագերծ մնալու ամէն երաշխա-
ւորութիւն կը վայելեն: Որպէս զի վիրարոյժն անգամ
իր ձեռքով չաղտոտէ տաք ու պաղ ջուրին ծորակները,
իր ոտքին ծայրովը այս կամ այն զապանակին դպչելով
է որ կը բանայ ու կը գոցէ զանոնք կամ դուրս կը թո-
ղու աղտոտ ջուրը:

Այս սրահներուն ջերմութիւնը կարելի է բարձրացնել
38⁰ի, այսինքն մարդուն բնական ջերմութեան աստիճանին:

Վիրաբուժական գործողութեան ենթարկուելիք որ և
է հիւանդ ուղղակի չի տարուիր գործողութեան (օքե-
րասիօնի) սրահը, այլ յարակից քլօրօֆօրմի սենեակն՝ ուր
թմրեցու ելէ վերջ կը տարուի սրահ, որուն միւս կողմը կը
գտնուի ուրիշ սենեակ մը, ուր բժիշկն իր հագուստները
կը փոխէ:

Ուրիշ երկու սենեակներ կան վիրաբուժական գոր-
ծիքներու հականեխման յատուկ: Ատկէ զատ նոյն յար-
կաբաժինին մէջ կը գտնուի սենեակ մը վիրադարմանու-
թեան (բանալուման) համար և ուրիշ սենեակ մը Ռէօնիթ-
կէնեան Ք. ճառագայթներու, ուրիշ մը լուսանկարի, և
աւելի ևս ուրիշ մը մեկուսացման (իզօլումանի) այսինքն

վիրարութեան գործողութեան ենթարկուած այնպիսի հիւանդաց համար՝ զորս կարելի չէ շատ շարժել՝ իրենց յատուկ անկողինը փոխադրելու համար :

Հիւանդներու յատուկ երկու գլխաւոր յարկաբաժիններուն (Յակորեան և Ունճեան) գետնայարկերը յատկացած է ջերմաբաշխ գործիքներու (ֆաշօրիֆեր և քերմոսիֆոն) : Հոն կը գտնուի նաեւ ջրաբուժութեան յատուկ սենեակ մը մտից լոգանքի յատուկ որ մինչեւ 25⁰ տաքցուած պիտի ըլլայ ցրտառութեան դէմ ի նախապատշաճութիւն :

Հիւանդը այդտեղ պիտի ձգէ իր բոլոր հագուստները՝ որոնք ջերոց (եթիւլ) զրկուելէ յետոյ իր թիւը կրող դարակի մը մէջ կը կախեն, Հիւանդանոցէն ելած ատենը տալու համար : Իսկ հիւանդը լոգարանէն ելլելէ յետոյ կը հագնի Հիւանդանոցի յատուկ ճերմակեղէններն և հագուստը՝ իր անկողնին յատուկ թուահամարով : Նոյն յարկին վրայ կան նաև սենեակներ՝ հիւանդներու ճերմակեղէններն արդուկելու և ծրարելու, գործիքներն ու անօթներն լուալու, խոհանոցէն եկած կերակուրները տաքցընելու, բաշխելու, հիւանդներու տրուելիք ջուրը զտելու, թէյ պատրաստելու, դեղաջուրերն ևւապնելու և այլն, նաև սենեակներ պաշտօնեաներու համար :

Երեք յարկաբաժիններէն մէջտեղինին (Կիւլպէնկեանց) վրայ անջատաբար շինուած է շորրորդ յարկ մը՝ ուր կը բնակին Անգլիայէն բերուած մասնագէտ հիւանդապահուհիները : Այդ յարկն ունի իր մէջը ննջարան, լոգարան, մատենադարան, խօսարան և այլն :

Ասոնք ամէնը միանալով հնօրեայ խարխուլ շէնքին տեղ կը բարձրացնեն գիտական վերջին կատարելութեամբ օժտեալ հիւանդանոց մը, որուն շինութեան աւելի քան 10000 ռսկի ծախսուեցաւ և զորս հայթայթեցին Յովհաննէս Էֆ. Յակորեան, Սերովբէ և Սարգիս Կիւլպէնկեան որ-

դիք, և Մաթուս և Աբիկ էֆ. Ունճեանք: Երեք յարկաբա-
ժիններէն Յակոբեան յարկաբաժինը իր ամէն կահաւո-
րութիւններովը աւարտած ազգին յանձնուեցաւ մատուռին
օծման օրը (1906 Դեկտ. 3) և պաշտօնապէս բացուեցաւ
և կը գործածուի:

Միւս երկու մասերը աւարտած են, սակայն կահա-
ւորումը տակաւին լրացած չլլալով գործածութեան չեն
դրուած:

Իւրաքանչիւր յարկաբաժնին ճակատը զետեղուած են
ի յիշատակ հետեւեալ արձանագրութիւնները.

Յակոբեանց յարկաբաժին. — «Ձայս բաժին յարկիս
հիւանդաց յաւել շինել յիւրոց արդեանց Այրն
բարեսէր եւ բարեգործ Յովհաննէս Յակոբեան,
որ սասարեալն եր արդէն վերաւիճուածն միւս
մասանց, 1906»:

Կիւլպէնկեանց յարկաբաժին. — «Ձայս բաժին յար-
կիս հիւանդաց կառուցին որդիք երախտաւոր
հարազատաց Սերովբէի եւ Սարգսի Կիւլպէնկե-
անց, եւ նուիրեցին ի յիշատակ ննջեցելոց ազ-
գատոհմին, որք ընդ հովանեաւ եկեղեցւոյս կան
հանգուցեալ 1906»:

Ուննեանց յարկաբաժին. — «Ձայս բաժին յարկիս
հիւանդաց կառուցին եւ նուիրեցին ի յիշա-
տակ ծնողաց իւրեանց Կարապետի եւ Թագուհի-
ւոյ, որդիք նոցին բարեսէր եւ բարեգործ Մա-
թուս եւ Աբիկ Ուննեան, զոր եւ Մաթուս հան
ի գլուխ զկնի մահուան Սդբօրն 1906»:

Միեւնոյն ժամանակ նուիրատուութեամբ վսեմ.
Տոքթ. Միքայէլ էֆ. Խորասանճեանի, զոր իր ժառան-
գորդները ևս աւատացուցին, հին Հաստատութեան
վերջին մնացորդը, դեղարանը բոլորովին նոր կառուց-

ուեցաւ և Հաստատութեան վերաշինութեան գործը ամբողջովին լրացաւ :

Դեղարանին ճակատն ալ կը կարդացուի հետեւեալ արձանագրութիւնը .

«Ձոր ի յիշատակ իւր ծնողին
Բազմարդիւն Ամիրայից Պետրոսի Խորասանեան
Սահմանեաց կառուցանել բժշկապետն վսեմ
Միքայէլ Եֆէնի Խորասանեան,
Զդեղարան հիւանդանոցին
Շինեցին ժառանգորդն բարենախանձ
Այրին եւ դուստրն եւ ուստրք
Յամին 1906. ՌՅԾԵ»:

Այսօր հին շէնքէն բան մը մնացած չէ : Նախկին փայտակերտ շինուածին տեղ կը բարձրանան այսօր քարուկիր հոյակապ շէնքեր , որոնք կը բովանդակեն իրենց մէջ 1100էն աւելի պատասպարեալներ , մինչ հին շէնքին մէջ ամէնէն աւելի բեռնաւորուած ժամանակներուն պատասպարեալներուն թիւը 500—600ը չէ անցած :

2. Ս. ՅԱԿՈՐԱՅ ՎԱՆԻՔ

Ասիկա ալ Ս . Փրկչեան հաստատութեան յարակից մէկ մասը կրնայ համարուիլ , վասն զի իր շինութեան օրերէն մինչև այսօր անոր մատակարարութեանը մասը կազմած է :

Ս . Յակոբայ վանքին կայսերական Հրովարտակը Ս . Փրկչեան հաստատութեան հրովարտակէն հինգ ամիս վերջը տրուած ըլլալով՝ դիւրին է մակարեթիլ թէ այս հաստատութիւնը կարճ միջոց մը յետոյ կառուցուած է իբր ժանսախսանոց՝ ինչպէս որոշապէս կը յիշուի հրովարտակին մէջ :

Արդէն նոյն թուականին ժանտախտ գոյութիւն ունենալը Կ. Պոլսոյ մէջ ստոյգ և պատմական իրողութիւն մըն է : Այս հաստատութեան մեծագոյն բարերարն է Պօղոս պէյ Տատեան որ 10,000 կանգուն գետինը նուիրած է :

Այդ հաստատութիւնը որուն համար 1834ի յայտարարութիւնը կ'ըսէ թէ «Մերձ ի ծովն (Մարմարա) շինեալ կառուցաւ առանձին բնակարան վանս ժանտախտի հիւանդայ» . չգիտցուիր թէ որքան ընդարձակութիւն ունէր : Սակայն հաւանական է կարծել թէ հազիւ քանի մը սենեակներէ կը բաղկանար և ունէր նաև յարակից փոքրիկ մատուռ մը ըստ վաղեմի սովորութեան հոգեւորական հանգամանք տալու համար :

1848—52ի հոգաբարձութեան միջոցին Պօղոս պէյ Տատեան ընդարձակեց մատուռը, որ մերձակայ գործարանին մէջ աշխատող բանուորներու իւր աղօթարան կը ծառայէր, և միակ գործածելի մասն էր Ս. Յակոբայ ժանտախտանոցին, որ այդ հիւանդութեան դադրելէն յետոյ անգործածելի եղած էր :

Առաջին անգամ 1854ին Երկրագործական վարժարանին բացման առթիւ գործնական փորձերու համար յատուկ վայր սահմանուեցաւ, և այդ առթիւ երկու տարուոյ չափ (1854—56) իրական օգուտ մը ունեցաւ, սակայն շէնքը որ և է փոփոխութիւն չկրեց, վասն զի ուսանողները Ս. Փրկչեան հաստատութեան մէջ կը հիւրընկայուէին :

1858ին Ս. Յակոբայ վանքին մէջ կը բացուի Ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարան մը, որ այդ առթիւ կարեւոր նորոգութիւն մը կը կրէ :

Նախ Ս. Յակոբ եկեղեցին կը նորոգուի, գիշերօթիկ վարժարանի համար սրահ, դասարաններ, սենեակներ և սեղանատուն կը շինուի, որոնց մեծագոյն մա-

սին ծախքը կը հայթայթէ Պալեան կարապետ ամիրան :

Այս թուականին կառուցուած շէնքը իր հիմնական գիծերուն մէջ այսօր իր գոյութիւնը կը պահէ և նոյն հիմերուն վրայ է որ նորոգութիւններ եղած են այդ յարկին վրայ կամ անոր քովը նոր յաւելումներ :

Միայն թէ այս նորոգութիւնը իրաւամբ ցոյց կուտայ թէ հին ժանտախտանոցը հազիւ քանի մը սենեակէ բաղկացեալ հաստատութիւն մըն էր, որմէ ոչինչ կրցած են օգտուիլ այս շինութեանց առթիւ :

Երկու տարի միայն (1858-60) գոյութիւն ունեցաւ այս վարժարանը և փակուեցաւ : Ս. Յակոբ դարձեալ լքուած վիճակի մէջ մնաց, մինչեւ 1865 երբ Փառանգաւորաց համար յատկացեալ սրահները գործածուեցան քոլէրայի համաճարակէն վարակեալներու իբր հիւանդանոց, որով դարձեալ իբր տարափոխիկ հիւանդութեանց դարմանատուն ծառայել սկսաւ : Քոլէրան վերջանալէն յետոյ Ս. Յակոբայ վանքը վարձու բռնելու կամ այլ պատրուակով մը անհատներու ձեռքը կ'անցնի, որոնք հոն բնակութիւն կը հաստատեն և կերպով մը անոր կը տիրանան :

1871ին վերստին քոլէրայի համաճարակ կը պատահի և վարակեալներէն դիմողները Ս. Յակոբայ վանքին մէջ պատսպարելէ կ'արգիլուի Հոգաբարձութիւնը՝ այս ինքնակոչ տէրերուն կողմանէ : Հետեւաբար պահ մը վրաններու տակ առժամեայ տաղաւարներ կը կաղմուին մինչեւ որ Հոգաբարձութիւնը կը յաջողի վանքը ձեռք անցընել և փոքրիկ նորոգութենէ մը յետոյ դարձեալ քոլէրայէ վարակեալներու յատուկ հիւանդանոցի վերածել :

Յետոյ դարձեալ իր վիճակին մէջ պարապ կը ձգուի :

1878ին Պալեան Սարգիս պէյ կը նորոգէ իր գերդաստանին բարերարութեամբ հիմնուած Ս. Յակոբայ եկեղեցին, որ իբր ուխտատեղի կը ծառայէր :

1895 տարւոյն մէջ Կիւլպէնկեան եղբայրները, իրենց վաղամեռիկ եղբօրը՝ Յովհաննէս Կիւլպէնկեանի յիշատակին՝ 500 Օսմ, ոսկի նուիրեցին և Ս. Յակոբայ վանքը նորոգուելով՝ Որբանոցի տղաքը հոն փոխադրուեցան, որովհետեւ Հիւանդանոցի շէնքը շատ անձուկ կուգար անոնց :

Այդ թուականէն սկսեալ Ս. Յակոբայ որբանոցը յարատեւ գործածութեան մէջ է և կը ներկայացնէ Հիւանդանոցին ամէնէն կարեւոր մասերէն մէկը, ուր 200ի չափ տղաքներ կը պատասպարուին, ուսում կ'առնեն, արհեստ կը սովորին :

Պէտքերը տեղի տուած են զանազան նորոգութեանց և այսօր կրկնապատիկ աւելի ընդարձակուած է Ժառանգաւորաց վարժարանի համար կառուցուած շէնքը, և ասով հանդերձ սոսկալի կերպով խճողուած են և բոլորովին անառողջապահիկ պայմաններու մէջ կ'ապրին պատասպարեալները :

Պատրիկ ԷՖ. Կիւլպէնկեանի ատենապետութեամբ 1898ին պաշտօնի ձեռնարկող Հոգաբարձութիւնը Որբանոցի մէջ զանազան փոփոխութիւններ և շինութիւններ ըրաւ, ինչպէս ննջարանի յաւելում, ճեմիչներու տեղափոխութիւն և այլն, և այլն : Որբանոցին պարտէզին մէջ կառուցուեցան քանի մը խանութներ՝ կօշիկի արհեստարանի և ուրիշ արհեստարաններու յատուկ, նոյնպէս Ս. Յակոբայ վանքին եկեղեցին՝ որ վնասուած էր երկրաշարժէն, նորոգուեցաւ :

Այս շինութեանց համար աւելի քան 250 Օսմ. ոսկի ծախք մը եղաւ որուն գրէթէ կէսը հոգացուեցաւ Աստուածատուր Զունդի կտակած գումարով :

Այսօր Ս. Յակոբայ վանքն՝ իբր յարակից մասը հիւանդանոցին միակ հնագոյն և փայտաշէն մասն է, որ ժամանակին պահանջներուն և պէտքին խիստ անհամապատասխան վիճակի մը մէջ կը գտնուի :

Յուսալի է որ այս հին մասն ալ իր գոյութեան իրաւունքը կորսնցնուի, ինչպէս հիւանդանոցին միւս մասերը՝ Գարակէօզեան կտակէն զանձուած մասով կառուցանելի որբանոցովը՝ որուն կայսերական բարեհաճ իրատէն շնորհուած և շինութեան նախնական ձեռնարկներն ալ եղած են :

Ա. Ա. Ա.



Ա. ՓՐԿԶԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՀԱՅՈՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. — Ա. Փրկչեան Հիւանդանոցի արդի Հոգաբարձութիւնը կազմուած է 1907 Օգոստոսին : Անդամներն են .

Ազանեան	Յարութիւն	էֆ.	Ասեճապետ
Գարակէօզեան	Արշակ	»	Ասեճաղպիր
Արսէնեան	Արսէն	»	Գանձապետ
Աճէմեան	Տրդ. Տիգրան	պէյ	
Էփրէնեան	Գրիգոր	էֆ.	
Կիւմիւշկերտեան	Տիրան	»	
Մանուկեան	Տիգրան	»	
Յակոբեան	Մա, Թէն	»	
Սեղբոսեան	Տրդ. Սիմոն	»	

ԽՆԱՄԱԿԱԼ ՈՒԹԻՒՆՔ . — Հոգաբարձութիւնը յատուկ Խնամակալութեան մը միջոցաւ կը վարէր թէև մանչերու Որբանոցի ուսումնական և արհեստական մասերը , սակայն այս Մարմնոյն հրաժարմամբը՝ Տնօրէն Յակոբ էֆ. Համամճեանի յանձնուեցաւ առժամապէս Որբանոցի և արհեստարաններու վարչութիւնը :

Իսկ աղջկանց Որբանոցի հոգաւորութիւնն ու հանդերձատան հսկողութիւնը ստանձնած է Տիկնանց Խնամակալութիւն մը , որուն անդամներն են .

Տիկին	Յուստինանէ	Զ.	Տիլպէր	Ա.ՏԵՆԱՅԵՏ
Օրիորդ	Մարիամ	Յ.	Միւհէնտիսեան	Ա.ՏԵՆԱՊԱԿԻՐ
Տիկին	Արեգ	Յ.	Գարամանեան	
»	Արուսեակ	Գ.	Դաւիթեան	
»	Բրլանթի	Ն.	Սէֆէրեան	
»	Գօնի	Պ.	Խօրասանեան	
»	Եւպրասէ	Մ.	Յակոբեան	
»	Մարիամ	Խ.	Շահպազեան	
»	Մարրուհի	Ի.	Իբրանոսեան	
»	Նեվրիկ	Ա.	Մանուկեան	

Հիւանդանոցի կալուածոց մատակարարութեան ու կարգաւորման համար ալ յատուկ յանձնաժողով մը կազմուած է հետևեալ անդամներով .

Նշան	էֆ.	Ղուկասեան	Ա.ՏԵՆԱՅԵՏ
Բարձող	»	Հիւնքեարայէ յէնտեան	Ա.ՏԵՆԱՊԱԿԻՐ
Խաչիկ	»	Խօրասանեան	Գանձապէտ
Գրիգոր	»	Դառնակերեան	
Հեթում	»	Սէթեան	
Ստեփանն	»	Համամեան	

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ. — Գրասենեակի պաշտօնեաներ. —

Նշան էֆ. Ղուկասեան՝ Ներկայացուցիչ Հոգաբարձութեան եւ վերահսկող, Մաքսուտ էֆ. Խիւտավէրտեան՝ Տեսուչ-ֆարսուդար, Յովակիմ էֆ. Մանուէլեան՝ Համարակալ, Միհրան էֆ. Գասարեան՝ Արկղակալ :

Հիւանդանոցի պաշտօնեայք. — Վարդան Վրդ. Բրոխորոսեան՝ Հոգևոր պաշտօնեայ, Յակոբ էֆ. Համամեան՝ Տնօրէն, Իսրայէլ էֆ. Հայկազն՝ Դեր-Տնօրէն, Գարեգին էֆ. Մերկերեան՝ Դիւանապետ, Տոքթ. Մաքսուտ էֆ. Շէրպէթեան՝ Ախտաբոյժ-բժիշկ, Տոքթ. Միհրան էֆ. Զարդարեան՝ Վիրաբոյժ-բժիշկ, Տոքթ. Խաչիկ էֆ. Պօղոսեան՝ Յիւսարաբոյժ-բժիշկ, Տոքթ. Արշակ էֆ. Գազազեան՝ Օժանդակ-Վիրաբոյժ, Տոքթ. Պենոն էֆ. Պեզազեան՝ Օժանդակ-Ախտաբոյժ, Տոքթ. Տելեմաք էֆ. Ճէզայիրլեան՝ Օժանդակ-յիւսարաբոյժ, Յարութիւն էֆ. Յէրհատեան՝ Դեղագործ :

Որքանոցի պատճենայք. — Նշան էՖ. Թորոսեան՝
Տեսուչ, Գէորգ էՖ. Պողոսեան՝ Աւագ ուսուցիչ մանչե-
րու Որքանոցին, Օր. Արուսեակ Իտարէճեան՝ Աւագ ու-
սուցչուհի Աղջկանց Որքանոցին, Տոքթ. Գաբրիէլ էՖ.
Նահապետեան՝ Այցելու բժիշկ :

Հիւանդանոցը ունի 3 Անգլիացի հիւանդապահուհի-
ներ նոր յարկաբաժիններուն մէջ, 3 հսկող մայրապետներ
(մէկը էրիկ մարդոց և 2ը կիներու կողմը), 3 վիրադարման
(2ը էրիկ մարդոց և միւսը կիներու կողմը), 25 հիւան-
դապահ (11ը էրիկ մարդոց և 14ը կիներու կողմը) և 13
ուրիշ պաշտօնեաներ, որոնք են՝ գիշերապահ, մատակա-
րար, անուղներու բաշխող, լոգանքի պաշտօնեայ, սափ-
րիչ, դռնապան, և այլն :

Յիմարանոցն ունի 21 յիմարապահ (13 արանց և 8
կիներու կողմը) :

Դեղարանը ունի մէկ գլխաւոր դեղագործ և մէկ
վկայեալ օգնական դեղագործ, և 3 աշակերտ :

Ծերանոցն ու Անկեղանոցն ունին 5 սպասաւորներ :

Որբանոցներն ունին 12 մնայուն և 4 այցելու ու-
սուցիչներ և 12 տնտես ու սպասուհի :

Հանդերձատունն ունի 2 պաշտօնեայ և լուսցարանը
9 լուսցարարուհիներ և 2 բաղնիքի ծառայողներ :

Մառանն ունի մէկ գլխաւոր և մէկ օգնական պաշ-
տօնեայ, և խոհանոցը մէկ վարուպետ և 4 օգնական :

Անասնոց համար 3 ծառայողներ և պարտէզին եր-
կու պարտիզպան :

Մատուռին ալ լուսարար մը :

Վերև յանուանէ յիշուած պաշտօնեաներուն հետ,
Հիւանդանոցի ամբողջ պաշտօնէութիւնը կը բովանդակէ
115 մնայուն, 21 այցելու և 4 ձրի պաշտօնեայ : Ասոնց-
մէ զատ ուրիշ 22 պաշտօնեաներ ևս կը պաշտօնավարեն
փոքրիկ ամսականներով :

Ա. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆԾ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐԸ

Այս Հաստատութիւնը որ ընդհանրապէս Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ անուամբ ծանօթ է հասարակութեան՝ զանազան անջատ ճիւղեր ունի, որոնք են Հիւանդարան, Յիմարանոց, Ծերանոց, Անկեղանոց, Որբանոց, հինգն ալ արանց և կանանց տարբեր բաժանումներով:

Ա. ՀԻՒԱՆԴԱՐԱՆ. — Հիւանդանոցը երկու ճիւղի բաժնուած է, Բժշկական և Վիրաբուժական. Առաջինը 140 (100ը այր և 40ը կին) և երկրորդը 85 (60 այր և 25ը կին) անկողին ունի: Ուռականութեամբ վարակուածները (Tuberculeux), յիմար հիւանդները, թարախաւորները, և տղայք՝ թէ՛ արանց և թէ՛ կանանց կողմը՝ յատուկ սրահներ ունին: Կան նաև մասնաւորներու համար մէկ երկու անկողիննոց սենեակներ:

Հիւանդանոցի երկու ճիւղերը ունին իրենց գլխաւոր բժիշկը, և իւրաքանչիւրը իր օժանդակ բժիշկը: Առաջինները շաբաթը երեք անգամ, իսկ վերջինները ամէն օր կ'այցելեն ու կարգաւ գիշերները կը մնան Հիւանդանոցին մէջ:

Հիւանդանոցը ունի Վիրաբուժական սրահ մը, Վիրադարմանի երկու խուցեր, Զրաբուժական կրկին լոգարաններ (մէկը արանց և միւսը կանանց կողմը), Բժշկական և հիւանդներու ընթերցանութեան կրկին մատենադարաններ, և երկու հիւրանոց՝ մէկը արանց և միւսը կանանց կողմը: Նորակառոյց կիւլպէնկեան յարկաբաժինը ունի վերջին կատարելութեամբ օժտուած գործողութեանց երկու սրահներ, որոնց մէջ դրուելու վրայ են Եւրոպայէն բերուած կարեւոր գործիքներ, սեղան, զտիչ, և այլն:

Նորակառոյց շէնքերէն Յակոբեան յարկարաժինը կ'ընդունուին միայն կին հիւանդներ որ կը պարունակէ 40 անկողին, 20ը բժշկական և 20ը վիրաբուժական: Իսկ կիւլպէնկեան և Ունճեան յարկարաժիններն ալ ի մօտոյ կահաւորուելով պիտի յատկանան Ունճեանը աւրանց, և կիւլպէնկեանը գործողութեանց:

Տարեկան գրէթէ 2000 հիւանդներ կը դարմանուին Հիւանդանոցին մէջ, որոնց $\frac{3}{4}$ ը այրեր և $\frac{1}{4}$ ը կիներ են: Այս հիւանդներուն 1300—1400ը ներքին հիւանդութեանց ճիւղին կը վերաբերին, 600—700ը վիրաբուժական բաժնին:

Ամէն կարգի հիւանդներ կ'ընդունուին: Ափրողիտեան հիւանդութեամբ վարակուածներ չէին ընդունուեր մինչև վերջին ատեններ. այժմ անոնցմէ անոնք միայն կ'ընդունուին՝ որոնց ոտքի վրայ դարմանումը հնար չէ:

Աչքի, ականջի և կոկորդի հիւանդութեանց ենթականեր երբ ընդունուին, քաղաքիս Հայ մասնագէտներու կը զրկուին դարմանուելու համար:

Ասոնցմէ զատ, ատամնաբոյժ Վռամչապուհ էֆէնտի Թաշճեան 1906 տարւոյ մէջ 15 օրը անգամ մը անձնուիրաբար այցելելով հարկ եղած դարմանները կատարած է:

Հիւանդաց ներքին և վիրաբուժական բաժնին՝ 1906 տարւոյն մէջ մտից ու ելից ցուցակն է.

	Գումար
Պատրաստ 1906 Յունուար 1ին	127
Մուտք	1497
	<hr/>
	1624
Ելք	
Արձակեալ, բարւոքեալ, բժշկեալ	1271
Մեռած	202
	<hr/>
Պատրաստ 1906 Դեկտեմբեր 31ին	151

Բաղդատութեան, գնելով այս տարուան մեռածներուն միջինը՝ նախորդ քանի մը տարիներու միջիններուն հետ կ'ունենանք.

1897	0/0	16,51	1902	0/0	13,42
1898	0/0	19,37	1903	0/0	12,53
1899	0/0	16,97	1904	0/0	13,—
1900	0/0	15,10	1905	0/0	12,43
1901	0/0	15,12	1906	0/0	12,44

Ասոնցմէ զատ դարմանուած են ծեր, որք և պաշտօնեաներէն 277 հոգի, որոնցմէ 31 ծեր և 1 պաշտօնեայ մեռած են:

Բ. ՅԻՄԱՐԱՆՈՑ. — Յիմարանոցը 308 մտային հիւանդներ ունի, որոնց 201ը այր և 107ը կիներ են: Ասոնց թիւը դժբախտաբար աւելնալու վրայ է, որով վերջին տարիներս Յիմարանոցի արանց և կանանց բաժիններուն յաւելուածական շէնքերն արդէն լեցուած են ու յիմարները սկսած են նեղուիլ:

Յիմարանոցը ունի յիմարարոյժ մը և օգնական բժիշկ մը. առաջինը շարաթը չորս անգամ կ'այցելէ, իսկ իր օժանդակը ամէն օր: Արանց և կանանց բաժինները ունին իրենց ընդհանուր հսկող պետերէն զատ 21 յիմարապահ (13ը արանց և 8ը կիներու բաժնին մէջ):

Յիմարներն երեք դասի բաժնուած են.

Ա. Հանդարտ յիմարներ որոնք աշխատաւոր կ'անուանուին և Հաստատութեանս աշխատութեանց կը գործածուին, իրր բժշկական դարման: Բ. Յուզման ենթականեր: Գ. Ապուշներ, միզարձակներ: Այս երեք կարգերն ալ արանց կողմը ունին իրենց յատուկ յարկերը. կանանց կողմը այս բաժանումները զատուած չեն տեղւոյ անձկութեան պատճառաւ:

Յուզեալ յիմարները երբեք չեն գանակոծուիր, այլ բժշկական միջոցներով կը դարմանուին և կ'արգիլուին իրենց և շուրջը գտնուողներուն վնասակար ըլլալէ:

Յուզակ Յիմարանցի 1906 թարւոյ

Պատրաստ 1906 Յունուար 1	299	
Մուտք	103	
	<u>402</u>	
Եւ	{ Բժշկեալ և բարւոքեալ Մեռած	55
		39
	<u>94</u>	
Պատրաստ 1906 Դեկտեմբեր 31	308	
	<u>402</u>	

Գ. և Դ. ԾԵՐԱՆՈՑ ԵՒ ԱՆԿԵԼԱՆՈՑ.— Ծերանոցը անոք և ծեր անձերու յատկացուած յարկ մըն է. իսկ Անկեղանոցը անկարող և անտէր անձերու, փորձանաւոր աղջիկներու եւ լքեալ կիներու յատուկ է :

Այս յարկերուն մէջ պատասխարեալներն առօրեայ 3 ժու՛մ սնունդէ զատ կ'ընդունին ծխախոտ, և սուրճ պատրաստելու համար աղացած սուրճ ու շաքար :

Ծերունիներն ու անկեալներն իրենց տրամադրութեան տակ ունին մատենադարան մը, և կրնան Հաստատութեան մատուռին ժամերգութիւններուն ներկայ գտնուիլ եւ պարտէզներու մէջ ժուռ գալ :

1906 Դեկտեմբեր 31ին կային 75 ծեր և անկեալ որոնց 38ը այր և 37ը կին կամ աղջիկ են :

Ե. ՈՐԲԱՆՈՑ.— Որբանոցը ընդ հսկողութեամբ ներքին տնօրէնութեան Տեսուչի մը ձեռքով կը կառավարուի : Հաստատութեան Որբանոցի սաներուն թիւն էր 1906 Դեկտեմբեր 31ին 291, որոնց 202ը մանչ և 89ը աղջիկ են : Աղջիկներուն հետ են 8 տարեկանէ պզտիկ մանչերը և Հաստատութեան մէկ յարկին մէջ կը գտնուին, իսկ 8 տարեկանէն վեր մանչերը մօտակայ Ս. Յակոբայ վանուց մէջ կ'անցնին :

Սանուց՝ շուրջ $\frac{3}{4}$ ը գաւառացի և $\frac{1}{4}$ ը Պոլսեցի են :
Որբանոցի ծրագիրը հիմնուած է Ուսումնական Խորհրդոյ կազմական Նախակրթարանի ծրագրին վրայ, Արհեստանոցի պահանջած փոփոխութիւններով :

Նախապատրաստական և տարրական շրջաններու աշակերտները օրը 4 ժամ դաս ունին :

Հինգ տարիէ ի վեր հաստատուած են կօշկակարութեան, դերձակութեան, կահագործութեան և թիթեղագործութեան արհեստանոցներ որոնց կը հետևին Միջին և Բարձրագոյն շրջաններու աշակերտները, օրուան կէսը ուսման և միւս կէսը արհեստի պարապելով :

Որբանոցը Տեսուչէն զատ ունի 12 մնայուն դաստիարակ և 4 այցելու ուսուցիչներ, վեց արհեստի ուսուցիչներ, մէկ ձեռագործի ուսուցչուհի և մէկ այցելու բժիշկ :

Որբանոցի պաշտօնէից և դպրոցական պիտոյից 1906 տարւոյն ծախուց գումարը եղած է 94,196 դրուշ :

Բ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵՐԸ

Ա. Դեղարան. — Հաստատութիւնս ունի դեղարան մը որ վերջին տարւոյն նորէն շինուեցաւ, և առատօրէն ճոխացաւ ու կազմակերպուեցաւ, և ուր կան 2 վկայուած վարպետ և 3 աշակերտներ :

Բ. Մումարան. — Հաստատութիւնս ի վաղուց անտի ունի իր մէջ Մումարան մը, ուր կը պատրաստուին Մայրաքաղաքիս եկեղեցիներուն և հարանիքներու մումերը : Հաստատութեանս Մումարանը Մայրաքաղաքիս նոյնատեսակ գործարաններու առաջինը կրնայ համարուիլ և ամէն կերպով կրնայ գերազանցել զանոնք : Մումարանը տարեկան գրէթէ 200 ոսկի շահ մը կուտայ Հաստատութեանս՝ 1906 տարւոյ մէջ հարսանեկան մումերէ գոյացած շահն է 8,676 դրուշ և պարզ մումերուն 15,488 դրուշ. իսկ ընդհ. ծախքերը զեղչելէ վերջ մնացած զուտ

շահը եղած է 18,365.75 դրուշ : Վերջին տարւոյս մէջ Հոգարարձութիւնը կարեւոր զեղչեր ըրաւ մոմերու գիներուն վրայ :

Գ. Հանդերձատուն. — Հաստատութիւնս ունի հանդերձատուն մը ուր կը պատրաստուին , կը պահուին ու կը նորոգուին Հաստատութեանս պատասպարեալներուն ճերմակեղէններն ու զգեստները , և ուր մասնաւոր քանակաւ ճերմակեղէն ու զգեստեղէն պատրաստ կը գըտնուին : Հանդերձատունը Խնամակալուհի Տիկնանց հսկողութեան ենթարկուած է և ունի մասնաւոր պաշտօնեայ մը : Հանդերձատան տարեկան սպառումն է իբր 1200 ոսկի :

Դ. Հականեխարան. — Սոյն յարկաբաժնին մէջ զետեղեալ հականեխիչ մեքենայով (Etuve) 15 օրն անգամ մը կը հականեխուին հիւանդաց ճերմակեղէններն , հագուստներն ու անկողինները : Մասնաւոր պաշտօնէի մը հսկողութեան տակ :

Ե. Լուացարան . — Գլխաւոր լուացարարուհւոյ մը յանձնուած է լուացարանը՝ ուր կ'աշխատին ամսակաւոր լուացարարուհիներէ զատ Անկեղանոցէն աշխատիչ կրցող կիներ : Ճերմակեղէնները մասնաւոր ջեռուցիչի մը միջոցաւ կ'եռացուին և հականեխիչ մեքենայով կը հականեխուին :

Զ. Բաղնիք. — Հաստատութիւնս Հիւանդանոցի յատուկ լոգարաններէն զատ ունի նաև արեւելեան բաղնիք մը , ուր կարգաւ կը լուացուին ծերերը , անկեալները , յիմարները , որբերն ու պաշտօնեաները :

է. Մառան եւ Մթերանոց. — Մասնաւոր պաշտօնեայի մը հսկողութեան յանձնուած են Հաստատութեանս մառանը , եւ փայտի , ածուխի ու քարիւղի մթերանոցները :

Մառանէն և մթերանոցէն որ և է պարէն կամ նիւթ դուրս չելլեր, առանց Տնօրէնութեան գրաւոր հրամանին:

Մննդեան համար տարեկան գրեթէ 5000 ոսկի կը ծախսուի: Լուսաւորութեան, ջեռուցման և մաքրութեան համար տարեկան սպառումն է գրեթէ 800 ոսկի:

Ը. Խոհանոց .— Խոհանոցը Հաստատութեանս ամէնէն աւելի վայելուչ, մաքուր ու լաւ կանոնաւորուած մասերէն մէկը կրնայ համարուիլ, ուր վերջին նոր կատարելագործութիւններ մուծուեցան: Խոհանոցը ունի վարպետ խոհարար մը և չորս օգնականներ:

Թ. Անասնաբան .— Անասնարանը երկու ուրոյն մասերէ կը բաղկանայ, 1. Գոմ՝ ուր կը գտնուին Հաստատութեանս կաթ մատակարարող կովերն ու իրենց հորթերը, 2. Ախոռ՝ ուր կը գտնուին Հաստատութեանս պիտոյից տեղափոխութեան յատկացուած ձիերը:

1906ի վերջը գոմը ունէր 10 կաթնատու կով, 5 յղի կով, 2 ցուլ, 9 արու և էգ հորթեր և 1 ոչխար. իսկ ախոռը՝ 3 ձի:

Վերջին տարւոյն մէջ 23,117 օխա կաթ առնուած է գոմէն և 4490 օխա ալ դուրսէն:

Ժ. Արհեստաբան .— Հաստատութեանս մէջ կը գտնուին արհեստաւորներ, — մեքենավար-թիթեղագործ, ատաղձագործ, դերձակ, մեքենավար, — որոնք միայն Հաստատութեանս ներքին պիտոյից և նորոգութեանց կը ծառային:

ԺԱ. Մասեցադարան .— Հաստատութիւնս ունի գլխաւոր մատենադարան մը և 4 մասնական մատենադարաններ, Բժշկական, Հիւանդանոցի, Ծերանոց-Անկեղանոցի և Որբանոցի, ընդամէնը գրեթէ 8300 կտոր գիրք պարունակող:

ԺԲ. Դիւան. — Հաստատութիւնս ունի դիւան մը ուր կը պահուին Հաստատութեանս տոմարներն ու թըղթեղէնները :

ԺԳ. Պարեկներ. — Արանց և կանանց կրկին Յիմարանոցները ունին մասնաւոր պարտէզներ, իսկ ապաքինած հիւանդները, ծերունիներն ու անկեալները կեդրոնական մեծ պարտէզին մէջ ժուռ կուգան : Վերջին տարւոյն մէջ մեծ պարտէզը որմնափակուեցաւ և կարգաւորուեցաւ, բանջարանոցներու յատուկ խնամ տարուեցաւ, արդէն գտնուած մեծ հոր մը մաքրուելով գործածելի վիճակի մէջ դրուեցաւ, և հասոյթները աւելցան :

ԺԴ. Եկեղեցի. — Հաստատութեանս շրջափակին մէջ կը գտնուի Ս. Փրկչի նորաշէն եւ գեղեցիկ եկեղեցին ուր ամէն օր ժամերգութիւն կ'ըլլայ ու Հոգաբարձութեան կողմէ ընդունուած Հոգեհանգստեան պատարագներ ու պաշտօններ կը կատարուին և որ ճոխացաւ Ս. Կենաց Փայտի մատուցով, եւ ամէն կիրակի խաչհանգիստ կը կատարուի : Եկեղեցին ունի մէկ եկեղեցական պաշտօնեայ և մէկ լուսարար : Ս. Յակոբայ Վանուց մէջ ալ կը գտնուի Ս. Յակոբայ մատուռը, և կը ծառայէ մանչերու Որբանոցին :

Գ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ, ՎԱԳՖՆԵՐԸ ԵՒ ԳՈՅՔԸ

Հաստատութիւնս 178 կտոր վազֆէ զատ ունի նաև 100է աւելի մեծ ու փոքր կալուածներ, գրեթէ 14,000 ոսկի արժողութեամբ. ասոնց տարեկան եկամուտն է իբր 750 ոսկի :

Հաստատութիւնս կ'ընդունի տարեկան 16 հաստատուն կտակէ 4738 դրուշ. և 2 կտակներու տրամադրութեան համաձայն կը վճարէ 1650 դրուշ :

Հաստատութիւնս ունի 192 հատ երկաթուղւոյ ար-
ժեթուղթ, 7 հատ Ռուսական պարտատոմս, 27 Քրէտի
Ֆոնսիէ էժիրսիէն, 10 հատ Իւնիֆիէ էժիրսիէն, 1 Պուլ-
կարական պարտաթուղթ, 1 վիլ տը Լիօն, 7 վիլ տը
Պրիւքսէլ, 49,776 ղրշ. արժէքով էմվալի իթամ և 160
հատ Օսմ. Գոնսուլիտէ միացեալ 265,617¹/₄ ղրշ. արժէքով
և 2 հատ 1889ի Բարիզի Արուեստահանդէսի տոմսակ :

Մասակարգութիւն 1906 թաւոյ

Z U S N Թ

Կալուածոց վարձքերէ զուտ հասոյթ	53,804.75
Խտիվեալ Բալասի վարձքերէ առնուած	64,800
Կանկառանոցին զուտ հասոյթը	4,176.75

Ապահովեալ եկամուս

Կայս . կառավարութենէ յատկաց- եալ հաց	162,762.25
Կայս . կառավարութենէ յատկաց- եալ միս	139,612.50
	<u>302,374.75</u>
Մալիյէէ յատկացեալ թոշակ	19,908
Ծխախոտի Բէժիէն յատկացեալ նպաստ	4,737
Արհեստ . վրժրն .ի խնամակալութենէ յատ- կացեալ տարեկան	64,800

Շարժուն եկամուս

Զանազան կտակարածիւններէ	4,684
Փոքր Օրացոյցի հասոյթ 55,192.25	
— 21,826 ծախքը =	33,366.25
Ընդրձ. Օրացոյցի հասոյթ 31,479.50	
— 20,744.25 ծախքը =	10,735.25
	<u>44,101.50</u>
	563,386.75

	563,386.75
Սիկառի թուղթի հասոյթ	43,755
Լուցկիի հասոյթ	1,200
Մումատան զուտ շահը	18,365.75
Անցագրատան հասոյթ	6,233
Նշանտուռութ. »	8,870
ՎազՖի »	8,475.25
Արժ. կտրոն և իթամի տոկոս	10,254
Տոկոսներ	13,546

Այլեւայլք

Անասնարանէ գոյացեալ շահ	11,466.25
Դրամական շահ	3,544.50

Զանազան հաս

Դրամական նուէրք	113,620.75
Նիւթական նուէրք	76,157.50
Հանգանակութիւնք	20,423
Բաժանորդագրութիւն	320
Գանձանակի հասոյթ	18,052.50
Պնակաց հասոյթ	24,583.25
Նուէրք փոխան այցելութեանց	11,475
» » ծաղկէպսակի	59,602.50
» » ծաղկէփուռնջի	9,830
Նուագահանդէսի զուտ հասոյթը	100,610.50

Ներքին հասոյթք

Պէյթիւլմալի հասոյթ	3,840
Ս. Փ. բանկալի հասոյթ	648.50
Թաղման նուէրք	4,020.50
	<hr/>
	1,132,280.50

	1,132,280.50
Ննջեցելոց աւանդներէ	8,842
Պատասպարելոց թոշակներէ	136,671.50
Մտից տուրք	17,356
Յկեանս մտից տուրք	4,248
Զանազան հասոյթք	6,197
	<u>1,305,595</u>

Մ Ա Խ Ք

Ուտեստ		487,952
Հանդերձեղէնք		121,829.50
Կարասիք		11,608.75
Վառելանիւթի, լուսաւորութեան նիւթեր և մաքրութիւն		86,828.75
Դեղ և վիրաբուժ. պիտոյք		35,397
Որրանոցի ամսականք և դպրոցական պիտոյք		
87,220 + 6,976 =		94,196
Պաշտօնէից ընդհ. ամսականք		303,419
Նորոգութիւնք Հիւանդանոցի	27,837	
» Ս. Յակոբայ	<u>6,098.25</u>	33,935.25
Զանազան ծախք		52,495.50
Դիւանական ծախք		9,350.25
Ապահովադր. Հիւանդանոցին և կարասեաց		5,083.25
Յատկացեալ ամսականք		13,817.50
Տոկոսներ		6,105.75
Զէն և շահ		3,895.25
		<u>1,265,916.75</u>
Հասոյթից առաւելութիւն		39,678.25
		<u>1,305,595</u>



ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՐՏԱԹՈՒՂԹԵՐ

Ե Ի

ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐ

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՁ

ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԸ, ԱՐԺԷՔԸ ԵՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Օսմանեան պարտաթուղթերու և արժեթուղթերու ծագման և արդի վիճակին վրայ, լրագրական պարբերական հրատարակութիւններէն զատ, ամիտի տեսութիւն մը չէ գրուած, աչքի առջև պատկերացնելու համար անոնց արդի վիճակը, մանաւանդ իւրաքանչիւրին ինչ պայմաններու մէջ հրապարակ հանուած ըլլալը, որպէս զի իւրաքանչիւր ոք երբ որ և է արժեթուղթ կամ պարտաթուղթ կը գնէ, գիտակցութիւն ունենայ անոր իսկական արժէքին վրայ, եւ ոչ թէ հրապուրուի տարեկան տոկոսի մը շահով, որ կրնայ շատ վաղանցիկ բան մը ըլլալ և մեծ վնասներու պատճառ դառնալ: Անոնք որ ժամանակին պարտաթուղթերէ ու արժեթուղթերէ մեծ վնասներ կրած են, ճիշդ այդ ուղղութեամբ առաջնորդուած են: Իրենց ձեռքը գտնուած թուղթին ինչ կերպով ապահովուած ըլլալու պարագան առանց միտք բերելու, միայն տոկոսի շահէն խաբուած,

կալուածներ, արժէքաւոր ինչքեր ծախելով արժեթուղթ գնողները շուտով յուսախաբ կ'ըլլան: Ճիշդ այս նկատումով կը պատրաստենք հետեւեալ աշխատութիւնը տարեցոյցին համար, որ առօրեայ թերթէ կը տարբերի մանաւանդ անով որ սահմանուած է ամբողջ տարի մը աչքի առջեւ գտնուելու ու անկէ վերջն ալ թանգարաններու մէջ մնալու:

Ղալաթիոյ սակարանին մէջ ընդունուած Օսմանեան թուղթերու մէջ առաջին և կարեւոր տեղը կը գրաւէ Իիւնիֆիէն որ չորս տարի առաջ ծանօթ էր Գօնասօլիտ անուանով: Այս թուղթը որ 1903 սեպտեմբերի սկիզբը հրատարակուած ֆէրմանով, զանազան կարգերէ Գօնասօլիտներու միացմամբ մէկ արժեթուղթի վերածուելովը կազմուած է, եւրոպական սեղանաւորական հրապարակներու մէջ իսկ մեծ յարգ ունի իր ներշնչած ապահովութեամբ և այն շահաւէտ պայմաններուն համար, որոնք հրատարակուեցան Հանրային Պարտուց Վարչութեան մասնաւոր տեղեկագիրներով:

Եւրոպական մեծ պետութիւններ ալ գանձային այլ և այլ փոխառութիւններու համար պարտաթուղթեր հրապարակ հանած են: Օսմանեան պետութիւնն ալ զանազան առիթներու մէջ փոխառութիւններ կնքած էր, որոնք պետական այլ և այլ հասոյթներով երաշխաւորուած էին: Մասնաւորապէս 1862 թուականին երբ թղթադրամը դադրեցաւ շրջաբերութենէ, 100նոց թղթադրամին փոխարէն տրուեցաւ 40 դշ.ի հնչուն դրամ (ոսկին 100 դշ.էն) և 60 դշ.ի ջաւաւեկն ճեփե արժեթուղթ 100ին 6 տոկոսով: Օսմանեան Գօնասօլիտի սկզբնաւորութեան պատճառներէն մէկն ալ այս եղաւ: 1875 թուականին, Օսմանեան կառավարութիւնը ծանոյց թէ պետական պարտքի տոկոսը և գլխավճարը 100ին 50ի զեղչուած է և մնացեալ 50ը պիտի վճարուի 5% տոկոսաբեր նոր:

արժեթուղթերով : Այս թուականէն վերջ պետական տար-
քեր կարգադրութիւններ եղան այս արժեթուղթերու հա-
մար մինչեւ 1879 թուականը, երբ այս փոխառութեանց
փոխարինութիւն ցոյց տրուեցաւ վեց անուղղակի տուր-
քերը և այս ձեռնարկը որ հիմ կազմեց ապագայ Հան-
րային Պարտուց Վարչութեան, հաստատուն ձեւի մը ներ-
քեւ առնուեցաւ 1881ին, երբ Բ. Դուռը Օսմանեան պար-
տաթուղթ ունեցողներու հետ բանակցութեամբ կարգա-
դրութեան մը յանգեցաւ որ 1881 Դեկտեմբեր 8/20ի
կայսերական ֆէրմանով հաստատուեցաւ : Այդ թուակա-
նին Օսմանեան հանրային պարտքը (ի բաց առեալ Եգիպ-
տոսի տուրքով դիմաւորուած փոխառութիւնը) հետեւեալ
վիճակը կը ներկայացնէր .

Փոխառութիւն	Օսմանեան ոսկի
1858	4,053,225
1860	1,819,433
1862	5,499,615
1863-64	5,707,625
1865	4,508,350
1869	22,715,000
1872	5,302,220
1873	29,916,414
Հնդհանուր պարտք	95,917,096
Բում. Երկաթուղւոյ պարտաթուղթ	34,658,800
	<hr/>
	210,097,778
Յետեւալ տոկոսներ	67,984,395
	<hr/>
	278,082,073

Վերոյիշեալ 1881 դեկտեմբեր 8ի հրամանագիրը (Մու-
հարրէմի ֆէրման անունով ծանօթ) այս հանրային պարտ-
քը զեղչած էր 117,080.957 ոսկւոյ յետագայ չորս բա-
ժանումներով .

		<i>Օւրնանեան ոսկի</i>
Բաժանում A	1858ի փոխառութիւն	3,789,848
	1862ի »	4,112,411
		<u>7,902,259</u>
Բաժանում B	1860ի »	1,148,621
	1863-64ի »	4,371,050
	1872ի »	5,745,482
		<u>11,265,153</u>
Բաժանում C	1865ի »	3,212,784
	1869ի »	14,174,160
	1873ի »	16,528,818
		<u>33,915,762</u>
Բաժանում D	Ընդհանուր պարտք	48,365,235
	Բում. Երկաթուղի	15,632,548
		<u>63,997,783</u>

Այս չորս բաժանման ընդհանուր գումարն է 117 միլիոն 80,957 ոսկի, որմէ 945,894 ոսկի զեղչուեցաւ նոյն թուղթերուն մէկ մասին որոշեալ պայմանաժամու մէջ արձանագրուելու համար չներկայացուելուն պատճառաւ, հետեւապար վերոգրեալ գումարները ճշտուեցան հետեւեալ կերպով.

		<i>Օւրնանեան ոսկի</i>
Բաժանում A		7,831,869
» B		11,049,308
» C		33,604,176
» D		48,017,162
Բում. Երկաթուղի		15,632,548
		<u>116,135,063</u>

Օսմանեան կառավարութիւնը պարտքին տոկոսին և

գլխավճարին համար յատկացուց ընդհանուր կայսրութեան աղի և ծխախոտի մենաշնորհը, ոգելից ըմպելեաց տուրքը, մէկ քանի շրջանակներու ձկնորսութեան տուրքը, ինչպէս նաեւ մետաքսի տասանորդը, դրոշմաթուղթի հասոյթը, Պուլկարական իշխանապետութենէն ծխախոտի տասանորդէն գանձելի 100,000 ոսկի տարեկան գումարը, Կիպրոսի մաքսային հասոյթով երաշխաւորեալ կղզիին յաւելեալ հասոյթը, Արեւելեան Բուժելիի ամսավճարը, մաքսատան հասոյթէն վճարելի թէմպէքի տուրքը (մինչեւ 50,000 ոսկի), և կարգ մը ուրիշ այնպիսի փոխարինութիւններ, որոնցմէ ո և է գումար չէ իրականացած : Գոյացած հասոյթները կը մատակարարուին Օսմանեան Հանրային Պարտուց Վարչութեան միջոցով, որուն կը մասնակցին Ֆրանսացի, Անգլիացի, Գերման, Աւստրիացի, Իտալացի և Թուրք պատուիրակներ և Բրիտորիթէ արժեթուղթերու ներկայացուցիչ մը : Կայսերական կառավարութիւնը 1903 Սեպտեմբերի սկիզբը Օսմանեան արժեթուղթերու օտար պատուիրակներու հետ գոյացուցած համաձայնութեամբ, միացուց B, C և D սէրիները (A սէրին սպառած ըլլալով) և բարեփոխեց երկաթուղւոյ արժեթուղթին համար գործադրուած եղանակը : Հետեւաբար այս երեք սէրիներու միացմամբ 1,488,126 պարտաթուղթ հրապարակ հանուած է իւրաքանչիւրը 22 ոսկիի (կամ 500 ֆր. կամ 20 անգղ. ոսկիի) որ կը ներկայացընէ 32,738,772 Օսմ. ոսկիի գումար մը :

Նոր պարտաթուղթերը ունին 100ին 4 տարեկան տուկոս մը, վճարելի կէսը Մարտ 1/14ին և կէսը 1/14 Սեպտեմբերին և տարեկան 100ին 0.45 գլխավճար մը : Այս գլխավճարը պիտի հատուցուի, և Արժեթուղթ գնելով՝ եթէ անուանական գինէն աւելի վար է օրուան գինը : Բ. Վիճակահանութեամբ՝ եթէ օրուան գինը անուանական գինէն աւելի բարձր է : Հին պարտաթուղթերուն՝ նորերու

հետ փոխանակութիւնը հետեւեալ համեմատութեամբ տեղի ունեցած է :

Սերի	Հին պարսաքուղք	Իւնիֆիկ պարսաքուղք
B	100	70
C	100	42
D	100	37 $\frac{1}{2}$

Բուժելի երկաթուղւոյ արժեթուղթերուն գալով, տարեկան 270,000 Օսմ. ոսկի յատկացուած է որով 100ին 100 համեմատութեամբ պիտի վճարուին պարզեւ շահող թիւերը, իսկ 100ին 60 (այսինքն 240 Ֆր.) պիտի վճարուի աւօրթի ելլող թիւերուն : Այս գործողութեան համար յատկացուած տարեկան գումարին աւելորդը պիտի գործածուի նոր արժեթուղթ գնելու : Ասկէ զատ իւրաքանչիւր արժեթուղթի կցուած կտրոններու ամբողջութեան համար ալ 2 Ֆր. վճարուելով, վերջնականապէս տակոսները ջնջուած են :

Հանրային Պարտուց Վարչութեան թողեալ հասոյթներու ընդհ. գումարը հետեւեալ կերպով պիտի բաժնուի .

	Օսմ. ոսկի
Տարեվճար Բրիօրիթէ	430,500
» Իւնիֆիէ պարտաթուղթերու	1,456,875
» Երկաթուղւոյ	270,000
	<hr/>
	2,157,375

Այս ընդհանուր գումարին աւելորդը 75 $\frac{0}{10}$ կայս. կառավարութեան և 25 $\frac{0}{10}$ պարտաթուղթ ունեցողներուն պիտի յատկացուի (60 $\frac{0}{10}$ Իւնիֆիէի և 40 $\frac{0}{10}$ երկաթուղւոյ համար) և այս գումարը պիտի գործածուի Իւնիֆիէի գլխավճարին և Երկաթուղւոյ պարտաթուղթերուն գնման մինչեւ 240 Ֆր. : Այս գնէն վեր եղած ատեն միայն վիճակահանութեամբ պիտի ջնջուի :

Ահաւասիկ Իւնիֆիէ արժեթուղթին սկզբնական և

վերջնական վիճակը, որուն ներշնչած ապահովութիւնը առիթ եղած է որ բաւական կարեւոր բարձրացում մը ունենայ անուանական գինին մօտենալու չափ: Տարակոյս չկայ որ Օսմանեան այս արժեթուղիքը յաջորդական բարձրացումներով կարեւոր տեղ մը պիտի գրաւէ օտար պարտաթուղիներու մէջ:

Այսօրուան գինն է Պօլսոյ սակարանին մէջ 99 $\frac{1}{2}$:

ԵՐԿԱԹՈՒՂԻ.— Երկաթուղին՝ Օսմանեան պետութեան մէկ արժեթուղիքն է առանց որ եւ է յարաբերութիւն ունենալու արեւելեան երկաթուղւոյ հետ, որուն շահագործման ընկերութիւնը առանձին մարմին մըն է և առանձին բաժնեթուղիքեր հանած է: Երկաթուղւոյ պարտաթուղիքերը հրապարակ հանուած են ժամանակին, պետական գանձաւն երկաթուղւոյ վրայ ունեցած մէկ գործողութեան հետեւանքով, և այդ պատճառաւ երկաթուղի յորջորջուած են այդ թուղիքերը, զանազանուելու համար ուրիշ պետական փոխառութեան թուղիքէն:

Այս պարտաթուղիքերուն փոխարինութեան և ջնջման մասին խօսեցանք քիչ մը վերը, քանի որ Հանր. Պարտուց Վարչութիւնը ստանձնած է պարգեւներուն և գըլխամասին վճարումը: Այս պարտաթուղիքը վերջին միացման կարգադրութեամբ 150 ֆր.էն աւելի կ'արժէ մինչ 1903էն առաջ՝ 120-125է աւելի չէր բարձրացած և հաշուելով այսօր պարգեւներու յատկացեալ գումարը, կը տեսնենք որ առանց 2 $\frac{1}{2}$ -3 տոկոսի մը, ինչ որ կը վճարեն 100-150 ֆր. արժէք ունեցող օտար պարգեւաւոր բաժնեթուղիքի նմանք, երկաթուղւոյ պարտաթուղիքերը դարձեալ ամէնէն նպաստաւոր պայմանները կը ներկայացնեն երկու ամիսը անգամ մը իրենց վիճակահանութիւններով, որոնք հետեւեալ կերպով տեղի կ'ունենան: Մինչեւ 1910 Ապրիլ, Օգոստոս և Իեկտեմբերի վիճակահա-

նութիւններէ 1 թիւ 600,000 Ֆր., 1 թիւ 60,000, 2 թիւ 20,000ական, 6 թիւ 6000ական, 12 թիւ 3000ական, 28 թիւ 1000ական, գումար 800,000 Ֆրգ. պիտի ստանան: Մինչեւ նոյն թուականը Փետրվար, Յունիս և Հոկտեմբերի վիճակահանութիւններուն 1 թիւ 300,000, 1 թիւ 25,000, 2 թիւ 10,000ական, 6 թիւ 2000ական, 12 թիւ 1250ական, 28 թիւ 1000ական, գումար 400,000 Ֆր., իսկ 1910էն մինչեւ 1974 այս պարգեւներու յատկացուած գումարները պիտի նուազին հետեւեալ համեմատութեամբ:

Ապրիլ, Օգոստոս և Դեկտեմբերի վիճակահանութիւններուն համար, 1 թիւ 400,000 Ֆր., 1 թիւ 30,000ական, 2 թիւ 10,000ական, 6 թիւ 2500ական, 12 թիւ 2000ական, 28 թիւ 1000ական, գումար 517,000 Ֆր.: Փետրվար, Յունիս և Հոկտեմբերի վիճակահանութիւններուն 1 թիւ 200,000 Ֆր., 2 թիւ 4000ական, 12 թիւ 1250ական, 35 թիւ 1000ական, գումար 258,000 Ֆր.: Միեւնոյն ատեն պիտի աւելնան սակայն անօրթի եղող թիւերը: Այս ամէն պայմաններուն մէջ իր գինին համեմատութեամբ երկաթուղւոյ պարսաթուղթը Օսմանեան հաստատուն թուղթերէն է և կարեւոր յարգ ունի օտար սակարաններու և սեղանաւորական հրապարակներու մէջ: Օրուան գինն է 158 Ֆր.:

Սակարանական այս երկու կարեւոր թուղթերու վրայ պէտք եղած անդեկուիւնը հաղորդելէ յետոյ, կարգը կուգայ դրամատուներու, երկաթուղւոյ արժեթուղթերու և ուրիշ գլխաւոր թուղթերու որոնք շրջաբերութեան մէջ կը գտնուին սակարանին մէջ:

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՆՔԱՅԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐԸ. — Այս սեղանաւորական հաստատութիւնը հիմնուած է վեհ. կայսեր 1863 Փետրվար 4ի Ֆէրմանին տրամադրութեան հա-

մաճայն, Անգլիացի և Ֆրանսացի սեղանաւորական խրմբակէ մը և իրաւունք ստացած է իր ունեցած պահեստի մետաղադրամին մէկ երրորդին համեմատութեամբ պանքսոմս շրջաբերութեան հանելու: Պետական ամէն կարգի փոխառութեան առթիւ ուրիշ օտար դրամատուներու վրայ առաջնութիւն ունի, և մասնաճիւղեր կրնայ ունենալ երկրին այլեւայլ կողմերը: Կայսերական կառավարութիւնը այս դրամատան արտօնութեան տեւողութեան միջոցին միեւնոյն իրաւունքը չպիտի տայ ուրիշ հաստատութիւններու: Օսմանեան Պանքան պետութեան հաշւոյն վճարումներ և գանձումներ ընելու իրաւունքն ալ ունի իբրեւ պետական դրամատուն և իր կատարած այս կարգի գործողութիւններէն զատ առեւտրական-դրամատան գործեր ալ կը կատարէ: Օսմանեան դրամատան կեդրոնն է Պոլիս և ունի երկու գլխաւոր մասնաճիւղեր մէկը Լոնտոն և միւսը Բարիզ: Օսմանեան Պանքայի արտօնութեան տեւողութիւնը որ 1863ի Փէրմանին արամադրութեան համեմատ 30 տարի էր, 1874ի Փէրմանին համեմատ 50 տարւոյ վերածուեցաւ և 1895 Հոկտեմբերին՝ 12 տարի եւս երկարեցաւ, այսինքն մինչև 1925: Օսմանեան Պանքայի դրամագլուխը ի սկզբան 67¹/₂ միլիոն ֆրանգ որոշեալ էր, որուն կէսը միայն ստացուած էր բաժնետէրերէ: 1865ին բաժնետէրերու խրատաքոյ կարգի ժողովի մը մէջ, դարձեալ կէսը ստանալու պայմանաւ այս գումարը վերածուեցաւ 101,250,000 ֆր.ի: 1875ին Օսմանեան Պանքայի, Աւստրիական-Օսմանեան դրամատան հետ միութենէն վերջ, դրամագլուխը վերածուեցաւ 10 միլիոն Անգլիական ոսկւոյ կամ 250 միլիոն ֆրանգի՝ բաժնուած 500,000 բաժնեթուղթի իւրաքանչիւրը 500 ֆր. որուն կէսը վճարուած է: Տարեկան զուտ շահէն՝ բաժնետէրերուն վճարած գումարին վրայ 100ին 5 շահարածին վճարելու համար հարկ եղած գումարը որոշելէ յետոյ,

իրրեւ պահեատի գումար 100ին 10 կամ որ և է գումար , որ կ'որոշէ բաժնետէրերու ընդհանուր ժողովը վարչական ժողովոյ առաջարկութեան համեմատ : Ասոնցմէ զատ մնացեալ գումարէն 100ին 90 բաժնետէրերու իրրեւ շահարաժին (dividende) կը ստուի 100ին 5 վարչական ժողովոյ և 100ին 5 հիմնադիրներու : Օսմանեան Պանքայի բաժնեթուղթերը իր հաստատութեան թուականէն ի վեր ունեցած է ելեւէջներ , այսօր կ'արժէ 682 Քր. :

Բէժի .— 1884 թուականին Օսմանեան Պանքայի և սեղանաւորական օտար խմբակներու միջոցաւ հաստատեալ Օսմանեան անանուէն ընկերութիւն մըն է , որ նպատակ ունի թուրքիոյ ծխախոտի արտօնութիւնը շահագործել : Այս արտօնութիւնը Մուհարրէմի Ֆէրմանով նախապէս Հանրային Պարտուց Վարչութեան տրուած ըլլալով , արտօնութեան Անանուն լ'նկերութեան փոխանցման համար Հանրային Պարտուց Վարչութիւնն ալ իր հաւանութիւնը տուած է : Արտօնութեան տեւողութիւնը 30 տարի է և կը լրանայ 1914ին : Լ'նկերութիւնը՝ Հանրային Պարտուց Վարչութեան կը ստանձնէ վճարել տարին 750,000 ոսկի , նոյն իսկ եթէ տարեկան հասոյթները նպաստաւոր չըլլան այս վճարման : Տարեկան ընդհանուր հասոյթին վրայ վերոյիշեալ տարեւորութիւնը և վարչութեան բոլոր ծախքերը վեղչուելէ յետոյ , եթէ դրամագլուխը 50 միլեօն Քր. է աւելի վար է 100ին 8 շահարաժին և այդ գումարը գերազանցած պարագային 100ին 7 կ'որոշուի : Մնացորդէն 100ին 5 հիմնադիրներու՝ մինչև 2 միլիոն ոսկի , 2էն 3 միլիոն ոսկի եղած ասուն՝ 100ին 3 և ասկէ վեր գումարի համար 100ին 2 : Այս գումարին մնացածը պիտի բաժնուի Բէժի , Հանրային Պարտուց Վարչութեան և Կայսերական կառավարութեան միջեւ հետեւեալ համեմատութեամբ .

Հասոյթ	Հանր. Պարտուց հատիւրին	Կառավարութեան հատիւրին	Րեժիի հատիւրին
1էն 500,000 սոկի	35	30	35
500,000էն 1 միլիոն սոկի	34	39	27
1 միլիոնէն 1½, միլիոն սոկի	30	52	18
1½ միլիոնէն 2 միլիոն սոկի	20	70	10
2 միլիոնէն աւելին համար	15	75	10

Եթէ մէկ տարւոյ հասոյթը անբաւական ըլլայ 100ին 8 վերոյիշեալ գումարը սահմանելու, պակասածը կը ստացուի յաջորդ տարւոյ արդիւնքէն շահակիցներու և հիմնադիրներու բաժինները որոշուելէ առաջ :

Րէժիի դրամագլուխը որոշուած է 100 միլիոն Ֆր. 200,000 բաժնեթուղթերով, իւրաքանչիւրը 500 Ֆրանգ որուն կէսը՝ 250 Ֆր.ը գանձուած է նախապէս : Առաջին երեք տարիները վնասով փակուած են : 1889 նոյեմբեր 28ին գումարուած արտաքոյ կարգի բաժնետէրերու ժողովը, այս բացը գոցելու համար որոշած է ստորագրուած դրամագլուխը 50էն 40 միլիոնի զեղչել, իւրաքանչիւր բաժնեթուղթի վրայ գանձելով 250ի տեղ 200 Ֆր. : Այս զեղչը կը ծառայէ միանգամայն կազմելու պահեստի գումար մը որ պիտի դիմաւորէ ընկերութեան հասոյթներու մէջ պատահելիք բացառիկ նուազութիւնը : Զուտ հասոյթէն կ'որոշուի պէտք եղած գումարը 100ին 6 վճարելու համար բաժնետէրերու վճարած գումարին վրայ իբրեւ մասնավճար շահաբաժնի : 100ին 5ը իբրեւ պահեստի գումար և կամ աւելի կարեւոր նպատակի մը համար որուն յատկացուցած է բաժնետէրերու ժողովը և ասոնց վճարումէն յետոյ մնացորդէն 100ին 5 վարչական խորհրդոյ և 100ին 95 բաժնետէրերու իբրեւ յաւելուածական շահաբաժին : Բաժնետէրերու ժողովը որ վարչական խորհուրդի առաջարկութեան վրայ, պահեստի գումարին կազմութեան համար պէտք եղած չափով կ'աւելցնէ ընդ-

հանուր հասոյթէն ստացուելիք գումարը, իրաւունք ունի միեւնոյն համեմատութեան պակսեցնելու կամ բոլորովին դադրեցնելու մինչեւ որ հաւաքուած գումարը հաւասարի վճարուած դրամագլուխին մէկ քառորդին : Վերջին 10 տարիներու միջոցին բաժնեթուղթերու գինը 480է (1895ին) մինչեւ 284ի (1898) միջեւ տարուբերած է, այժմ կ'արժէ 430 ֆրանգ :

ԱՆԱՏՕԼՈՒԻ ՕՍՄ. ԵՐԿԱԹՈՒՂԻ.—Նիկոմիդիայէ մինչեւ Էնկիւրի (486 քիլօմէթր) երկաթուղւոյ մը գծին շինութեան համար 1889 Մարտ 4 թուականով անանուն ընկերութիւն մը կազմուեցաւ, 99 տարի պայմանաժամով : Պէրլինի Տէօյչպանքի անունով արտօնութիւնը տրուեցաւ Պ. Ալֆրէտ Գօլաի 4 Հոկտեմբեր 1888 թուակիր ֆէրմանով : Կառավարութիւնը նոյն ընկերութեան թողուց Հայտար-Բաշայէ Իզմիտ երկարող 92 քիլօմէթր գիծը, իր բոլոր կազմածներով և գործիքներով ի փոխարէն 6 միլիոն ֆր.ի գումարի մը : Կայսերական կառավարութիւնը ընկերութեան ապահոված է Հայտար-Բաշա-Իզմիտի գծին համար 10,300ֆր.ի քիլօմէթրական երաշխաւորութեան գումար մը, իսկ Նիկոմիդիոյ Էնկիւրիի գծին համար 15,000 ֆր. : Երաշխաւորութեան գումարը ապահովուած է Նիկոմիդիոյ, Էրթօղրուլի և Քէօթահիոյ կառավարչութեանց և Էնկիւրիի կուսակալութեան հասոյթներով : Հասոյթներուն գանձումը յանձնուած է Հանրային Պարտուց Վարչութեան : 1893 փետրվար 15ին Պ. Գոլա Կայսերական կառավարութենէն ստացաւ նաեւ արտօնութիւնը երկու կարեւոր գիծերու շինութեան՝ մէկը Էնկիւրիէն Կեսարիա և միւսը Էսկիշէհիրէ Գօնիա, որոնց առաջինը յետաձգուեցաւ և երկրորդին շինութիւնը գլուխու կաւ : 1898ին ընկերութիւնը արտօնութիւն ստացաւ նաեւ նոր գիծ մը շինելու Ատարազարի կայարանէն մինչեւ քաղաք 9 քի-

լօմէթր երկայնութեամբ: 1902 թուականին մինչեւ Պաղտատա նոր գիծի մը շինութեան արտօնութիւնը արուելուն առթիւ, ընկերութիւնը ստանձնեց մինչեւ Գօնիա իր ունեցած գծին վրայ կարգ մը բարեփոխութիւններ գործադրել, ճեպընթաց երթեւեկ հաստատել ևն., որոնց համար 8 միլիոն ֆր.ի ծախս մը կ'ենթադրուի: Ընկերութեան ենթարկուելիք այս ծախքերուն փոխարէն կայս. կառավարութիւնը պիտի վճարէ 1. — Տարեկան 350,000 ֆր. մինչև 30 տարի՝ 8 միլիոն ֆր.ի տոկոսին և գլխավճարին համար: Այս գումարը պիտի սկսի վճարուիլ, երբ բարեկարգական տնօրինութիւնները սկսին գործադրուիլ: 2. — Տարեկան 350,000 ֆր.ի գումար մը ևս ճեպընթաց կառախումբերու հաստատութեան համար, որ պիտի սկսի վճարուիլ երբ Պաղտատաի գիծը հասնի Հալէպ:

Էսկիշէհիր-Գօնիայի գիծին երաշխաւորութեան դումարը ապահովուած է Տրապիզոնի և Կիւմիւշխանէի տասանորդի հասոյթներով, որոնց գանձումը յանձնուած է Հանրային Պարտուց Վարչութեան: Ընկերութեան շահագործած գիծերը հետևեալներն է.

Հայտար-Բաշա-Իզմիտ	92	քիլօմէթր
Իզմիտ-Էնկիւրի	486	»
Էսկիշէհիր-Գօնեա	445	»
Համիտիյէ-Ատարազար	9	»
	1,032	»

Ընկերութեան դրամագլուխը կը կազմէ 60 միլիոն ֆր. 90,000 բաժնեկիւղթի բաժնուած 1 սէրիէն և 30,000 բաժնեկիւղթ 2 սէրիէն, իւրաքանչիւրը 500 ֆր.ի որուն 100ին 60ը՝ 300 ֆր. գանձուած է: Երկու սէրիներն ալ միեւնոյն իրաւունքը ունին: Բաժնետէրերը կրնան իրենց ունեցած բաժնեկիւղթին փոխարէնը ամբողջովին վճարել՝ 100ին 40 տարբերութեան հետ, հասուցանելով նաև

անցած ժամանակին համար 100ին 5 համեմատութեամբ տոկոս մը :

Ընկերութիւնը նոյնպէս շրջաբերութեան հանած է 1 սէրիէն 160,000 պարտաթուղթ , ինչպէս նաեւ 2 սէրիէն 160,000 պարտաթուղթ իւրաքանչիւրը 500 Ֆր. այսինքն ընդ ամէնը 160 միլիոն Ֆր. : Այս պարտաթուղթերու առաջին սէրին յատկացուած է Իզմիտ-Էնկիւրի գծին և Երկրորդ սէրին Էսկիշէհիր-Գօնեա գծին շինութեան : Պարտաթուղթերը տարեկան 100ին 5 տոկոս ունին և կը վճարուին Ապրիլի և Հոկտեմբերի սկիզբները կէս առ կէս : Այս պարտաթուղթերը 99 տարուան մէջ ամբողջովին պիտի հատուցուի վիճակահանութեամբ : Երկու սէրիներու մէջ որ և է տարբերութիւն չկայ :

Տարեկան զուտ հասոյթին 100ին 5ը պահեստի գումարին յատկացուելէ յետոյ , բաժնեթուղթերու ալ 100ին 5 տոկոս վճարուելու համար պէտք եղած գումարը կ'որոշուի և մնացորդէն 100ին 5 վարչական խորհրդոյ և 100ին 95 իբրև շահաբաժին՝ բաժնետէրերու կը տրուի : Բաժնետէրերու ժողովը կրնայ ամէն տարի , զուտ հասոյթին վրայէն զատել պէտք եղած գումարը , ջնջելու համար որոշեալ թուով բաժնեթուղթեր վիճակահանութեան միջոցով : Ջնջուած բաժնեթուղթերը շահաբաժին կրնան ըստանալ , սակայն տոկոսի իրաւունք չունին :

Անատոլոյի երկաթուղւոյ պարտաթուղթերու գիները վերջին 12 տարուան մէջ զգալի կերպով բարձրացած են ամէն տարի : 1895ին 85.60 (⁰/₀) 96ին 83.25 , իսկ 1897ին 94.25 ու հետզհետէ մինչև այս տարի 101 , իսկ բաժնեթուղթերը 1900էն ի վեր միեւնոյն համեմատութեամբ բարձրացած են : Նոյն տարին 9.32էն մինչև 8.15 Անգլոսկի անկում մը ունենալէ յետոյ աստիճանաբար բարձրացած է ամէն տարի : Այդի գինն է 16 անգլիական սակի :

ԻԶՄԻՐ-ԳԱՍԱՊԱ ԵՐԿԱԹՈՒՂԻ .—Այս երկաթուղւոց շինութեան արտօնութիւնը 1863 թուականին տրուած է 9. Էտուարտ Բրայսի, որ փոխանցեց անգլիական ընկերութեան մը: Գծին երկայնութիւնն է 93 քիլօմէթր և սկսած է շահագործման 1866ին: 1885ին ընկերութիւնը կայսերական կառավարութեան ըրած փոխատուութեան փոխարէն, իրաւունք ստացած է գիծը երկարաձգելու մինչև Ալաշէհիր և ընդհանուր հասոյթին 100ին 50ը յատկացնելու շահագործման ծախուց, իսկ միւս կէսը այդ փոխատուութեան վճարման և տոկոսին: Վերջապէս 1888ին, ընկերութիւնը ի հաշիւ կառավարութեան 125,000 Ֆրանգ ծախսելով իւրաքանչիւր քիլօմէթրին, շինած է Մաղնիսա-Սօմաի ճիւղը (92 քիլօմէթր) որ կը շահագործուի հասոյթին 100ին 50ը յատկացուելով շահագործման ծախքերուն, իսկ միւս 100ին 50ը յատկացուած է շինութեան դրամագլխին 100ին 6 տոկոսին և 1 գլխավճարին: 1893ին կայսերական կառավարութիւնը գործադրելով նոյն գիծը գնելու իրաւունքը, նոյն տարին հրատարակուած կայսերական ֆէրման մը, 99 տարի տեւողութեամբ Պ. Նակէլմաքէրսի կը շնորհէ Իզմիր-Գասապա-Ալաշէհիրի գծին շահագործումը, անոր ձգելով հասոյթին 100ին 50ը շահագործման ծախուց համար: Մնացեալ 100ին 50ը պիտի յատկանայ բաժնեթուղթերով կնքուելիք փոխատուութեան մը, որ պիտի յատկացուի վճարելու կառավարութեան ունեցած պարտքերը հին ընկերութեան, որուն միջերանոցները և գործիքները եւն. պիտի վերադնուին այս առթիւ: Անգլիական ընկերութեան վճարելի գումարն է 35,850,000 Ֆր. կամ 1,434,400 Անգլ. ոսկի, սակայն վերոյիշեալ արժեթուղթերը, որոնք պիտի ծառայեն այս գումարին վճարման, տարին կը յանգին 2,310,000 Ֆր.ի: Կառավարութիւնը կը ստանձնէ լրացնել այս գումարներու տարբերութիւնը, և ասոր պիտի յատկացուի հասոյթին

կէսը : Նոյն կայսերական ֆէրմանով Պ. Նակէլմաքէրս արտօնութիւն կը ստանայ 99 տարւոյ պայմանաժամով, Ալաշէհիրի գիծը մինչեւ Ա.Ֆիօն-Գարա-Հիսար երկարելու համար (251 քիլօմէթր) 830.76 ոսկի քիլօմէթրական երաշխաւորութեամբ : Այս երաշխաւորութեան գումարին փոխարէն յատկացուցած է կայսերական կառավարութիւնը, Այարնի, Իզմիրի և Սարուխանի սանձագներու տասանորդի հասոյթը, որուն գանձումը յանձնուած է Հանրային Պարտուց Վարչութեան :

Արտօնութեան տէրը իր բոլոր իրաւունքները փոխանցած է նորահաստատ Օսմանեան ընկերութեան, որ կազմուած է 1894ին ի Բարիզ, և կանոնագիրը ընդունուած է կայսերական կառավարութեան կողմէ : Երկարածրգման աշխատութիւնները սկսած են 1894ին և վերջացած են 1897ին :

Ընկերութեան դրամադրութիւնն է 16 միլիոն ֆրանգ, 32,000 բաժնեթուղթով, իւրաքանչիւրը 500 ֆր. ամբողջովին վճարուած : Ընկերութիւնը 1894ին 113,120 պարտաթուղթ հրապարակ հանած է 500 ֆր.էն որ կը ներկայայնէ 56,560,000 ֆրգ. 100ին 4 տոկոսով, որ պիտի վճարուի կէսը Փետրվար 1ին և կէսը Օգոստոս 1ին և 99 տարուան մէջ ամբողջովին վճարելի : Այս պարտաթուղթերու կէսին փոխարէնը ապահովուած է երկաթուղւոյ գիծերուն հասոյթին կէսովը : Այս կէսը եթէ 2,310,000 ֆր.ի շյանգի, տարբերութիւնը պիտի վճարէ կայսերական կառավարութիւնը, փոխարէն ցոյց տրուած տասանորդի հասոյթներով :

1895ին ալ 140,000 պարտաթուղթ հրապարակ հանուած է իւրաքանչիւրը 500 ֆր.էն, Ալաշէհիր-Ա.Ֆիօն-Գարա-Հիսարի գծին երկարածգման համար : Այս փոխառութիւնը տարեկան 100ին 4 տոկոս ունի, կէսը Փետրվարին և միւս կէսը Օգոստոսին վճարելի և 95 տարուան մէջ

գանձելի : Տոկոսին և գլխամասին վճարումը ապահովուած է քիլօմէթրական երաշխաւորութեամբ , որուն նկատմամբ խօսեցանք քիչ մը վերը :

Տարեկան գումար հասոյթին 100ին 5ը իբրեւ պահեստի գումար որոշուելէ զատ , ամէն մէկ բաժնետէրութի 100ին 4 տոկոս վճարելու համար պէտք եղած գումարն ալ պիտի զատուի : Մնացորդէն 100ին 15 վարչական խորհրդոյ անդամներուն և 100ին 85ը իբրեւ շահաբաժին բաժնետէրերու պիտի տրուի : Պարտաթուղթերու առաջինը 1895ին 424 և երկրորդը 371 Ֆր. կ'արժէր : Յաջորդ տարին առաջինը 393 և երկրորդը 334 Ֆր.ի իջած , բայց 1897էն ի վեր աստիճանաբար բարձրացած է : Այս պարտաթուղթերը Ղալաթիոյ Պորսային մէջ պաշտօնապէս վաւերացուած (cotées) չեն : Կան այս կարգի չվաւերացուած բաժնետէրութի և պարտաթուղթեր , որոնց մասին Պորսան որ և է պատասխանատուութիւն չստանձներ , երբ սեղանաւորական խնդիր մը ծագի : Վաւերացուելիք թուղթեր օրինական տուրքի մը փոխարէն կ'արձանագրուին Պորսայի տամարին մէջ :

ԻԶՄԻՐ-ԱՅՏԸՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ . — Կայսերական կառավարութիւնը 1856 թուականին 50 տարւոյ տեւողութեամբ Անգլիական ընկերութեան մը յանձնուած է Իզմիր-Այտըն երկաթուղւոյ գիծին մենաշնորհը : Այս գիծը 130 քիլօմէթր երկայնութիւն պիտի ունենար . ի սկզբան շինութեան ծախս որոշուած էր 1,200,000 Անգլիական ոսկի , բայց այս գումարը ապա անբաւական ըլլալով , կառավարութիւնը արտօնեց ընկերութիւնը 1 միլիոն 784,000 ոսկիի վերածել նոյն գումարը 100ին 6 տոկոսով , զոր կառավարութիւնը երաշխաւորած էր : Ապա ընկերութիւնը պէտք տեսնելով երկարաձգելու իր գիծը , դէպի նահանգին ներսերը , մենաշնորհին պայմանաժամը

մինչեւ 1910 երկարաձգուելով շինուեցան Այտըն-Գու-
յուճըզ գիծը (57 քիլոմէթր) և միւս կողմէն գիծը եր-
կարեցաւ մինչեւ Աէրայքէօյ (92 քիլոմէթր) : Վերջապէս
1888ին մենաշնորհը 25 տարի ալ երկարեցաւ և գիծը մին-
չեւ Տենաիր երկարաձգելու իրաւունք արուեցաւ (135
քիլոմէթր), ճիւղ մը դէպի Էշրգլը (40 քիլոմէթր) ճիւղ
մը ի Տէնիզլի (13 քիլոմէթր) երկարաձգելու և Թիրէ-Էօ-
տէմիշի (26 քիլոմէթր) գիծն ալ շինելու պայմանաւ : Ըն-
կերութիւնը իրաւունք ստացաւ նաեւ շինելու Պալաշիք
Սէօքէ գիծը (25 քիլոմէթր) : 1888ի պայմանագրութիւնը
ջնջեց երաշխաւորութեան տոկոսը, որ նախապէս շնոր-
հեալ էր Կայսերական կառավարութեան կողմէ : Պայմա-
նաժամին աւարտումէն վերջ (1935ին) Կայսերական կա-
ռավարութիւնը երեք միլիոն Անգլ. ոսկի վճարելով պի-
տի գնէ նոյն գիծը, և այս գումարին վրայ պիտի աւել-
ցուի 650,000 Անգլ. ոսկի, զոր կը պարտի Կայսերական
կառավարութիւնը երաշխաւորութեան գումարէն : Գիծին
ընդհանուր երկայնութիւնն է 515 քիլոմէթր : Ընկերու-
թեան դրամագլուխը կը կազմէ 44,600 թաժնիթուղթ,
իւրաքանչիւրը 20 Անգլ. ոսկիէն 892,000 ոսկի :

Ընկերութիւնը 1863էն սկսելով իւրաքանչիւրը 100
ոսկիէն 7 անգամ այլ և այլ քանակութեամբ պարտա-
թուղթ հրապարակ հանած է, որուն գումարը կը յանգի
30,170 և 100ական ոսկիէն կ'արժէ 3,017,000 Անգլ. ոսկի :
1898ին ընկերութիւնը հասոյթներու նուազութենէն չկըր-
ցաւ վճարել իր պարտաթուղթերու կտրոնները և պար-
տաթուղթ ունեցողները հրաւիրելով, այլ և այլ թուա-
կաններով հրապարակ հանած պարտաթուղթերը միացնե-
լու ծրագիր մը ներկայացուց, որ միաձայնութեամբ ըն-
դունուեցաւ և մէկը 100ին 4 և միւսը 100ին 5 տոկո-
սաբեր երկու տեսակ պարտաթուղթ հրապարակ հանելու
որոշում տրուեցաւ : Նոր պարտաթուղթերու տոկոսը

պիտի վճարուի կէսը Յունվար 1ին և կէսը Յունիս 1ին : Մինչեւ 1935, գլուխ գլխի գանձելի են, բայց ընկերութիւնը իրեն կը վերապահէ իրաւունքը գանձելու ուղած ատեն 110ի գնով 6 ամիս առաջ զեկոյց մը ընելով : Պարտաթուղթերու միացման առաջին տարին, առաջին կարգի պարտաթուղթերու ամէնէն բարձր գինը եղած է 96 Անգլ. օսկի և ամէնէն վարը 86, յաջորդ տարին 94¹/₂—96ի մէջ տատանած է, իսկ աւելի յետոյ 96էն 92 իջած և միւս տարիներն ալ նոյն նշանակատաւոր պայմաններու մէջ գտնուած է, իսկ երկրորդ կարգի պարտաթուղթերը առաջին տարին 90 Անգլ. օսկիէն 76 օսկիի չափ իջած և միւս տարիները 95¹/₂էն 86ի իջած, ու յաջորդ տարիներու մէջ պարտաթուղթին գինը բարձրացած է 98ի միւս տարին 95ի :

ԵՐԿԱԹՈՒՂԻ ՄԷՐՍԻՆ-ԹԱՐՍՈՒՍ-ԱՏԱՆԱ. — Սոյն երկաթուղւոյ գծին շինութեան, շահագործման և վարչութեան համար, 1883 Յունվար 8/20ին մենաշնորհ սլրուեցաւ Մէհմէտ Նահիտ պէյի և Գօսթաքի Թէօտրիտի էֆ.ի, և երկու տարի վերջ կազմուեցաւ անանուն Օսմանեան ընկերութիւն մը, որ 67 քիլօմէթր երկայնութիւն ունեցող այս գիծին շինութիւնը ի գլուխ հանեց 1886ին : Ընկերութեան դրամազլուխն է 165,000 Անգլ. օսկի, իւրաքանչիւրը 20 Անգլ. օսկինոց 8250 բաժնեթուղթերու բաժնուած : Ընկերութիւնը 185,000 Անգլ. օսկի արժողութեամբ 1850 հաս պարտաթուղթեր ալ հրապարակ հանած է իւրաքանչիւրը 100 Անգլ. օսկիի, 100ին 6 տոկոսով : Այս գումարէն 167,000 Անգլ. օսկիի չափ գումար մը ստորագրուած է : Երկաթուղւոյ հասոյթէն կարելի չըլլալով կանոնաւորապէս վճարել տոկոսները, ընկերութիւնը 1892 թուականին երկրորդ պարտաթուղթ մը հրապարակ հանեց 44,850 Անգլ. օսկիի հին

պարտաթուղթերու յետնեալ տոկոսները վճարելու համար : Այս նոր պարտաթուղթերու տոկոսն ալ , առաջինին նման 100ին 6 էր , բայց առաջին 5 տարիները 100ին 3էն աւելի կարելի չըլլալով վճարել , և այս կերպով մէկ կողմէ յետնեալ տոկոսներ դիպուկելով , ընկերութիւնը 1899ին հետեւեալ հիման վրայ որոշեց պարտաթուղթերը միացնել : 1.—Տոկոսները զեղչել 100ին 6էն 4ի : 2.—Յետեալ տոկոսները աւելցնել նոր միացեալ պարտաթուղթերու վրայ : 3.—Հաստատել առանձնաշնորհեալ բաժնեթուղթեր , փոխարինելու համար տոկոսի նկատմամբ եղած զոհողութիւնը բաժնետէրերու կողմէ : 4.—Զուտ հասոյթին բաժանման կերպը բարեփոխել : Այս միացման հետեւանքով ընկերութեան դրամագլուխը հետեւեալ փոփոխութեան ենթարկուեցաւ .

Հին պարտաթուղթեր	211,850 Անգլ. ոսկի
Նոր »	19,690 » »
	<hr/> 231,540 » »

Ընկերութիւնը նախկին պարտաթուղթերէն մնացած 18,000 Անգլ. ոսկեոյ արժողութեամբ թուղթ ունենալով այս գումարը զեղչուեցաւ 15,960 Անգլ. ոսկեոյ , կանոնադրին մէջ արամադրեալ 247,000 ոսկիի համագումարը չանցնելու համար : Նոր պարտաթուղթերու 100ին 4 տոկոսը կը վճարուի կէսը Յունվարին և կէսն ալ Յուլիս 1ին : Առանձնաշնորհեալ պարտաթուղթերուն գալով , ասոնք 11,577 հատ են , իւրաքանչիւրը 2 ոսկի և կը ներկայացնեն 23,154 ոսկիի գումար մը :

ԹՐԱՄՎԱՅ. — 1869 թուականին Պ. Գարաբանոսի արտօնութիւն շնորհուած է ձիաքարչ հանրակառք մը շինելու ճամբորդի և ապրանքի փոխադրութեան համար : Մենաշնորհի պայմանաժամ որոշուած է 40 տարի : 1881 թուականին ընկերութիւնը կայսերական կառավարութե-

նէն արտօնութիւն ստացաւ երեք նոր գիծերու շինութեան և շահագործման, որոնց մէջ կը գտնուի նաև կալաթա-Շիշլի կարեւորագոյն գիծը: Այս պատճառաւ մեծ նաշնորհի պայմանաժամը երկարաձգուեցաւ 1918ի սկիզբը: Ահաւասիկ շահագործման մէջ գտնուող գիծերը.

Կալաթա-Բերա-Շիշլի	քիլօմէթր	5.200
Կալաթա-Օրթաքէօյ	»	6.040
Ագսէրայ	»	3.730
Նէտիգուլէ	»	3.600
Թօրգարու	»	2.630

Ի սկզբան ընկերութեան դրամագլուխ որոշուած էր 400,000 ոսկի, իւրաքանչիւրը 20 ոսկի ըլլալու պայմանաւ 20,000 բաժնեթուղթով: Այս 20 ոսկիին վրայ միայն 8 ոսկին վճարուած էր: Ընկերութիւնը առանց երկաթեայ գիծի հանրակառքեր (օմնիպիւս) և փոքր կառքեր բանեցնելու համար 1873ին իր դրամագլուխը 800,000 ոսկիի բարձրացուց, իւրաքանչիւրը 20ական ոսկիէն նոր 20,000 բաժնեթուղթ հրապարակ հանելով: Այս բաժնեթուղթերէն իւրաքանչիւրին համար ալ 8 ոսկի միայն վճարուեցաւ:

Բայց օմնիպիւսի և կառքի գործածութիւնը բաւական կարևոր մնասններ յառաջ բերած ըլլալով, բաժնետէրերու ընդհանուր ժողով մը 1875 ապրիլ 10ին բացառիկ գումարում մը ընելով, դրամագլուխը 800,000 ոսկիէն 680,000ի զեղչել հարկ դատուց, և այս հիման վրայ իւրաքանչիւր բաժնեթուղթի անուանական արժէքը 17 ոսկի որոշուելով նախապէս վճարեալ 8 ոսկին 5 ոսկի հաշուել հարկ դատուեցաւ: Այս տարբերութեան մնացորդը 120,000 ոսկի յատկացուած է թրամվայի շահագործման բացը գոցելու: 40,000 բաժնեթուղթերէն ընկերութիւնը մինչեւ 1888 գնած և ջնջած է 7617 բաժնեթուղթ: Մընացեալ 32,383 բաժնեթուղթերէն, ընկերութիւնը իր կա-

նոնագրին համեմատ, — որ կը տրամադրէ արտօնութեան պայմանաժամը լրանալէն 5 տարի առաջ, կանոնաւոր վիճակահանութեամբ ջնջել և անոր տեղ հաստատել ժողովասանսի բաժնետիրութեանը — 14,414 բաժնետիրութ ջնջուած է և այս թիւն ալ զեղչելով վերի գումարէն կը մնայ 17,969 բաժնետիրութ 5ական ոսկիէն 89,845 ոսկի: Կալաթա-Շիշլիի գիծին շինութեան համար ընկերութիւնը 1892ին 6568 պարտատիրութ հրապարակ հանեց, իւրաքանչիւրը 500 Փր.ի, 100ին 5 տոկոսով, 30 տարուան մէջ ամբողջովին գանձելի, 100ին 1½ անօրօքիւնանով: Այս պարտատիրութերուն տոկոսը 1895 փետրվարին 100ին 4ի զեղչուած է, կէս առ կէս վճարելի Յունիսին և Իեկտեմբերին: Հիմա շրջաբերութեան մէջ գանձուող պարտատիրութերը 2334 են 51,348 ոսկի արժէքով: Ընկերութեան գումար հասոյթէն 100ին 5 ջնջուած բաժնետիրութերուն համար որոշուելէ յետոյ, 100ին 10 իբրև պահեստի գումար և 100ին 6 հիմնադիրներուն, իսկ մնացորդէն 100ին 4 վարիչներուն, ինչպէս նաև պէտք եղած գումարը՝ արտօնութեան լրանալէն 5 տարի առաջ ջնջելու բոլոր բաժնետիրութերը: Մնացորդը կը բաժնուի անօրօքի չեղած և ժողովասանսի բոլոր բաժնետիրութերուն տէրերուն: 1891ին 6.30 արժող բաժնետիրութերը մէկ երկու տարի անկուճակներ ունենալով 1896ին բարձրացած են մինչև իբր 10 Օսմ. ոսկի, բայց այդ թուականէն յետոյ դարձեալ աստիճանաբար անկուճակներ կրելէ յետոյ վերջերս դարձեալ բարձրացան, մինչ իբր 12 ոսկին. այսօր կ'արժեն 8 25 ոսկի:

Գալով պարտատիրութերուն, 1893 թուականին կ'արժէր 507 Փր., բայց աստիճանաբար ելեւէջներ ունենալով այսօր կ'արժէ 490 Փրանգ:

ՇԻՐՔԷԹԸ ԽԱՅՐԻՅԷ. — Վոսփորի եզերքները շոգենաւաներ բանեցնելու համար 1849 (1267 Րէպիլու Էվվէլ 11)

Թուականին արտօնութիւնն շնորհուած է Օսմանեան անա-
նուն ընկերութեան մը : Նոյն արտօնութեան համեմատ ,
մենաշնորհի պայմանաժամ որոշուած է 25 տարի , սա-
կայն 3 անգամ երկարաձգուած է , անգամ մը 10 , ու-
րիշ անգամ մը 30 և 1903ին 50 տարի , հետևաբար մե-
նաշնորհի պայմանաժամը պիտի լրանայ 1953ին : Ընկե-
րութեան դրամագլուխը նախապէս որոշուած էր 60,000
ոսկի բաժնուած 2000 բաժնեթուղթի , իւրաքանչիւր
բաժնեթուղթ 30 ոսկիէն : Ապա , առանց բաժնետէրերէն
որ և է դրամ պահանջելու , դրամագլուխը բարձրացաւ
200,000 ոսկիի՝ 2,000 բաժնեթուղթով , իւրաքանչիւրը 100
ոսկիէն : Ատեն մը վերջ 100 ոսկինոց բաժնեթուղթերը
5 մասի բաժնուեցան այս կերպով : Շիրքէթի արդի բաժ-
նեթուղթերու թիւն է 10,000 , իւրաքանչիւրը 20 ոսկի
ըլլալու պայմանով : Բաժնեթուղթերը անուանական են
և միայն Օսմանեան հպատակներու յատուկ : Առանց
նոր արտօնութեան փոխառութեան համար նոր պարտա-
թուղթ հրապարակ չի հանուիր :

Շահագործման զուտ հասոյթէն նախ կը զեղչուի
պէտք եղած գումարը շոգենաւերու յատուկ առարկա-
ներու շինութեան և նորոգութեան , ինչպէս նաև ապա-
հովազրութեան համար : Ապա դրամագլուխին վրայ
100ին 5 համեմատութեամբ տոկոս վճարելու համար
պէտք եղած գումարը կ'որոշուի և մնացորդը կը բաժ-
նուի հետևեեալ կերպով . — 100ին 6 պահեստի , 100ին
6 մասնաւոր ամօրթիւրմանի համար , 100ին 5 քաղա-
քապետութեան և մնացորդը իբրև շահաբաժին բաժ-
նետէրերու և իբրև մասնաւոր պահեստի գումար : Ըն-
կերութեան բաժնեթուղթերը տարուէ տարի զգալի բար-
ձրացում կ'ունենան , որովհետև նոյն համեմատութեամբ
կը բարձրանան նաև տարեկան հասոյթները : Այսօր կ'ար-
ժեն 44 ոսկի :

ՔԱՐԱՓ Կ. ՊՈԼՍՈՑ.— 1308 Րէպիւլ ախրը 4 թուա-
կիր Կայսերական Ֆէրմանով, 85 տարի տեւողութեամբ
Միշէլ փաշայի տրուած արտօնութիւնը շահագործելու
համար 1894 Յունիսին կազմուեցաւ ընկերութիւն մը,
նպատակ ունենալով 1.—Վոսիորի երկու կողմերը քա-
րափին շինել և շահագործել: 2. — Մաքսային մթե-
րանոցներ և ապրանք դնելու յատուկ տեղեր հաս-
տատել: 3. — Քարափներուն շինուելիք սահմանին մէջ
շոգենաւերով ապրանք փոխադրել: 4. — Քարափին
վրայ թրամուէյի գիծեր հաստատել: 5. — Ծովը լե-
ցնելով գոյացած գետինը որ հանրային երթեւեկութեան
յատկացեալ չէ ծախել և օգտուիլ:

Ընկերութիւնը շահագործման ընդհանուր հասոյթին
100ին 10 Կայսերական կառավարութեան պիտի թողու:
Կայսերական կառավարութիւնը իրաւունք պիտի ունենայ
շահագործման առաջին 40 տարիներէ վերջը գնելու
քարափները, մթերանոցները իրեն շուրջը գտնուած շէն-
քերով, գնման նախընթաց 5 տարիներու հասոյթին միջինը
եղող գումարին վրայ տարեկան 100ին 8 վճարելով: Այս
տարեվճարը տակաւին ամօրթի չեղած դրամագլուխին
տոկոսի և գլխամասի յատկացուած գումարէն աւելի վար
գումար մը չպիտի ըլլայ:

Ընկերութեան դրամագլուխը կը կազմէ մենաշնորհի տէրերուն յատկացուած 6000 սո- վորական բաժնեթուղթ իւրաքանչիւրը 500	Ֆրանգ
Ֆրանգէն ամբողջովին գանձուած	3,000,000
30,000 սովորական բաժնեթուղթ 500ա- կան ֆր.էն ամբողջովին գանձուած	15,000,000
11,750 բաժնեթուղթ մենաշնորհեալ՝ 500 ական ֆր.էն ամբողջովին վճարեալ	5,275,000
	<hr/>
	23,875,000

Առանձնաշնորհեալ բաժնեթուղթերը, գումար հասոյթին

բաժանման մէջ առաւելութեան իրաւունք մը ունին և ուրիշ մասերը որոշուելէ առաջ 100ին 5 տոկոս մը կը ստանան : Միւս կողմէ բաժնետէրերու ընդհանուր ժողովը 1895ին 24,000 պարտաթուղթ հրապարակ հանել որոշած է իւրաքանչիւրը 500 ֆր.էն որուն 10,000ը 485 ֆր.էն և մնացեալը հրապարակ հանուած է ի Փարիզ : Այս պարտաթուղթերը տարեկան 100ին 5 տոկոս մը ունին կէս առ կէս վճարելի Մայիսին և Նոյեմբերին և ամբողջովին գանձելի 60 տարուան մէջ տարեկան վիճակահանութեամբ, սկսեալ 1896 թուականէն : Անօրօքի ևզած պարտաթուղթերուն թիւն է 730 : Այս թիւէն 3000ը սահմանուած է իբրեւ հիմնադիրի իրաւունք, և տրուած է հանգուցեալ Միշէլ բաշայի որ մենաշնորհի տէրն էր : Այս մասը իրաւունք կու տայ մասնակցելու հասոյթին հետեւեալ կերպով : Չուտ հասոյթին 100ին 7 իբրեւ տոկոս և գըլխավճար, ընդհանուր գումարէն 100ին 5 իբրեւ պահեստի գումար, 100ին 5 վարիչներուն և մնացորդը պիտի բաժնուի հետեւեալ կերպով, իբրեւ շահարածին մէն մի բաժնեթուղթի 100ին 50, հիմնադիրներու սահմանեալ 3000 բաժնեթուղթի համար 100ին 50 : Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի գուտ հասոյթէն գումար մը պիտի որոշէ, ջնջելու համար որոշեալ թուով բաժնեթուղթեր : Անօրօքի ևզած բաժնեթուղթերը շահարածին ունին, բայց տոկոսի իրաւունք չունին : Ընկերութիւնը իր պարտաթուղթերուն վերաբերեալ վճարումները ընելէ յետոյ, առանձնաշնորհեալ բաժնեթուղթերու համար 100ին 5 տոկոս և սովորական բաժնեթուղթերուն համար $1\frac{1}{2}$ առ 100 համեմատութեամբ վճարում մը պիտի ընէ, վարչական ժողովը կազմուած է 5էն 11 անգամով, որոց իւրաքանչիւրը պէտք է ունենայ 50 բաժնեթուղթ : Բաժնեթուղթերը սակարանին մէջ չեն արձանագրուած : Վերջին տասը տարիներու մէջ ընկերութեան թուղթերը աստիճանաբար բարձ-

րացած են : Այս 4⁰/₁₀ով պարտաթուղթերը այժմ կ'արժեն 430 Ֆրանգ : Ընդհ. Ժողովոյ որոշմամբ, ընկերութիւնը 1906 Յունիսին այն 500 Ֆրանքնոց 5⁰/₁₀ տոկոսաբեր պարտաթուղթերուն տեղ 1600 հատ պարտաթուղթ հրապարակ հանեց Ֆր. 460 որոնց տոկոսները կէս առ կէս կը վճարուին Յունիս 1ին և Դեկտ. 1ին :

ՊՈԼՍՈՅ ԶՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. — Տէրքասի լիճէն Բերա, Կալաթա և Վոսիորի Եւրոպական եղիքի գիւղերը ջուր բերելու համար 1874ին մենաշնորհ արուած էր Կայսերական Պալատան արարողապետ Ֆեաւիլ պէյի և երկրաչափ Թէրնօ պէյի, սակայն սուաջինին մահուամբ մենաշնորհին գործադրութիւնը յետաձգուած ըլլալով 1877ին երկրորդ Ֆէրմանով մը մենաշնորհ արուեցաւ Թէրնօ պէյի որ իր ծրագիրը գլուխ հանելու համար, կարգ մը կարեւոր դրամատուներու գործակցութեամբ անանուն ընկերութիւն մը կազմեց : Ընկերութեան կանոնագրութիւնը Կայսերական կառավարութեան կողմէ հաստատուելէ յետոյ, երրորդ Ֆէրմանով մը 40էն 75 տարիի բարձրացաւ մենաշնորհին պայմանաժամը, և ընկերութեան մենաշնորհը տարածուեցաւ ոչ միայն այն տեղերը, ուր ընկերութիւնը ջուր բաժնելու իրաւունք ունի, այլ և այն ամէն տեղերը ուր ապագային ջուր պիտի բերէ : Բոլոր բաժնեթուղթերը ազատ թողուեցան դրոշմի տուրքէ, պայման դրուելով որ Պոլսոյ կողմն ալ ջուր բերուի : Ընկերութեան պայմանաժամը սկսելով իր կանոնագրին հաստատութենէն կը լրանայ 1957ին :

Պոլսոյ ջուրի ընկերութեան դրամագլուխն է 20 միլիոն Ֆր. կամ 880,000 ոսկի, բաժնուած 40,000 բաժնեթուղթի իւրաքանչիւրը 500 Ֆր. կամ 22 ոսկի ամբողջովին վճարեալ : Ընկերութիւնը 1894ին 2000 պարտաթուղթ ալ հրապարակ հանեց 500 Ֆրանք անուանա-

կան արժէքով և 445—450 ֆրանքի իրական գնով, որոնք տարեկան 100ին 4 տոկոս ունին կէս առ կէս վճարելի Յուճիս և Դեկտեմբեր 1ին: Այս պարտաթուղթերը մինչև 1954 ամբողջովին պիտի վճարուին: Ասկէ զատ 2000 քաժին որոշուած է նաև հիմնադիրներուն, որոնք իրաւունք պիտի ունենան շահաբաժնի՝ հետեւեալ կերպով: Բաժնեթուղթերու համար 100ին 6 տոկոս, մնացորդէն իբրև պահեստի դրամագլուխ 100ին 5, վարչական խորհուրդին տրամադրութեան տակ մնալով ի հարկին գործածուելու համար 100ին 10, հիմնադիրներու համար 100ին 15, իբրև շահաբաժին քաժնեթուղթերու 100ին 70: Բաժնեթուղթերու գինը 1892էն սկսելով մինչև 1898 այսինքն 7 տարի, նուազագոյնը 300 և առաւելագոյնը 396 (1894) ֆր. եղած է, ելեւէջներ ունենալով, սակայն 1899էն մինչև 1901՝ 300 ֆր.է աւելի վար իջած է մինչև 246 ֆր. իսկ յետոյ դարձեալ բարձրացումներ ունեցած է մինչև 370 և այսօր կ'արժէ 307 ֆրանք:

ՕՍՄԱՆԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.— 1892 թուակիր Կայսերական Ֆէրման մը իրաւունք տուած է հաստատելու այս ընկերութիւնը, որ թուրքիոյ և օտար երկիրներու մէջ իրաւունք պիտի ունենայ ապահովագրութիւններ ընելու ընդդէմ հրդեհի, մարդկային կեանքի և փոխադրութեանոյ: Պայմանաւանն է 30 տարի որ պիտի երկարաձգուի մինչև 99 տարի երբ ընկերութիւնը պահանջէ: Ընկերութեան դրամագլուխն է 440,000 ոսկի կամ 10 միլիոն ֆր. քաժնուած 40,000 քաժնեթուղթերու, իւրաքանչիւրը 11 ոսկի կամ 250 ֆր.ի որուն կէսը միայն գանձուած է. 1000 քաժին ալ հիմնադիրներու համար որոշուած է: Զուտ հասոյթը կը քաժնուի հետեւեալ կերպով: Դրամագլխին վճարուած մասին վրայ

100ին 5 , մնացորդէն՝ 100ին 25 պահեստի գումար , 100ին 15 հիմնադիրներու բաժին , 100ին 5 վարչական խորհուրդին , 100ին 50 վարչութեան և պաշտօնէութեան , 100ին 50 բաժնետէրերու իրրև շահաբաժին : Ընկերութեան արժեթուղթերը 1894ին 7,57 Օսմ. ոսկի կ'արժէին : Այդ թուականէն ի վեր 4,90ի և 3,90ի միջև տատանած է , այսօր կ'արժէ 4,08 Օսմ. ոսկի :

ԷՐԷՅԼԻԻ ՀԱՆՔԱԾՈՒԽՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ . —

1311 Ճէմաղի-իւլ-ախըր 11 թուականով Եանքօ պէյ Եռանիտէսի տրուած մենաշնորհին շահագործման համար 1896 թուականին Օսմանեան անանուն ընկերութիւն մը կազմուած է 50 սարուան պայմանաժամով , նպատակ ունենալով Զօնկուլտաքի մէջ նաւահանգիստ մը և քարափ մը շինել և շահագործել և մենաշնորհին Ֆէրմանով ցոյց տրուած սահմանին մէջ երեւան հանուած հանքերը շահագործել և հանածոյները փոխադրելու համար երկաթուղւոյ գծեր հաստատել : Ընկերութեան պայմանաժամը կը լրանայ 1946ին :

Ընկերութեան դրամագլուխն է 10 միլիոն Փր. բաժնուած 20,000 բաժնեթուղթերու իւրաքանչիւրը 500 Փր.՝ ամբողջովին վճարուալ : Ասկէ զատ իրրև հիմնադրի իրաւունք 2000 բաժին որոշուած է որ շահաբաժին պիտի ստանայ : Բաժնետէրերու ընդհանուր ժողովին խորհրդակցութեամբ , ընկերութիւնը արածնուած ըլլալով հրապարակ հանելու 25,000 պարտաթուղթ 500ական Փր.էն նոյն տարին 18,334 և մնացորդ 6666 պարտաթուղթն ալ 1901ին հրապարակ հանած է : Վերջապէս 1901 Յունիս 28ի բաժնետէրերու ընդհանուր ժողովին խորհրդակցութեամբ փոխառութիւնը որոշեալ 5 միլիոն Փր.ին համար՝ 12,500 նոր պարտաթուղթ հրապարակ հանել հարկ դատուեր է 500 Փր.ի թուղթերը 400 Փր.ի իրական գնով :

Այս կերպով հրապարակ հանուած պարտաթուղթերու գումարն է 37,500 և տակաւին հրապարակ հանուելիք կը մնայ 7721 պարտաթուղթ : Այս պարտաթուղթերը 100ին 5 տոկոս ունին , տարեկան 2 վճարքով և գանձելի մինչև 1939 : Ընկերութեան հասոյթը կը բաժնուի հետևեալ կերպով : 100ին 5 պահեստի գումար , 100ին 6 բաժնեթուղթերու տոկոս , 100ին 15 վարչական խորհուրդին : Իսկ մնացորդէն 100ին 50 բաժնետէրերու , 100ին 50 հիմնադիրներու բաժին , բաժնետէրերու ժողովը իրաւունք ունի ամէն տարի զուտ հասոյթին 100ին 10 պահել , ջնջելու համար որոշեալ թուով բաժնեթուղթ : Հրապարակէն վերցուած արժեթուղթեր շահաբաժնի իրաւունք ունին , բայց տոկոսի իրաւունք չունին :

Բաժնեթուղթերը զգալի բարձրացումներ և անկումներ ունեցած են : 1897ին 617 Քր. կ'արժէին , մինչ 1902ին 190 Քր. իջած են և այդ թուականէն ասդին աստիճանական բարձրացումներով , մինչ 460 Քր.ի բարձրացած և հետզհետէ մինչև 290ի իջած են , այժմ կ'արժեն 370 Քր. :

ՊԱԼԻԱ ԳԱՐԱ-ԱՅՏԸՆԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
— Խիւտալէնտիկեարի կուսակալութեան Գարասի սանճագին մէջ գտնուած հանքերու շահագործման և զարգացման համար 1892 Մայիս 25ին կազմուած է այս ընկերութիւնը : Այդ հանքերն են , Գօճա կիւմիլի արծաթախառն կապարի հանքերն , և Գարա-Այտընի և Մանճըլըզի կինիթի հանքը : Առաջին երկուքին մենաշնորհը ստացած է Լօրիումի ընկերութիւնը , իսկ երրորդինը «Պանդ տը Գօնսթանթինօրլ» : Այս ընկերութեան պայմանաւժամը կը լրանայ Մանճըլըզի հանքին մենաշնորհի թուականին հետ , այսինքն 1984ին : Ընկերութեան դրամագլուխն էր մինչև 1903՝ 4½ միլիոն Քր. բաժրածնուած 9000 բաժնեթուղթի իւրաքանչիւրը 500 Քր.

ամբողջովին ստորագրուած : Ընկերութիւնը 1892ին , իր կանոնագրին տրամադրութեան համեմատ հրապարակ հանած է արժեթուղթերը 4500 հատ իւրաքանչիւրը 500 Ֆր.էն 2,250,000 Ֆրանք տարեկան 100ին 5 տոկոսով և երկու անգամով վճարելի : Մինչեւ 1930ին ամբողջովին պիտի վճարուի պարտաթուղթերու փոխարէնը :

1904 Ապրիլ 17ին գումարուած բաժնետէրերու արտաքոյ կարգի ժողովը որոշեց 100ական Ֆր.ի նոր 15,000 բաժնեթուղթ հրապարակ հանել , այս կերպով շրջաբերութեան մէջ գտնուող պարտաթուղթերու փոխարէնը վճարելու համար : Այս բաժնեթուղթերը հրապարակ հանուեցան 115 Ֆր.ի այսինքն 100ին 15 աւելի բոլոր ընելով : Միւս կողմէ հին բաժնեթուղթերը կոտորակներու բաժնուեցան , իւրաքանչիւրը 100 Ֆր.ի , այնպէս որ ընկերութեան արդի դրամագլուխը եղաւ 6,000,000 Ֆր. 100ական Ֆր.էն 60,000 բաժնեթուղթի բաժնուած , ամբողջովին վճարուած ըլլալու պայմանով :

Տարեկան զուտ հասոյթէն՝ 100ին 10 պահեստի գումարի յատկացուելէ վերջ բաժնետէրերուն 100ին 5 համեմատութեամբ վճարում մը ընելու համար պէտք եղած գրամը կ'որոշուի և մնացորդէն 100ին 12 կը տրուի վարչական խորհուրդին և 100ին 88 բաժնետէրերու՝ իրրեւ շահարամին : Բաժնետէրերու ժողովը իրաւունք ունի , ամէն տարի գումար մը որոշելու , ջնջելու համար հրապարակէն պէտք եղած թուով արժեթուղթ և կամ հաստատելու համար մասնաւոր գումար մը իւրաքանչիւր բաժնեթուղթի համար վճարեալ գումարը զեղչելու : Ամօրթի եղած բաժնեթուղթերու սակոս չի տրուիր , բայց շահարամին կը տրուի : Իր կազմութենէն ի վեր , ընկերութիւնը իր հասոյթէն կարեւոր մաս մը սահմանած է իրրեւ փոխարժէք իր ստացուածքներուն և իրրեւ ծախսիր կազ-

մակերպութեան : Միւս կողմէ ընկերութիւնը 1314 տարուոյ հասոյթով , հարթած է իր կազմակերպութեան համար ըրած ծախքը որ կը յանգի 7135 ոսկիի : 1905 Յունվար 1ին ընկերութիւնը իբրեւ կանոնական պահեստ ունէր 42,386 ոսկիի գումար մը՝ այսինքն բաղդասամամբ դրամագլխին 100ին 16 :

Այս հանքային ընկերութեան բաժնեթուղթերը (5 մասի բաժնուելէ յետոյ) , մանաւանդ վերջին տարիներու մէջ , զգալի բարձրացումներ ունեցան : Այս մասին զառափար մը տալու համար , յարմար կը դատենք հրատարակել հետեւեալ ցուցակը .

	Ֆրանգ		Ֆրանգ		Ֆրանգ
1900	144.50	1903	125.75	1906	596—740
1901	73	1904	424	1907	675—725
1902	95	1905	651		

Այսօր կ'արժէ 435 ֆրանք :

ՔԱՍԱՆՏՐԱՅԻ ՀԱՆՔԵՐՈՒ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ . — 1893 Հոկտեմբեր 2/14ին կազմուած այս ընկերութիւնը ձեռնարկած է շահագործելու , մանկանէղի , արծաթախառն կապարի , անթիմուանի , եւ այլ խառն մետաղի այն հանքերը , որոնք կը գտնուին Սելանիկի կուսակալութեան Քասանարա գաւառակին մէջ : Այս հանքերու արտօնութիւնները 1891 և 1892 թուակիր կայսերական ֆէրմաններով արուած է զանազաններու , և 1888 թուակիր ֆէրմանով մըն ալ «Պանգ տը Գօնսթանթինօբլ»ի : Ասոնց պայմանաժամն էր 98 տարի : Այս այլ և այլ թուականներով արուած հանքային արտօնութիւնները միացնելով , կազմուած ընկերութեան դրամագլուխը ի սկզբան սահմանուեցաւ 3 միլիոն ֆր. իւրա-

քանչիւրը 500ական ֆր.էն 2000 առանձնաշնորհեալ բաժնեթուղթի և 4000 սովորական բաժնեթուղթի բաժնուած ամէնքն ալ հաւասարապէս 500 ֆր.էն : Այս երկու բաժնեթուղթոց փոխարէնը ամբողջովին գանձուած է : Ընկերութիւնը հանքային շահագործման մասին աւելի նոր դրութեանց հետեւելու համար, բաժնետէրերու արտաքոյ կարգի ժողովի մը մէջ, որ գումարուեցաւ 1898 Մարտ 30ին, որոշեց աւելցնել ընկերութեան դրամադուխը, 500 ֆր.նոց 2000 առանձնաշնորհեալ նոր արժեթուղթ աւելցնելով : Միեւնոյն ատեն ընկերութիւնը կայսերական կառավարութեանէն իրաւունք ստացաւ իր բաժնեթուղթերը 100 ֆր.ի վերածելու, և այս կերպով ընկերութեան արդի դրամագլուխը յանգեցաւ 4 միլիոն ֆր.ի, 20,000 բաժնեթուղթ առանձնաշնորհեալ 100ական ֆր.էն, 20,000 բաժնեթուղթ սովորական 100 ֆր.էն : Ընկերութիւնը միեւնոյն ատեն ջնջեց հրապարակէն 3025 բաժնեթուղթ առանձնաշնորհեալ (100ական ֆրգ.ի) որոց տեղ տրուեցան Ժուլիանսի բաժնեթուղթեր : Տարեկան զուտ հասոյթէն՝ առանձնաշնորհեալ բաժնեթուղթերու 100ին 6 համեմատութեամբ վճարում ըլլալու համար պէտք եղած գումարը որոշուելէ յետոյ առ նուազն 20 տարւոյ մէջ բաժնեթուղթերու փոխարժէքը վճարելու համար կարելոր դումարը և պահեստի գումարի մը համար անհրաժեշտ եղող հասոյթին հարիւրին 5 համեմատութեամբ գումար մը, ինչպէս նաեւ սովորական բաժնեթուղթերու վրայ 100ին 6 վճարման յատկացեալ բաժինը սահմանուելէ յետոյ, մնացորդէն կը տրուի 100ին 7 վարչական խորհուրդին, 100ին 5 հիմնադիրներուն, 100ին 3 պաշտօնէութեան և 100ին 85 բոլոր բաժնետէրերու իբրեւ շահաբաժին : Այս ընկերութեան երկու կարգի բաժնեթուղթերը յաճախակի ելեւէջներով, նշանակելի կարելոր յառաջացում մը չեն ունեցած : Այժմ կ'արժեն 102-110 ֆրանգ :

**ԳԱՐԱՍՈՒԻ ՀԱՆՔԵՐՈՒ ՈՍՄ. ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆ.**—Նիկոմիդիոյ սանճագին Գանտէրի գաւառա-
կին Գարասու քաղաքին մէջ գտնուած արծաթախառն
կապարի և զէնկի, ինչպէս նաեւ այս հանքերու հետ
խառնուելի հանքային բաղադրութեանց շահագործման
համար 1898 յունիս 12 թուակիր Ֆէրմանով 99 տարուան
մենաշնորհ տրուած և 1900 մայիս 28ին այս նպատակով
ընկերութիւն մը կազմուած է, որ նախապէս իր դրամա-
գլուխը որոշած է 3,200,000 Ֆր. 12,000 առանձնաշնոր-
հեալ և 20,000 սովորական բաժնեթուղթի բաժնուած իւ-
րաքանչիւրը 100 Ֆր.էն ամբողջովին վճարուած: Սովո-
րական բաժնեթուղթերէն 19,000 հասը յատկացուած է
ընկերութեան 5 հիմնադիրներուն: 1904 Օգոստոս 10ին
գումարուած բաժնետէրերու արտաքոյ կարգի ժողովի
խորհրդակցութեամբ դրամագլուխը 800,000 Ֆր. ալ ա-
ւելցաւ նոր 8000 բաժնեթուղթի յաւելմամբ: Միեւնոյն
ժողովը որոշեց նաեւ իւրաքանչիւրը 100 Ֆրգ.էն 100ին
5 տոկոսաբեր նոր 8000 պարտաթուղթ հրապարակ հա-
նել, որոնց տոկոսները կէս առ կէս կը վճարուին Յունիս
և Յունվար 1ին: Բաժնեթուղթերը մեծ ելուէջներ ու-
նեցան այնպէս որ առանձնաշնորհեալ բաժնեթուղթերը
1904ին մինչև 40 Ֆր. և սովորական բաժնեթուղթերը
նոյն թուականին մինչև 20 Ֆր.ի իջնելէ յետոյ 1905էն
սկսեալ հետզհետէ բարձրացան մինչև 189 և 179, և այ-
սոր կ'արժեն 36 և 31 Ֆր.: 5⁰/₁₀ նոց պարտաթուղթերն
ալ 92 Ֆր.էն մինչև 85 Ֆր.ի մէջ կը տարուբերին և այ-
սոր կ'արժեն 60 Ֆրանգ:

Վերջապէս 1906 Փետրվար 7ին գումարուած բաժ-
նետէրերու արտաքոյ կարգի ժողով մը 8000 առանձնաշնոր-
հեալ նոր բաժնեթուղթ աւելցուց դրամագլուխին վրայ:
Ընկերութեան դրամագլուխը հիմա 5,600,000 Ֆր. է հե-
տեւեալ կերպով բաժնուած:

	Ֆրանկ
20,000 բաժնեթուղթ առանձնաշնորհեալ	2,000,000
28,000 » սովորական	2,800,000
8,000 պարտաթուղթ 100ին 5	800,000
	5,600,000

Տարեկան զուտ հասոյթէն՝ առանձնաշնորհեալ բաժնեթուղթերու 100ին 6 համեմատութեամբ տոկոս վճարելու համար պէտք եղած գումարը որոշուելէ յետոյ, 20 տարուան մէջ առանձնաշնորհեալ բաժնեթուղթերը ջրնջելու համար ալ գումար մը կը սահմանուի և պահեստի գումարի մը կազմութեան համար շահէն 100ին 5 կը յատկացուի, նոյնպէս սովորական բաժնեթուղթերու 100ին 6 տոկոսին վճարման համար ալ գումար մը կը սահմանուի և մնացորդէն 100ին 12 վարչական խորհուրդին 100ին 3 պաշտօնէութեան և 100ին 85 ընդհանուր բաժնեթուղթերու համար կը տրուի անխտիր իբրև շահաբաժին: Ջնջուած պարտաթուղթերը շահաբաժին կը ստանան, բայց տոկոսի իրաւունք չունին: Սոյն հանքային բաժնեթուղթերը կ'արժէին

Առանձնաշնորհ.		Սովոր.	Առանձնաշնորհ.		Սովոր.
1902ին	55	20	1906ին	210	180
1903ին	40	20	1907ին	36	31
1904ին	89	21			
1905ին	110	106			

ՇԻՐՔԵԹԸ ԽԱՅՐՑԻԷՒ ՀԱՄԻՏԻՑԷ. — Սելանիկի և Քէսէնտէրէի ծովախորշերուն մէջ շոգենաւային երթևեկ մը հաստատելու և նոր նաւամատոյցներ և վաճառքներու մթերանոցներ հաստատելու համար, 1906 Յունիս 16

Թուակիր Կայսերական Իրատէի մը համեմատ կազմուած է Օսմանեան անանուէն ընկերութիւն մը, որուն դրամագլուխն է 75,000 Օսմ. ոսկի բաժնուած 15,000 արժեթուղթի իւրաքանչիւրը 5ական ոսկիէն 100ին 5ին (այսինքն 25 դշ.ը) տոկոսաբեր: Ասոնք տարւոյն վերջը գոյացած հասոյթին վրայ շահաբաժին պիտի ունենան: Կարելի պիտի ըլլայ դրամագլուխը բարձրացնել մինչև 150 հազար ոսկիի 250,000 բաժնեթուղթ հրապարակ հանելով ընդարձակելով գործունէութեան շրջանակը և սրընթաց շոգենաւաներ բանեցնելով մինչև Հելլէն սահմանագլուխի նաւահանդիսաները: Ընկերութեան պայմանաժամը 75տարի է: Առաջին 6 տարիներու մէջ գործերը պիտի վարէ Շիրքէթը Խայրիյէի վարչական Խորհուրդը ներքին կանոնադրին համաձայն: Ընկերութիւնը իւրաքանչիւր շահաբաժինի 100ին 5 տոկոսով, այսինքն 25 դր. ոսկեդրամ պիտի վճարէ ամէն Մարտ 1ին: Այս գումարը սովորական ծախքերուն մէջ պիտի արձանագրուի, իսկ ամէն հասոյթին յաւելեալ մասը պիտի պատկանի բաժնետէրերուն: Ուրիշ ընկերութեանց նման, Շիրքէթը Խայրիէ Համիտիէ ալ պիտի ունենայ պահեստի և ապահովութեան դրամագլուխ, գըլխավճարի հաշիւ, ևն.: Բաժնեթուղթերը պիտի ջնջուին վիճակահանութեամբ: Ջնջուած բաժիններուն փոխարէն պիտի տրուի լոկ շահու իրաւունք ունեցող բաժնեթուղթ (ժուխանա) զոր ունեցողները ընկերութեան մենաշնորհի միջոցին պիտի օգտուին շահաբաժնէն, և երբ ընկերութիւնը գործերը դադրեցնէ, պիտի օգտուին գոյքէն: Հանման դինն է 5 ոսկի: Շիրքէթը Խայրիյէի Համիտիյէի արժեթուղթերուն տոկոսը կը սկսի բանիլ 1323 Մարտի առաջին օրէն, և հետևարար առաջին կարոնը 1324 տարւոյ Մարտի առաջին օրը պիտի վճարուի: Շիրքէթը Խայրիյէի Համիտիյէի բաժնեթուղթերը Պոլսոյ Սակարանին մէջ ընդունուած է: Արդի գինն է 4.60:

ԴԵՐՁԱՆԻ ԵՒ ԿԵՐՊԱՍԻ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. — 1886 թուակիր Կայսերական Ֆերմանով Պետական Խորհրդոյ անդամ Ահմէտ Բէֆիզ պէյի և առևտրական ընդհանուր Տնօրէն Բէֆիզ պէյի, ինչպէս նաև Բէշիտ պէյի 20 տարւոյ համար մենաշնորհ տրուած է, Պոլսոյ կամ շրջականերու մէջ կերպասի և Փանելայի, տուպլիւրի և ամէն տեսակ դերձանի, ֆէսի և բամբակի ու բուրդի այլ և այլ տեսակներուն պատրաստութեան յատուկ գործարանի մը հաստատութեան: Ընկերութեան պայմանեալ տեւողութեան միջոցին նամանօրինակ ուրիշ գործարանի մը հաստատութեան արտօնութիւն չպիտի տրուի:

Ընկերութեան դրամագլուխն է 45,000 անգլ. ոսկի իւրաքանչիւրը 5 անգլ. ոսկիէն 9,100 բաժնեթուղթի բաժնուած և ամբողջովին վճարեալ: Ընկերութիւնը 1892ին 24,000 օսմ. ոսկիի պարտաթուղթ հրապարակ հանեց 100ին 95 գնով, 100ին 6 տոկոս ունի կէս առ կէս Յունուարին և Յուլիսին վճարելի: Հրապարակի վրայ գանձուած պարտաթուղթերուն փոխարէնն է 8,000 Օսմ. ոսկի: Ասոնցմէ զատ իբրև հիմնադրի իրաւունք 100 բաժին որոշուած է: Անոնք իրաւունք ունին զուտ հասոյթէն, որ կը բաժնուի հետևեալ կերպով. — վճարուած դրամագլուխին վրայ 100ին 10 իբրև տոկոս, 100ին 5 պահեստի գումար և մնացորդէն 100ին 10 վարչական Խորհուրդին և 100ին 90 իբրև շահաբաժին: Այն պարագային երբ այդ 100ին 70ը դրամագլխէն 100ին 10 աւելի կը ներկայացնէ, աւելին կը բաժնուի հետևեալ կերպով. 100ին 25 հիմնադիրներուն, 100ին 75 բաժնետէրերուն, 1891ին ընկերութիւնը բաժնետէրերու ու է վճարում չէ ըրած, 92ին 100ին 6, ապա երեք տարի դարձեալ վճարում չէ եղած, 1896ին 100ին 2, 1897ին 100ին 4 և դարձեալ չորս տարի յաջորդաբար չէ վճարուած,

1902ին 100ին 3, յաջորդ տարին 100ին 4, իսկ 1904ին դարձեալ վճարում չէ եղած :

ՍԵԼԱՆԻԿԻ ՊԱՆՔԱՆ . — 1888ին կազմուեցաւ այս դրամատունը՝ Բարիզի Գօնթուար Տէսգօնթի, Աւստրիական պետական և առանձնաշնորհեալ թագաւորական պանքայի, հունգարական պանքայի, և Պ. Ֆրաթէլլի Ալաթինի մասնակցութեամբ և պատրաստուած կանոնագիրը հաստատուեցաւ 1305ին Կայսերական Իրատէով : Այս սեղանաւորական հաստատութիւնը կը ստանձնէ և կը կատարէ պանքաներու յատուկ ամէն տեսակ գործողութիւն, կը դնէ և կը վաճառէ առւտրական ապրանքները, կը մասնակցի առւտրական, ճարտարարուեստական և սեղանաւորական հաստատութեանց հիմնարկութեան, այլ և այլ տուրքերու ինչպէս տասանորդներու գանձման կը հետամտի և կը մասնակցի հանրային շինութեանց վերաբերեալ աշխատութիւններու : Ընկերութեան կեդրոնն է Սելանիկ : Մասնաճիւղեր ունի Պոլիս, Մանասդըր, Գաւալա և Զմիւռնիա :

Ընկերութեան դրամագլուխն է 2 միլիոն ֆր., բաժնուած 4,000 բաժնեթուղթի, իւրաքանչիւրը 500 ֆր. էն, որուն կէսը միայն վճարուած է : Ընկերութեան դրամագլուխը ի հարկին կրնայ բարձրացուիլ մինչև 16 միլիոնի : 1893ին գումարուած բաժնետէրերու բացառիկ նիստի մը մէջ որոշուեցաւ նախապէս հրապարակ հանուած 4000 բաժնեթուղթերու փոխարէնը եղող գումարին կէսը գանձել և միւսնոյն ատեն 4,000 նոր արժեթուղթ հրապարակ հանել իւրաքանչիւրը 500 ֆր. էն՝ ամբողջին վճարուած : Այս կերպով ընկերութեան արդի դրամագլուխը կը բարձրանայ 4 միլիոնի բաժնուած 8,000 բաժնեթուղթերու, իւրաքանչիւրը 500 ֆր. էն ամբողջովին վճարեալ : 1895ին 500ական ֆր. նոց բաժնեթուղթերը

100ական ֆրանքնոց մասերու բաժնուեցան, 1904 Նոյեմբերին գումարուած բաժնետէրերու բացառիկ ընդհանուր ժողովը, որոշեց դրամագլուխը 4է 5 միլիոն ֆր.ի բարձրացնել, հրապարակ հանելով նոր 10,000 բաժնեթուղթ իւրաքանչիւրը 100ական ֆր.էն: Այս բաժնեթուղթերը 35 ֆր. բրիւնով հրապարակ հանուեցան և այս գումարին 30 ֆր.ը պահեստի գումարին անցնիլ յարմար դատուեցաւ: 1905 Օգոստոս 3ին գումարուած բաժնետէրերու բացառիկ ընդհանուր ժողովի մը մէջ որոշուեցաւ 5էն 6 միլիոն ֆր.ի բարձրացնել դրամագլուխը, 100ական ֆր.էն 10,000 նոր բաժնեթուղթ հրապարակ հանելով: Այս բաժնեթուղթերը հրապարակ հանուեցան Վիեննայի Աւստրիական կայսերական պանքայի միջոցաւ 140 ֆր. գնով: Մէն մի բաժնեթուղթի վրայ առնուած 40 ֆր. տարբերութիւնը սովորական և արտաքոյ կարգի պահեստը աւելցնելու պիտի ծառայէ և ամէնուն գումարը պիտի յանգի 2,700,000 ֆր.ի: Աւելի վերջը գումարուած բաժնետէրերու ընդհանուր ժողովէն տրուած թոյլատուութեամբ Վարչական ժողովը ձեռնարկեց նոր յաւելում մը ընելու դրամագլխին վրայ, բարձրացնելով 6էն 8 միլիոն ֆրանքի 100ական ֆրանքնոց նոր 20,000 բաժնեթուղթ հրապարակ հանելով:

Տարեկան ընդհանուր շահէն, վճարուած դրամագլուխին վրայ 100ին 5 հաշուով սովորը որոշուելէ յետոյ մնացեալ հասոյթը կը բաժնուի հետեւեալ կերպով 100ին 10 պահեստի գումարի համար, 10ը վարչական խորհուրդին, 5 սնօրէնին և պաշտօնէութեան, 10 հիմնադիրներուն: Մնացորդը պիտի բաժնուի բաժնետէրերու: Առաջին տարին (1889) ընկերութեան շահաբաժինը 100ին 5 ըլլալով յաջորդաբար և աստիճանաբար բարձրացում ունենալով 1904ին 100ին 10 էր: Արժեթուղթերն ալ որոնք 1900ին կ'արժէին 160 ֆր. 1905ին բարձրացան 181 ֆր.ի

միեւնոյն աստիճանական բարձրացմամբ : Այսօր կ'արժեն 155-160 Ֆր. :

ՄԻՏԻԼԼԻԻ ԴՐԱՄԱՏՈՒՆ.— 1891 թուակիր կայսերական Ֆէրմանով հաստատուած սոյն դրամատան Օսմանեան անանուէն ընկերութիւնը, կը կատարէ պանգայի վերաբերեալ ամէն կարգի գործառնութիւններ, կը մասնակցի առեւտրական, սեղանաւորական և ամէն կարգի հանրագուտ ձեռնարկներու, հանքերու և գործարաններու շահագործման ևն. : Կը ստանձնէ նաեւ գանձումը ամէն կարգի ատուքերու ինչպէս տասանորդ ևն. : Ընկերութեան տեւողութիւնը 50 տարի է, կեդրոնը ըլլալով Միտիլլի, մասնաճիւղեր ունի Պոլիս, Իզմիր, Սէլանիկ, Աթէնք և Բիրէ :

Ընկերութեան դրամագլուխն էր մինչեւ 1904՝ 6 միլիոն Ֆր. կամ 264,000 Օսմ. ոսկի 24,000 բաժնեթուղթով իւրաքանչիւրը 11 ոսկի կամ 250 Ֆրանգ ամբողջովին վճարեալ :

Բայց շուկենաւային ձեռնարկութիւնները, նոյնպէս էրէյլի մէջ ընկերութեան հանքային շահագործութեան վերաբերեալ գործառնութիւնները՝ դրամագլխին կարեւոր մէկ մասը խորած ըլլալով 1905 Մայիս 19ին դուրմարուած բաժնետէրերու ընդհանուր ժողովը, որոշեց վարչական ժողովոյ առաջարկութեան վրայ դադրեցնել ուրիշ գործերը, պահելով միմիայն դրամատան վերաբերեալ գործառնութիւնները : Այս կարգադրութիւնը կարեւոր մնասմը պատճառելով նոյն ընդհանուր ժողովը քուէարկեց 264,000է 168,000ի իջեցնել դրամագլուխը, 11էն 7ի իջեցնելով նաեւ իւրաքանչիւր բաժնեթուղթի անուանական արժէքը : Ուրեմն Միտիլլիի դրամատան ներկայ դրամագլուխն է 168,000 ոսկի որ կը ներկայացնէ 24,000 բաժնեթուղթ իւրաքանչիւրը 7 ոսկիի : Բաժնետէրերու

ժողովը իրաւունք տուաւ միեւնոյն ատեն վարչական ժողովին, պէտք եղած ատեն իւրաքանչիւրը 7ական ոսկիէն 36,000 բաժնեթուղթ կամ միեւնոյն քանակութեամբ պարտաթուղթ հրապարակ հանել: Ասկէ զատ նաեւ հիմնադիրներու համար 100 բաժին որոշուելով, ընդունուած է նաեւ անոնց մասնակցութիւնը զուտ հասոյթին հետեւեալ կերպով: Վճարուած դրամագլուխին վրայ 100ին 5 տոկոս: Մնացորդը կը բաժնուի հետեւեալ կերպով: Պահեստի դրամագլուխին վրայ 100ին 10, վարչական խորհուրդին 100ին 10, տնօրէնին և պաշտօնէութեան 100ին 5, հիմնադիրներուն բաժին 100ին 10, բաժնետէրերու 100ին 65: Այս դրամատան բաժնեթուղթերը 1900ին կ'արժէին 8.50 ոսկի 1901ին 8.75, իսկ յաջորդ տարիները հետզհետէ եղած են 8.50, 6.75, 6.60, 6 ոսկի, այժմ կ'արժեն 5.20:

* * *

Սակարանի արժեթուղթերուն և պարտաթուղթերուն վրայ մեր տուած ծանօթութիւնը ահաւասիկ լրացաւ: Գործի կեանքին և մանաւանդ սակարանական գործառնութեանց հետամուտ անձեր, անտարակոյս պիտի հետաքրքրուին և օգտուին այս ծանօթութիւններէն որոնց նման կատարեալ տեղեկութիւններ չեն երեւցած մինչեւ հիմա, հակառակ մեր ամէն օր պատահելուն կարգ մը արժեթուղթերու և պարտաթուղթերու անուններուն, որոնց գոյութեան ու ծագման մասին շատ նուազ տեղեկութիւն ունինք:

ԱՐԻՒ ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ



ՆՃԱՆԱԻՈՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼՆԵՐ

(1 Յուլիս 1905—1907 Օգոստոս 1)

1. ԱՔԻԿ ԷՖ. ՈՒՆՃԵԱՆ. — Ծնած է Կ. Պոլիս 1831ին, նախապէս մանրավաճառ և յետոյ վաճառական: Երկար ատեն Գասթէմունի բնակած է և հոն հետզհետէ ընդարձակելով իր առեւտրական գործերը կառավարական պաշտօնատանց հայթայթիչ եղած է: Յետոյ Էտիրնէ Բ. դօրաբանակին գլխաւոր հայթայթիչը եղած է իր եղբոր Մաթուս ԷՖ. Ունճեանի հետ: Հուսկ ուրեմն Կ. Պոլիս Սպարապետի դրան հետ մեծ գործառնութիւններ ունեցած է: Իր հաւատարմութիւնը և իրր վաճառական պատուաւոր գործառնութիւնները Կայսերական զնահատութեան արժանացած են, և պատուուած է աստիճաններով և պատուանշաններով, այսպէս բարձրացած էր Պալայի աստիճանին և ունէր Օսմանիյէ առաջին և Մէճիսիյէ երկրորդ պատուանշանները:

Որչափ պիտական շրջանակի նոյնքան ևս Պատրիարքարանի շրջանակին մէջ ծանօթ անուն մը եղած է ինքը: 1860էն սկսեալ յաճախ անդամակցած է Պատրիարքարանի ժողովներուն, ինչպէս նաև. նախ Բերայի և ապա Գատըղիւղի Թաղական Խորհուրդներուն, 1865ին Ելմտից Հոգաբարձութեան անդամ ընտրուած և հրատարած է: Իր ամէնէն արդիւնաշատ գործերը եղած են Սովելոց, ինչպէս նաև անոր յաջորդող Արհեստական վարժարանի Յանձնաժողովներու անդամակցութիւնները, և Արմաշի Դպրեվանուց — որ իր նախաձեռնութեամբը կազմակերպուած էր — և Սանասարեան վարժարանի Կ. Պոլսոյ Խնամակալութիւններուն: Ինչ-

պէս իր աշխատութիւնները նոյնպէս նաեւ իր նուէրները չէ զլացած իր պատկանած համայնքին կրթական եկեղեցական և բարեսիրական հաստատութեանց : Արմաշու Դպրեվանքին մեծագոյն բարերարը հանդիսացած է , իր կողմէն գոցելով նոյն հաստատութեան տարեկան բացը : Ասկէ զատ նշանակելի են Սկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ վերաշինութիւնը 1888ին՝ նախորդ տարւոյ հրդեհէն յետոյ , և Ա.զ.գ. Հիւանդանոցի Գ. Թեւին Ունճեան յարկաբաժինին շինութիւնը և ուրիշ բազմաթիւ նպաստները զանազան հաստատութեանց՝ որոնց թիւը կրնայ շատ երկարիլ : Վախճանեցաւ 1905 Օգոստոս 13ին և թաղուեցաւ Շիշիի գերեզմանատունը :

2. ԳՐԻԳՈՐ ԷՖ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ծնած է 1828ին Գուճգարու , և որդին է սրմաքէշ Յովհաննէս անուն պարզ արհեստաւորի մը : Նախապէս հօրը արհեստին հետեւեցաւ , յետոյ վաճառականութեան ձեռնարկեց : Ինքն ալ հայթայթիչ եղաւ Սպարապետի դրան և Մովային նախարարութեան , միւս կողմէն զբաղելով նաեւ սեղանաւորութեամբ : Օսմանեան կառավարութիւնը պատուած էր Միւթէմայիլի աստիճանով և Ա. Մէճիալիյէ և Գ. Օսմանիյէ պատուանշաններով :

Պատրիարքարանի շրջանակին մէջ ծանօթ է իբր վազեմի և փորձ ժողովական :

Բերայի թաղին կարեւոր ծառայութիւն մը մատուցած է 1877ին Ալգազարր գրաւումէ փրկելով : Իր հեղինակութիւնը կրնայ համարուիլ Կալուածոց Հոգարարձութիւնը որ խիստ օգտակար եղած է թաղին :

Պատրիարքարանի ժողովներու մէջ առաջին անգամ 1865ին Նլմալից Հոգարարձութեան անդամակցութեան կոչուած է , յետոյ 1865-67 , 1872-73 , 1874-76 , 1877 եռամսեայ , 1878-80 շրջաններու քաղաքական ժողովի

անդամակցութիւն վարած է : Երկար ատեն ազգային շրջանակէ քաշուելէն յետոյ, 1896ին առժամեայ Խառն Ժողովի և յետոյ 1896էն մինչեւ իր մահը կրկին Քաղաքական Ժողովի անդամակցած է :

Իր օժանդակութեամբը վերաշինուած է Գումգարուի Ս. Լուսաւորչեան աղջկանց վարժարանը, վերջին երկրաշարժէն յետոյ, ինչպէս նաեւ ինքը մատակարարած է իր եղբօրը Տիգրան Գարակէօզեանի կտակին հետեւանօք Որբանոցին սահմանեալ մասը :

Մեռաւ 1905 Սեպտեմբեր 2ին և թաղուեցաւ Շիշլիի գերեզմանատունը :

3. ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ծնած է 1842ին Կ. Պոլիս Սամաթիա թաղը, ուր առած է իր նախնական կրթութիւնը, և յետոյ Մայր Վարժարանի մէջ աւարտած իր ուսման շրջանը 1860ին : Յետոյ Ամասիա գացած և հոն 1863ին սարկաւագ և 1865ին վարդապետ ձեռնադրուած է. 1867ին Կ. Պոլիս կուգայ և Սամաթիոյ (1867-73) և Բերայի (1873-1883 և 1885-88) քարոզչութիւնները կը վարէ : Այդ միջոցին կ'անդամակցի Կրօնական Ժողովին (1874-76, 1878-80, 1886-88 շրջաններու) և զանազան խորհուրդներու և յանձնաժողովներու :

Գաւառական առաջնորդութեանց ալ գացած է. այսպէս 1883-85՝ Թօգատի առաջնորդ, 1888-89՝ Տրապիզոնի Պատր. Փոխանորդ, 1890-1898՝ Իզմիրի առաջնորդ, 1899-1900՝ Վանայ Պատր. փոխանորդ, 1901-1903 Թոտոսթոյի և 1904-1905 Տրապիզոնի առաջնորդ եղաւ : 1889էն մինչև 1891 Կ. Պոլսոյ մէջ Պատրիարքական Փոխանորդի պաշտօն վարած է և միշտ լաւ անուն թողած է իր պաշտօնավարութեանց մէջ :

Վախճանեցաւ 1905 Նոյեմբեր 4ին Տրապիզոնի մէջ և թաղուեցաւ եկեղեցւոյ բակը :

4. ԳԱՅՐԻԷԼ ՓԱՇԱ ՍԵՒԵԱՆ ծնած է 1822 Յունվ. 6ին Բերա : 1835ին վիեննայի Մխիթարեանց վանքը կը դրկուի կրօնաւոր ըլլալու համար , սակայն 1843ին վանքը կը ձգէ և Կ. Պոլիս կայսերական բժշկական վարժարանը կը մտնէ , ուրկէ 1849ին վկայական կը ստանայ : 1851ին ծովային գինուորական բժիշկներու դասակարգը կ'անցնի և բազմաթիւ ճամբորդութիւններ կը կատարէ մարտանաւերու հետ : 1860ին անդամ կ'ընտրուի Կայսերական բժշկական ընկերութեան և 1862ին հիւանդանոցի բժիշկ կ'ըլլայ : 1871ին ծովային բժշկական նորակազմ խորհուրդին անդամ կ'անուանուի վիրաշայի աստիճանով և յաջորդ տարին դեր-նախագահ կ'ըլլայ նոյն մարմնոյն :

1876ին Կարմիր Մահիկին ընկերութեան հիմնադրաց ժողովին և 1892ին Բ. Գուռը գումարուած առողջապահական ժողովին կ'անդամակցի :

1892ին շիվա-փաշայութեան աստիճանին կը բարձրանայ և 1894ին Գ. Օսմանիյէ և 1896ին Բ. Մէճիտիյէ պատուանշանները կը ստանայ :

1897ին հանգստեան կը կոչուի :

Իսկ տոհմային-եկեղեցական շրջանակին մէջ 1878ին հոգաբարձու եղած է շէյ-հուովմէականաց Օրթագիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանին : 1879 Հոկտ. 28ին մայրենի եկեղեցւոյ գիրկը դարձած է և Օրթագիւղի թաղականութեան պաշտօնին կոչուած է միջոց մը :

Գրական աշխատութիւններ ալ ունեցած է որոնցմէ շատ քիչերը միայն հրատարակուած են : Ասոնցմէ աշխարհաբար ոտանաւորները և ոսկեգարու գրաբարով թարգմանուած Տեղեւնաբը և նախնեաց Հելլենարանութեան վրայ գիրի առած ուսումնասիրութիւնը ծանօթ են :

Մեռաւ 1905 Նոյեմբեր 27ին :

5. ԳԱՅՐԻԷԼ ԷՓ. ԷԼԻԿԻԻՋԷԼՍԱՆ.—Ծնած է 1844ին

Կ. Պոլիս Սամաթիա թաղը : Նախնական ուսումը Սահակեան վարժարանի մէջ ստանալէ յետոյ առեւտրական ասպարէզ մտած է : Հմուտ հայերէն և անգլիերէն լեզուաց, առեւտրական գործով Պարսկաստան ուղեւորած և պարսիկ լեզուին ալ հմտացած է : Թէեւ գրական երկեր չէ ընծայած սակայն ինքը մասնաւոր սէր մը տածած է Պարսիկ գրականութեան համար՝ որմէ ձեռագիր թարգմանութիւններ թողած է :

Հանրային պաշտօններ շատ հազուադիւարէն վարած է, իր մահէն յետոյ երեւան ելաւ իր մէկ կտակը որով 500 ռսկի կը թողուր իբր անձեռնմխելի դրամագլուխ, տոկոսովը Սամաթիոյ և Կեդրոնական վարժարաններու աղքատ ուսանողաց գրական պիտոյք հայթայթելու համար :

Մեռաւ 1905 Դեկտեմբեր 28ին և թաղուեցաւ Շիշլիի գերեզմանատունը :

6. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊ. ԳԷՈՐԳԵԱՆ. — Ծնած է 1828 Մարտ 22ին Ռօտոսթոյի մէջ : Աշխարհական անունն է Կարապետ : Կանուխ Երուսաղէմ կ'երթայ և 1854ին վարդապետ կը ձեռնադրուի և Պէրուժ տեսուչ կը զբոսնի : 1856–1863ի Աւագ թարգման, և 1863–65 Հնդկաստանի նուիրակ կ'ըլլայ : 1876ի Եպիսկոպոս կը ձեռնադրուի և 1877ին Ռօտոսթոյի առաջնորդ կ'ընտրուի և սամնեմէկ սարի արդիւնաւոր պաշտօնավարութիւն կ'ունենայ : 1888ին Երուսաղէմ կը դառնայ և Դարպասապետ կ'անուանուի : 1896ին Կ. Պոլիս և Թէքիրտաղ կ'ուղեւորի և դարձին կրկին Դարպասապետ և Պատ. Փոխանորդ կը կարգուի, և մինչև իր մահը կը վարէ այդ պաշտօնները :

1893ին Արքեպիսկոպոսութեան ախտողոս կը ստանայ : Վախճանեցաւ 1906 Յունվար 10ին Երուսաղէմի մէջ :

7. ՄԱԿԱՐ ԵՊ. ԲԱՐԵՈՒԴԱՐԵԱՆ.—Ծնած է 1836ին Շուշիի մէջ, և երիտասարդութեան միջոցին Երուսաղէմ գացած և Ս. Յակոբեանց վանքի միաբան եղած է: 1868ին վարդապետ կը ձեռնադրուի Մելիքսեդեկ Վրդ. Մուրատեանի հետ, յետոյ Արքեպիսկոպոս, որուն հետ թէ՛ երկրակից էր և թէ՛ մտերիմ բարեկամ:

1872ին այս երկու եկեղեցականները՝ Մովսէս Վ. Կէօմրիւքճեանի հետ, միաբանական անհամաձայնութեան մը պատճառաւ թողուցին Երուսաղէմի վանքը և Կ. Պոլիս եկան ուր մտադիր էին վարժարան մը հիմնելու: 1876ին Մելիքսեդեկ Վրդ. Իզմիրի առաջնորդ կ'ընտրուի և Մակար Վրդ.ը իրեն հետ Իզմիր կը տանի իրր Առաջնորդական փոխանորդ:

Մակար Վրդ. հոն երկար ատեն կը մնայ և օգտակար կ'ըլլայ Իզմիրի վիճակին իրր քարոզիչ, լուսարար և պահ մըն ալ հիւանդանոցին տեսուչ: Յետոյ իր ծննդավայրը Ղարապաղ կը դառնայ և ինքզինքը գրական աշխատութեանց կը նուիրէ: Իր ամէնէն նշանաւոր գործն է Աղուանից երկիր եւ դրացիք անուն երկհատոր գործը որ Իզմիրեանց մրցանակով ալ վարձատրուած է: Արդի Ս. Հայրապետը Մակար Վրդ.ը կոչեց Էջմիածին ուր վարեց լուսարարապետի և Սինոդի անդամակցութեան պաշտօնները: 1894ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

Իր հրատարակեալ երկերը տասնէն աւելի են:

Վախճանեցաւ 1906 Փետր. 7ին Էջմիածնայ մէջ:

8. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՐՔԵՊ. ՉԱՄԻՂԵԱՆ.—Ծնած է 1838 Մարտ 9ին Կ. Պոլիս Լսնիկա թաղը: Աշխարհական անուն է Ռուբէն: Նախնական ուսումը կ'առնէ Մայր-Վարժարանին մէջ: Յետոյ պահ մը ուսուցչութեան պաշտօնով էտիրնէ կ'երթայ: 1861ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Գատը-Գիւղի մէջ: 1862ին գաւազանի

Իշխանութիւն և 1865ին ծայրագոյնութեան աստիճան կը ստանայ, երբ ինքը Պալատու քարոզչութեան պաշտօն կը վարէր: 1867ին Պրուսայի առաջնորդ կ'ընտրուի և յաջորդ տարին նոյն վիճակին վրայ եպիսկոպոս կը ձեռնադրուի: 1871ին Քէօթահիա կ'երթայ քննիչութեան պաշտօնով:

Քսանեհինգ տարի արդիւնաւորապէս Պրուսայի առաջնորդութիւնը վարելէ յետոյ 1891ին Կ. Պոլիս կուգայ և այլ ևս չի վերադառնար Պրուսա: 1895ին Կեդր. Վարչութիւնը իր հրատարականը կ'ընդունի: 1896 Յուլիս 27ին Կ. Պոլսոյ Պատրիարքական տեղապահ կ'ընտրուի և չորս ամիս կը պաշտօնավարէ:

Իր բարւոք ծառայութեանց համար Կայսերական կառավարութենէն կը ստանար ամսաթոշակ և պատուուած էր Ա. կարգի Մէճիտիէ և Բ. կարգի Օսմանիէ պատուանշաններով:

Վախճանեցաւ 1906 Ապրիլ 7ին և թաղուեցաւ Շիշլիի գերեզմանատունը:

9. ՅԱԿՈՒ ԷՖ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ. — Ծնած է 1833 Նոյեմ. 13ին և մկրտուած Մայր եկեղեցւոյ մէջ: Իր նախնական ուսումը կը ստանայ Լանկոյի Լուսաւորչեան վարժարանին մէջ: Քառասունական թուականներուն սկիզբը իր ծնողքը բողոքականութեան կը յարի և Յակոբ ԷՖ. այդ առթիւ կը փոխադրուի 1843ին Տքղ. Համլինի Պէպէքի մէջ բացած Աստուածարանական վարժարանը, ուրկէ շրջանաւարտ կ'ելլէ 1849ին և ուղղակի Ամերիկա կ'ուղեւորի եռամսեայ տաժանելի ճամբորդութեամբ մը: Չորս տարի կը մնայ կաղմարարութեան հետեւելով: 1854ին Վէզիր խանի մէջ կաղմարարութեան գործանոց մը կը հաստատէ և օրէ օր իր գործառնութիւնները կ'ընդարձակէ անվհատ աշխատութեամբ, և իր հասարակութեան

մէջ կարեւոր դիրք մը կը գրաւէ : 1868ին Բողոքականաց Ազգապետութեան պաշտօնին կը կոչուի և լայնամիտ ոգւով կը վարէ այդ պաշտօնը մինչև 1888 երբ կը հրաժարի այդ պաշտօնէն :

Ունի նաև գրական աշխատութիւններ , որոցմէ ծանօթ է Խորհուրդի հաշտացեղոց 'անուն երկասիրութիւնը և Բիւրակնի ու Աւեսաբերի մէջ գրած քանի մը յօդուածները :

Մեռաւ 1906 Մայիս 22ին և թաղուեցաւ Շիշիի Բողոքականաց գերեզմանատունը :

10. ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԱԶԱՐԵԱՆ.—Ծնած է 1851ին ի Կ. Պոլիս : Ստացած է բարձրագոյն կրթութիւն , պատկանելով ծանօթ և հարուստ ընտանիքի մը : Աւելի գործնական կեանքի մէջ փայլուն ձիրքեր ցոյց տուած է հօրենական վաճառականական գործառնութիւնները շարունակելով , և իր կարողութիւնը և ձեռներէցութիւնը ուշագրաւ հանգամանք ունենալով Կ. Պոլսոյ Առևտրական Սենեակի նախագահութեան կարեւոր պաշտօնին կոչուած է և երկար ատեն օգտակարապէս վարած է այդ պաշտօնը :

Իրր նախանձախնդիր անձնաւորութիւն իր պատկանած Հայ-հռոմէական համայնքին վարչական գործոց ալ նպաստած է : Մասնաւորապէս իր բարերարութիւնը վայելած են Հաճընի և Պիլէճիկի Հայ-հռոմէականաց վարժարանները , ինչպէս նաև Պէօյի-քտէրէի և Բէնտիքի կարօտ դասակարգը :

Մեռաւ 1906 Օգոստոս 21ին ի Ֆրանսէնպատ (Աւրստրիա) , ուր գացած էր իր անձը դարմանելու :

11. ՆՇԱՆ ԷՖ. ՍԷՖԷՐԵԱՆ . —Ծնած է 1848ին Կ. Պոլիս և խնամեալ դաստիարակութիւն մը ստացած

է : Արտակարգ ընդունակութիւն ունենալով, կարողութեամբ իւրացուցած է թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն և յետոյ յունարէն ու գերմաներէն լեզուները : Կանուխէն Արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօնի մտած է եւ հետզհետէ, առաջանալով կարեւոր պաշտօններու կոչուած է : 1880ին Քաղաքական ճիւղի դիւանապետ և յետոյ Հիւպատոսարաններու ղեկավարին Տնօրէն եղաւ : Միջոց մը Արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար և Պետական Խորհրդոյ քաղաքային ճիւղին անդամակցութիւնը վարելէ յետոյ 1894ին անուանուեցաւ Բ. թարգման Կայսերական Պալատան և Տեսուչ օտար մամլոյ դիւանին :

Իր ուղղամիտ ծառայութեանց համար պատուուած էր Պալայի աստիճանով և ունէր Ա. կանակուռ Մէճիտիէ և Ա. կարգի Օսմանիէ պատուանշաները, ինչպէս նաև ոսկի և արծաթ Իմթիազ և ոսկի Լիազաթ շքադրամներ :

Մեռաւ 1906 Օգոստոս 24ին և թաղուեցաւ Շիշլիի գերեզմանատունը :

12. ՆՆՐԻՄԱՆ ԽԱՆ.— Ծնած է 1836ին Թէհրանի մէջ և սերունդն է Պարսկաստանի Հայ-հռովմէական նշանաւոր ընտանիքներէն մէկուն : Իր նախնական ուսումը ստացած է նախ Պարսկաստանի և ապա Բարիդի մէջ : Հմուտ էր թուրքերէն, Հայերէն, Պարսկերէն, Գրանսերէն և Գերմաներէն լեզուներուն : Բարիզէն Պարսկաստան դարձին պետական ծառայութեան մէջ մտած է, ուր իր ցոյց տուած կարողութիւնները զինքը արագ արագ առաջացուցին, մինչեւ որ 1878ին Վիեննայի դեսպան անուանուեցաւ : Մինչեւ 1904՝ այսինքն 26 տարի շարունակ նոյն պաշտօնը վտրեց կատարեալ արժանաւորութեամբ և միշտ գնահատուեցաւ Պարսից Շահին կողմէ, որ զինքը պատուած էր Առիւծ և Արեգակ պատուանշանին ադամանդակուռ

աստիճանովը, որ շատ հազուադէպ կերպով կը շնորհուի ։
Վիեննայի արքունեաց և բարձր շրջանակին մէջ ալ
մեծ համար մ' կը վայելէր ։ Քանիցս դիւանագիտական
պաշտօններով Եւրոպայի զանազան արքունիքները այցե-
լած է, ինչպէս նաեւ Կ. Պոլիս . հոս ամուսնացած է Տա-
տեան ընտանիքին փեսայանալով ։

Բանասէր ու ուսումնասէր ալ էր, և իր օժանդա-
կութիւնը չէր զլացած Պարսկաստանի Հայ վարժարան-
ներուն, 7 ձեռագրան նպաստներ ընելով ։

Երո ու 1906 Օգոստոսի մէջ յՕսպանտ (Պելճիզա) ։

13 . ՆԱՀԱՊԵՏ ԵՊՍ . ՆԱՀԱՊԵՏԵԱՆ .— Ծնած է 1848ին
Ախլցխայի մէջ ։ Աշխարհական անունն էր Արչակ իր նախ-
նական կրթութիւնը առած է Թիֆլիսի Ներսէսեան վար-
ժարանին մէջ, և յետոյ աշակերտած է տեղւոյն պետա-
կան գիմնադիտնի երկրորդական կրթութիւն ստանալու
համար, իսկ բարձրագոյն և մասնագիտական ուսումը
ստացած է Մոսկուայի համալսարանին մէջ ։ Մեծ հմտու-
թիւն ունէր Ռուսերէնի և մանաւանդ մասնագէտ մըն էր
բնական և մաթէմատիքական գիտութեանց ։ Մոսկուա-
յէն դարձին Թիֆլիսի Ներսէսեան վարժարանին տեսուչ
կը կարգուի և կատարեալ ձեռնհասութեամբ կը վարէ այդ
պաշտօնը ։ Գէորգ Դ. Կաթողիկոս գնահատելով Նահա-
պետեանի կարողութիւնը 1881ին զինքը կը հրաւիրէ Էջ-
միածին Գէորգեան Ճեմարանի լիազօր տեսչութեան և
Ռուսահայոց դպրոցական և կրթական գործոց խորհրդա-
կանի կարեւոր պաշտօններով ։ Նահապետեան նշանակելի
ծառայութիւններ կը մատուցանէ Գէորգեան Ճեմարանին
բաւական երկարատեւ պաշտօնավարութեամբ մը և գնա-
հատելի անձնուիրութեամբ մը ։

Մակար Կաթողիկոսի փափաքով 1888ին կուսակրօն
քահանայ կը ձեռնադրուի Ներսէս եպս . Խուզավէրդեանէ

Ս. Գայիանէի վանքին մէջ : Որքան կարող առուցիչ նոյնքան նաեւ տիպար ու պարտաճանաչ եկեղեցական մը կը հանդիսանայ :

1891ին կը թողու Գէորգեան Ճեմարանի բնօրինակ պաշտօնը և կը ստանձնէ Կարսի փոխ-առաջնորդութեան պաշտօնը :

1894ին հանդուցեալ Ս. Հայրապետը Ս. Իջմիածին կոչեց զինքը : Նահապետ վրդ . Ն. Ս. Օծութեան ամենէն վատահելի խորհրդականը դարձաւ վարչական, կրօնական և դպրոցական գործերու մէջ : Կալուածական գործոց միջոցին ատեն մը հարկադրուեցաւ Մայր Աթոռը թողուլ և առանձնանալ Արիմու Ս. Խաչ վանքը : Եւր 1905 Օգոստոս 1/14ի կայսերական Ուրբազով եկեղեցական կալուածները վերադարձուեցան, Նահապետ վարդապետ դարձաւ Մայր Աթոռ և ի վարձ իր անձնուէր աշխատութեանց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ (1905) և Սինոդի անդամ նշանակուեցաւ :

1906ի սկիզբները Թիֆլիս ղրկուեցաւ՝ Կովկասի կառավարիչին քով ներկայացնելու համար փոխանորդաբար Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եկեղեցական կալուածներու վերադարձուելու գործը կարգադրելու համար :

Նահապետ եպիս . Նահապետեան՝ այնպիսի ատեն մը որ ամենէն աւելի իրեն նման եկեղեցականներու պէտքը զգալի էր ծերունի Կաթողիկոսին քով, կը վախճանի 1906 Հոկտեմբեր 1ի Նոր Նախիջեւանի մէջ :

14. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖ. ՊՕՅԱՃԵԼԵՆ Ժնած է Կ. Պոլիս Օրթոդոքս թաղը : Պետական ծառայութեան մէջ բարձրացած է մինչեւ Արքունի կալուածոց անօրէնութեան պաշտօնին, սակայն մեր մէջ աւելի ծանօթ եղած է Պատրիարքարանի շրջանակին մէջ իր մատուցած ծառայութիւններով : Իր տոհմային շրջանակին մէջ մուտքը կը սկսի

1867ին երբ առաջին անգամ իր բնակած Թաղին Օրթա-
գիւղի վարժարանին նպաստամատոյց մարմնոյն գանձա-
պետութեան կը կոչուի : Յետոյ 1870 Մարտ 6ին Տնտես.
Խորհուրդի անդամ կ'ընտրուի և 1871 Յունվար 8ին դար-
ձեալ կը վերընտրուի և նոյն պաշտօնը կը վարէ մինչեւ
1872 Ապրիլ 29 :

1872-73ին Քաղաք. Ժողովոյ Բ. Ատենադպիր կ'ըլլայ
և 1876-77ին Ա. Ատենադպիր և յատուկ պաշտօնով Եօզ-
կատի առաջնորդարանի գործոց համար վարչական
քննիչ կը զրկուի (1876) :

1877 Հոկտեմբեր 14ին անգամ կ'ընտրուի Ուսումն.
Խորհուրդին և Ատենապետութեան պաշտօն կը վարէ մին-
չեւ 1879 : Այդ Ուսումն. Խորհուրդը ամենէն արդիւնա-
ւոր մարմիններէն մէկը եղած է : 1879ին կրկին իբր քննիչ
Տիարպէքիր կը զրկուի ընկերակցութեամբ Գարեգին Վ.
Սրուանձտեանցի :

1885-87 , 1889-91 և 1894-96 երկամեայ տարեշէր-
ջաններուն երկուս վերստին կ'անդամակցի Ազգ. Կեդրո-
նական Վարչութեան Քաղաք. Ժողովին և Պանտրրմայի
առաջնորդական խնդրոյն համար 1886ին իբր լիազօր
քննիչ Պանտրմա-Պալըքէսիր կ'ուղեւորի և կը յաջողի վերջ
տալ առաջնորդական խնդրոյն :

1895ին Պատրիարքարանի կողմանէ Համազգային Ան-
կեղանոցի վարչութեան ներկայացուցիչ կը կարգուի :

Մեռաւ 1906 Նոյեմբեր 13ին :

15. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ՍԵՂՐԱՔԵԱՆ.—Ծնած է
1845ին Երեւանու նահանգին Սուրմալու գաւառին Խալ-
Ֆալու գիւղը : Հաղիւ 10 տարեկան էր երբ մտաւ Ս. Էջ-
միածնի Ժառանգաւորաց վարժարանը , և հոն ժամանակ
մը Եղիազար եպս.ի փոքրաւորութիւն ընելէ յետոյ 1863ին
սարկաւազ ձեռնադրուեցաւ Մոսկուայի մէջ : Երկու տարի

հոն իր ուսումը կատարելագործելէ յետոյ դարձաւ էջմիածին և անմիջապէս վարդապետ ձեռնադրուեցաւ (1865), և յետոյ անմիջապէս Կ. Պոլիս անցաւ ինքնազարգացման համար : Կ. Պոլսոյ մէջ մասնաւորապէս Ֆրանսերէնի հետեւեցաւ : Մէկ տարի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ քարոզչութիւնը վարելէ յետոյ, 1866ին անցաւ Պեսարապիա՝ որուն առաջնորդ կարգուած էր իր հոգեւոր հայրը Եղիազար Արքեպիսկոպոս : Այդ առիթով Մոսկուա և Բեդերսպուրկ եւս այցելեց : 1867ին Շուշիի փոխառաջնորդ և քանի մը ամիս յետոյ Տաթևու վանքին Վանահայր և Յաջորդ նշանակուեցաւ : 1869ին Երնջակու Ս. Կարապետի վանահայր եղաւ և չորս տարի պաշտօն վարեց : 1874ին Ճեմարանին ուսանողներ հաւաքելու պաշտօնով շրջագայեցաւ Երեւանի, Թիֆլիզի, Ղարապաղի և Շամախու վիճակներուն քաղաքներն ու կարեւոր գիւղերը : 1875-76 տարեշրջանի Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի հայերէնի դասախօս եղաւ և 1876-80ին վարեց Արցախի Թեմին փոխանորդութիւնը : 1880-82 ուսուցիչ է Գէորգեան Ճեմարանի մէջ : 1882 Մայիս 9ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և նշանակուեցաւ առաջնորդ Վրաստանի և Իմէրէթի Թեմին : 1883 Փետրվար 20ին պաշտօնի ձեռնարկեց և 1889 Դեկտեմբերին թողուց, և Մակար Կաթողիկոսի մահէն յետոյ 1890ին Սինողի անդամ նշանակուեցաւ եւ 1894ին Աստրախանի առաջնորդ : 1906ին հրաժարեցաւ և էջմիածին դառնալու վրայ ճամբայ ելած էր երբ Թիֆլիսի մէջ վախճանեցաւ : Իր վարչական զբաղմանց հետ նաեւ գրական գործունէութիւն ալ ունեցած է թարգմանելով Տրէյբրի Բաղասիրթոքեան պատմութիւնը, Էրնէսդ Նաւելի Յաւիտենական կեանքը և Հակոսահատուզեան ճանապարհորդութիւնը : Իսկ իր ինքնագիր գործերն են Երնջակու գաւառի վրայ տեղեզրական աշխատութիւն մը (1872), Ամուսնական իւրև-

դիրներ (1891), Յովհաննէս եպիսկ. Շահխաթունէանցի կենսագրութիւնը (1898), Քահանայական խնդիրը (1900) և Պատկերաց պաշտօնը Հայ եկեղեցւոյ մէջ (1904) : Թողած է նաեւ ձեռագիր վիճակի մէջ ուրիշ աշխատասիրութիւններ : Այս արդիւնաւոր եկեղեցականը վախճանեցաւ 1906 Նոյեմբեր 13ին :

16. ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍ. ՄԱՐԿՈՍԵԱՆ.—Ծնած է Արարկիրի Ջազ գիւղը 1835ին, աշխարհական անունն է Կարապետ, կանուխէն պանդխտած է Կ. Պոլիս ապրուստի համար, և երկու տարուան անօգուտ փորձերէ յետոյ Ս. Փրկչի Աղգ. Հիւանդանոցի որբանոցը մտած է 1850ին : Հոն կը ստանայ երկու տարուան մէջ նախնական ուսում մը : Իպրոցը ձգելէ յետոյ ջանքեր կ'ընէ պատկերահանութեան հետեւելու, սակայն միջոցներու պակասութեան պատճառով կը ստիպուի Երուսաղէմի Կ. Պոլսոյ փոխանորդ Կարապետ վարդապետի քով ծառայութեան մտնել : Քանի մը տարի յետոյ կարճ միջոց մը վիմագրութեան կը հետեւի և յետոյ Յոյն նկարիչի մը քով շարաթ մը կը ծառայէ : 1857ին Կարապետ վարդապետ պաշտօնէն կը հրաժարի և Երուսաղէմ կ'երթայ Կարապետն ալ միասին տանելով, որ հոն կ'աշխատի վիմագրութեան գործը առաջ տանիլ : 1864ին Եսայի Պատրիարքի հետ էջմիածին կ'երթայ և դարձին Կ. Պոլիս ալ կը մնայ վեց ամսուան շափ : 1865ին Երուսաղէմ կը դառնայ և հայերէնի և գծագրութեան ուսուցիչ կ'անուանուի, առանց ձգելու վիմագրութիւնը և պատկերահանութիւնը : 1868ին Արարկիր կը դառնայ և կ'ամուսնանայ : 1870ին Երուսաղէմ կը դառնայ ուր կը լսէ իր կնոջ և որդւոյն մահը : 1871ին վարդապետ կը ձեռնադրուի և նկարչութեան կը հետեւի : Քիչ յետոյ Կ. Պոլիս օղափոխութեան կուգայ և անկէ կ'անցնի Եգիպտոս վանքապատկան կալուածոց գործերու համար, և տարի

մը կը մնայ հոն : Մէկուկէս տարի ալ Դամասկոսի տեսչութիւնը կը վարէ : 1881ին իբր նուիրակ Ռուսաստան կը դրկուի և հինգ տարի մերձաւորապէս կը շրջագայի : 1885 Նոյեմբեր 24ին Մակար Կաթողիկոսէն եպիսկոպոսութիւն կը ստանայ և Երուսաղէմ դառնալով Դարպասապետ կ'անուանուի , միևնոյն ժամանակ հայերէնի և կրօնի ուսուցիչ ըլլալով ժառանգաւորաց վարժարանին մէջ : 1888ին Կ. Պոլիս կուգայ իբր հրաւիրակ Տ. Յարութիւն Պատրիարքը Երուսաղէմ առաջնորդելու և մերձաւորապէս տարի մը կը մնայ : Երուսաղէմի մէջ 1889ին դպրոցներու տեսուչ կ'անուանուի և երկու տարի նոյն պաշտօնը կը վարէ , իսկ իբր դասախօս՝ հայերէնի և կրօնքի դասերը մինչև 1903 միշտ ինքը ստանձնած էր : 1891էն ի վեր կ'անդամակցէր Տնօրէն Խորհրդոյ , թէև անուանական կերպով : Մինչև վերջը նկարչութեան հետեւած և գծած է բազմաթիւ պատկերներ :

Ունի նաև գրական աշխատութիւններ : Սիրն ամսաթերթի մէջ հրատարակած է տաղեր ու յօդուածներ : Ունի նաև 1. Անկն մարդու բարեկամը , 2. Երկու խօսք եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած , 3. Աղօթագիրք Ս. Տեղեաց , 4. Իրական կեանքի սոցնուած բարոյական պատմութիւններ , 5. Երկու խօսք Ազգ. դաստիարակութեան վրայ , 6. Երուսաղէմի վանքին անցեալէն ու ներկայէն անուն տեսրակներ և զանազան յօդուածներ կարգ մը լրագրաց մէջ՝ յաճախ անստորագիր :

Չեռագիր վիճակի մէջ ձգած է քրիստոնէութեան , ճարտասանութեան և կրօնագիտութեան վերաբերեալ դասագիրքեր և ընդարձակ հաստր մը՝ Չորս Աւեստրաններու մեկնութիւնը : Լաւ բնմասացի անուն կը թողու : Վախճանեցաւ 1907 Յունվար 11ին :

17. ՅԱԿՈՒ ԷՖ. ՈՍԿԱՆ. — Կ. Պոլսեցի , արդիւնա-

ւոր ուսուցիչ և բազմամեայ աշխատաւոր: Իր ուսումը Վենետիկի մէջ առած է և յետոյ Կ. Պոլիս գալով (1852-53) ինքզինքը ուսուցչական ասպարէզի նուիրած է: Իր մասնագիտութիւնն էր ֆրանսերէն լեզուն:

Ասկէ զատ ծառայած է Հայ գրականութեան հրատարակելով բազմաթիւ տետրակներ, ոտանաւորներ եւ ճառեր, որոնք տաղանդով և զգացմամբ գրուած են: Միայն իր քով երկարաշունչ աշխատութեան մը համար անհրաժեշտ համբերատարութիւնը պակասած է և իր գործերը ցրիւ վիճակ մը ունին այսօր:

Պատրիարքարանի ժողովներու մէջ միշտ զանազան պաշտօններ վարած է, սակայն մասնաւորապէս Ուսումնական Խորհուրդներու յաճախ անդամակցած է:

Այսպէս 1861 Ապրիլ 18ին առաջին անգամ նոյն Խորհուրդին անդամ ընտրուած և մինչև Հոկտեմբեր անդամակցած է անոր:

1874 Յուլիս 9ին երկրորդ անգամ ընտրուած է և մինչև 1877 երեք տարի պաշտօն վարած է: 1884-85 և 1891-94 շրջաններու կրկին անդամակցած է նոյն Խորհուրդին, ի բաց թողլով Ուսումնական Խորհուրդներէն կարգուած ըստ յանձնաժողովները և օժանդակ մարմինները որոնց գրէթէ միշտ գործակցած է:

Մեռաւ 1907 Յունվար 13ին:

18. ԳՐԻԳՈՐ ԽԼԿՆ ՇԼՄՏԻՆՆՆԻՆ. - Ծնած է 1852ին Կ. Պոլիս Նէնի-Գարու թաղը և որդի է մուշտակագործ Աւետիս Շամտանճեանի:

Նախնական կրթութիւնը Կ. Պոլսոյ մէջ ստանալէ յետոյ իր ուսումը շարունակած է Բարիզի մէջ և տեղւոյն առեւտրական վարժարանի շրջանը աւարտած է:

1872ին Կ. Պոլսոյ մէջ ընկերակցութեամբ իր եղբոր և հօրեղբորորդւոյն կը հիմնէ վաճառատուն մը և հետզհետէ առաջանալով կը գրաւէ առաջնակարգ դիրք:

Իր վաճառատունը տիպար հաստատութեան մը և եւրոպական համբաւ կը վայելէ իր գործառնութեանց կանոնաւորութեան և պատուաւորութեան համար :

Իբր վաճառական իր ունեցած կարողութիւնները Պարսիկ կառավարութիւնը գնահատելով Կ. Պոլսոյ Պարսկական դեսպանատան առեւտրական խորհրդական, առողջապահական խորհրդոյ Պարսկաստանի ներկայացուցիչ և դեսպանատան երկրորդ թարգման կ'անուանէ, միանգամայն պատուելով զինքը պատուանշաններով և ժառանգական խանութեան տիտղոսով :

Տոհմային եկեղեցական շրջանակի մէջ առանց գործոն պաշտօն ստանձնելու Գրիգոր խան Շամտանձեան Ազգ. Հիւանդանոցի տարեկան նուագահանդէսներու նիւթական յաջողութեան գլխաւոր սատարողներէն՝ ինչպէս նաեւ զանազան նպաստամատոյց մարմնոց քաջաւերողներէն եղած է : Մասնաւորապէս իր անհատական բարերարութիւնները բարձրագոյն կրթութեան ցանկացող պատանիներու և զրական և լրագրական գործոց ամենուստ վկայեալ է : Յանկարծական և վաղահաս կերպով կը մեռնի 1907 փետր. 1ին :

19. ՄԻՔԱՅԷԼ ԼՅՈՒՍՏԱՆՍ.— Թրքահայ ամէնէն վարպետ կատակերգակը ծնած է 1848ին Պոլսոյ քրէշ : 1853ին Կ. Պոլիս կուգայ և 1854ին կը մտնէ Ս. Փրկչեան Ազգ. Որբանոցը ուր իր հայրը՝ Միաչեայ Գէորգ պատուելի հայերէնի դասախօս էր : 1864ին ատանկարոյժի քով աշկերտութեան կը մտնէ, ու յետոյ Ազգ. Հիւանդանոցի մէջ վիրաբուժական և դեղագործական օգնականի պաշտօն կը վարէ և միջոց մըն ալ կեղծամ շինելու արհեստին կը հետեւի : 1867էն սկսեալ Սամաթիոյ և այլ թաղային վարժարանաց պարի ուսուցչութեան կը կոչուի, և 1869ին պարի դասախօսութեան յատուկ սրահ մը

կը բանայ : 1870ին առաջին անգամ թատերաբեմ կ'ելլէ Վարդովեանի խումբին մէջ :

1871-77 Վարդովեանի վարչութեան տակ թատերաբեմին ծառայելէ յետոյ Սելանիկի մէջ անկէ կը բաժնուի և Ռօտոսթօ կ'անցնի : Յաջորդ տարին կրկին կը միանայ Վարդովեանի խումբին Կ. Պոլսոյ մէջ և դարձեալ անկէ բաժնուելով առանձին խումբ մը կը կազմէ և Ադրիանօպօլիս կ'ուղեւորի : Յետոյ Ատանա (երկու անգամ) և Իզմիր կ'ուղեւորի , երբեմն թատերական ձեռնարկներով և երբեմն պարի ուսուցչութեամբ զբաղելով :

1880ին Ատանաէն Կ. Պոլիս դարձաւ և դարձեալ Վարդովեանի միացաւ : 1885ին Ս. Պէնկլեանի հետ Եգիպտոս ուղեւորեցաւ և 1886էն յետոյ երբեմն Պէնկլեանի , երբեմն Մնակեանի խումբերուն գործակցեցաւ : 1892ին պահ մը առանձին զաւեշտախումբ մը կազմեց , սակայն չկրցաւ տեւական կեանք ունենալ :

Մեռաւ կարօտ ու խեղճ վիճակի մէջ 1907 Փետրվար 2ին և թաղուեցաւ Սկիւտարի գերեզմանատունը :

18. Պ. ԱՆԴՐԱՆԻԿ ԵՕԱՆԷՍԻՍԻ . — Ծնած է 1836ին Քիչնեւի մէջ Ռումանահայ ծնողքէ : Իր նախնական կրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ յետոյ իրաւարանութեան հետեւած է , և փաստաբանութեան արհեստը ի գործ դնելով կալուածատէր և դրամատէր դարձած է :

Իր գլխաւոր զբաղումներէն մէկը եղած է հայերէն լեզուն լատիներէն տառերով գրելու գաղափարը տարածել , որուն համար շատ աշխատած է :

1862ին առաջին անգամ այս առաջարկը հրապարակ հանած է Հայ գրականութեան զարգացման համար կարեւոր տեղեկութիւն մը անուն տեսրակով մը :

Յետոյ իր երկիրը դառնալով այս գաղափարը հոն

մշակելու ծառայած է հրատարակութեան տալով լատին տառերով հայերէն քանի մը վէպեր և ուրիշ գրուածներ, ինչպէս նաև 1882ին պահ մը Յոյս անունով թերթ մը հրատարակած է նոյն դրութեամբ յատկապէս Ռուսմանահայոց, Հունգարահայոց և այլ գաղթականներու համար, սակայն չէ կրցած երկար շարունակել : 1883ին կրկին Կ. Պոլիս կուգայ և նոյն տարին նոյն դրութեան տարածմանը և օտարներու հայերէն լեզուն ուսուցանելու դիւրութիւն տալու համար՝ Առաջնորդ գաղղիերէն-հայերէն գրուցադրութեան անուն գիրք մը կը հրատարակէ (1883) :

Աշխատած է նաև լեզուաբանութեան : Իր կարծեօք ամէն լեզու միևնոյն արմատէ կը ծագի, միայն ձայնաւորներու արտասանութեան տեսակէտով իրարմէ բաժնուելով : Այս կարծիքը ապացուցանելու համար աշխատած է կազմել Բաղդասակյան բառարան մը :

Վերջերը առանձնացած էր Բարիզ և միևնոյն աշխատութեան նուիրած էր ինքզինքը :

Սակայն ինչ որ ամէնէն աւելի յարգելի կ'ընծայէ իր յիշատակը 1903 և 1904 թուականներուն՝ Նպաստից անտուկին իր 10,000ական Ֆրանքի նուիրատուութիւններն են, և յետ մահու ազգին թողած 600,000 Ֆրանքի նոր հարատուութիւնը՝ որուն մէկ ջնջին մասը պիտի յատկանայ իր բառարանին տպագրութեան :

Մեռաւ Բարիզ Յունվար ամսուան 29ին :

21. ՏՕԳԹ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՊԷՅ ՆԱԳԱՇԵԱՆ. — Ծնեալ ի Կեսարիա 1859ին. 14 տարեկան եղած ատեն Կ. Պոլիս եկած է և Նուպար-Շահնազարեան վարժարանի մէջ իր ուսումը առնելէ յետոյ Կայսերական Լիսէի շրջանն ալ աւարտած է : Յետոյ Բարիզի բժշկական վարժարանին աշակերտած և եօթը տարուան շրջանին մէջ

բժշկական վկայական ստանալով Կ. Պոլիս դարձած է : Հոս հետզհետէ առաջանալով գնահատուեցաւ , փեսայացաւ Տատեան ազգատոհմին , և անուանուեցաւ խորհրդական բժիշկ կայսերական Պալատան և Կիւմիւշ-Սուլի հիւանդանոցին , ինչպէս նաեւ պատուեցաւ Ուլա Էվվէլի աստիճանով և Մէճիտիէյի Ա. և Օսմանիէյի Բ. կարգի պատուանշաններով և շքանշաններով :

Մեռաւ 1907 Փետրվար 13ին :

22. ՏԻԳՐԱՆ ԷՖ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ. — Ծնած է Կեսարիա 1848ին Հայ-Հռոմէական ծնողքէ : Մանկութեան ատեն Կ. Պոլիս եկած և աշակերտած է վիեննայի Մխիթարեանց Բանկալթիի վարժարանը , որուն շրջանը աւարտելէն յետոյ սեղանաւորական գործոց մէջ մտած է : Միջոց մը տեղական Ծրանսերէն թերթի մը վարչական ճիւղին մէջ պաշտօն վարելէ յետոյ Վարդան փաշայի խմբագրապետութեամբ հրատարակուած Թերճեւանը Էփեսար լրագիրին վարչութեան մէջ մտաւ իբր հաշուակալ և քանի մը ամիս ետքը եղաւ Տնօրէն-մատակարար : 1877-1885 այս ձեւով նոյն լրագիրը հրատարակելէ յետոյ 1885ին իրեն կը շնորհուի ձերիսեի Շարգիյեի արտօնութիւնը :

1899ին նաեւ արտօնատէր եղաւ Սուրհանդակի և երկու թերթերն ալ միասին վարեց : Կայսերական կառավարութիւնը գնահատելով իր ծառայութիւնները ղինքը պատուած էր Միւթէմայիղի աստիճանով և Օսմանիէյի և Մէճիտիէյի Դ. կարգի պատուանշաններով :

Մեռաւ 1907 Փետրվար 13ին :

23. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. ՍԱՐԱՑԵԱՆ. — Կ. Պոլսեցի , փորձ ուսումնական , քաջ տաճկագէտ և ֆրանսագէտ պետական պաշտօնատար , որ 19 տարեկան հասակին մէջ

պետական ծառայութեան մտած է, և նախ էտիրնէի կուսակալութեան թարգման եղած է:

Վաթսուհական թուականներուն սկիզբը Կրթական նախարարութեան մէջ քարտուղարութեան պաշտօնի կը կոչուի: 1889ին գրաքննիչ կը կարգուի և 1874ին Մէարիֆ Մէճլիսի անդամ: 1876ին Եոզղատ կը ղրկուի քրննիչութեան պաշտօնով և վերադարձին կը շարունակէ իր պաշտօնը մինչև 1879, երբ նոր կարգադրութեամբ մը Մէարիֆ Մէճլիսին կը ջնջուի և անոր տեղ կը կազմուի նոր վարչութիւն մը հինգ բաժանումներով իւրաքանչիւրը մէկ մէկ տեսուչի հսկողութեան ներքև: Այդ բաժանումներուն մէջ տպարանաց տեսչութեան պաշտօնին կը կոչուի ինքը:

Իր պաշտօնավարութեան միջոցին Կայս. Լիւէին մեծ ծառայութիւններ կը մատուցանէ, ինչպէս նաև օսմաներէն դասական ուսուցման համար պատրաստելով դասագիրքեր որոնք մինչև հիմա կը գործածուին Օսմանեան վարժարանաց մէջ: Կը պատուուի Ուլայի Բ. աստիճանով և Գ. կարգի Մէճիսիյէ պատուանշանով:

Տոհմային եկեղեցական շրջանակի մէջ ալ գործօն ծառայութիւններ մատուցած է՝ Խասգիւղի Թաղական Խորհուրդին անդամակցելով, ինչպէս նաև Բերայի Թաղային Խնամակալութեան: Խասգիւղի Գալֆաեան Որբանոցին և Բերայի Արհեստանոցին վրայ ալ նշանակելի խնամք ունեցած է:

Պատրիարքարանի Ժողովներուն անդամակցած է բազմիցս, Տեսուչ Խորհուրդներէն 1864 Մայիս 1ին՝ Ելեմտից Խորհուրդի առաջին անգամ անգամ ընտրուելով և սկզբնաւորութիւն ընելով:

1907 Մարտ 10ին մեռաւ եօթանասունէն աւելի տարիներով ծերացեալ և թաղուեցաւ Գնալը կղզի:

24. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՑ. ԱԼԱՃԱՃԵԱՆ. — Ծնած է Կ. Պոլիս 1835-36ի միջոցներուն : Իր նախնական կրթութիւնը առած է Ս. Փրկչեան Ազգ. Որբանոցին մէջ և առաջին անգամ հոն օգնական ուսուցչութեան պաշտօնի կը կոչուի : Պահ մը ևս Քէօթահիայի Ազգ. վարժարանին մէջ ուսուցչութիւն ընելէ յետոյ Կ. Պոլիս կը դառնայ եւ Տնանկաց մատակարարութեան քարտուղար կ'ըլլայ : 1860-63 շրջանին Բերայի եւ այլ թաղային վարժարանաց մէջ հայերէն լեզուի դասախօսի պաշտօն կը վարէ : 1863ին Տքղ. Մանուէլ Իւթիւճեանի կիշիկիա անուն առողջապահական թերթին խմբագրութիւնը եւ արտօնատիրոջ բացակայութեան նաեւ տնօրէնութիւն կը վարէ մինչեւ 1866 : Այդ թուականին Ալաճաճեան կը բաժնուի և ինքը իր հաշուոյն կը սկսի հրատարակել Փռնջը որ 44 տարի իր վարչութեան ներքեւ հրատարակուած է զանազան կերպարանափոխութիւններով : Գրած է նաեւ Նեկսարիճե կոչու անուն թատերական գործ մը (1861) և Տողիկի անուն ոտանաւորներու տետրակ մը (1874) :

Պահ մը մասնակցած է նաև Արեւելի խմբագրութեան :

Պատրիարքարանի շրջանակին մէջ իբր ժողովոյ ատեն նադպիր հանրածանօթ էր : Այսպէս 1865ին Ելեմաից Հոգարարձութեան և 1877ին Տնտեսական և 1891ին Ուսումնական Խորհուրդներու անդամակցած է, ինչպէս նաև բազում յանձնաժողովներու և մասնախումբերու :

Մեռաւ 1907 Մարտ 15ին և թաղուեցաւ Ակիւտար :

25. ԳՐԻԳՈՐ ԷՑ. ԶԱՔԱՐԵԱՆ. — Ծնեալ 1855 Ապրիլ 1ին Արարկիր : Կանուխէն Կ. Պոլիս եկած է և նախնական կրթութիւն առնելէն յետոյ Կայս. Լիսէի մէջ երկրորդական կրթութիւն ստացած է : Յետոյ յաջողապէս տուած էր նաև երկրաչափի քննութիւններ կալա-

Թա-Սէրայի երկրաչափական վարժարանին մէջ : Ուսուցչութեան ուսուցչութեամբ զբաղած էր բաւականատեան , մասնաւորապէս Պէրպէրեան վարժարանին մէջ նոյն ճիւղին ուսուցչութիւնը ընելով և Գատրգիւղի Արամեան վարժարանի տեսչութիւնը վարելով :

Յետոյ իրաւաբանական վարժարանի աշակերտած է կրկին և շրջանը աւարտելով փաստաբանութեամբ զբաղած է , մերթ ընդ մերթ դասախօսի պաշտօններ ալ ըստանձնելով զանազան դպրոցներու մէջ : Պէրպէրեան էֆ.ի բացակայութեան միջոցին Պէրպէրեան վարժարանին վարչութեան կ'անդամակցէր :

1906ին Սանասարեան իմամակալութեան կողմանէ իբր քննիչ կարին զրկուեցաւ և վերադառնալէն յետոյ տեսչական պաշտօնով վերստին կարին զրկուեցաւ , ուր կարճ պաշտօնավարութենէ մը յետոյ մեռաւ 1907 Մարտ 23ին :

26. ՏՕՔԹ. ՌՈՒԲԷՆ ԷՖ. ՃԷԼԱԼԵԱՆ. — Ծնած է 1844ին Խասգիւղի մէջ ուր ստացած է նաև իր նախնական ուսումը : Աշակերտած է նաև Աղզ . Որբանոցի և Սկիւտարի Ճեմարանին : Յետոյ փայլուն շրջան մը բողոքեց կայս. բժշկական համալսարանին մէջ և 1869ին Բարիզ գնաց ուր աշակերտեցաւ բժշկական համալսարանին :

1870-71ին Ֆրանք և Իերման պատերազմին պատճառաւ մեկնեցաւ Բարիզէն ու անցաւ Պրիս քաղ. և յաճախեց տեղւոյն բժշկական համալսարանը : 1873ին շատ յաջող քննութենէ մը յետոյ վկայական ստացաւ և կ. Պոլիս դառնալով պահ մը օգնական բժշկի պաշտօն վարեց Աղզ . Հիւանդանոցի մէջ և 1876ին բժշկապետ անուանուեցաւ : 1879էն յետոյ թողուց այդ պաշտօնը և սկսաւ ինքզինքը ամբողջական ամբողջութեան հետ զբաղել :

Գործունեայ , ընթերցասէր և արուեստին լուրջ հե-

տեւող անձ մը եղած է, և չէ սահմանափակուած միայն իր արուեստին մէջ, և ծառայած է նաեւ հանրութեան, երիտասարդութեան օրերուն պահ մը բեմական արուեստը մշակելով և ի վերջոյ բժշկութեան միջոցին կարգ մը վարժարաններու մէջ առողջապահութեան դասախօսութիւնները ստանձնելով:

Գրչով ալ ծառայած է աշխատակցելով զանազան թերթերու բժշկական քրոնիկներով և քննադատութիւններով: Գրած է նաեւ վէպ մը Խեչագար Հայուհին խորագրով: Մեռաւ 1907 Ապրիլ 3ին:

27. ԻԷԹԷՈՍ ԷՖ. ՊԵՐՊԵՐԵԱՆ.— Ծնած է 1850 Հոկտեմբերի վերջերը Խասգիւղի մէջ: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ տեղւոյն Ներսէսեան վարժարանին մէջ, ուր փայլուն շրջան մը կը բոլորէ: 1866ին վարժարանին շրջանը աւարտելով օգնական ուսուցչութեան կոչուեցաւ նոյն վարժարանին: 1867 Մարտին էտիրնէ գնաց ուսուցչութեան պաշտօնով, և վեց ամիսէն դարձեալ Խասգիւղի վարժարանին մէջ դասախօսութեան կոչուեցաւ: 1869–75ին Գատրգիւղի, 1872–74ին Փանոսեան և Ագապեան, 1874–75ին Օրթագիւղի Թարգմանչաց և Ակիւտար Իճատիյէի և Գարակէօմրիւկի վարժարանաց մէջ դասախօսեց: Պահ մը Շահնազարեան վարժարանին հայերէնի մասնագէտը եղաւ և հուսկ ուրեմն 1876 Հոկտեմբեր 1ին բացաւ իր յատուկ վարժարանը Գատրգիւղի մէջ: 1878 Նոյեմբերին վարժարանը տեղափոխուեցաւ Ակիւտար Իճատիյէ և 1879ին հաստատուեցաւ վերջնապէս արդի շէնքին մէջ:

Նրեան և մէկ տարի կանոնաւորապէս շարունակուեցաւ այս վարժարանը և ընծայեց բազմաթիւ աշակերտներ: Քսան և հինգ ամեայ յորելեանը ալ տօնուեցաւ այդ հաստատութեան, և այդ առթիւ Ազգ. Ուսումն. Խոր-

հըրդոյ կողմանէ պաշտօնապէս իրեն տրուեցաւ ՌԻ-
ՍՈՒՑՉՍ.ՊԵՏ տիտղոսը :

Պէրպէրեան էՖ. իր ուսուցչական և կրթական գործու-
նէութեան հետ միանգամայն մշակած է գրական ճիւղը
և հանդիսացած մեր լաւագոյն գրագէտներէն մէկը :

19-20 տարեկան պատանի մըն էր երբ 1869ին Փա-
փազեան Ստեփանին ժամանակին խմբագրութեան մաս-
նակցեցաւ : Յետոյ աշխատակցած է նաեւ Մասիսի, Ման-
գուսի, Փողի : Թարգմանած է 1870ին Անիծեալը վէպին
Ա. հատորը, և 1871ին Լամբուէի Բանի հաւատարմոյ ու-
րոյն գործը, և 1883ին Հերման եւ Դորոթեան : Իր ինք-
նագիր գործերն են Առաջին տետր (1877) որ իր 1871-
77 զանազան լրագրաց մէջ հրատարակած յօդուածնե-
րուն հաւաքումն է : 1872ին կը հրատարակուի Դրանը և
1880ին իր Երկու քանախօսութիւնք և ժողովրդային
գրօսանի ճառերը՝ որոնք լսարաններու մէջ արտասանած
է : 1885ին Մարդիկ եւ իրքը՝ լոյս կը տեսնէ՝ ինչ որ վար-
ձեալ հրատարակութեանց հաւաքում մըն էր :

1901ին հրատարակեց հուսկ բանքերու և զանազան
գրութեանց հաւաքածոյ մը Դասխարակի մը խօսքերը
խորագրով, և 1903ին Խոնի եւ յուշքը, իսկ 1907ին Դրպ-
րոց եւ դպրութիւն ստուար հատորը :

Հրատարակած է նաեւ Առաջին գիրք Թրանսկրիկե
ի Հայ քարգնանութեան (1885) և Քաղաքական ճնշեա-
գիտութիւն (1883) անուն երկու դասագիրքերը :

Պէրպէրեան նոյնպէս անմասն չէ մնացած հանրային
գործունէութենէն մասնակցելով զանազան մարմիններու :

1870ին Խասգիւղի մէջ կը կազմուի Գործաւեր անուն
հրատարակչական մարմին մը որուն հիմնադիրներէն է
Պէրպէրեան : 1872էն 1885 զանազան լսարաններու մէջ
նշանակելի ատենարանութիւններ կ'արտասանէ որոնք իր
ճարտասանական կարողութիւնը կը շեշտեն :

1879ին առաջին անգամ Պատրիարքարանի վարչական գործոյ մէջ գործոն դեր ունենալու կը կոչուի և մինչեւ վերջը գրեթէ կը պահէ իր գործունէութիւնը : Իր ամէնէն նշանակելի պաշտօններն են 1882-84, 1884-85, 1891-94, և 1894-96, շրջաններու Ուսումնական խորհուրդներու անդամակցութիւնը, մանաւանդ վերջին երկու շրջաններուն՝ երբ իր ատենապետութեան ներքե կազմուեցան գրեթէ իր հեղինակութեամբը խմբագրուած կազմական կանոնագիրը և կրթական ծրագիրը որոնցմով կը վարին հիմա մեր վարժարանները :

1891-94ին նաև անդամակցած է քաղաքական ժողովոյ որուն ատենադպրութիւնը վարած է :

Ասոնցմէ զատ մասնակցած է բազմաթիւ յանձնաժողովներու : Մասնաւորապէս նշանակելի է իր գործունէութիւնը կրթական մարմնոց համար, և վարժապետական ժողովներու մէջ՝ որոնց գրեթէ հոգին հանդիսացած է :

Մեռաւ 1907 Ապրիլ 8ին :

28. Տ. ԿԱՐԱՊԵՏ Ա. ՔԸ. ՍԷԹԵԱՆ. — Մնած է 1830ին Սկիւտարի մէջ, և նախնական ուսումը հոն ստանալէ յետոյ նախ լուսարարութեան և ապա տարբեր արհեստներով զբաղած է : 1857 Մարտ 17ին քահանայ ձեռնադրուած է Գուգկունձուգ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն վրայ, որուն սպասաւորեց մինչեւ իր վախճանումը, յիմնամեայ ժամանակամիջոց մը պաշտօնավարելով հոն : 1907 Մարտ 17ին պարզ հանդէսով մը տօնուեցաւ այդ Յորելեանը երբ արդէն ինքը հիւանդացեայ անկողնոյ կը ծառայէր :

Տ. Կարապետ Ա. Քհն. Սեթեան հմուտ ծիսագէտ մըն էր և եկեղեցական արարողութեանց ծայր աստիճան նախանձախնդիր :

Պատրիարքարանի ժողովներու ալ գործակցած է և իր

հմտութեամբը և անաչառ ուղղութեամբը միշտ օգտակար եղած է :

1879-81 և 1883-84 շրջաններուն Դատաստանական խորհուրդի, 1880ին կազմուած Ամուսնական սենեակի և 1884-86, 1888-90 և 1896-1906 շրջաններու Կրօնական ժողովի անդամ է : 1906 Յուլիս 25ին վերստին անդամ ընտրուած էր ներկայ Կեդր. վարչութեան որուն քանի մը նիստերուն հազիւ կրցաւ մասնակցիլ :

Վախճանեցաւ 1907 Ապրիլ 17ին և թաղուեցաւ Ակիւտարի գերեզմանատունը

29. ՍԱՐԳԻՍ ԷՖ. ԹԱՇՃՆԱՆ. — Ծնած է Կեսարիա 1847ին : Տղայ հասակի մէջ Կ. Պոլիս եկած և սեղանաւորութեամբ առաջանալով հասած է մինչև սեղանաւորներու արհեստապետութեան բարձր աստիճանին : Պետութենէն պատուած է Ուլայի Բ. աստիճանով և Մէծիտիյէ Գ. կարգի պատուանշանով :

Հանրային գործունէութեան տեսակէտով իր ամէնէն նշանակելի աշխատութիւնը եղած է Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը որ վեց ամսոյ շափ գրէթէ առանձին վարած է, երբ իր ընկերները գործէ քաշուած էին :

Իր նպաստներէն օգտուած է նաև Գընալըի եկեղեցին, որուն թաղական Խորհուրդին ատենապետութիւնը վարած է երկար ատեն :

1907 Ապրիլ 19ին մեռաւ և Գնալըի եկեղեցւոյն շրջափակին մէջ թաղուեցաւ :

30. Տ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊՈՍ. ԹԱՀՄԻՉՆԱՆ. — Ծնած է 1816ին Սերաստիա : Աշխարհական անունն է Բարսեղ : Այդ ատենները դպրոցներ տակաւին գոյութիւն չունէին, հետեւաբար Բարսեղ քիչ մը ուսում առնելու համար, Ս. Նշանի վանքը վարդապետներու կ'աշակերտի : Յետոյ լուսարարի, մատակարարի և այլ պաշտօններ կը վարէ

վանքին մէջ : 1851ին Կարապետ Եպսկ. Կեսարացիէ կը ստանայ կուսակրօն քահանայութեան կարգ Պետրոս առաջնով : Վանքին մէջ առաջնորդական փոխանորդի պաշտօն, եւ 1863ին ու 1868ին երբ Կարապետ Եպս. Կ. Պոլիս կուգայ, վիճակային գործեր կը վարէ : 1865ին վանական հաշուական խնդրոյ մը առթիւ անհամաձայնութիւն կը ծագի և ասոր հետեւանքով քիչ յետոյ Կարապետ Եպիսկ.ի և Պետրոս Վրդ.ի միջեւ ցրտութիւն առաջ կուգայ և ժողովուրդը երկու մասի կը բաժնուի :

1869ին Կարապետ Եպսկ. Կ. Պոլիս կը կոչուի և Երեմիա Եպսկ. Վանեցի իբր Պատր. Փոխանորդ Սերաստիա կը զրկուի, սակայն հաղիւ երեք ամսուան պաշտօնավարութենէ մը յետոյ 1870ին ապարդիւն ետ կը դառնայ : Անոր տեղ Յակոբ Եպսկ. Ճգնաւորեան՝ Թոքատի առաջնորդը Սերաստիա կ'երթայ և Պետրոս Վրդ.ի հրահանգ կը տրուի Շապին-Գարահիսար երթալու, սակայն Պետրոս Վրդ. հոն երթալ չուզելով, Կ. Պոլիս բերուեցաւ, և առանց երկու կողմերէն մէկուն ներկայութեանը առաջնորդական ընտրութիւն կատարուելով Պետրոս Վրդ. միաձայնութեամբ առաջնորդ ընտրուեցաւ և Սերաստիա դարձաւ : Իսկ Կարապետ Եպիսկ.ի վրայ կը մնայ Ս. Նշանի վանահայրութիւնը մինչև իր մահը (1877) :

1873ին Պետրոս Վրդ. Ամասիա կը զրկուի իբր քննիչ : 1879ին եպիսկոպոս կը ձեռնադրուի և յաջորդ տարին Կիւրին կ'ուղևորի իբր այցելու հովիւ և վիճակային գործոց կանոնաւորող : Այդ առթիւ Կիւրին պահ մը իր հովուութեան կը յանձնուի :

1881ին Կ. Պոլիս կուգայ Սերաստիոյ գերեզմանատան խնդրոյն համար կազմուած խառն յանձնաժողովին մասնակցելու համար :

Նոյնպէս 1897ին կրկին վիճակային խնդրոց համար Կ. Պոլիս եկաւ և հիւրընկալուեցաւ Ղալաթիոյ եկեղեցին :

1898ին Թոքատի առաջնորդութիւնն ալ իր անձին վրայ միացաւ :

Հայրական հոգածութեամբ և անշահախնդրաբար վարած է իր երկարատեւ առաջնորդութիւնը թէ՛ Կայսերական Կառավարութեան և թէ՛ իր հօտին գոհունակութեան արժանանալով :

Այսպէս Կայս. Կառավարութիւնը զինքը պատուած էր Բ. Կարգի Օսմանիյէ և Ա. Կարգի Մէճիտիյէ պատուանշաններով :

1897ին արդի Ս. Հայրապետէն Արքեպիսկոպոսութեան պատիւ ստացաւ արժանեօք :

Իր պաշտօնավարութեան օրով Սեբաստիոյ հիւանդանոցը և որբանոցը կանոնաւորած, Անապատի և Ս. Կարապետի եկեղեցիները և Ս. Թարգմանչաց և Արամեան վարժարանը, առաջնորդարանը և երկու պանդոկները նորոգած, և այլ շինարար ձեռնարկներով համակրութիւն շահած է :

Անրասիր և աւանդապահ եկեղեցականի մը անունը թողլով կը վախճանի 1907 Ապրիլ 22ին :

31. ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ ՓԼՓԱԶԵԱՆ — ՊԵՂԻՐՃՅԱՆ. — Կ. Պոլսեցի դերասանուհի : Արեւելեան թատրոնի փայլուն օրերուն թատերաբեմի վրայ երևցած է : Իդական սեռէ դերասաններէն եթէ ոչ առաջինը գէթ հնագոյններուն մէջ ամէնէն ճաւելի գործօնը, որով իր անունին կցել սովորութիւն կըլած է «Անդրանիկ դերասանուհի» տիտղոսը : Իբր արուեստագէտ այնքան մեծ արժանիք մը ցոյց չէ տուած : Իր անունը և գեղը աւելի հմայք ազդած են քան թէ բուն արուեստագէտին զգացումը :

Երկար ատենէ ի վեր գործօն կեանքէ քաշուած էր : Մեռաւ 1907 Ապրիլ 28ին Ազգ. Հիւանդանոցի մէջ՝ ուր կը պատսպարուէր :

32. ՊԱՂՏԻԿ ԷՖ. ՍԱԳԱԵԱՆ. — Կ. Պոլսեցի աղփատասէր և ուսումնասէր ազգային մը որ ոսկերչութեամբ զբաղած է երկար տարիներ պատուաւորապէս :

Ինքնայորդոր կտակով մը իր հարատութեան մէկ երրորդը նուիրած է ազգին :

Իր մահէն յետոյ՝ որ տեղի ունեցաւ 1907 Ապրիլ 30ին, իր գոյքերը ի վաճառ հանուելով ազգին վիճակած բաժինը մերձաւորապէս 1500 ոսկի Ս. Պատրիարք Հօր տրամադրութեան տակ դրուեցաւ, որ կտակին պայմաններուն համաձայն այդ դրամագլուխը անձեռնմխելի պահելով հասոյթին 80⁰/₁₀₀ Ազգ. Հիւանդանոցի և Որբանոցին, և 20⁰/₁₀₀ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյն և դպրոցին պիտի յատկացնէ :

33. ԳԷՈՐԳ ԷՖ. ՀՈՒՍՍ. — Ծնած է 1859ին Բերայի մէջ Հայ-հռոմէական ծնողքէ : Իր նախնական կրթութիւնը առած է Ս. Յակոբայ վարժարանին մէջ, Յաճախած է նաև պահ մը Պետական վարժարան : Դպրոցէն ելլալէն յետոյ Տրապիզոնի և Սամսոնի Բէժիի վարչութեանց մէջ պաշտօն ստանձնած է : 1873ին Ֆասուլիաճեանի առաջնորդութեամբ ընդգրկած է դերասանական ասպարէզը և մասնակցած է թատերական խումբերու գաւառային ճամբորդութեանց : Իր անսեթեւեթ և բնական դիրքերով ու շարժուձեւերով և յստակ առողանութեամբ ուշագրաւ եղած է : Յաջողակ էր թէ՛ ողբերգական և թէ՛ կատակերգական դերերու մէջ :

Մեռաւ. 1907 Մայիս 9ին :

34. ՄԵԼՔՈՆ ԷՖ. ԳԱԼԷՆՏԷՐ. — Ծնած է 1855ին Ալեքսայ մէջ և հօրը հետ կանուխէն Ամասիա գաղթած է : Հին ստացած է իր նախնական ուսումը : 1867ին իր հօրը

հետ Կ. Պոլիս կուգայ և դերձակի մը քով կ'աշակերտի (1867-71) : 1871ին դերձակութեան խանութ կը բանայ և մինչև 1887 արուեստը գործնականապէս ի գործ դնելէ զատ, կը հետամտի արուեստը կատարելագործելու և 1876ին ձեւելու նոր դրութեան մը հիմը կը դնէ :

1880ին առաջին անգամ դասախօսութեան կը սկսի և մինչև իր մահը զանազան վարժարաններու մէջ կը դասախօսէ : Բերայի Աղջկանց Արուեստանոցի կազմակերպութեան մէջ կարեւոր դեր կը կատարէ՝ ծրագիրը ինքը կազմելով և առաջին ամիսներուն անօրէնութիւն ընելով (1886) :

1889ին և 1893ին Եւրոպա կ'ուղեւորի՝ ուր վարպետներ իր գործը կը գնահատեն :

Ինքը կը հանդիսանայ աղջկանց ձեռարուեստական դասախօսութեան կար ու ձեւի բաժնին գրէթէ հիմնադիրը և տարածիչը :

Գրականապէս ալ իր դրութիւնը մշտնջենաւորելու կ'աշխատի, 1881ին հրատարակելով Վայելք անուն հանդէս մը : 1886ին Եւա անունով կանանց հագուստներու ձե ու կարի դասախօսութեան համար դասագիրքի մը Ա. հատորը և 1891ին Բ. հատորը :

1892ին Տարրական ձեւագիտութիւն անուն համառօտ և 1900ին Աղաւ անուն՝ արանց հագուստներու ձեւելու դասագիրք մը կը տպէ :

1904ին Եւա հիմնական փոփոխութեամբ վերստին հրատարակուեցաւ :

Ունի նաև Ակնայ բարրատով գրուած [երգիծարանական գրութիւններ : Նաև իբր ճարտար մեքենագործ վկայուած էր Թրուայի հիւսուածեղէնի գործարաններէն :

Մեռաւ 1907 Յունիս 20ին և թաղուեցաւ Գնայը :

35. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ. — Ծնած է 1864ին Կ. Պոլիս և որդին է Տ. Ստեփան Քհնյի: Իր նախնական կրթութիւնը ստացած է Գում-Գարու Հիսար Տիպի Մեղպուրեան մասնաւոր վարժարանին մէջ: Իրպրոցը աւարտելէն յետոյ առեւտրական ասպարէզ մտած է և 19 տարեկան հասակին մէջ Նիւ-Եորք (Ս.Մերիլա) գացած է (1883): Հոն գորգի գործով զբաղելով նշանաւոր դիրքի և հարստութեան հասած է: Իր գործառնութիւններու մէջ ցոյց տուած ուղղամտութիւնը իրեն ապահոված են համաշխարհային համբաւ գորգի առեւտուրին մէջ:

Հայ համայնքին մէջ ուշագրաւ տեղ գրաւեց նաև իր բարեգործութիւններովը և իր բացած քարոզներու մրցումով և ալքոլամոլութեան դէմ պայքարով:

Իր զանազան առիթներով և զանազան նպատակներով բաշխած նուիրատուութիւնները և նպաստները զինքը մեր բարեգործական և մարդասիրական հաստատութեանց բարերարներու շարքին մէջ կրնան դասել:

Մեռաւ 1907 Յուլիս 10ին Նիւ-Եորքի մէջ:

36. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊ. ԳԱԶԱՆՃԵԱՆ. — Ծնած է 1826ին Կ. Պոլիս Սամաթիա թաղը: Աշխարհական անուն է Յակոբ: Նախնական կրթութիւնը առած է Սամաթիոյ վարժարանին մէջ ուր ուսած է լաւ հայերէն, կրօնագիտութիւն և քիչ մըն ալ ֆրանսերէն: Կանուխէն եկեղեցականութեան կոչում զգացած է իր մէջը: 1860ին սարկաւազ և 1864ին վարդապետ ձեռնադրուած է Տ. Եղիշէ անունով:

1864-66 Կ. Պոլսոյ մէջ մնալէ յետոյ 1866 Փետրվարին Աղգ. Կեդր. վարչութեան որոշումովը Ուրֆա Առ. Տեղապահ զրկուած է և մէկ տարուան կարճ պաշտօնավարութենէ մը յետոյ Կ. Պոլիս դարձած է: Տ. Եղի-

չէ Վրդ. Գաղանձեան 1869ին Ռօտտսթօ զրկուած է Առ. Փոխանորդի պաշտօնով և մինչեւ 1870 հոն մնալէ յետոյ Մարաշ գացած է և Փոխ. Առաջնորդութեան պաշտօն վարած է Մկրտիչ եպ. Քէֆսիզեանի առաջնորդութեան ատեն, երբ Հալէպ, Այնթապ, Մարաշ և Ուրֆա միացեալ վիճակ մը կը կազմէին :

Երբ 1871ին Մկրտիչ եպ. Կիլիկիոյ կաթողիկոս, կ'ընտրուի Եղիշէ Վրդ. միասին վանք կ'երթայ և հոն զանազան պաշտօններու կը կոչուի, մասնաւորապէս ժառանգաւորաց վարժարանին տեսչութիւնը վարելով : 1881ին Կ. Պոլիս եկած էր երբ Տիարպէքիւրի առաջնորդ ընտրուեցաւ բայց չի գնաց :

1882ին կրկին Սիս դարձաւ և 'Ատանայի վիճակին Առաջնորդական Տեղապահ կարգուեցաւ :

1883ին նոյն վիճակին վրայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և Յովհաննէս անուանով օծուեցաւ : 1887ին թողուց այդ պաշտօնը և Հաճըն տեղափոխուեցաւ նոյն պաշտօնով :

Մինչեւ իննսուներեան թուականներուն սկիւրները հոն պաշտօնավարելէ յետոյ 1895ին Կ. Պոլիս եկաւ, ուրկէ ընկերակցութեամբ Նիկողոս Դաւթեան և Արրահամ Մամիկոնեան եպիսկոպոսներու Սիս անցաւ :

Եկեղեցական ընկալեալ կանոններու և սովորական կարգաց և կանոնաց դէմ արարքներու մէջ գտնուած ըլլալնին յատուկ քննութեամբ ապացուցուած ըլլալով՝ շրջաբերականով եկեղեցական պաշտամունք կատարելութրաւունքէն զրկուեցան : Յովհաննէս եպ. Գաղանձեան փիլոնագուրկ վիճակի մէջ մնաց մինչեւ 1903, երբ Կիլիկիոյ այժմեան Ծնորհազարդ կաթողիկոսը իր օծումէն յետոյ, ներեց անոր և արտօնեց դառնալ Սսոյ վանքը իբր միարան մայրավանուց Սսոյ :

Իր կեանքի վերջին մասը անդ անցուց անպաշտօն կերպով : Մեռաւ 1907 Յուլիոս 12ին :

37. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ . — Ծնած է Ադրիանուպոլիս 1834ին Յուլիս 29ին : Մկրտութեան անունն է Կարապետ : Իր նախնական ուսումը տեղւոյն վարժարանին մէջ առնելէ յետոյ փոքրաւորութեան կը մտնէ Էտիրնէի Առաջնորդ Սարգիս եպս . Գումմէականի քով : 1852ին Կ. Պոլիս կուգայ և Փոխանորդարանի քարտուղարի պաշտօն կը վարէ : 1854ին սարկաւազ և 1857 Յունվար 17ին վարդապետ կը ձեռնադրուի Ֆիլիպէի մէջ Մեսրոպ անունով : 1857-58ին իր Ռուսմանիոյ հայարնակ քաղաքներ շրջագայեցաւ : 1859ին հոգևոր հօրը հետ էջմիածին գնաց և 1860ին Պրուսա : 1860ին Սարգիս եպ . Պրուսայէն Պատրիարք կը բերուի և Տ. Մեսրոպ վրդ . միասին Կ. Պոլիս կուգայ և Պատրիարքարանի մէջ քարտուղարի պաշտօն կը վարէ : 1860-63ին Սկիւտար , Գումմաքարու և Եէնիգարու քարովիչ , 1863ին Կրօնական Ժողովոյ անդամ և 1864ին Նգիպտոս և Երուսաղէմ քրննիչ կ'ըլլայ : 1864ին Տրապիզոնի առաջնորդ կ'ըլլայ և եպիսկոպոս կը ձեռնադրուի : 1865ին Ամասիա քննիչ և 1866ին նաեւ առաջնորդ Ճանիկի :

1869ին Սուէզի ջրանցքին բացման հանդէսին ներկայացուցիչ և 1869-80 Նգիպտոսի առաջնորդ , 1881-83 Թօբզարուի քարովիչ և 1885ին Էտիրնէի Առաջ . Տեղապահ և 1886ին Առաջնորդ :

1895ին կը հրաժարի և պետական գանձէն 25 Օսմ . ոսկի ամսաթոշակի կ'արժանանայ :

1896 Յուլիս 27ին առժամեայ Խառն Ժողովին կ'անդամակցի և այդ առթիւ կը ստանայ Բ . կարգի Օսմանիյէ պատուանշան : Նգիպտոսի առաջնորդութեան միջոցին ալ աստացած էր արդէն Բ . կարգի Մէճիսիյէ :

1906 Յուլիս 25ին Կրօնական Ժողովոյ անդամ ընտրուեցաւ և Ատենապետութեան կոչուեցաւ :

Վախճանեցաւ 1907 Յուլիս 15ին :



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՆԵԱԿՆԵՐ

Վաճառականութիւնը միշտ Օսմանեան երկիրներու մէջ քաջալերուած է կայս . կառավարութեան կողմանէ և անով զբաղողներուն համար ինչ ինչ առանձնաշնորհումներ տրուած են հին ատեններէ ի վեր :

Ասկէ քանի մը դարեր առաջ արդէն սովորութիւն եղած էր երեւելի վաճառականներուն տալ պէրաքներ , և ինչպէս որ կսնաճներ՝ անոնք ալ ունէին իրենց յատուկ շօնճան , որ պէրաթլը վաճառականաց վերաբերեալ գործերով կը զբաղէր , ինչպէս այսօրուան Առեւտրական Սենեակը :

Այս սենեակը հաստատուած էր Սուլթան Սէլիմ Գ-ի (1788—1808) հրովարտակով և կը գտնուէր Վայլտէ խանի մէջ : Յունաց Պատրիարքական ընտրութեանց ատեն այս պէրաթլը վաճառականաց սենեակին Յոյն անդամներն էին որ կ'ընտրէին սեղանաւորաց և վաճառականաց հինգ ներկայացուցիչները , ինչ որ կը հաստատէ թէ այդ սենեակը էսնաֆապետութեան մը դերը կը կատարէր :

Այս սենեակը 1867ին փակուեցաւ , սակայն տասնեւչորս տարի յետոյ 1881ին ՍՈՒԼՔԱՆ ԱՊՏԻԻԿ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ հրովարտակով հաստատուեցաւ արդի ձևով Առեւտրական Սենեակը՝ ուղղակի պետական հովանաւորութեան ներքեւ , ձեռք առնելու համար այն միջոցները որոնք վաճառականութեան զարգացումը կ'ապահովէին երկրին մէջ :

Անոր կազմութենէն յետոյ կազմուած են օտար գաղութներու առեւտրական սենեակները , որոնք սապէս կազմուած են :

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն

Ապուստոլատէ Մէհմէտ էֆ.	Նախագահ
Մուսթաֆա Շիւքրի պէյ	Դեր-Նախագահ
Սենսքերիմ էֆ. Մանուկեան	Ա. Խորհրդական
Հաճի Մէհմէտ Շէֆիզ պէյ	Բ. Խորհրդական
Պ. Արիստոտէմ Գոզմէթոյ	
Պ. Թէոտոր Գուրճի	
Պ. Սթեֆանոյ Տանտրիա	
Տիգրան էֆ. Մանուկեան	
Յարութիւն էֆ. Ասլանեան	
Զարմայր էֆ. Ճշմարտասօսեան	
Աթանաս Եորկիատի էֆ.	
Խուլուսիզատէ Օսման Նուրի էֆ.	
Պ. է. Հիւկնէն	
Արտաշէս էֆ. Հիւրմիւզ	
Մանիզատէ Հաճի Հիւսէյին Սապրի էֆ.	
Նէմիզատէ Հասան Թահսին փաշա	
Պ. Լէոն Բիրեւնոյ	
Պ. Մ. Սդաւրոյ	
Պ. Լէոնառ Վիթալիս	
Էրաշիզատէ Հաճի Հասան Շէրիֆ պէյ	
Պէն Ճուլարա Սայիտ պէյ	
Պ. Ծօսթէն Գութօ	
Սբիրաքի էֆ. Սիտէրիաիս	
Զարեհ էֆ. Սուսուֆեան	Ընդհ. ֆարճուղար
Նշան էֆ. Անդրէասեան	Արկղակաշ



Տ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն

Պ. Ա. Սէլիէն, Ընդհ. Հիւպատ.	Պատուակալ Նախագահ
Պ. Էռնէսթ Ժիրոյ	Նախագահ
Պ. Բասկալ Օզիէն	Ատենադպիր
Պ. Իւպէր Պլանչընէ	Գլխավոր
Գումանտան Լ. Պէրժէ	
Պ. Իփոլիթ Տեզուժիս	
Պ. Ֆելիքս Կրանէ	
Պ. Ժազ Ժոսթ	
Պ. Սէզար Ժոֆրըտի	
Պ. Է. Լանդսան	
Պ. Սէզար Լըպէ	
Պ. Թիմոթէ Րըպուլ	
Պ. Ալեքսիս Րէյ	
Պ. Լէոն Սէլիէ	
Պ. Օզթալ Ժիրոյ	
Պ. Ժ. Վէռտու.	

Հ Յ Լ Լ Ս Ն Ա Կ Ա Ն

Պ. Եօաննիս Կրիբարիս	Պատուակալ Նախագահ
Պ. Էպամիոնուսաս Տիլօն	Պատ. Դեր-Նախագահ
Պ. Է. Էլեէնիտիս	Նախագահ
Պ. Ն. Տօթիատիս	Դեր-Նախագահ
Պ. Ի. Իլիասզօ	Դեր-Նախագահ
Պ. Ա. Գ. Սֆէզոս	Ատենադպիր
Պ. Է. Սարիտաքիս	Գլխավոր
Պ. Ա. Բոզմէթոյ	
Պ. Տ. Ա. Մանկօ	



Ի Ց Ա Լ Ա Կ Ա Ն

- Պ. Է. Չիաբէլլի, Ընդհ. Հպտ. Պատուակաշ Նախագահ
- Պ. Ք. Մէլիա Պատուակաշ Խորհրդական
- Պ. Իզաքո Յէռնանտէզ Նախագահ
- Պ. Չեզարէ Պարպորոյ Դեր-Նախագահ
- Պ. Անթոնիոյ Բարմա Ա.Տեկադպիր
- Պ. Անճելոյ Կալեուինի Գանձապետ
- Պ. Բիէդրոյ Պոնտի
- Պ. Տառ Նաթան
- Պ. Ատուֆոյ Հէֆթէր
- Պ. Ռաֆայէլլոյ Ռիչչի
- Պ. Ճոնն Պոնտի
- Պ. Իզիտու Քուէզզի
- Պ. Իզիտու Կէուսոն
- Պ. Անճելոյ Մանէթթի



Թ Ղ Թ Ա Տ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն



Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Անցեալ տարուան ընթացքին Հռոմ գումարուած Միջազգային համաժողովի մը մէջ գոյացած համաձայնութեամբ միջազգային թղթատարութեան սակագինը կարեւոր կերպարանափոխութիւններ կրած է :

Ահաւասիկ թղթակցութեանց համար միջազգային թղթատարութեան նոր սակագինը .

ՏԵՍԱԿ	Փոխադրութեան դրում		Ամէն մէկ միութեան կամ անոր մասերուն կրամները	Առաւելագոյն	
	Ղր.՝	Փր.՝		Կեր.՝	Ծաւալ սանթիմէրով
ՆԱՄԱԿՆԵՐ	Առաջին միութեան համար 1 — Յաջորդ ամէն մէկ միութեան համար — 30		20	—	—
ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ՔԱՐԴԵՐ	—	20	—	—	14×9 (Նուագագոյն 10×7)
ՊԱՏԱՍԽԱՆԸ ՎՃԱՐՈՒԱԾ ԹՂԹ. ՔԱՐԴԵՐ	1	—	—	—	14×9 (Նուագագոյն 10×7 ամէն մէկ մասին համար)
ՑՊԱԳԻՐՆԵՐ	—	10	50	2 թիւ	45×45×45 (75×10 գլանաձև ոլորում)
ՎԱՃԱՌՔԻ ՆՄՈՅԵՆԵՐ	—	10		350 կրամ	30×20×10 (30×15 գլանաձև ոլորում)
ԳՈՐԾԻ ԹՈՒՂԹԵՐ	—	10		2 թիւ	45×45×45 (75×10 գլանաձև ոլորում)
<p>1. Յանձնարարեալ նամակներէ կը սացուի 1 դրուց աւելի:</p> <p>2. Սացման ծանուցագիր սանալու համար 1 դր. եւս աւելի:</p>					

Իբր ընդհանուր ծանօթութիւններ հարկ կը համարենք հոս աւելցնել թէ .

1. Պէտք է գրել հասցէները շատ յստակ և ընթեռնելի, նշանակելով ճշդիւ ստացողին բնակավայրը (փողոց և Թիւ), ինչպէս նաեւ երկիրը և գաւառը :

2. Պահարանին կռնակը գրել նաեւ խրկողին հասցէն, ստացողը չգտնուելու պարագային վերադարձուելու համար :

3. Պէտք չէ մոռնալ օրինական դրոշմաժողովը փակցնելու նամակին վրայ հասցէին կողմը . այն առարկաները որոնք դրոշմաժողով չեն կրեր կամ պակաս դրոշմուած են կը փոխադրուին, սակայն կրկին վճարումով կը յանձնուին ստացողին եթէ նամակ են : Նմոյշները, տպագիրները և գործի թուղթերը երբ դրոշմաժողով չեն կրեր չեն փոխադրուիր :

4. Արգիլուած է աւելցնել տպագիրներու մէջ անհատական Թղթակցութիւններ և խրկել իբր նմոյշ այնպիսի առարկաներ որոնք արժէքաւոր են :

Բ. ՆԵՐՔԻՆ

Օսմանեան թղթատարութիւնը ներքին հաղորդակցութեանց համար մասնաւոր տրամադրութիւններով կարգմը բացառիկ դիւրութիւններ ընծայած է հանրութեան :

Օսմանեան երկիրներու մէջ թղթատարական երեք սակադիւններ կը գործադրուին երեք որոշ բաժանումներով :

1. 4. ՊՈԼՍՈՅ ՏԵՂԱԿԱՆ ԲՂԹԱՏԱՐՈՒԹԻՒՆ (POSTE LOCAL)

Կ. Պոլսոյ թաղերուն և շրջակայ գիւղերուն և արուարձաններուն միջեւ կարելի է փոխանակել թղթատարական քարտեր (carte postale) միայն 10 փր. վճարելով :

Գոց նամակ չեն փոխադրուիր Կ. Պոլսոյ թաղերուն միջեւ : Բաց պահարանի մէջ դրուած այցետոմսերը թղթատարական քարտ կը համարուին և 10 փր.ով կը փոխադրուին :

Միեւնոյն ձեռով շնորհաւորութեան համար առանց գիրի լոկ առաքողին անունը կրող այցեւորմաներուն վրայ միայն 5 փր.ի դրոշմաթուղթ դնել բաւական է :

2. ԾՈՎԵՋԵՐԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Օսմանեան ծովեղերեան քաղաքներու միջև փոխանակուած նամակներու և ուրիշ տեսակ թուղթերու համար միջազգային թղթատարութեան սակագինին տրամադրութիւնները սա կերպով բարեփոխուած են ի նպաստ Օսմանցի վաճառականներուն .

1. Նամակներ . — Օսմանեան Պետութեան երկու ծովեղերեայ քաղաքներու միջև փոխանակուած նամակներէն մինչև 15 կրամ կ'առնուի միայն 20 փարա . և յաջորդ իւրաքանչիւր 15 կրամի կամ կոտորակին համար 20 ական փարա եւս :

2. Տպագիրներ եւ գործի թուղթեր . — Նոյնպէս բացառութիւն ըլլալով՝ փոխանակ իւրաքանչիւր 50 կրամը՝ մէկ միութիւնը համարուելու 75 կրամը մէկ միութիւն կը հաշուուի և իւրաքանչիւր միութեան համար ըստ սովորութեան 10 փարա կ'առնուի : Որով Միջազգային թղթատարական սակագինի համեմատութեամբ միայն $\frac{2}{3}$ ի դրոշմաթուղթով կը փոխադրուին այս տեսակ թուղթերը : Այս ընդհանուր սակագինէն դուրս մինչև 30 կրամ ծանրութեամբ տպագիրները և գործի թուղթերը բացառաբար 5 փարայով կը փոխադրուին :

3. Ապրանքի նմոյսներ . — Դարձեալ միեւնոյն կերպով կը տարբերի Միջազգային սակագինէն , վասն զի թէ 5 փարայով 30 կրամնոց նմոյսներ կը փոխանակուին և թէ 75 կրամը մէկ միութիւն կը հաշուուի : Աւելի ըլլալով Միջազգային թղթատարութեան առաւելագոյն կշիւը եղող 350 կրամի տեղ Օսմանեան թղթատարական

վարչութիւնը ծովեզերեայ քաղաքներու միջև կը փոխանակէ մինչեւ 3 քիլօ ծանրութեամբ ապրանքի նմոյշներ :

ԾԱՆ. — Մնացեալ տեսակներու համար պէտք է կէտ առ կէտ Միջազգային սակագինին տրամադրութիւնները գործադրել :

3. ՕՍՄԱՆԵԱՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Օսմանեան երկու ցամաքային կամ մին ծովեզերեան և միւսը ցամաքային քաղաքներու միջև փոխանակուած թղթակցութիւններէն և ուրիշ տեսակ թուղթերէն հետեւեալները բացառիկ տրամադրութիւններ ունին .

1. Նամակներ . — Միջազգային թղթատարական միութեան հին սակագինին համաձայն իւրաքանչիւր 15 կրամի համար 1 զրուշ առնելու սովորութիւնը պահպանուած է :

2. Տպագիրներ (Imprimés). — Մինչեւ 30 կրամ ծանրութիւն ունեցող տպագիրները 5 փարայով կը փոխադրուին : Իսկ 50 կրամ և անկէ աւելին Միջազգային սակագինին գիներովը :

3. Վաճառքի նմոյշներ . — Ա. Նուաղագոյն գինը փոխանակ 20 փարայի 10 փարա է և 30 կրամնոց ծրարներու համար 5 փարա կ'առնուի : 100 կրամէն վեր Միջազգային սակագինը կը գործադրուի : — Բ. Փոխանակ 350 կրամ առաւելագոյն կշիռին՝ ներքին քաղաքներու համար կ'ընդունուի մինչեւ 2 քիլօ ծանրութեամբ վաճառքի նմոյշներ միշտ սովորական սակագինին տրամադրութեանց համաձայն իւրաքանչիւր 50 կրամի և անոր ստորաբաժանման համար 10ական փարա առնուելով :

3. Գործի թուղթեր (Papier d'affaires). — Օտար երկիրներու համար նուաղագոյն 1 զրուշի տեղ՝ բացառաբար մինչեւ 30 կրամ՝ 5 քարա, 50 կրամ՝ 10 քարա, 100

կրամ՝ 20 բարա և 150 կրամ՝ 30 բարա դրոշմի կ'ենթարկուին: Յաջորդ իւրաքանչիւր 50 կրամի համար ըստ միջազգային սակագնի կ'առնուի 10ական բարա:

Դրամի եւ արժէքաւոր նիւթերու փոխադրութիւն

Թղթատարական վարչութիւններ միջազգային համաձայնութեամբ կը կատարեն նաեւ դրամի եւ արժէքաւոր նիւթերու փոխադրութիւնը, որոշեալ սակագինով մը:

Այդ փոխադրութիւնը կը կատարուի զանազան ձեւերով:

Ա. Ա Ի Ա Ն Դ

Թուրքիոյ ներքին թղթատարութեան մէջ ընդունուած է դրամի եւ արժէքաւոր նիւթերու փոխադրութիւնը աւանդի (կրանկթ) ձեւին տակ:

Այս պարագային թղթատարական վարչութիւնը կը ստանայ քանկագին նիւթերու համար արժեքին համաձայն սակագին մը, հասարակ նիւթերու համար ծանրութեան չափով սակագին մը:

Այս սակագինը հինգ աստիճան է, հետաւորութեան հինգ շրջանակներու համաձայն:

Այս շրջանակները սա կերպով կը բաժնուին.

- Ա. Շրջանակ. կ'ընդլիս եւ շրջակաները:
- Բ. Շրջանակ. Պրուսա, Գաւթէմունի, Այտըն, Ատանա, Ճէպէլի-Լիպնան, Հալէպ, Գոնիա, Երուտա, Կարսի ծովեզերքները, Պէնկագլի, Պիլա, Արշիպեղագոսի կղզիները:
- Գ. Շրջանակ. Դամասկոս, Էրզրում, Հիճազ, Էնգարէ, Սըվազ, Գոսովա, Մանասճըր, Եէմէն, Տիարպէքի, Խարբերդ:
- Դ. Շրջանակ. Վան, Պիճլիս, Մուսուլ:
- Ե. Շրջանակ. Պաղտատ, Պասրա:

Ս Ա Կ Ա Ց Ո Յ Ց

ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆԻԹԵՐՈՒ ՀԱՄԱՐ	Ա. Շրջկ.	Բ. Շրջկ.	Գ. Շրջկ.	Դ. Շրջկ.	Ե. Շրջկ.
1— 250 դրս.	2 ¹ / ₂ դս.	2 ¹ / ₂ դս.	3 դս.	3 ¹ / ₂ դս.	4 դս.
251— 500 »	2 ¹ / ₂ »	3 »	4 »	5 »	6 »
501—1000 »	2 ¹ / ₂ »	7 »	6 »	8 »	10 »
Ցայտող ամէն մէկ } 1000 դրուցի համար }	2 ¹ / ₂ »	3 ¹ / ₂ »	5 »	6 ¹ / ₂ »	8 »
ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆԻԹԵՐՈՒ ՀԱՄԱՐ					
1— 100 կրամ	2 ¹ / ₂ դս.	2 ¹ / ₂ դս.	3 դս.	3 դս.	4 դս.
101— 250 »	2 ¹ / ₂ »	3 »	4 »	5 »	6 »
251— 500 »	2 ¹ / ₂ »	4 »	6 »	8 »	10 »
501—1000 »	5 »	7 »	10 »	13 »	16 »
Ցայտող ամէն մէկ } 500 կրամի համար }	2 ¹ / ₂ »	3 ¹ / ₂ »	5 »	6 ¹ / ₂ »	8 »

Ընդհանուր քրամագրութիւն . — Մովեղերեայ քաղաքներու միջև փոխանակուած դրամի և արժէքաւոր նիւթերու իւրաքանչիւր 1000 դրուչի համար 2 դրուչ կ'առնուի, իսկ երկաթուղիի գիծին վրայ դտնուած քաղաքներու համար իւրաքանչիւր 1000 դրուչի համար 3 դրուչ անխափր : Ասոնց համար երբէք ՄԱՆՐՈՒԹԻՒՆԵՐ նկատողութեան չառնուիր :

Բ. ԹՂԹԱՍԱՐԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թղթատարական փոխանակագիրի (mandat de poste) դրուժիւնը 1900 Օգոստոս 1էն սկսեալ կը կիրարկուի Օսմանեան երկիրներու ծովեզերեայ քաղաքներուն և երկաթուղւոյ գիծերու մտակայ ցամաքային քաղաքներու և այլ քանի մը որոշեալ կարեւոր նամակատուններու մէջ :

Այդ թուականէն յետոյ Օսմանեան պետութիւնը Թղթատարական միութեան (union postale=ի.թ.թ.ի.ն.ս.) մէջ դառնուող զանազան երկրներու հետ կնքուած համաձայնութիւններով Եւրոպայի համար ալ Թղթատարական փոխանակագիրներ ընդունիլ սկսաւ :

Ա Ա Կ Ա Դ Ի Ն

Ներքին.— Մինչեւ 100 դր. արժէք ունեցող Թղթատարական փոխանակագիրի մը համար 20 փարս կ'առնուի: Մինչեւ 500 դր. իւրաքանչիւր 100 դր.ի համար և 500 դր.էն մինչեւ 1900 դր., իւրաքանչիւր 200 դր.ի համար՝ 20ական փարս պիտի առնուի, որով 2000 դր.ի համար 6¹/₂ դր. առաւելագոյն սակը կը ներկայացնէ: 2000 դր.էն վեր գումարի համար Թղթատարական փոխանակագիր չընդունուիր:

Օտար երկիրներ.— Մինչեւ 200 դր. 1 դր. կ'առնուի իւրաքանչիւր Թղթատարական փոխանակագրէ, իսկ յաջորդ իւրաքանչիւր 200 դր.ի և ստորաբաժանուիներուն համար կ'առնուի մէկ մէկ դր. աւելի:

Առաւելագոյն քանակութիւնն է 2200 դր. ոսկեդրամ:

ԾԱՆ.— 1. Եգիպտոսի, Արեւելեան Բուսնիի, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Պէլնիգայի, Զուիցերիոյ, Բուրբուկայի, Լիւսնապուրկի համար 500 Քր ը' 2195 դր.ի, Գերմանիոյ համար 400 մարք եւ Անգլիոյ համար 400 Էիլիմը' 2174 դր.ի, Հոլանտայի համար՝ 240 Քիորիմը' 2211¹/₄ դր.ի եւ Շուէի եւ Ֆինլանտիոյ համար 260 Բոնը' 2270 դր.ի հաւասար կը հաշուուի:—2. Վերը յիշուած երկիրներ կը ներկայացնեն այն կառավարութիւններ որոնք Օսմանեան թղթատարական վարչութեան հետ թղթատարական փոխանակագիրի փոխանակութեան պայմանագիր ունին:

Գ. ԱՐԺԷՔԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄԻ ՆԱՄԱԿՆԵՐ

1900 տարւոյ մէջ Օսմանեան թղթատարութիւնը, ծովեզերեայ քաղաքներու ինչպէս նաեւ երկաթուղւոյ գիծերու մօտակայ քաղաքներու նամակատուներու մէջ, սկսած է ընդունիլ արժեքը յայտարարուած նամակներ, (գրչվեթը մուգաստեղի վեքեաթիպ—(lettres avec valeurs déclarées) : Պանքոթներ, արժեթուղթեր, և այս կարգի թուղթեր, այս ձեւով կրնան տեղափոխուիլ տեղէ տեղ :

Այս տեսակ նամակներու պահարանին վրայ պէտք է թուանշանով և գրով գրել պարունակութեան արժէքը և կնքել 5 տեղէ առնուազն : 50,000 զրշ.էն աւելի արժէքով միեւնոյն պահարանին մէջ դրուած արժէքաւոր թուղթ չի փոխադրուիր, սակայն միեւնոյն թղթատարով միեւնոյն անձը կրնայ մէկէ աւելի նամակներ ղրկել : Այս նամակներուն համար նախ կը վճարուի սովորական սակագինի համաձայն նամակին փոխադրութեան օրինական վարձքը, ապա 1 զշր. ապահովագրութեան համար և յայտարարուած արժէքին իւրաքանչիւր 1000 զրշ.ին և կոտորակին համար 1 զրուշ :

Արբ արժէքը յայտարարուած պարունակութեամբ նամակ մը կորսուի, կամ վնասուի, կամ գողցուի, այդ արժէքին փոխարէնը Օսմանեան թղթատարութեան կողմէն պիտի վճարուի, անխուսափելի կերպով հարկեցուցիչ (cas de force majeure) պարագաներէ զատ :

Այս մասին ըլլալիք յայտարարութիւնները առնուազն մէկ տարուան մէջ պէտք է տեղի ունենան, որովհետեւ անկէ յետոյ նկատի չեն առնուիր :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ ՈՒ Ն Ն Ե Ր



1. ՕՍՄԱՆԵԱՆ ՆԱՄԱԿԱՏՈՒՆՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՅ

Կեղրոնական նամակատուն՝ ԵՂնի-Ճամիլի հրապարակը :

Գլխաւոր ճիւղերն են Ղալաթիա՝ Օսմ. Պանքային դէմ, Բերա՝ Թէրէ-Պաշի, Ստամպոլ՝ Սոսիզ Զէչմէ և Սիրքէճի : Ասանցմէ Սիրքէճիի կայարանին նամակատունը գործի մարդոց համար սա կարեւորութիւնը ունի որ բացառութիւն ըլլալով Եւրոպայի և Ամերիկայի համար իրիկուան Պայմանագրական կառախումբով ուղարկուելիք պարզ նամակներ կ'ընդունի մինչև ժամը 7.45 (Ը. Ն.) և յանձնարարեալ նամակներ մինչև ժամը 7¹/₂ (Ը. Ն.), մինչ մայրաքաղաքիս բոլոր նամակատուները փակուած կ'ըլլան ժամը 6-6¹/₂ ին (Ը. Ն.) :

Ասկէ զատ Օսմանեան նամակատան բաղմաթիւ երկրորդական մասնաճիւղեր կան Մահմուտ Բաշա, Այասոֆիա, Օղհրլար-Պաշը, Գումգարու, Տիրէքլէր Արասը, Ագսէրայ, Սուլթան Զաթիհ, Էյուսպ, Պայաթ, Խասքէօյ, Ղալաթիա՝ Կամուրջին գլուխը, Թօրխանէ, Բերա՝ Տէօրթ Եօլ-Աղլը, Թաղսիմ, Բանկայթի, Վոսփորի բոլոր գիւղերն ու Կղզիները, և այլ բաղմաթիւ կարեւոր թաղերու մէջ, ինչպէս նաև թղթատարական տուփեր մայրաքաղաքիս բոլոր կարեւոր փողոցներուն, շոգենաւի նաւահանգիստներուն և շոգեկառքի կայարաններուն մօտերը :



2. ՕՏԱՐ ՆԱՄԱԿԱՏՈՒՆՆԵՐ

Ա. ԱՆԳՂԻԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Հալաքիա, Վոյվոսա փողոց, Յակոբեան խան

Բաց է առաւօտեան 8¹/₂էն մինչեւ իրիկուան 6. կիրակիները 9¹/₂էն 10¹/₂ առտուն և 3էն 4, կէսօրէն ևաքը :

Թղթասարական փոխանակագիր կ'ընդունուի Մեծն Բրիտանիոյ, Մալթայի, Ճիպրալթարի, Կիպրոսի, Միացեալ-Նահանգաց, Բանամայի, Հնդկաստանի ու Բրիտանական գաղթականութեանց համար :

Թղթասարական փոփրիկ հակեր = Colis postaux կ'ընդունուին ամէն հինգշաբթի՝ Մեծն Բրիտանիոյ, Մալթայի ու Կիպրոսի համար :

Բ. ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԹՂԹԱՏԱՐ

Կեդրոնասեղի, Հալաքիա, Եօրկանճչար փողոց, Գամանդոյ խան. —

Մասնահիշեր, Բերա, 438, Բասաժ-Օրիանքաշի մօտ,

Աճաւկոյ, Գամանքոյ խան

Նամակ, ստացադիր, և այլն կ'ընդունուին բովանդակ Յւրոպայի համար, նոյնպէս նաեւ Իսթէնաթուրուի, Էսիրնէի, Պէյրութի, Հայֆայի, Գանատիոյ, Գալապոսայի, Չէչմէի, Տարսանուլի, Տէտ, Աղաճի, Տիւրապոյի, Կէլլիպօլուի, Ինկպօլուի, Եաֆայի, Եանեայի, Երուսաղէմի, Կիրասոնի, Կրեսէի, Լակոսի, Մերսինի, Միաիլլիի, Բրէվէզայի, Ռէթիմոյի, Ռոտտի, Թէքիրապոյի, Սեյանիկի, Սամսոնի, Քիոսի, Շքոտրայի, Իզմիրի, Տրապիզոնի, Սուրիական Թրիպոլտոյ, Վալոնայի, Վաթիի (Սամոսի) մէջ :

Թղթատարական միջազգային սակագինի մէջ նշանակեալ ամէն տեսակ թուղթերու և յայտարարուած արժէքով նամակներու փոխադրութիւնը, և թղթատարական փոխանակագիրի դրութիւնը կը գործադրուի :

Գ. Գ Ե Ր Մ Ա Ն Ա Կ Ա Ն Թ Ղ Թ Ա Տ Ա Ր

Ղաչարիա, Վոյվոսա փողոց, թիւ 28.—Մասնաճիւղեր. Բերա,
և Սեսւնայոյ՝ Գաքըրճը-Օղլու խան

Բաց է առաւօտեան (Ը . Ե .) ժամը Յէն մինչև իրիկուան
ժամ 6 , կիրակիներն առտու 9էն 11 և կէս օրէն ետքը 2էն 4:

Կարելի է Գերմանական թղթատարին դրամ յանձնել
և թղթատարական փոխանակագիր մը ստանալով՝ ղրկել
Գերմանիա , Աւստրիա , Պելճիզա , Պուլկարիա , Եգիպտոս ,
Միացեալ-Նահանգներ , Յունաստան , Իտալիա , Ռուսա-
նիա , Չուիցերիա , Թունուզ , Էսպլն , Իբայ առեալ Անգ-
լիա , Ֆրանսա , Ռուսիա և Թուրքիա :

Թղթատարական փոքրիկ հակեր կ'ընդունուին և կը
ղրկուին Քէօսթէնճէի շոգենաւով , շարաթն երկու ան-
գամ , երեքշարթի և շարաթ (եւրոպական ժամը 9ին , կէս
օրէն առաջ) :

Դ. Յ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն Թ Ղ Թ Ա Տ Ա Ր

Կեդրոնատեղի, Ղաչարիա, Վոյվոսա փողոց.—Մասնաճիւղեր.
Բերա, 15, Բասսաժ Օրիանքալ և Սեսւնայոյ Գամալեղոյ խան

Միջազգային թղթատարութեան վերաբերեալ գոր-
ծառնութիւններ կը կատարէ Եւրոպայի և Թուրքիոյ ծո-
վեզերեայ քաղաքներու համար : Ֆրանսայի համար միայն
կ'ընդունի թղթատարական փոխանակագիր :

Ե. Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Թ Ղ Թ Ա Տ Ա Ր

Կեդրոնատեղի, Ղաչարիա, Քիրճն Գարու.—Մասնաճիւղեր.

Ղաչարիա՝ Վոյվոսա փողոց, Սեսւնայոյ՝ Պահճն Գարու
փողոց, Մասխին դիմացը

Իր գործառնութիւնները սահմանափակ են , վասնզի
մասնաւորապէս միջազգային թղթատարութեան սակագի-
նին համաձայն կը կատարէ գործառնութիւններ՝ ծովեզե-
րեայ քաղաքներուն և Ռուսիոյ միջև :



Թ Ղ Յ Ա Տ Ա Ր Շ Ո Գ Ե Ն Ա Ի Ն Ե Ր

ՄԵԿՆՈՒՄ Կ. ՊՈԼՍԷՆ



ՍԵՆ ԾՈՎ—ՀԻՍՏՈՍԱՅԻՆ ԵԳԵՐԲ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. — Գերմանական. առառուան ժամը 11ին (Ը. Ե.) 15 օրը անդամ մը Օտեսա : — Ճոն Մագսոփաղ. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Պուրկազ, Վառնա : — Ռուսական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Պուրկազ, Վառնա, Օտեսա :

ԵՐԵՔՇԱԲԹԻ. — Ռուսական. առառուան ժամը 9¹/₄ին (Ը, Ե.) ամէն շաբթու Քէօսթէնճէ : — Ռուսական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Օտեսա :

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ. — Պուրկարական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Պուրկազ, Վառնա : — Ռուսական. առառուան ժամը 9¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Սեւաստարոյ :

ՀԻՆԳՇԱԲԹԻ. — Իսաղական. իրիկուան ժամը 2¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Օտեսա :

ՇԱՅԱԹ. — Ռուսական. առառուան ժամը 9ին (Ը. Ե.) ամէն շաբթու Քէօսթէնճէ : — Ռուսական. առառուան ժամը 9ին (Ը. Ե.) ամէն շաբթու Օտեսա : — Նոր Հեղեկական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Պուրկազ, Վառնա :

ԿԻՐԱԿԻ. — Իսաղական. իրիկուան ժամը 2¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Քէօսթէնճէ :

ԱԵՒ ԾՈՎ — Հարաւային եզերք

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. — Բաֆե. Իրիկուան ժամը $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) ամէն շաբթու Սամսոն, Տրապիզոն: — Մեամժրի. Իրիկուան ժամը $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) 15 օրը անգամ մը Սամսոն, Տրապիզոն, Պաթում: — Բանհեղեկի. Իրիկուան ժամը $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) ամէն շաբթու Զունկուլտաք Սամսոն, Իրապիզոն, Ի դարձին Կիրասոն, Օրտու: — Գերմանական. Իրիկուան ժամը $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) ամէն շաբթու Պաթում:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ. — Ռուսական. առտուան ժամը $9\frac{1}{4}$ (Ը. Ե.) 15 օրը անգամ մը Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Օրտու, Կիրասոն, Իրապիզոն: Բիզէ, Պաթում, Իսարեի Մախսուսե. Իրիկուան ժամը $9\frac{1}{4}$ (Ը. Թ.) ամէն շաբթու Էրէյլի, Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Իւնիա, Ֆադաս, Օրտու, Կիրասոն, Դիրեպօլու, Իրապիզոն, Բիզէ: — Իսարեի Մախսուսե. Իրիկուան ժամը $9\frac{1}{4}$ (Ը. Թ.) ամէն շաբթու Շիզէ, Էրէյլի, Գոզլու, Զունկուլտաք, Պարթլն, Ամասրա, Ճիտաէ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ. — Հեղեկական. Իրիկուան ժամ $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) ամէն շաբթու Էրէյլի, Գոզլու, Զունկուլտաք, Պարթլն, Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Օրտու, Կիրասոն, Իրապիզոն:

ՇԱԲԱԹ. — Աւստրիական. առտուան ժամը 11/ին (Ը. Ե.) ամէն շաբթու Ինէպօլու, Սամսոն, Կիրասոն, Իրապիզոն, Բիզէ, Պաթում: — Պուղիարական. Իրիկուան ժամը $3\frac{1}{4}$ (Ը. Ե.) Պուրկազ, Վարնա:

Մարմարա — Արֆապեղագոս — Միջերկրական

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. — Իսաշական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) 15 օրը անգամ մը Չանագ-Գալէ, Իզմիր, Տերնէ, Պենկազի, Դարապուլուս : — Ռուսական. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) 15 օրը անգամ մը Չանագ-Գալէ, Այնուրոզ, Սելանիկ : — Ճիսթունի, իրիկուան ժամը 3ին (Ը. Ե.) Մուտանիա, Կէմլէյիկ :

ԵՐԵՔՇԱԲԹԻ. — Իսարեի Մախսուռե. առտուան ժամը 3ին (Ը. Թ.) ամէն շաբթու Մուտանիա և Կէմլէյիկ : — Ռուսական. առտուան ժամը 9¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Բիրէա, Ալեքսանդրիա : — Ճիսթունի. իրիկուան ժամը 3¹/₄ (Ը. Ե.) ամէն շաբթու Կելիպուլու, Չանագ-Գալէ, Մոլիւլա, Էտրէմիտ, Քէմէր, Այվալըզ, Պոհչա ատաար, Միտիլլի, Իերա, Բլումարի, Իզմիր, Սաքըզ, Չեչմէ : — Խսիւլիե. իրիկուան ժամը 2ին (Ը. Ե.) ամէն շաբթու Միտիլլի, Իզմիր, Բիրէա, Ալեքսանդրիա, Բորդ-Սայիտ, Ճիտտէ, Հուտէյտա, Եաֆա, Պէյրութ, Շամ Թարապուս : — Ճիսթունի. առտուան ժամը 11¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Պուրկազ, Վառնա :

ՉՈՐԷՔՇԱԲԹԻ. — Ճիսթունի. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Կելիպուլու, Չանագ-Գալէ, Այնուրոզ, Սելանիկ, Վոլոյ, Բիրէա : — Իսաշական. առտուան ժամը 9¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Բիրէա, Ղարա Թարապուս, Պենկազի, Տերնէ, Աւլուռա, Սարանատոս, Տիւրացիօ, Շէնքին : — Բանքաշեռն. իրիկուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Կելիպուլու, Չանագ-Գալէ, Միտիլլի, Իզմիր, Սաքըզ, Բատոս, Ատալիա, Ալայիա, Սելեֆքէ, Մերսին, Իսքենտերուռ : — Իսարեի Մախ-

սուսե . իրիկուան ժամը 9 ¼ին (Ը . Թ .) ամէն շաբթու
Թէքիրտաղ : — Իսարեի Մախսուսե . իրիկուան ժամը
9 ¼ (Ը . Թ .) ամէն շաբթու Պանտրմա , Բրամա : — Իսա-
րեի Մախսուսե . իրիկուան ժամը 9 ¼ին (Ը . Թ .) ամէն
շաբթու Թէքիրտաղ , Կանոզ , Նորա , Միւրեֆթէ , Շար-
քէօյ , Գարապիղա , Մարմարա , Բաշա Լիման , Էրտէք :

ՀԻՆԳՇԱԲԹԻ . — Մեաւժրի . իրիկուան ժամը 3 ¼ին
(Ը . Ե .) 15 օրը անգամ մը Իզմիր , Բիրէա , Նարուի ,
Մարսիլիա : — Մեաւժրի իրիկուան ժամը 3 ¼ին (Ը .
Ե .) 15 օրը անգամ մը Իզմիր , Բատոս , Պէյրուիթ , Լառ-
նաքա , Մերսին , Իսքենտէրուն , Լաթաքիա , Շամ Թա-
րապուս , (Պէրուիթէն ազսարմա) Եաֆա , Բորթ-Սայիա ,
Ալեքսանդրիա , Մարսիլիա : — Նոր Հեղեմական . իրիկ-
ուան ժամը 3 ¼ին (Ը . Ե .) ամէն շաբթու Չանազ-Գալէ
Բիրէա , Շիրա , Բարոյ , Կաքսոս , Սանդորին : — Ռուսա-
կան . իրիկուան ժամը 3 ¼ին (Ը . Ե .) 15 օրը անգամ մը
Չանազ-Գալէ , Իզմիր , Սաքրզ , Շամ Թարապուս , Պէ-
րուիթ , Եաֆա , Բորթ-Սայիա , Ալեքսանդրիա : — Ասիւլիյե .
իրիկուան ժամը 2ին (Ը . Ե .) ամէն շաբթու Կէլիպոլու ,
Չանազ-Գալէ , Միտիլլի , Իզմիր , Սաքրզ , Բատոս , Մեր-
սին , Իսկէնտէրուն , Շամ Թարապուս , Պէյրուիթ , Եա-
ֆա , Ալեքսանդրիա : — Ճիւքուսի . առտուան ժամը 3ին
(Ը . Թ .) Մուտանիա , Արմուտլը , Կէմլէյիկ : — Գերմա-
նական . առտուան ժամը 9 ¼ին , ամէն շաբթու Իզմիր :
— Հանի Տապուս . Ամէն շաբթու Կէլիպոլու Չանազ-
Գալէ , Պոհա-Ատա , Այվալըք , Էսրէմիա , Բէմեր , Մի-
տիլլի , Իզմիր , Սաքրզ :

ՈՒՐԲԱԹ . — Իսարեի Մախսուսե . առտուան ժամը
3ին (Ը . Թ .) ամէն շաբթու Մուտանիա : — Ռուսակա-
կան . իրիկուան ժամը 5ին (Ը . Ե .) ամէն շաբթու Իզ-

միր, Ալեքսանդրիա: — Բանքաշին. իրիկուան ժամը
3ին (Ը. Ե.) ամէն շաբթու Կէլիպոլու, Չանազ-Գալէ,
Թենետոս, Մուխլա, Էարէմիա, Այվալըզ, Միտիլլի,
Քէմէր, Իզմիր:

ՇԱԲԱԹ.— Ճիւքունի ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն
շաբթու Պանարմա, Բրամա:— Ճոն Մագսոյաշ. իրիկուան
ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Չանազգալէ, Բիրէ,
Բաթրաս, Գօրֆու, Այի-Սարանտա:— Պեղնիֆական. իրիկ-
ուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Իզմիր, Սա-
գըզ, Բասոս, Լէրոս, Ալեքսանդրիա:— Ճիւքունի. իրիկ-
ուան ժամը 3¹/₄ին (Ը. Ե.) ամէն շաբթու Թէքիրասազ,
Միւրէֆթէ, Շարքէօյ, Գարապիղա, Բաշա-Լիման, Էր-
տէք, Մարմարա, Կանոս:

ԿԻՐԱԿԻ.— Իսարեի Մախսուսե. առտուան ժամը 3ին
(Ը. Թ.) ամէն շաբթու Մուտանիա, Կէմլէյիք:— Աւստրա-
կան. առտուան ժամը 9¹/₄ին (Ը. Ե.) 15 օրը անպամ մը
Կէլիպոլու, Չանազգալէ, Միտիլլի, Սագըզ, Վաթի,
Չէչմէ, Իզմիր:

ՄԱՆՈԹ. Կեանակեալ եւրոպական եւ քրեական
ժամերուն կը փակուին քրասարական պայուսակները
օղբեմաւներուն յանձնուելու համար: Շոգեմաւները ³/₄
ժամ յետոյ կը մեկնին նաւահանգիստէն:

Նամակները հարկ է պայուսակներու փակման հա-
մար որոշուած ժամանակներէն առնուազն ¹/₂ ժամ ա-
ռաջ հասցնելու աշխատիլ:



Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Սակագիններ

Սակագին Կ. Պոլսոյ համար. — Կ. Պոլսոյ հեռագրատանց միջև փոխանակուած իւրաքանչիւր հեռագիրի համար կ'առնուի 100 բարա, երբ 20 բարա չանցնիր. 20 բարան վեր իւրաքանչիւր 10 բարի համար կ'առնուի 50 բարա:

Ներքին սակագին. — Միեւնոյն նահանգին և դրացի նահանգներուն հեռագրական կայաններուն միջև քաշուած իւրաքանչիւր հեռագիրի համար կ'առնուի 7½ դրչ. երբ 15 բարա չանցնիր. 16րդ բարան սկսեալ իւրաքանչիւր բարէ կ'առնուի 20 փարա:

Հեռաւոր նահանգներու հեռագրական կայաններուն միջև քաշուած իւրաքանչիւր հեռագիրի համար պէտք է վճարել 10 դրչ., պայմանով որ 10 բարան աւելի չըլլայ: Անկէ աւելին իւրաքանչիւր բարի համար պէտք է վճարել 1 դրոչ.:

Այս սակագինը այն հեռագիրներուն համար է որ չեն անցնիր Իսղըրն ընկերութեան ներքին ընդծովեայ պարաններէն: Գալով անոնց որ այդ պարաններէն կ'անցնին՝ այս սակագինն վրայ դարձեալ իւրաքանչիւր բարի 20 բարա և հեռագրին վրայ 100 բարա առաջ կ'առնուի:

Եւրոպական Թուրքիայէն և Ասիական Թուրքիայէն Արեւելեան Բուսիլի քաշուած հեռագիրներուն, Մուսթաֆա Բաշայի ուղիով ճամբով, կը վճարուի 60 բարա, առանց յաւելուածական առաջի:

Կիպրոսի հետ փոխանակուած հեռագիրները ներքին սակագինին ենթակայ են, երբ զրկուին Լաթաքիոյ ճամբով:

Հիւսիս, Ղարս-Բարապուտ և Ելմէն կու սակալութեանց միջև, և այդ կու սակալութեանց իւրաքանչիւրին ու յարակից կու սակալութեանց միջև փոխանակուած հեռագիրներն ենթարկուած են միջազգային սակագինին:

Միջազգային սակագին. — Եւր. և Ասիական Թուրքիոյ քաղաքներէն՝ հետեւեալ տեղերը զարնուելիք հեռագիրներէն՝ իւրաքանչիւր բարի համար կը գանձուի:

	Սովորական ճամբով		Թեւեռո Շրջով ընդունելով թելով		Օստայի ընդունելով թելով		Քտոսքեթի ընդունելով թելով	
	Ֆ	Ս.	Ֆ	Ս.	Ֆ.	Ս.	Ֆ.	Ս.
Ալճերիա	—	67	—	67	1	09	—	—
Ատէն { Եւրոպ. Թուրքիայէն	2	50	2	50	—	—	—	—
{ Ասիական Թուրքիայէն	3	—	3	—	—	—	—	—
Աւստրիա-Հունգարիա { Ե. Թ.	—	34	—	44	—	98	—	34
{ Ա. Թ.	—	46	—	46	1	—	—	—
Բորդուկալ	—	69	—	69	1	22	—	78
Գերմանիա	—	55	—	55	—	76	—	55
Եգիպտոս Սաուրին { Ե. Թ.	1	15	1	25	—	—	—	—
{ Ա. Թ.	—	90	1	75	—	—	—	—
» Միւս քաղաքներ { Ե. Թ.	1	30	1	40	—	—	—	—
{ Ա. Թ.	1	05	1	90	—	—	—	—
Եէմէն { Ե. Թ.	2	80	3	—	—	—	—	—
{ Ա. Թ.	2	55	3	50	—	—	—	—
Զուիցերիա	—	51	—	51	1	05	—	54
Թունուզ	—	67	—	67	1	19	—	—
Իտալիա	—	48	—	48	1	14	—	66
Հիւնադ { Ե. Թ.	2	55	2	55	3	68	—	—
{ Ա. Թ.	2	30	3	05	4	18	—	—
Հնդկաստան { Ե. Թ.	2	35	2	50	3	30	—	—
{ Ա. Թ.	2	10	3	—	3	80	—	—
Հոլանտա	—	60	—	60	—	81	—	60
Ղարալ Թարապուս	—	88	—	88	1	41	—	—
Ճարմն { Ե. Թ.	6	02	6	05	6	05	—	—
{ Ա. Թ.	6	52	6	55	6	55	—	—
Ճիպրապոլար	—	69	—	69	1	22	—	—
Մայթա	—	69	—	69	1	30	—	—
Մեծն Բրիտանիա	—	71	—	71	—	71	—	75
Յունաստան և Եւրէա { Ե. Թ.	—	28	—	38	1	34	—	86
{ Ա. Թ.	—	38	—	38	1	34	—	—
Յունաստանի կղզիք { Ե. Թ.	—	32	—	42	1	38	—	—
{ Ա. Թ.	—	42	—	42	1	38	—	—
Նորվեկիա	—	72	—	72	1	08	—	72
Շուէա	—	69	—	69	1	05	—	69

	Սովորական հարցը	Թեկեսս շիրալի ընթացակալ բնիկ	Օտեսի ընթացակալ բնիկ	Վերստեկ ընթացակալ բնիկ
	Ֆ. Ա.	Ֆ. Ա.	Ֆ. Ա.	Ֆ. Ա.
Լիւ քսեմպուրկ	—	—	—	— 60
Չեռնակորա { Ե. Թ.	— 27	— 51	1 05	— 57
{ Ա. Թ.	— 38	— 51	1 05	—
Չին { Ե. Թ.	5 50	5 50	5 50	—
{ Ա. Թ.	5 25	6 —	6 —	—
Պարսկաս. (Պուշիրէ զաս) { Ե Թ.	1 60	1 95	2 —	1 93
{ Ա. Թ.	1 35	2 45	2 50	—
Պելճիքա	— 60	— 60	— 81	— 60
Պոսնա-Հերսէք { Ե. Թ.	— 27	— 51	1 04	— 52
{ Ա. Թ.	— 38	— 51	1 04	—
Պուլկարիա { Ե. Թ.	— 21	— 54	— 99	— 47
{ Ա. Թ.	— 38	— 54	— 99	—
Ռուսանիա { Ե. Թ.	— 26	— 51	— 73	— 26
{ Ա. Թ.	— 43	— 51	— 73	—
Ռուսիա Եւրոպական	— 72	— 72	— 72	— 72
Կովկաս և Անդրկովկաս	— 72	— 72	— 72	— 72
Սերպիա { Ե. Թ.	— 27	— 51	1 —	— 48
{ Ա. Թ.	— 38	— 51	1 —	—
Սպանիա	— 65	— 65	1 17	— 73
Տանիմարքա	— 60	— 60	1 —	— 60
Փրանսա	— 56	— 56	1 08	— 62
Նիւ Եօրք { Ե. Թ.	1 77	1 77	2 53	—
{ Ա. Թ.	2 27	2 27	3 03	—
Հիւսիսային Ամերիկա	—	—	—	1 77

Եւրոպական ու Ասիական Թուրքիայէն Ամերիկայի զանազան կողմերը զրկուած հեռագիրներու սակագիւնները գտնելու համար՝ հարկ է աչքի առջև ունենալ լազմաթիւ ցուցակներ. կը բաւականանանք նշանակելով Եւրոպական Թուրքիայէ Նիւ Եօրք քաջուած հեռագրին սակագիւնը :



ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻ ՕՐԷՆՔ

Անցեալ տարւոյ ընթացքին մէջ գործադրուիլ սկսած է դրոշմատուրքի նոր կանոնագիր մը : Նկատի առնելով գործնական կեանքի մէջ անոր ունեցած առօրեայ պէտքը , հարկ համարեցինք նոյն կանոնագիրը ծանօթացնել իր գլխաւոր դիժերու մէջ , դուրս թողլով անկէ պատժական սրամադրութիւնները , որովհետեւ մեր նպատակը աւելի գործածութեան դիւրութիւն տալ է քան թէ անսաստողներու համար որոշուած պատժական սրամադրութիւնները ծանօթացնել :

ԸՆԳՂԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դրոշմի տուրքը պետական հարկ մըն է , որ երկու մասէ կը բաղկանայ .

Ա. Հաստատուեալ տուրք (մագրու) , որ թուղթերու , մուրհակներու և ծանուցումներու տեսակին համաձայն կ'առնուի :

Բ. Համեմատական տուրք (նխապի) , որ թուղթերու և մուրհակներու մէջ նշանակուած գումարին համեմատութեամբ կը ստացուի :

Այս տուրքը կը գանձուի դրոշմաթուղթ փակցուելով թուղթերու վրայ կամ օրէնքով որոշուած պայմաններու մէջ արտասովոր դրոշմ (ճամդա) զարնուելով : Պետական պաշտօնատարներու և Հանրային Վարչութեանց կողմէ անհատներու յանձնուած և կամ անհատներու կողմէ պետական պաշտօնատարներու կամ Հանրային

